

ՓՈՒՍԱՆՈՐԴԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ Ի ՎԻՃԱԿԻՆ ԳԱՆՁԱԿՈՒ

ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂՈՒԱՆԵԱՆՅ



9(47,925)

26-49

h2

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԿԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԳՐԱՄԻ (RAA) ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ
Դր., պրոֆ. Ա. Մուրաֆյան (Փարիզ), դր., պրոֆ. Զ. Գոֆոխյան (Քայզերսլաուֆերն), դր., պրոֆ. Ս. Բունեման-Յախնա-
զարյան (Մախնե), դր., պրոֆ. Զ. Սուրուզյան (Կահիրե), դր., պրոֆ. Լ. Ջեքիյան (Վենետիկ), դր., պրոֆ. Մ. Գալստյան
(Երևան), դր., պրոֆ. Ա. Ղազարյան (Մոսկվա), պրոֆ. Ն. Սարգսյան (Երևան), պրոֆ. Ռ. Գալստյան (Լոնդոն), դր. Ս. Բալա-
յան (Ստեփանակերտ), ժ. Մանուչարյան (Լոս Անջելես), Զ. Սիմոնյան (Լոզան), Ս. Լալայան (Երևան)

ԳԻՏԱԿԱՆ ԸՆԴՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիրք Ի

ՓՈՆԱՆՈՐԴԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ Ի ՎԻՃԱԿԻՆ ԳԱՆՉԱԿՈՒ

Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեանց

A Vicarial Visit to the Diocese of Gandzak
Bishop Grigoris Aghvanyants

Визит викария в Гандзакскую епархию
Епископ Григорис Агванянц



ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԳՐԱՄ

ԵՐԵՎԱՆ 2023



6938

ՀՏԴ 94(479.25):39(=19)
ԳՄԴ 63.3(5Հ)+63.5(5Հ)
Ա 498

Ա 498 **Փոխանորդական այցելութիւն ի վիճակին Գանձակոյ /Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեանց.—**
գիրք Ի.— Եր.: Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ, 2023.— 88 էջ +
8 էջ գումավոր ներդիր:

Անգնահատելի կարևորություն ունի հայ եկեղեցական գործիչ, Գանձակի բննի առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոս Աղվանյանցի՝ Հյուսիսային Արցախին առնչվող ճամփորդական սույն տեղեկագիրը: Այն գրի է առել 1890-1891 թթ.՝ Գանձակի փոխանորդության ժամանակ շրջագայության ընթացքում հավաքած փաստերի հիման վրա՝ Մակար Բարխուտարյանցի «Արցախ» աշխատության յուրյոթնամյեց դեռևս 5 տարի առաջ: Բաղկացած է երկու մասից: Առաջինը վերաբերում է Գանձակ բաղաբին, իսկ երկրորդը՝ գյուղերին: Պարունակում է պատմական, ազգագրական, վիճակագրական (օգտվել է 1886 թ. քարտեզագրի տվյալներից), կրթական, տնտեսական կացությանը և այլ հարցերին առնչվող հարուստ նյութ:

Տեղեկագիր-նորագրությունը պահվում է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի Ջանազան հեղինակների արխիվում (38, թղթ. 44, վավ. 9, ք. 1-61): Նկատի ունենալով, որ այս վավերագիրը չափազանց արժեքավոր սկզբնաղբյուր է բունագավրված Հյուսիսային Արցախի պատմությանը, ազգագրությանը, նյութական մշակույթի հուշարձաններով հետաքրքրվող անձանց համար, հրատարակում ենք ամբողջությամբ և բնագրին հարազատ, իհարկե, ուղղագրական և կետադրական որոշ ուղղումներով:

Հավելել ենք նաև փոքրիկ առնչվող ծանոթագրություններ, լուսանկարներ և հեղինակի ուղեգնացական երթուղին պատկերող քարտեզ:

ՀՏԴ 94(479.25):39(=19)
ԳՄԴ 63.3(5Հ)+63.5(5Հ)

ISBN 978-9939-843-61-2

© Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ (ՀԵՈՒ), 2023

*Նվիրվում է Գրիգորիս եպիսկոպոս Աղվանյանցի
ծննդյան 196-ամյակին և մահվան 130-րդ տարելիցին*

*In ever living memory of Bishop Grigoris Aghvaniants
In commemoration of the 196th anniversary of his birth and the 130th anniversary of his death*

*Посвящается 196-летию со дня рождения и 130-летию юбилею смерти
епископа Григориса Агванянца*

Տպագրության հովանավոր
«Ոսկանապատ» վերլուծական կենտրոն

Published through the financial support of
Voskanapat Research Centre

Спонсор издания
Аналитический центр "Восканат"

ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂՎԱՆՅԱՆՑ

Ծնվել է 1827 թ. Վան քաղաքում (աշխարհիկ անունը՝ Հակոբ): Ցավոք, կենսագրական տվյալները գրեթե ոչինչ չեն հաղորդում մանկության և պատանեկության մասին: Հայտնի է միայն, որ ուսանել է մաթի տեղի Հիսուսյան վարժարանում¹, ապա՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանում, հետո՝ Դորպատի համալսարանում²: Այնուհետև զբաղվել է վաճառականությամբ. «...վաճառական էր և բողմելով իր առևտուրը, 50-ական թուականների վերջերս Թիֆլիզի վրայով անցաւ և ուղևորուեցաւ Վարազ, աշակերտելու Խրիմեան Աղրտիչ վարդապետին և նրան գործակցելու: Թիֆլիզում էլ մի խումբ մարդիկ, որոնք համակրում էին Վարագում կատարուող գործողութեանց, սրտազին ցնծութեամբ ընդունեցին Յակոբ աղա Աղուանեանցին և հանդիսով ճանապարհի գցեցին: Յակոբ աղան չը նայելով իր հասակին, եռանդով անձնատուր եղաւ ուսման և մի քանի ժամանակից յետոյ կուսակրօն դարձաւ՝ Գրիգորիս անունը ընդունելով»³:

Իրիմյան Հայրիկի գաղափարներով տոգորված՝ 1862 թ. Վարագավանքում ընդունում է կուսակրոնություն և ստանում «Գործող վարդապետ» մականունը, որը, ըստ իր մեկնաբանության, «...զբնու կարողութիւն չունեցող... կնքանակ...»⁴: Մակար եպիսկոպոսի ձեռնադր օծվելով՝ հետագայում վարում է հոգևոր մի շարք պաշտոններ: 1863-1865 թթ. և 1868 թ. Մշո Սբ. Կարապետ վանքի առաջնորդական տեղապահն էր, 1872 թ.՝ Տարոնի, 1872-75 թթ.՝ Վանի⁵, 1876-1887 թթ.՝ Կարսի և Բարսի⁶, 1889-1892 թթ.՝ Գանձակի⁷ առաջնորդը:

1866-1872 թթ. ընթացքում Կ.Պոլսի պատրիարքից ստանում է ծաղկյա փիղոն կրելու իրավունք, իսկ Մուլթան Արդու Ազիզից՝ Մեջիդիե երրորդ կարգի շքանշան: 1879 թ. մարտի 13-ին Գևորգ Դ Կոնստանդնուպոլսեցի կաթողիկոսը շնորհում է ականակուտ խաչ⁸, իսկ մայիսի 27-ին՝ արժանացնում էպիսկոպոսության բարձր աստիճանի⁹:

1882 թ. պարգևատրվում է Սբ. Աննայի երկրորդ աստիճանի շքանշանով¹⁰: 1893 թ. նոյեմբերի 23-ին Աննայան Հայոց Աղրտիչ Ա կաթողիկոսի կոնդակով տրվում է արքեպիսկոպոսության աստիճան, և նա նշանակվում է Ատրպատականի թեմի առաջնորդ¹¹:

Պաշտոնավարության ընթացքում բոլոր թեմերում աչքի է ընկել անձնուրաց աշխատասիրության և բարի համբավով: Այդ մասին 1878 թ. նշվել է. «Վարսի վիճակի առաջնորդ Գրիգոր վարդապետ Աղվանեանց, որի քաղոք բնատրոսիւնը, եռանդոտ ուսումնասիրութիւնը, անկեղծ ազգասիրութիւնը շատերին յայտնի է, իր սրբազան կոչման համաձայն արդէն սկսել է իր տեսչութեան տակ գտնված բոլոր գիւղերում այցելութիւն անել, մխիթարել ժողովրդներին, քաջալերել, ուսումնասիրութիւն քարոզել: Բարեշնորհի հայրիկը ամեն տեսակ ներդրութիւն յանձնառու լինելով, շրջագալում է գիւղերում յատուկ այն նպատակով, որ երեք կամ չորս գիւղի համար մի ծխական դպրոց բաց անէ և հասնում է իր ցանկալի նպատակին, որովհետև ժողովուրդը, որ տաս տարին մի անգամ հազու է տեսնում վիճակատու առաջնորդների այսպիսի այցելութիւն, մեծ

ջերմեռանդութեամբ դիմաւորում է հայրիկին, սրտով համակրում է նրան և հոգով պատրաստ է հայրիկի գեղեցիկ առաջարկութիւնները ընդունել իբրև սրբութիւն»¹²:

Կարսում անգնահատելի էր նրա գործունեությունը հատկապես դպրոցական և եկեղեցական բարեկարգումների ասպարեզում. «...Աղուանեանի ձեռամբ բարեկարգուել են 1, Կարսի տղ. դպ., որ յաջողացրեց երեք դասարանեանի վերածել (վեցամսյա դասընթացով). 2, Աղրտիին, 3, Կաղզուանի, 4, Օլբիի և 5, Բաշ-Շիրակայ տղ. դպրոցները: Բ. քաղուել են՝ 1, Կաղզուանի, 2, Կարսի և 3, Աղրտիին օր. դպրոցները: Գ. Հիմնել է դպրոցական յատուկ և յարմարին շէնքերով 1, Բեզլի-Ահմետ, 2, Ջերմալի, 3, Բերնա, 4, Բայդարա, 5, Խարաբաղ, 6, Չենկլի, 7, Արմուտլու, 8, Բաշ-Գիւղ, 9, Դաշխաչախ, 10, Փերվալի, 11, Օրթաքաղիկլար, 12, Բաշքաղիկլար, 13, Քիրուկ-Ղարա, 14, Փաղղուան, 15, Նախջուան, 16, Ծպնի, 17, Բազայրան գիւղօրէից և 18, Արդահանի տղ. դպրոցները: Դ. Մասնաւոր շինութիւնների մէջ պահել է. 1, Խանի, 2, Դօլբանդլու, 3, Խար, 4, Քերս, 5, Ուզունքիլիսէ, 6, Վարամահմատ, 7, Ուլուզլու, 8, Փոքր-Փարկիտ, 9, Ճալա, 10, Ջոշի, 11, Բուիկ, 12, Ուլուտ գիւղօրէից աղ. դպրոցները: Այս բոլորն էլ մինչև դպրոցների փակումը գոյութիւն ունէին, իսկ նրանց 1/3 մասն այսօր էլ յարատւում է: Ե. Կառուցել է եկեղեցի 1, Սթահան, 2, Գիւլանքաղ, 3, Շատուան, 4, Մանքար, 5, Չուրուկ, 6, Բայրուլդ, 7, Խաւ-Չիֆթիկլ, 8, Բայդարա, 9, Ջարտահիս, 10, Չոլախլու (մատուռ), 11, Դոլբանդլու, 12, Օրթաքիլիսէ, 13, Գեանրլու, 14, Ասկի-Ղազի, 15, Գոռխանա, 16, Գոլուջուղ, 17, Թազաքեանդ, 18, Մարալ, 19, Բուիկ, 20, Խաշաքիլիսէ, 21, Աղջաղալէ, 22, Գեատուկ-Սարմիշ, 23, Ուրուտ, 24 Օրթաղալէ, 25, Արդահան, 26, Թամուտ, 27, Բալանլի, 28, Արազի, 29, Ղափանլու և 30, Ջիրջիրիսի եկեղեցիք: Զ. Կարանդուղէ է. 1, Անույ Մայր եկեղ. ընկերութեան օգնութեամբ և մասամբ իր ծախքով, 2, Կաղզուանում մի մատուռ և մի եկեղ., 3, Խար, 4, Խարաբաղ, 5, Փաղղուան, 6, Ծպնի, 7, Օրթաքաղեւտ, 8, Խան, 9, Ջոշի, 10, Հանգաբարակ, 11, Օրթաքաղիկլար, 12, Ճալա, 13, Յովբերան, 14, Բայրախար, 15, Բերնա, 16, Կաղզուի եկեղեցիները: Ուրեմն Գեր. Աղուանեանը բարեկարգել է 5 ուսումնարան, քաղցել է 3 դպր., ուսումնարանական յատուկ շէնքերով հիմնել 18 դպր. և մասնաւոր շինութիւնների մէջ պահել է 12 դպրոց, ընդամենը 38 ուսումնարան: Կառուցել է 30 եկեղեցի և վերանորոգել 15 եկեղեցի: Եւ այս գործը կատարել է այն ժամանակ, երբ պատերազմի պատճառով ժողովուրդը շատաքիտ էր մատուցում և նորսանում երկրում Հոգ. կառավարութիւն անգամ չէր հաստատուած, որ զէք մասամբ օգնէր նրան»¹³:

Ինչպէս Կարսի թեմում, այնպէս էլ Գանձակում Գրիգորիս եպիսկոպոսը բավական բեղուն աշխատանք է կատարում: Եռանդուն և գործնական քայլեր է ձեռնարկում հոգևոր-մշակութային և կրթական կյանքն աշխուժացնելու ուղղությամբ և ժամանակակիցների կողմից արժանանում է բարձր դրվատանքի. «...Մեղծ բարքի տէր էր և ուր պաշտօն է վարել, աշխատել է միշտ ժողովրդի համակրութիւնը գրաւել, մանաւանդ դպրոցների վերայ առանձին ուշք դարձնելով և նոցա յառաջադիմութեան իրովսանն նպաստելով»¹⁴: Գանձակում «...գործում է որպէս լաւ հոգևորական: Իր ազդու քարոզներով՝ Քաշ, Տարոն, Վան և ուր որ եղել է, միշտ ուսման կարօտ մանկանց համար ուսումնարանների բացումն հոգատար է եղած, նոյնպէս և Գանձակում բացել է երկսեռ ուսումնարան Լուսատրիչ եկեղեցուց համար, հեռաւոր տեղից քանքանքներ խողի տակով փորված առու՝ հանել տալով առողջարար ջուր է բերել տալիս Գանձակ, իր հայրական յորդորներն անպատը չնմալով ժողովրդի կողմից ուրախութեամբ կատարում էին միշտ և ամեն տեղ»¹⁵:

Գանձակում նշանակաւոր օրվապէս մեծ ուշադրութիւն է դարձնում դպրոցների վիճակին և ժողովրդին հուզող այլ հարցերին, որով էլ հուսադրում է թեմի քնակիչներին. «Չենք կարող յայտարար չլինել ամբողջ ժողովրդի տրամադրութեան և զգացմունքին և յայտնել, որ բոլորն էլ մխիթարուած են սրբազան հօր սրտաբոլխ, անկեղծ և պարզ քարոզներից: Շատ ցաների դար-

1 Եղիշե Չարեցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Գարեգին Մովսէսյանցի ֆոնդ, 1-IV, ք. 2 շքոց:
2 Վանլուսարներ հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԻԲ, մաս Բ, Աղրտիչ և Խրիմեան կաթողիկոս Աննայան Հայոց (այստանեստ՝ Աղրտիչ և Խրիմեան), Սբ. Եղմիածին, 2020, էջ 698:
3 «Արձագանք», 1893, № 144, 10 դեկտեմբերի, էջ 1:
4 ԳԱԹ, Գարեգին Մովսէսյանցի ֆոնդ, 1-IV, ք. 17:
5 «Արարատ», 1893, ԺԲ, էջ 997: Հմտ. «Արձագանք», 1893, № 144, 10 դեկտեմբերի, էջ 1:
6 «Արարատ», նույն տեղում: Նշանակվում է 1876 թ. աշնանը (Երամեան Համբ., Յուշարձան, Աղթանադրիս, հ. Ա, 1929, էջ 85): Այդ պաշտոնին է մտնում նաև ուս-բուրքական պատերազմի ժամանակ (Ջաջրերունի/Գարբիկ Տեր-Հովհաննիսյան/ Ալթանադրապոլից դեպի Կարին, «Փորձ», 1879, № 5, մայիս, էջ 177; № 9, սեպտեմբեր, էջ 116, 118: Հուշագրական ժառանգություն, հուշ. Խորեն քահանա Մատթոթոյան, Երևան, 2011, էջ 101):
7 Առաջին անգամ Գանձակի առաջնորդական փոխանորդ է հիշվում 1889 թ. հուլիսի 30-ին («Նոր-Ղար», 1889, № 126, 3 օգոստոսի, էջ 2), ապա պարբերաբար մինչև 1892 թ. («Նոր-Ղար», 1890, № 88, 27 յունիսի, էջ 1; 1891, № 6, 15 յունիսի, էջ 2: Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ, Երևան, 2004, էջ 13) մինչև հաջորդ առաջնորդի գալը («Նոր-Ղար», 1892, № 2, 5 յունիսի, էջ 1): 1892 թ. մարտի 30-ին արդեն նշվում է որպես նախկին առաջնորդ («Նոր-Ղար», 1892, № 58, 9 ապրիլի, էջ 3):
8 «Արարատ», 1879, Ե, էջ 234:
9 «Արարատ», 1879, Զ, էջ 281:
10 «Արարատ», 1893, ԺԲ, էջ 997:
11 Աղրտիչ և Խրիմեան, էջ 93-95:

12 Տեր-Ալլիսեյիեկան Ս., Նամակ Բաշ-Շորաքաղից, «Մաշտ», 1878, № 107, 29 յունիսի, էջ 2:
13 Մ. Տ.-Մարտիրոս, Մարտիրոս Տեր-Մարտիրոսյան/ թրքակցություն, «Նոր-Ղար», 1890, № 70, 1 յունիսի, էջ 3:
14 «Արձագանք», 1893, № 144, 10 դեկտեմբերի, էջ 1: Ի դեպ, Աղվանյանը ծրարել էր խարսին Վան քաղաքում Աղրտիչ Մանասարյանի հետ համատեղ բացել օրիորդաց դպրոց, որի իրականացման համար նախատեսել էր անձնական միջոցներից հասկացնել 20,000 ռ. (նույն տեղում):
15 «Արարատ», 1893, ԺԲ, էջ 998: Հայտնի է, որ 1889 թ. օգոստոսի 20-ին Գանձակում «...սրբազան Աղուանեանը ազդու և սրտառու քարոզ խոսեց մի արքայա ընտանիքի օգնելու համար: Այդ քարոզի ազդեցութեան տակ՝ ներկա եղող վորքի հասարակութիւնը ստատ նուրբնել տուց» («Նոր-Ղար», 1889, № 139, 24 օգոստոսի, էջ 2): Ուսումը զարգացնելու գործունեության մասին տե՛ս նաև Ջաջրերունի, Ալթանադրապոլից դեպի Կարին, «Փորձ», 1879, № 9, սեպտեմբեր, էջ 116: «Նոր-Ղար», 1889, № 126, 3 օգոստոսի, էջ 2: Գիւրազի, Թրքակցություն, «Նոր-Ղար», 1889, № 179, 28 հոկտեմբերի, էջ 3:

ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂՎԱՆՅԱՆՑ

Ծնվել է 1827 թ. Վան քաղաքում (աշխարհիկ անունը՝ Հակոբ): Ցավոք, կենսագրական տվյալները գրեթե ոչինչ չեն հաղորդում մանկության և պատանեկության մասին: Հայտնի է միայն, որ ուսանել է նախ տեղի Հիսուսյան վարժարանում¹, ապա՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանում, հետո՝ Դորպատի համալսարանում²: Այնուհետև զբաղվել է վաճառականությամբ. «...վաճառական էր և բողոքելով իր առևտուրը, 50-ական թուականների վերջերս միջինի վրայով անցա և ուղևորուցեա Վարազ, աշակերտելու Խրիմեան Մկրտիչ վարդապետին և նրան գործակցելու: Թիֆլիզում էլ մի խումբ մարդիկ, որոնք համակրում էին Վարազում կատարուող գործողութեանց, սրտազին ցնծութեամբ ընդունեցին Յակոբ աղա Աղուանեանցին և հանդիսով ճանապարհ գցեցին: Յակոբ աղան չը մայելով իր հասակին, եռանդով անձնատուր եղա ուսման և մի քանի ժամանակից յետոյ կուսակրոն դարձա՝ Գրիգորիս անունն ընդունելով»³:

Խրիմյան Հայրիկի գաղափարներով տոգորված՝ 1862 թ. Վարազավանքում ընդունում է կուսակրոնություն և ստանում «Գործող վարդապետ» մականունը, որը, ըստ իր մեկնարանության, «...գրելու կարողություն չունեցող... կնշանակէ...»⁴: Մակար եպիսկոպոսի ձեռնադր օժիվով՝ հետագայում վարում է հոգևոր մի շարք պաշտոններ: 1863-1865 թթ. և 1868 թ. Մշո Սբ. Կարապետ վանքի առաջնորդական տեղապահն էր, 1872 թ.՝ Տարոնի, 1872-75 թթ.՝ Վանի⁵, 1876-1887 թթ.՝ Կարսի և Բաբումի⁶, 1889-1892 թթ.՝ Գանձակի⁷ առաջնորդը:

1860-1872 թթ. ընթացքում Կ.Պոլսի պատրիարքից ստանում է ծաղկյա փիղոն կրելու իրավունք, իսկ Մուլան Աբդուլ Ազիզից՝ Մեջիդիե երրորդ կարգի շքանշան: 1879 թ. մարտի 13-ին Գևորգ Գ Կոնստանդնուպոլսյան կաթողիկոսը շնորհում է ականակութ խաչ⁸, իսկ մայիսի 27-ին՝ արժանացնում եպիսկոպոսության բարձր աստիճանի⁹:

1882 թ. պարզանախովում է Սբ. Աննայի երկրորդ աստիճանի շքանշանով¹⁰: 1893 թ. նոյեմբերի 23-ին Աննայան Հայոց Մկրտիչ Ա կաթողիկոսի կոնդակով տրվում է արքեպիսկոպոսության աստիճան, և նա նշանակվում է Ատրպատականի թեմի առաջնորդ¹¹:

Պաշտոնավարության ընթացքում բոլոր թեմերում աչքի է ընկել անձնուրաց աշխատասիրության և բարի համբավով: Այդ մասին 1878 թ. նշվել է. «Վարսի վիճակի առաջնորդ Գրիգոր վարդապետ Աղվանեանց, որի քաղոք բնատրուքները, եռանդու ուսումնասիրությունը, անկեղծ ազգասիրությունը շատերին յայտնի է, իր սրբազան կոչման համաձայն արդեն սկսել է իր տեսչութեան տակ գտնված բոլոր գիղերում այցելություն անել, մխիթարել ժողովրդներին, քաջալերել, ուսումնասիրություն քարոզել: Բարեշնորհի հայրիկը ամեն տեսակ նեղություն յանձնառու լինելով, չքջապայում է գիղերում յատուկ այն նպատակով, որ երեք կամ չորս գիղի համար մի ժխական դպրոց բաց անել և հասնում է իր ցանկալի նպատակին, որովհետև ժողովուրդը, որ տաս տարին մի անգամ հազիւ է տեսնում վիճակատու առաջնորդների այսպիսի այցելություն, մեծ

չերմեռանդութեամբ դիմաւորում է հայրիկին, սրտով համակրում է նրան և հոգով պատրաստ է հայրիկի գեղեցիկ առաջարկությունները ընդունել իբր սրբություն»¹²:

Կարսում անգնահատելի էր նրա գործունեությունը հատկապես դպրոցական և եկեղեցական բարեկարգումների ասպարեզում. «...Աղուանեանի ձեռամբ բարեկարգուել են 1, Կարսի տղ. դպ., որ յաջողացրեց երեք դասարանեանի վերածել (վեցամեայ դասընթացով). 2, Արդուիմի, 3, Կաղզուանի, 4, Օլբիի և 5, Բաշ-Շիրակայ տղ. դպրոցները: Բ. քաջուել են՝ 1, Կաղզուանի, 2, Կարսի և 3, Արդուիմի որ. դպրոցները: Գ. Հիմնել է դպրոցական յատուկ և յարմարից շէնքերով 1, Բեզլի-Աննետ, 2, Ջերմալի, 3, Բերնա, 4, Բաղարա, 5, Խարաբաղ, 6, Չենկլի, 7, Արմուտլու, 8, Բաշ-Գիւղ, 9, Գլչախչալա, 10, Փերվալի, 11, Օրթաքաղիկլար, 12, Բաշքաղիկլար, 13, Քիրուկ-Կարա, 14, Փաղղուան, 15, Նախջուան, 16, Ծպնի, 17, Բազայան գիղօրէից և 18, Արդահանի տղ. դպրոցները: Գ. Մասնատուր շինութիւնների մէջ պահել է 1, Խանի, 2, Գօլթընդլու, 3, Խար, 4, Քերա, 5, Ուզունքիլիսէ, 6, Վարամահմատ, 7, Ուղուզլու, 8, Փոքր-Փարկիտ, 9, Դալա, 10, Ջոչի, 11, Բուլի, 12, Ուրուտ գիղօրէից աղ. դպրոցները: Այս բոլորն էլ մինչև դպրոցների փակումը գոյութիւն ունէին, իսկ նրանց 1/3 մասն այսօր էլ յարատոււմ է: Ե. Կառուցել է եկեղեցի 1, Սթահան, 2, Գիլանթապ, 3, Շառան, 4, Մանթաք, 5, Չուրուկ, 6, Բալթուրդ, 7, Խաս-Չիֆթիկլ, 8, Բալդարա, 9, Ջարտահա, 10, Չոլախլու (մատուտ), 11, Դուքանդլու, 12, Օրթաքիլիսէ, 13, Գեանդլու, 14, Ասկի-Վազի, 15, Գոռխանա, 16, Գույուզուղ, 17, Թազաքեանդ, 18, Մարալ, 19, Բուլի, 20, Խոշաքիլիսէ, 21, Աղջաղալէ, 22, Գեատուկ-Մարթիչ, 23, Ուրուտ, 24 Օրթաղալէ, 25, Արդահան, 26, Թանթուտ, 27, Բուլանդլու, 28, Արազի, 29, Ղափանլու և 30, Ջիրջիրիսի եկեղեցիք: Կ. Վերանորոգել է 1, Անույ Մայր եկեղ. ընկերութեան օգնութեամբ և մասամբ իր ծախսով, 2, Կաղզուանում մի մատուտ և մի եկեղ., 3, Խար, 4, Խարաբաղ, 5, Փաղղուան, 6, Ծպնի, 7, Օրթաքալեքու, 8, Խանի, 9, Ջոչի, 10, Հանգաբարակ, 11, Օրթաքաղիկլար, 12, Դալա, 13, Յովեբեան, 14, Բալթարխար, 15, Բերնա գիղերի եկեղեցիները: Ուրեմն Գ.եր. Աղուանեան բարեկարգել է 5 ուսումնարան, քացել է 3 դպր., ուսումնարանական յատուկ շէնքերով հիմնել 18 դպր. և մասնատուր շինութիւնների մէջ պահել է 12 դպրոց, ընդամենը 38 ուսումնարան: Կառուցել է 30 եկեղեցի և վերանորոգել 15 եկեղեցի: Եւ այս գործը կատարել է այն ժամանակ, երբ պատերազմի պատճառով ժողովուրդը չբարորակեան էր մատուտու և նորանուսձ երկրում Հոգ. կառավարութիւն անգամ չէր հաստատուած, որ գէթ մասամբ օգնէր նրան»¹³:

Ինչպես Կարսի թեմում, այնպես էլ Գանձակում Գրիգորիս եպիսկոպոսը բավական բեղուն աշխատանք է կատարում: Եռանդուն և գործնական քայլեր է ձեռնարկում հոգևոր-մշակութային և կրթական կյանքի աշխուժացնելու ուղղությամբ և ժամանակակիցների կողմից արժանանում է բարձր դրվատանքին. «...մեղծ բարքի տեր էր և ուր պաշտօն է վարել, աշխատել է միշտ ժողովրդի համակրութիւնը գրաւել, մանաւանդ դպրոցների վերայ առանձին ուշք դարձնելով և նոցա յառաջադիմութեան իրովստան նպաստելով»¹⁴: Գանձակում «...գործում է որպէս լաւ հոգևորական: Իւր ազդու քարոզներով՝ Մուշ, Տարոն, Վան և ուր որ եղել է, միշտ ուսման կարուտ մանկելու համար ուսումնասիրների քացման հոգատար է եղած, նույնպէս և Գանձակում քացել է երկսեռ ուսումնարան Լուսատրիչ եկեղեցոյ համար, հեռատու տեղից քանքաններ [հողի տակով փորված առու] համել տալով առողջարար ջուր է բերել տալիս Գանձակ, իւր հայրական յորդորներն անպտուղ չնմալով ժողովուրդի կողմից ուրախութեամբ կատարում էին միշտ և ամեն տեղ»¹⁵:

Գանձակում նշանակված օրվանից մեծ ուշադրություն է դարձնում դպրոցների վիճակին և ժողովրդին հուզող այլ հարցերին, որով էլ հուսադրում է թեմի բնակիչներին. «Չենք կարող յայտարար չլինել ամբողջ ժողովրդի տրամադրութեան և զգացմունքին և չյայտնել, որ բոլորն էլ մխիթարուած են սրբազան հօր սրտաբուխի, անկեղծ և պարզ քարոզներից: Շատ ցատերի դար-

1 Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Գարեգին Մովսէսեանցի ֆոնդ, 1-IV, ք. 2 շք.:

2 «Ատերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԻԲ, մաս Բ, Մկրտիչ Ա Խրիմեան կաթողիկոս Աննայան Հայոց (այսուհետ՝ Մկրտիչ Ա Խրիմեան), Սբ. Էջմիածին, 2020, էջ 698:

3 «Արձագանք», 1893, № 144, 10 դեկտեմբերի, էջ 17:

4 ԳԱԹ, Գարեգին Մովսէսեանցի ֆոնդ, 1-IV, ք. 17:

5 «Արարատ», 1893, ԺԲ, էջ 997: Հմտ. «Արձագանք», 1893, № 144, 10 դեկտեմբերի, էջ 1:

6 «Արարատ», նույն տեղում: Նշանակվում է 1876 թ. աշնանը (Նրամեան Համբ., Յուշարձան, Աղեքանդրիս, հ. Ա, 1929, էջ 85): Այդ պաշտոնին է մեծու մասն ուս-րուրական պատերազմի ժամանակ (Քաջբերդից/Գարբիի Տեր-Հովհաննիսյան/ Ալեքսանդրապոլից դեպի Կարին, «Փորձ», 1879, № 5, մայիս, էջ 177; № 9, սեպտեմբեր, էջ 116, 118: Հուշագրական ժառանգություն, հուշ. Խորեն քահանա Մտանքոյցյան, Երևան, 2011, էջ 101):

7 Առաջին անգամ Գանձակի առաջնորդական փոխանորդ է կիչվում 1889 թ. հուլիսի 30-ին («Նոր-Վար», 1889, № 126, 3 օգոստոսի, էջ 2), ապա պարբերաբար մինչև 1892 թ. («Նոր-Վար», 1890, № 88, 27 յունիսի, էջ 1; 1891, № 6, 15 յունիսի, էջ 2: Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ, Երևան, 2004, էջ 13) մինչև հաջորդ առաջնորդի գալը («Նոր-Վար», 1892, № 2, 5 յունիսի, էջ 1): 1892 թ. մարտի 30-ին արդեն նշվում է որպես նախկին առաջնորդ («Նոր-Վար», 1892, № 58, 9 ապրիլի, էջ 3):

8 «Արարատ», 1879, Ե, էջ 234:

9 «Արարատ», 1879, Ջ, էջ 281:

10 «Արարատ», 1893, ԺԲ, էջ 997:

11 Մկրտիչ Ա Խրիմեան, էջ 93-95:

12 Տեր-Մարիտեղեկեան Ս., Նանակ Բաշ-Շորաքեալից, «Մշակ», 1878, № 107, 29 յունիսի, էջ 2:

13 Մ. Տ. Մարտիկոս. /Մարտիկոս Տեր-Մարտիկոսյան/, րոբակություն, «Նոր-Վար», 1890, № 70, 1 յունիսի, էջ 3:

14 «Արձագանք», 1893, № 144, 10 դեկտեմբերի, էջ 1: Ի դեպ, Աղվանյանց ծրագրել էր հայրենի Վան քաղաքում Մկրտիչ Մանասարյանի հետ համատեղ բացել օրիորդաց դպրոց, որի իրականացման համար նախատեսել էր անձնակազմ միջոցներից հատկացնել 20,000 ռ. (նույն տեղում):

15 «Արարատ», 1893, ԺԲ, էջ 998: Հայտնի է, որ 1889 թ. օգոստոսի 20-ին Գանձակում «...սրբազան Աղուանեանը ազդու և սրտառու քարոզ խոսեց մի արքայա ընտանիքի օգնելու համար: Այդ քարոզի ազդեցութեան տակ (ներկա երդր փոքրիկ հասարակութիւնը առաւ նուրբան տակ) («Նոր-Վար», 1889, № 139, 24 օգոստոսի, էջ 2): Մուսրժ գաղթականու գործունեություն մասին տե՛ս նաև Քաջբերդում, Ալեքսանդրապոլից դեպի Կարին, «Փորձ», 1879, № 9, սեպտեմբեր, էջ 116: «Նոր-Վար», 1889, № 126, 3 օգոստոսի, էջ 2: Գիւղացի, րոբակություն, «Նոր-Վար», 1889, № 179, 28 հոկտեմբերի, էջ 3:

ջրեր, պտղատու ծառատաններ, պարտեզներ, անտառներ, կենսական վերաբերեալ գրեթէ ամեն պիտոյքներն է գոհացուցիչ տներ: Պակասած պէտքերն էլ զիտացիք ամեն օր բաղաբէն կերեն՝ զքոսատը և լիտի վայելող բաղաբացոց վրայ ծախելու, կարօտի մէջ մաշեցնելով իրանց աչքերը: Իսկ ամառայնոց գնացող բաղաբացի կանանց հագուստի ալեծուի գաղաբարաններ գեղեկուհիներու մախանձը կշարժեն, և պճնապիտութեան ճաշակը, որն թէ բնածիր է ի իգական սեռին, բայց առիկ և կըրգոնեն: Գիւղացի կանայք, առ ատելութեան բաղաբացի կանանց բաղդի և վայելման, ամենքնր կտեղան նոցա զլիսին. «Սև հագնես, կապուտ հագնես», առ լացնելով և՛ «Գրողը վերդը»:

Գեանջա-յայի անուանեալ գետակ, որով կըրուն Գանձակու այգիներ ու արտեր, հարաւեն հիսիս իջնալով՝ քաղաքն երկու մասի կըսծէ՝ Թորքաց և Հայոց կողմ անուանում, և կցմայ Կոր գետին օժանդակելու: Անոր ժամանակ գետակն իսպառ կցամաքի քաղաքամէջ տեղը, զի վերի կողմը բացուած անուներու ջրերն այգիներու և արտերու պիտոյից կըրծածունեն: Հայոց թաղեր՝ գետակի աջ ափին, իսկ թորքացն ձախ ափի վրայ ընկած են:

Քաղաքամիջի բնակիչք, որ գրեթէ զլիսաւորապէս բուրք և հայ տարրերը (մասնաւորապէս և այլ ազգերէ) կըրպկանան, ընդամենը 4082 տուն են՝ 24,031 անձինք, որոնցմէ 14,901՝ արական, 9130՝ իգական: Անոնցմէ 1845 տուն մահնետական՝ 6524 արական, 4615 իգական անձինքներն: 1565 տուն հայ՝ 4837 արական, 4077 իգական անձինքներով: 81 տուն հոգեւորական բոլոր ազգաբնակիչներու, 151 տուն ռուս և այլ բնակիչներ և 444 տուն ժամանակաւոր բնակիչներ:

Վաճառատեղին, շուկաներ, խանութներ, հիւրանոցներ, իջևաններ, բուրքն էլ բուրքաց բաղի վերայ կցտնունեն: Նոյնպէս և կառավարչական պաշտօնատներու ծառայողաց բնակարաններ, երկարուղիի կայարան, հանդերձ ռուսաց մի եկեղեցիով, բուրքաց բաղի վերայ ընկած են, իսկ հայոց բաղերու մէջ սակաւաթի խանութներ և ծառայողաց բնակարաններ կցտնունին: Բայց անտարական կալուածներու 2/3 մասն հայոց սեպակաւորութիւն է: Հայոց թաղերու մէջ սնունդի վերաբերեալ բաական խանութներ կցտնունին: Հայեր տնային գեղեցիկ կալուածներ ունեն և բուրքաց թաղերու մէջ: Թէ՛ հայոց և թէ՛ թորքաց թաղերու մէջ համարեա թէ չկայ տուն, որ չունենայ իւր կից այգի, պարտեզ, բուրաստան, ծաղկոց:

Մահնետականաց կողմի վերայ գտնուեր է թրքծեալ աղիստ շինած *հին բերդը*՝ իւր խրամատներով և ռուսաց եկեղեցույ հարաւակողման հանդէպ, զոր քանդեր և հարբեր է այժմեան տիրող իշխանութիւն և նորա տեղ շիներ արիեստագիտական վարժարան, գորանոցներ, բանտեր և այլ արքունի պիտո-

յից վերաբերեալ շէնքեր: Հին բերդի մնացորդից այժմ երևում է միայն նորա մէկ բուրգը, որ, ինչպէս կերևի, նորա պատի ամրութեան ու լայնութեան իբրև մի մնուչ բողոմուած է: Եւ պարսից իշխանութեան ժամանակի տիրող խանի կիսաբաժնի պալատը տակալին կըմայ նորա ընդարձակ, բայց կիսով չափ անբակ այգիին մէջ:

Հայեր իրենց կողման վրայ ունեն երկու եկեղեցի՝ Ս. Յովհաննէս Մայր եկեղեցի⁶ փոքր, Ս. Լուսաւորիչ եկեղեցին մեծաշէն⁷: Հայոց կողման արևելակոյս այգեստանեայց մէջ կայ մի ուխտատեղի՝ Չոլակ կամ Յոլակ անուն փոքր եկեղեցի⁸, որտեղ գանձակեցի ուխտատրներն և՛ ամառն և թէ ձմեռն կըաճախեն, մատաղ կընեն և կուրախանան: Ուխտատրներն գոյացեալ նուիրադրամներ կծառայեն հայոց վարժարաններուն: Հայեր թուրքաց կողման մէջ ունեն երկու փոքրիկ թաղեր՝ *Երևանցոց* և *Նորաշէնցոց* անուանեալ: Առաջինն կազմում է Երևանու գաղաբակներն, ընդամենը 30 տուն՝ Ս. Գէորգ անուամբ մի փոքրիկ անշուր եկեղեցիով⁹: Երկրորդն ունի ընդամենը 150 տնաչափ ծուխ և մի հնաշէն անշուր եկեղեցի՝ Ս. Աստուածածին անուամբ: Սոյն բաղի վերջ՝ արևմտակողմ, կայ ուխտատեղի փոքր եկեղեցի՝ Ս. Սարգիս անուամբ¹⁰, ուր կըաճախեն քաղաքացի ուխտատրներ, որոնցմէ


6 «Մոյն եկեղեցին թէպէտ անշուր է, բայց նշանաւոր է պատմական տեսակետով, զի անօր մէջ և որորտ ամփոփուած են Աղուանից Իսրայէլ կարօնիկոսը, Տարևու վաճիկ արքեպիսկոպոս Ներսէսը (Կաւիր Թեփի ժամանակի յայտնի հերոսը), Սէլիք Սէփունը՝ եկեղեցույ խորաններու մէջ, իսկ գարի և քակի մէջ որիչ շատ շիրիմներն նշանաւոր են մեկրութեան ժամանակի հերոսների՝ Դադի Մահրասայի (սաազ Կարդայախի) և Թիլիկ Արզումանի և այլ մի բանի մեկեղներու շիրիմներ» (ծնք՝ հեղինակի):
 Սր. Հովհաննէս եկեղեցին գտնվում է քաղաքի Բիլիսարյանը քաղաքամասում: Կառուցվել է 1633 թ.: ԺՊՆ դարում կառավարվել են նորոգություններ և հավելումներ: 1920 թ. բուրքերը հրետակով են արկերից «...3-ը հարվածել էին գմբեթին, իսկ երկուսը՝ հինգից քարով» (եկեղեցու շինարարության ընթացքի և նորոգումների մասին մանրամասն տե՛ս Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ, Երևան, 2004, էջ 47-50):
 7 «Այս եկեղեցին հոյակապ է, կարմիր կոփածոյ քարեր կառուցուած: Այլ կարմիր քարեր թերուած են 20 վերտ հեռաւորութեան վրայ՝ Մուրուզ գիտի քաղախանքէն» (ծնք՝ հեղինակի):
 Սր. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին գտնվում էր նույն Բիլիսարյանը քաղաքամասում: Երևանքական աշխատանքները տե՛ս են 16 տարի՝ 1853-1869 թթ. (մանրամասն տե՛ս Եզլ. աշխ., էջ 53-56):
 8 Չոլակի Սր. Աստվածածին եկեղեցին գտնվում էր Գանձակից 2 կմ հարավ: Կառուցվել է 1867 թ.: Հովհաննէս Միրումյանցի ջանքերով (Եզլ. աշխ., էջ 57-59):
 9 Երևանցոց բաղի Սր. Գեորգ եկեղեցու հիմնադրման ստույգ տարեթիվը հայտնի չէ: Վավերագրերում հիշվում է՝ սկսած 1818 թ.-ից: 1885 թ. գոյություն ունէր (Եզլ. աշխ., էջ 52-53):
 10 Նորաշէն բաղի Սր. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1713 թ.: 1985 թ. գոյություն ունէր: Նույն քաղաքային եզրին գտնվող գերեզմանատան Սր. Մարգիս եկեղեցի-ուխտատեղին, որին առնչվող հիշատակարարները մեզ հայտնի են՝ սկսած 1881 թ.-ից, խորհրդային տարիներին վերածվել էր Բողոքողութեան բարեկամության պալատի (մանրամասն տե՛ս Բարխուտայանց Մ., Արցախ, Բազմ, 1895, էջ 46-47: Կարապետյան Ս., Եզլ. աշխ., էջ 51-52, 56-57):

շատերուն զքոսավար է, մանաւանդ կառքով շրջող հարուստ ընտանեաց: Մորա արդիւնք կօժանդակէ նոյն բաղի հայոց վարժարանին:

Քաղաքիս չորս եկեղեցիներ ունեն այժմ տասն քահանայ, բայց մեր՝ պաշտօնավարութեամբ ի բարձրաս մտնելու ժամանակ (1889 յուլիս 3), տասն և չորս քահանայ ունէինք, որոնցմէ ծերունիներ բաղեցիք, իսկ նոցա տեղ ոչ մին ձեռնադրելու բախտը ունեցանք, մանաւանդ որ կարևորութիւն էլ ունինք: Չի քաղաքիս մէջ հինգ *ազգային-եկեղեցական և երեք քաղաքական վարժարաններ* կան, որոյ համար կրօնուսոյցներու յոյժ կարևորութիւն կայ:

Թորքաց կողման վրայ կան 11 մէշիտ (աղօթատեղի), մին միայն ունի երկու միմարը (աղօթքի կոչելու աշտարակ), վեց բաղանիք՝ մեծ և փոքր, երկուքն՝ մահնետական կանանց յատկացեալն, առհասարակ կեղտոտ և հոտած: Դոցա կենտրոնի կամարի ներքև շինուած է մի մեծ աազան (լճակ) 1 1/2 արշին¹¹ խորութեամբ, որոյ մէջ բազմութեամբ կընցունեն լողանալու: Այլ, ըստ որում, շարքներով լճակի տակ ջուրն խմայողութեան համար չեն փոխեր՝ վերստին տաքացնելու վառելափայտի անախորժ ծակերն չկրելու պատճառաւ, ուստի նորա մէջ առողջ և ախտաւոր լողացողներու կեղտն կիջնայ, կթանձրանայ լճակի յատակը, որ լողացողներու շփմամբ և յուզելով՝ ջուրն սաստիկ կպղտորի, աղտաւորի¹² և գարշելի կդառնայ: Յիշեալ քաղանիքներէն երկու-երեքն ունեն առանձնասենեակներ: Մաքրասէներու համար մի լաւ բան կայ միայն, որ բուրքաց քաղանիքներու ոճանց ջուրեր աղբիւրի են և վճիտ, իսկ հայոց կողման վրայ մի քաղանիք կայ, որ նոյնպէս ունի իւր աղտոտ և հոտած լճակի հետ և առանձնասենեակներ: Հայոց կանայք սովորութիւն չունեն քաղանեաց մէջ լողանալու, թերևս նոցա համար առանձին քաղանիք չիմելու համար, բացի զարգացեալ կանանցից, որք կմարտիմ նոյն միակ քաղանիքի առանձնասենեակներու մէջ: Թէ՛ բուրքաց և թէ՛ հայոց քաղանեաց առանձնասենեակներու մէջ փոքրիկ աազաններ կան՝ մի մարդ նստելու չափ մեծութեամբ (1 1/2 արշ. քառակուսի մեծութեամբ և 1 արշին խորութեամբ):

Բնակչաց իին սերնդեան երկեսնի կազմուածք պիճը, ինքեանք առողջ և տոկուն¹³ են: Մեծ մասամբ միջին հասակից բարձր և ուղղաբերձ, բայց դժբերով ոչ նուրբ գծագրութիւն ունեն: Չայնեղներ շատ են: Հայեր թիկնաւետ, հաստավիգ, լայնակրծք, մտեր, ձանրագնաց և գունատր են: Թորքեր բարակ, ջլապիճը, դեղնոտ, մանրաչափ, թեթևաշարժ և առհասարակ տեղեղ են, թեպետև հայեր էլ գեղեցիկ չեն: Այգեգործական աշխատութիւն, ինչպէս կրօնի մեզ, առհասարակ բնակչաց պնդակազմութիւն տուեր է:



11 Երկարութեան միավոր (1 1/2 միավորը հավասար է 1,0668 մ):
 12 Աղաչաւաւ:
 13 «Նոր սերունդ, սոյն երեք անականներու հակասակ, սկսել է նոր դար կազմել...» (ծնք՝ հեղինակի):

Սր. Հովհաննէս և Սր. Գրիգոր Լուսավորիչ եկ. (լուս.՝ Ֆ. Թերլեմոնի, 2008 թ.), Չոլակի Սր. Աստվածածին ուխտատ. (լուս.՝ Ս. Կարապետյան, 1985 թ.)

Գ.

Քաղաքի բնակչաց այգեգործութեան վերաբերմամբ

Քաղաքիս առաջին կարգի հարուստ շատ հայեր, իսկ բուրբաց սակա անձինք մեծ և բառական ճաշակով տներ շինած են՝ երկաթուղին այս կողմը գալու ժամանակէն սկսեալ, երբ յանկարծ սոցա առևտրի բազու բացուեր է, և սոցա առատ գինին և այլ բերքեր ի Տիփսիս և ի Բագու փոխադրելու միջոցն դիրացած է, և առատ փող շահեր են: Սոյն յանկարծական բազուի յաջողութիւն բացալերեր է գատնե՞ր՝ ոյժ տալ գինիի միջոցաւ աւելի ևս հարստանալու: Եւ այնուհետև հայեր տարացած գլխով և վառ երևակայութեամբ սկսեր են փոխառութիւն ընելով թուրքաց այգիներու խաղողներ գնել՝ գինի շինելու: Սակայն Տիփսիսոյ գինեվաճառ ճարպիկ յաճախորդներ էլ գիտցեր են իրենց առևտրականութեան օշիններ խաղալ սոցա պարզ գլխին հետ: Յաճախորդներ, ճախ մի տարի մեծ գին տալով, գինիներ գներ են և յաջողդ տարիներու մէջ քրոջեր: Այնուհետև գանձակեցիներ զիջումն չեն ունեցեր՝ պակաս գնով գինի վաճառելու, առաջի մեծ շահեկանութեան համն իրենց բերնի մէջ մնալու համար: Հետևապէս գինիներ, անվաճառ մնալով, թրուեր են: Յաջողդ տարին նոր գինիները, հին՝ բթուած գինիներու հետ խառնելով, երկուքն ի միասին ծախելու յուսով, երկուքն էլ անգիտանացեր են, ըստ առածին՝ «Հարամն եկեր, հալալն տարեր»: Իսկ իրենց վրայ մնացած փոխառութիւն աճեր և կրկնապատկուեր է, որոյ ծանրութեան տակ այժմ շատեր կտրան, և շատերն էլ, իրենց գրաւ դրած այգիներու վրայ տներնին էլ ծախելով, վրայ կուտան ո՛ր չեն ազատուիր: Ուստի և գանձակեցոց ոճանց գլուխներ կախ ընկած են: Երանի՜ թե այս ընչաբաղոցութեան վնաս վերջին փորձ լինէր:

Վերջին տարիներու մէջ գինու գին ընկած լինելով՝ այլևս բուրբաց խաղողներ առնող հայեր չկան, բացի սակաբաքի ոճանց, բայց թուրքեր գիտեն իրենց խաղողներ լաւ պահպանել, և զանազան քաղաքներ արտահանութիւն ընել: Առաջին տարին գինու մի բեռն¹⁴, որ 20 փութ կըրաչէ, 80-100 մանէրով ծախուեր է, իսկ այժմ հազիւ 45-50 մանէրի:

Աղոյարասիրութիւն մեզ կտախպէ սանել, թէ գանձակեցի բառական բռնով հայեր իրենց շահած փողերով այգիներու թիւը շատուցեր են, թէ՛ ծախու առեր հետզհետև և թէ՛ նորաբող այգիներ տնկեր են՝ խոհական հեռատեսութեամբ գիտնալով, որ պատրաստի դրամոց կեանք անկայուն է: Գիտնալով, որ հողային (այգեգործական, անդատանական) կալուածն փայտաշէն և երկաթաշէն կարուածներէն աւելի հաստատուն է, որ ո՛չ ժամանակի հմուտիւն կարող է փտեցնել և քանդել, և ո՛չ ջրիեղելով անգամ



Գանձակի երկմիմարե մզկիթը, ժՁ դար

կարող է ի կորուստ տանել և անհետացնել: Բացի սոցանէ և գիտցեր են անիրաւ մասնոճայով բանական այգիներ պատրաստել – ասել կուզեն, քառական բռնով որդիներ կրթեր են քաղաքական բարձր և միջնակարգ ուսումնարաններու միջոցաւ: Բառական բռնով համալսարանականներ ունին: Քառաքական գործերու մէջ մեծ ու փոքր պաշտօնավարներ, աստիճանատորներ և զանազան ծառայութեանց մէջ բանգէտներ, որք գանձակեցոց անկողնուստի հարստութիւն և փառք կկազմեն: Բայց մի ինչ՝ բերութիւն կըշմարտի – ազգային ոգոյ մեր շնչման պակասութիւն օտար դաստիարակութեամբ ուսումնաւոր տներու մէջ:

Գանձակ, լինելով երկաթուղու գծի վրայ Տիփսիս և Բագու քաղաքներու մէջտեղ, վաճառականութիւն գրեթէ միշտ բանուկ է՝ ուրիշ տեղերու հետ համեմատելով և հետզհետև ծաղկելու և պտղաբերելու վրայ է, որ ո՛չ սակաւ մխիթարութիւն կառթէ շրջահայեաց ընկերատէրի: Սոյ ցարախ կէտ, սոքա, լինելով տեղ բազում այգիներու, որ իրենց արտահանութեան է փող շահելու գլխատր աղբիւրն է, այգեգործական մասնագէտներ պատրաստելու հոգատարութիւն չունեն, և արդէն իրենց ուսումնարար մի երկու մասնագէտներին էլ գործ չեն յանձներ: Ուստի և այգեգործական արհեստագիտութիւն մանկական հասակի մէջ կզտնուի:

Երկարողիւն առաջ քաղաքիս մահմետականներ շատ աղքատ եղեր են, իսկ այնուհետև փողի համն առնելով, սակառակտութեամբ սպուլն էլ իրենց տ-

14 «Սոյ բեռն 50 բարձան (փութ) է: Բարձան 16 խունու-ուրնն մի բեռ գինին 20 փութ կընէ» (ԾՁԲ. հեղինակի):

վորական լինելով՝ իրենց սննդեան վերաբերեալ պիտոյքներն անգամ ծախու հանքեր են՝ փող դիզելու:

Իրենց սկսած այս արդար վատակով հարքս - տացեր են և թէ՛ սակաք ի քազմաց անիրաւ միջոցներ ձեռնբռնախ եղեր են և թէ՛ այժմ այնչափ հարքս - տացեր են, որ սկսեր են հայոց հարստութեան դէմ մրցել: Վարձքով տալու գեղեցիկ տներ շիներ են և կշինեն, կարուածներ կանեն, իրենց ապագան կապառով են, մանաւանդ այգիներու թիւ շատուցեր են: Իսկ հայեր, արդէն շռայլ կեանքի սովորելով, իրենց բացած ծախոց մեծ դարվազաները (մեծ դուռ) այլևս չեն կարող փորքացնել: Թէպէտ կջանան, բայց... վասն որոյ հայերն թուրքերուն առակ նշառակի դարձեր են՝ հայերու վերա կնքելով առակ. «Երանի թէ հայու վերջին խելքը մեր վուխը լինէր»:

Գ.

Սովորութիւններու և վարք ու բարքի վերաբերութեամբ

Հայոց հին ասանդութիւններէն մէկն է և Նաւասարդի տօնակատարութիւնը, որ ընդհանրացած մընացեր է այս նահապետական ժողովրդի մէջ¹⁵: Թէպէտ և պատմութիւնը շատ թեթև հայացքով կլիշատակէ, սակայն ժողովրդեան սրտերու մէջ Նաւասարդը դեռ ունի իւր սրբազան նշանակութիւնն և իւր անջնջելի յիշատակը: Նաւասարդ ասանդ լոկ ամառ անուն չէ, որ ըստ մեր նոր տօնարի կկատասի օգոստոս ամսոյն, այլ սա յատուկ ազգային մի տօնակատարութիւն է, որ միշտ նոյնմընք ամառ մէջ՝ Յիւնականց պատի գլխի շաբաթ օր, կտօնէ ժողովուրդը: Յունարի մէկն այստեղ ազգային նոր տարի չի սեպուիր, սոցա մօտ նշանակութիւն չունի և իրարու տուն չեն շրջեր, այլ Նաւասարդ կհամարին ազգային նոր տարեգլուխ, ուստի և կորախաճան նոյն օր:

Նաւասարդը Նոյի տապալնէն ելնելու տարեդարձն կհամարեն և այդ փրկութեան օրն՝ իրենց նոր տարին: Նաւասարդ քաղը կտուգաբանեն՝ Նաւ-հասարդ կան Նաւ-ի սարդ, այսինքն՝ ման կիմայ հաստ սարքի վրայ: Իսկ այդ օրուան յատկացել կերակուրը՝ համէտ կողովոտ (հարիսա) կկալանեն, ամբողջ բնակիչներ՝ թէ՛ հարուստ և թէ՛ աղքատ: Պարծանօք կլիշեն, որ այդ մնացած է Նոյէն, որովհետև երբ նոյն օրը իջեր է Նոյը տապալնէն, ցանկացեր է զոն մատուցանել Աստուծոյ, մատաղ է արել մի սուրբ անասուն՝ խառնելով նորա մսի հետ և ցորեան, ըստ որում, եկիւմ հաց էլ ունեցեր, որուն ցալսօր ժամանակի կորկոտ անուն կուտան: Եւ կասեն. «Ընդունենց Աստուած Նոյի մատաղը և կնքեց նոյն ժամայն իւր հաշտութեան պայմանը՝ ծիածան աղեղը շնորհելովն»:

Սոյն օր գանձակեցիք ընծայաբերութիւններ կանեն, քարեկամը՝ բարեկամին, նշանատու՝ նշա-



Գանձակի շուկան և երկաթուղին, ժՁ դար

նածին, և ամբողջ հայ ժողովուրդը, որկիցէ բարձ պտուղ ձեռքերնին, իրարու տուն շրջելով, ուրախակցութիւն կկատեն իրարու՝ շնորհատրելով միմեանց Նաւասարդը որպէս նոր տարի: Նաւասարդի այս տոնախմբութիւնը ընդհանուր է և՛ գիւղերու համար, որ աւելի ճշտութեամբ և ճաշակով կկատարեն, որ բացի տօնական խրախճանութենէ՝ ունի մի սովորութիւն ևս, այն է՝ փեսացոյի տան կողմանէ նշանած օրիորդի տան յերդից ընկոյզ կրպփին ի վայր և այլն, և այլն: Իսկ քաղաքացիք սկսեր են հետզհետև թուլացնել, արհամարիւելով ազգային՝ օտարամոլութեան կյարին: Հենց քաղաքացիներն կկսի միշտ այսպիսի զարտուղութիւններ, որք սկսեր են արդէն առանց անաչելու օտարին (գերմանական) տօնածառի սովորութիւնը մտցունել ազգայնոց մէջ՝ սկիզբն առնելով վարժարանական դասիցներէն, և այն էլ վարժարաններու նախաձեռնութեամբ և աշակերտուեան խտրութեցումամբ:

Թէ՛ հայոց և թէ՛ բուրբաց խրախճանութեան նուազածուներ առհասարակ թուրքերն են, յոյժ սակաւ բացառութեամբ՝ և հայեր: Տեղական երգեր թուրքերէն են սովորաբար: Որչափ ես հանդիպեր, տեսեր և ստուգեր եմ, հայերն երգեր այն ժամանակ միայն կլիշեն, երբ սեղանակիցներու կենաց գինի կատաջարկուի: Ըստ պատշաճի կերպն և՛ շաքականցներ: Հայերն երգեր թէն շատունց ի վեր մտած են հայ վարժարանաց մէջ, բայց ուսանողներ շատ սառն են դէպի ազգային երգեր՝ համեմատելով

15 «Նավասարդի տօնը կկատարեն նոյնպէս Շուշայ և Նուխայ գաւառներ» (ԾՁԲ. հեղինակի):

Աղեքանդաբայօյի, Վարսի, Վանայ, Մշոյ հետ, որք ղիտիչի գլշերներն ոչ միայն տներու մէջ, այլև փո-ղոցներն անգամ կենդանացնեն իրենց եռանդուն երգասացութեամբ:

Քաղաքիս հայերի մեծ մասն (հասարակ դասակարգ) ամեն կողմանէ նահապետակ¹⁶ վիճակի մէջ կտնտնեն, բայց բոլոր բնակիչ հայերն առհասարակ պարկեշտ են (անճշան բացատրեամբ), աստուածասէր, եկեղեցասէր, եկեղեցականասէր, գթած, աղքատասէր, ողորմութիւն տարու համար բարձր աստիճանի վրայ կանգնած: Ասկէ քանի տարի առաջ *Աղքատանոցի ընկերութիւն* ունեցեր են, որ այժմ կործանման վիճակի մէջ կտնտնուի: Այդ ծախորդութեան դէմ հոգի ի բոլին կմարտնչին՝ վերականգնելու ոչ միայն ձեռքով, այլև գլխովին անգամ այդ կործանման փլատակի տակ խորթլով՝ վերականգնել կուզէ զայն:

Հայերը առհասարակ ժողովներու մէջ ատենախօսելուն ու կանոնադր վիճարանելուն, կարգով փաստարանելուն վարժ չեն, ինչպէս կերևի, օրինակ, տուողներ քիչ պատահած են: Ընդհանուր օգտին համար խնդիրներ կազմելու, խորհելու ու գործելու սովորութիւն մտած չէ: Առանձնական կեանք կվարեն: Չմտառայ երկար գլշերներ իրարու տուն գնալու, ժամանակ անցկացնելու, գիտցածին իրարու հաղորդելու, նոր տեղեկութիւններ լսելու սովորութիւն չունեն: Իրիկուններ շուտ կրնանան: Դորա պատճառով, մեր կարծիքով, տներին իրարմ հետ լինել և այգիներու մէջ ունցնած աշխատութիւններն են, իսկ աստուարական համար՝ շուկայի հետադարձութիւնն, որք վերադարձին վատակելով շուտ կրնանան:

Ազգային ընդհանրական օգտի վերաբերեալ գործը իրենցմէ ընտրեալ վարչակազմներուն յանձնել զկնի, ձեռնբափ կլինեն նոցա գործունէութեան և գործառնութեանց հաշիւ առնելու: Իզական սեռ որչափ չէ զարգացեր, այնչափ առեփ օրինակելի համեստութիւն ունի: Ինչպէս կերևի, ծնողացէ յորդոց յորդի աւանդական կրօնասիրութեան և աստուածապաշտութեան ուսուցմամբ կպարտաստուի այս շնորհի, որ Հայաստանի բնակչաց յատուկ է: Սոցա հազուատներդ իին ձև, որ իին սերունդի մեծագոյն մասն կգործածէ, շատ անճշակ և տձև է:

Քաղաքացի կանայք ինչ միտ և տարազ կհագնուին, գիտցաք կանայք ամբողջովին նոյն միտն և նոյն տարազով կհագնուին, իհարկէ, միտի քանց ու աժանի տարբերութեամբ: Ներքնաշապիկի վրայէն (տրան տեղացիք հալա կասեն) երկար կրկնաշապիկ կան վերնաշապիկ կհագնեն՝ շիլայէ (կարմիր կտաւ) պատրաստուած, երկար, բայց ոչ այնչափ պճողնատոր: Նորա վրայէն երկբևանի քանկոն¹⁷, առանց բազուկնին նորա բերնու մէջ անցնելու, որք կայս ընկած կծածանեն այնպէս, որ հետուն եկող կին չորս թևանի կերնայ: Բաճկոն կարճ է, հագի ծունկերուն կհասնի: Իսկ գլխի կպոցներու սարք ու կարգ շատ անճշակ, անճոնի, գեղեցկացնելու համար ոչ միայն անյարմար է, այլև տգեղացոցիչ: Տեղացիք կպատմեն, թէ այդ տգեղացոցիչ ձևի պատճառն յառաջ եկած է պարսից տիրապետութեան ժամանակի առևանգելու և բռնաբարելու յաճախ-յաճախ սովորութենէն, զի նոցա կրօնք իրատմբ կուտար իր հետևողներուն հպատակ և անգոր ազգերուն ստացումոց պատուականագումնին ժառանգորդ լինելու:

Կանանց գլխի կպոցի ձև, եթէ կարելի է նկարագրել, այս է. մտքիդ թող ներկայանայ, արգոյ՝ ընթերցող, հասարակ շորերէն փաթարած երեք հատ զլանաձև, քրաչափ հաստութեամբ մի արշին երկարութեամբ իրարու վրայ հաստատուած երկշիւներ, որք ի միասին բազուկի հաստութեամբ կկազմեն: Սորա վրայէն կարուած է կլապիտոնով անեղագործեալ չորս մատնաչափ լայն, հաստ ժապաւէն, վերին՝ դէպի երեսներ բարձրացած եզերքներու վրայ, կարուած են կլոր, ոսկեգօծեալ արծաթեալ կօճակներու շարան: Սոյն պատրաստեալ կպոցը կանայք, իրենց դուռնի վրայ առնելով, կկուր կողմն ծնօտ ի վեր կբարձրացնեն, որոնց տուտեր կկապեն գլխի վրայ, որ երկարաքիթ Օ գրի ձևն կտառնայ: Ի վերջոյ, նոյն կպոցի վրայէն, կխեն ի վայր, մինչև ի դունչ ձիգ կբաշեն սպիտակ շոր, հորիզոնական, գծով բերնի վրայէն ականջէ ականջ հասած ճիշտ լուսնի առաջին քառորդի մնամութեամբ: Լա ևս է ասել, կանայք կկապեն հաստ կարճ, սպիտակ մորուք, և շորի մէջ տեղ մի գնդանաղ կխկնեն, որ խայտ կծով սպիտակի մէջը: Կանայք եկեղեցի ու հեռու տեղ գնալու ժամանակ վերև նկարագրած ծորուքն կկապեն, քարձակքունի սօլ (մաշիկ) կհագնեն, և գլխի վրա առած կփաթարեն երկար, պճողնատոր, սպիտակ¹⁸ սաւանի մէջ: Կանայք շատ համեստ

17 «Հարուստներու քանկոնի երես կպատրաստուի մանիշակագոյն և կպոչոյտ քաշիչէ, քրանքի [գլխառն] ներքև ծալք] եզերքներ սանոյր [քանկաթեք մորթով կենցանի] կկարեն, որսի շորքի վրայ վերահեռ քրած, վրան դարձուցած, իսկ արքաները հասարակ կկարէ» (ՃԵՐ. հեղինակի):

18 «Վանայ, Մշոյ, Երևանու, Շուշուայ, Գանձակի և այլ գաւառաց հայոց կանայք առհասարակ սպիտակ սաւանի մէջ փաթարուած դուրս փողոց կկնեն: Կարելի է կարծել, որ կանանց սպիտակ վերնասաւան ազգային լինի» (ՃԵՐ. հեղինակի):

կըջնեն, «Նամահարան»¹⁹ բուրբի կնկններն անելի շատ համեստ կպահեն ինքր գինքնին, իսկ դրացնաց տուն և մօտիկ տներն հոլանքի²⁰ կերբան:

Ուսում, զարգացում, վաճառականութիւն, կատարելագործեալ արհեստներ, կենցաղագիտութիւն, մարքասիրութիւն, կոկիկ հագուստ, լա ապրուստ և հարստութիւն բուրքերէն կրկնապատիկ երեսի հայոց մէջ է, իսկ ստորին մանրավաճառութիւն, մրգավաճառութիւն, անկուպար²¹ արհեստաւորութիւն, չարքաշ կեանք, անմտնող կերակրել, կեղտոտութիւն, մեղկութիւն²² բուրքաց մէջ է: Թուրքերու մէջ ինքնաշխատութեան ձգտում չկայ, ինքնօգնութեամբ ապրելու, մարդկային ստոր կողման շարին մէջ մտնալու մտադրութեմ տակալին շատ հեռու են: Թուրք մի յատուկ շնորհք միայն ունի, որոյ միջոցաւ մասամբ հայոցմէ գերադասեն, այն է, զի տնն նուր մետաքսից փորոյ ու մեծ թաշկինակներ գործել, նոցա վրայ մ[աշ]խը բրգաց մէջ է: Թուրքները տալ, թալիչի մահուտի վրայ սեղանի ծածկոցներ և բարձի երեսներ գոյնգոյն մետաքսով անեղնագործել գեղեցիկ նկարներով, և այլ տոյնայիս անեղնագործութիւններ: Մետաքսի դրամուզ²³ գործել և այլ նրբաթել ոստայնակութիւն գիտեն:

Տեղոյս հայերն սովորութիւն ունեն մնցեցելոց բաղմուն և այգ-եօթան օրը բազմաթիւ յուրարկատրներուն (որոնք որ տունը գնալ կարգեն) և աղքատաց համար առատ սեղան կազմել-հարուստ և միջին կարգի երողներուն իրենց տան մէջ, իսկ ստորին դասակարգի ի գերեզմանոց, իւր կարողութեան չափով: Առ այս, մեր մօտակայ անցեալ յաջորդներ կարգադրութիւն ըրած են, որ քաղման օրը մետեալտերներ իրենց լացողնովի հետ և սեղան պատրաստելու ներութիւն չբաշեն, այլ նոյն ծախսոց մի մասն տան ազգային-եկեղեցական վարժարանաց պիտոյից համար, իսկ այգ-եօթան օրը ճաշ պատրաստել, ինչպէս որ իրենք կկաննան: Սոյն կարգադրութեան համար քահանաներէն պարտադրական ստորագրութիւն ստացել են յաջորդներն-քաղման օր մնցեցելակ տան հոգեճաշ չտեսել, այլ միայն հոգոց ըսել ու դառնալ: Սոյն կարգադրութիւն այժմ կարճ ի կալ կընթանայ: Ոմանք սաստիկ չեղմեռանդութենէ խղճով կտանջուին՝ յուրարկատրներուն և աղքատաց հոգեճաշ չտրուելուն և մնցեցելակ սեղաններ ծխատր քահանայ չորինելու համար, վասն որոյ ոմանք այս կարգադրութեան ցանկէն դուրս կուզան, իսկ սեղան չկազմողներէն շատերն էլ վարժարանաց նպաստ չեն նուիրել: Առ այս քահանայք միայն օրինապահ մնացել են: Սոյն կարգադրութեան կտրագայաց լինելու գլխատր պատճառն ինձ կրուի, որ հայոց վարժարանաց հո-

գարաբծութեան անհոգութիւնն է: Ձի ուրիշ քաղաքաց հոգաբարձուներ յանուն վարժարանի ստացած 20-50 ք. գումարներն ազգային լրագիրներու միջոցաւ կիրատարակեն ի միասնութիւն նուիրողաց և ի քարեախանձութիւն այլոց: Իսկ տեղոյս հոգաբարձուներ մի երկու հարիւրով կանոն²⁴ առանց արտասարկութեան տալու:

Երբևիցէ ժամանակ յանուն (հոգե)խանգստեան մնցեցելոց հոգեհաց տրուելու օրը սեղանի վերջ «հոգեթաս» բաժակ անաշարակուելու պահուն տանտիրոջ կողմէն կնեղկայացուի սեղանապետին (գլխատր հոգևորականին) մի թարմ պտուղ-կիտրուն, նարինջ կամ խնձոր հանդերձ մի յատկացեալ բաժակաբասով: Սեղանապետ ողորմաբան կառաջարկէ բոլոր սեղանակիցներուն հանդերձ բարեմադրութեամբ առ Աստուած ի նպաստ հոգոց համայն իին և նոր մնցեցելոց: Ողորմաբաս խնելուն պէս իրեն ներկայացուած պտուղը նախ ինքն հոտոտելով²⁴ շրջաբերութիւն կուտայ միս սեղանակիցներուն հոտոտելու և ողորմաբաս խնելու (խմում բաժակն տանուտըն միշտ լեցնելով կնորոզէ): Հոտոտելի տարակամ և ողորմաբաս իրենց շրջանը ստարտելով՝ կվերադառնան սեղանապետին մօտ, ըստ նախնաւոր սովորութեան, սպաս քահանայական դասն զգեստաւորեալ, խունկ ու մնմով, հոգեհանգիստ կկատարէ տան մէջ:

Հարանեաց հանդէսներու հին և նոր սովորութիւններ իրարու խառնուած, ոտալ (բէքմէզ) ու մածմիս խառնուող դարձեր է (առաջնոյն՝ արտաքին տեսք և, ներքին համը քաղցր, երկրորդին՝ արտաքինն սպիտակ, ներքինն՝ թթու), երկուքն էլ իրենց իսկական որակներն և յատկութիւն կորսնցուցել են: Մարդ չի կարող ճանաչել, թէ այդ հանդէս ազգային է, թէ՞ օտար, զի հանդիսականներ իրենց այլակերպուած նիստ ու կացով, տարբեր վարմունքներով, օտարաձև հագուստով, զանազան լեզուներով գործածութեամբ, կերուխումի խառնաշփոթ տեսակներով հայկական ոչ մի որոշ կերպ չեն ներկայացնել:

Նշանադրութիւնն նախապէս կկատարուի երկու կողմանց խմումի ազգականներու ներկայութեամբ և քահանայի պահպանիչով:

Պատկի երեկոյին փեսայացուի տանը փեսաւորներն միայն թէլ կխմեն ու կերթան հարանառութեան, փեսայի հալալ հետերնին տանելով, որ հարսի հալալի հետ կօրինեն քահանայք, նշանօրինքէն զկնի՝ բազմութեան մէջ, ուր ներկայ են ձեռք ձեռքի տառած հարս ու փեսայն, որ հանդիսատր կերպով, ի ներկայութեան բազմութեան, իրարու հետ կլիխախրին իրարու հաւանելու և ամուսնակցելու ապացուցանող նշաններ: Բայց փեսա-

16 «Սովորաբար նահապետական կասններ մեր ժամանակի անգարգազեալներու համար իին նահապետական ժամանակն անգարգազեալ համարելով, այնինչ նահապետական անգարգազեալ համարում ժամանակի եղիպտական ու քաղդական գիտութիւններն մեր մինչև ցայժմ չունենք, և մեր ամենակարևոր պիտոյից արհեստներն ու գիտութիւնները շատերը նահապետական ժամանակէն կկան մեզ հասել են: Եթէ շրջաքաղմ գլխով մի փոքր մտածելու լինենք նահապետաց գիտելու վրայ, իրաշախիներ են մեզ համար արդարև: Օրինակ այժմ, առանց ծաղր ու ծանակ լինելու, ո՞վ պիտի համարակուել իր կարծիք յայտնելու, թէ ամենակրթնուող ճրագուն, ձեթլեն, իւրլեն և կնեղանաց հոտած ու փռած մարմին մատուցներէն մարդիչ օճառ կարելի է պատրաստել: Հապա ընդհանուր մարդկութեան ուրախութեան պատճառով Հայաստանի գիտ հայոց գինքն և այլն» (ՃԵՐ. հեղինակի):

19 Ամուրի:
20 Առանց ծածկույթի, մերկ:
21 Անվերջ, անսահման:
22 Հեշտութիւնբոյրցում:
23 Կերպուց:

24 «Պտղի հոտոտելու նշանակութիւնն մի քաջատրոյ չտնտնեցու, վասն որոյ կրկնուր մեր կարծեանք: Թերևս դրախտական կնեանք ծաղի պտուղէն գրկուելու համար վերտիկ արժանանալու նշանաբան համարում փնի» (ՃԵՐ. հեղինակի):



Ջրօրհները Փանձակ քաղաքում

տրներ, քահանայի օրհնութենն ո՛չ մի բան հասկանալու տրամադիր չեն խառնաշփոթ խօսակցութեան, ծիծաղի քրքիջներու, դուրս ու ներս ելնուալ ընելու, շփման ու ալեծփուելու պատճառաւ: Յետ ծիսակատարութեանն, երկու կողմանց հրաւերեալներ կ'պատուովին զանազան տեսակ անուշեղէններու, խմորեղէններու, շաքարեղէններու, չոր ու քարձ մրգեղէններու և ոգելից ըմպելիքներու ճոխ սեղանով: Ապա պատկի օրհնութեան համար եկեղեցի կերթան լուսավառութեան քափօրով, առհասարակ հետխոտն, եթէ հարսի տուն չափազանց հեռու չէ, իսկ եթէ ոչ, կ'առախուսորով: Բոլոր հանդիսականներ ձեռքերնին մոմ առած կ'առաջնորդուեն լապտերներով, մաշականերով²⁵ և տեղ-գոտնայով: Թափօրականաց խառնաշփոթ աղաղակ, անորոշ ձայներու գոռուճ-գոռուճ, փոխանակ մարդկօրէն գուարճանալու և ազգային երգեր ասելու, հիւ՛, պիւ՛, շիւ՛, ճիւ՛ ձայներով կատարեալ վայրենութիւն կենդանացնեն լուրջ դիտողին: Մարդու բերան չի բռներ ամեն բանի մէջ այդ համեստ ժողովրդեան այսպիսի անպատուաբեր արարմունք նկարագրել: Իսկ եկեղեցու մէջ թէ քահանայն ի՞նչ օրհնութիւն կկարդայ պատկի՛ այս գլխատու սուրբ խորհրդեան համար, որոյ սրբութեան կծառայեն եկեղեցու մնացեալ վեց խորհուրդներ, բնա լսող չկայ:

Բաց ի սմանէ, է՛լ կենդանի հաւ բերել, ճուսցնել եկեղեցու մէջ, արձն՝ւկ, ժխո՛ր... Լա՛ւ՛, գրի՛չ, լա՛ւ՛, այդ չափն է՛լ շատ է և վիրատիրի ազգային պատուոյն: Այս համեստ ժողովուրդ այդ ժամանկ, գիտես թէ յանկարծ Սէբայ սերնդականութենն ելած կայնականի փոխուած է: Կարսեցոյ և ակէքանդրապօլոց ուղ հարսանեաց հանդէսներն է՛լ այսպէս են, բացի եկեղեցու միջի արձնուկէն: Եւ ահա քափօրն նոր գոռուճ-գոռուճ վերադարձաւ փեսայի տուն, բայց այստեղ ընտանեկան համեստութեամբ պարսեց, ուրախացաւ, ընթրեց և ցրտեցաւ:

Երկրորդ օր խմամյներն սննէ փեսայի տուն կրերեն սայլերով հարսի օժիտներ: Նոր գոյգի տուն

25 Բացակայություն, որ նշանակում է՝ Աստված ցանկացավ:

կահատրելու կատարեալ բաւականութեամբ այնչափ կահ-կարասիներ կ'եցուեն փեսայի տունը և այնպիսի շռայլութեամբ, որ այդ պատճառաւ ուրիշներու անուանանալն կ'դժուարացնէ և երկու սեռի չամուսնանալու չարարատիկ կեանք կ'պատճառուորէ շատերուն՝ ընդդէմ աստուածայի օրհնաց:

Ե

Չարագան միջոցներու վերաբերութեամբ Քաղաքիս հայեր ունեն եկեղեցական-ծխական հինգ վարժարաններ: Երկու երկրասեան երկսեռներ կ'պահպանուեն ընդ հովանաւորութեամբ Ս. Յովհաննէս Մայր եկեղեցոյ²⁶, որոնց մէջ կան 107 տղաներ և 175 աղջիկներ: Երկու միդասեան երկսեռներ՝ ընդ հովանաւորութեամբ Ս. Լուսաւորիչ եկեղեցոյ²⁷, որոնց մէջ կան 96 տղաներ և 110 աղջիկներ: Եւ մի միդասեան արականաց վարժարան՝ ընդ հովանաւորութեամբ Ս. Աստուածածին եկեղեցու Նորաշէն²⁸, որոյ մէջ կան 21 աշակերտներ: Հայոց հինգ վարժարանաց աշակերտների թիւն է ընդամենը 509՝ 224 տղայ և 285 աղջիկ: Կան այստեղ և երկու արականաց մասնաւոր վարժարաններ պետական ուղղութեամբ: Տիրացու Յակոբ Տէր-Յարութիւնեանի վարժարանի մէջ՝ 50, Եղիշէ Իսահակեանցի՝ 87, որոնց մէջ կվարժուեն ընդամենը 137 հայ աշակերտ:

Պետական վարժարաններ²⁹ չորս են քաղաքիս մէջ.

ա) Գլխնազիւն, որոյ բոլոր աշակերտաց թիւն է 192, որոնցմէ 66 տեղական և 37 օտարական հայեր, 60 ռուս, 22 թուրք և այլն: Առաջ կրկնապատիկ էին հայ աշակերտներ՝ մինչև անցեալ տարի...:

բ) Քաղաքական վարժարան, որոյ բոլոր աշակերտաց թիւն է 264, որոնցմէ 170 քաղաքացի հայեր են, 37՝ գիւղացի հայեր, մնացեալ 57 ռուս, թուրք և այլն:

գ) Արիւստատրաց վարժարան, որոյ բոլոր աշակերտաց թիւն է 116, որոնցմէ 70 հայեր են, գրեթէ բոլորն էլ գիւղացիք՝ բացի երկուքէն, 24 ռուս և 22 թուրք:

դ) Մասնաւոր իզականաց ռուսաց վարժարան, որոյ բոլոր աշակերտուեաց թիւն է 54, որոնցմէ 28

26 Սբ. Հովհաննէս եկեղեցու Մետրապան արական դպրոցը հիմնադրուել է 1844 թ., իսկ Հռիփսիմյան օրիորդացը՝ 1859 թ. (այս հաստատությունների գործունեության մասին տես Կարապետյան Ս., նշվ. աշխ., էջ 43-45):

27 Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արական և Մարիամյան օրիորդաց դպրոցները հիմնադրվել են միաժամանակ՝ 1889/90 ուստարում: 1909 թ. Եղիսաբեր և Սկրտիչ Անանասյան անուսիների կողմից կառուցվում է արական դպրոցի նոր շենքը և ստանում Անանասյան անունը (նշվ. աշխ., էջ 46-47):

28 Նորաշեն բաղի Սբ. Աստվածածին արական դպրոցը հիմնադրվել է 1867 թ. (նշվ. աշխ., էջ 43-46):

29 Գանձակի մասնավոր և պետական դպրոցների մասին տես նշվ. աշխ., էջ 47:

հայ, 18 զանձակեցի, 10 օտարերկրացի հայեր և մնացեալ 26 ռուս:

Ուրեմն քաղաքիս մէջ 509՝ հայոց եկեղեցական ծխական վարժարանաց միջոցաւ, 545՝ տիրող իշխանութեան վարժարանաց միջոցաւ հայ աշակերտներ կվարժուեն, որոնց թիւն է 1054: Թողունք այն հայ աշակերտները, որք քաղաքէ դուրս այլևայլ հեռաւոր տեղեր կվարժուեն, որոնց թիւ գտնել չէր կարելի: Հայեր, իրենց զաւակներ վարժեցնելով աստուածապաշտական, տնտեսագիտական, եկեղեցագիտական և կենցաղագիտական գիտութեանց մէջ, բարի հայ և բարի քրիստոնեայ կատարատեն հայ ազգի գոյութիւնը պահպանելու և տիրող իշխանութեան երկրի բնակավայրերու բարեկիրք բնակիչներ հասցնելու նպատակաւ: Ինչպէս որ բազում դարերէ ի վեր, իրենց շրջակայ վայրեցի և կիրք կլանող ազգաց բարբարոսական հարուածոց և արգելքների ամեն կերպ չարաշարիւթեանց դիմանալով, ծառայել են ընդհանուր մարդկութեան վերագարգացման և կիսառայեցն ցայսօր ժամանակի:

Հապա եթէ հայեր իրենց դրացի ազգաց ոմանց մնան լինէին ուսումնաստեաց, աշխարհի խաղաղութեան վրոգվեցուցիչ և ընդհանուր զարգացման միջոցներ ձեռք առնելու ձգտումն չուներային, իրենց մէջէն որչափ դատարկաշրջիկներ, անբարոյականներ, գողեր և ընդհանուրի բարեկեցութեան վնասակար անդամներ պիտի արտաղլիւնէ ի վնաս աշխարհի և մանաւորապէս ի դոմարութիւն մեր բարեխմամ տերութեան կառավարչական գործոց: Անուրանայի է, որ առհասարակ ամէն տեղ, հայեր իրենց վարժարաններու բռնած ուղղութեան և նոցա միջոցաւ տաւանդած դաստիարակութեան շնորհիւ և բարեկիրքութեամբ իրենց դրացի ազգերէն գեր ի վերու կիսանդիսանան, ընտանեկան ժողի սրբութեան, շինարարութեան, հիւրասիրութեան, խաղաղասիրութեան, մարդակազմի պնդութեան և աշխատասիրութեան մէջ:

Թէ տեղական հայ ժողովուրդ ի՞նչ ուղղութեան կիստիկ ազգային լրագրաց և պարբերական բերքերի միջոցաւ, և ո՞ր խմբագրի առաջնորդող յորդաններու յայտնած մտքերու հաւան եղած է և օգտակար կիսամարէ զայն իր զարգացման և մտադրական պաշարին համար, մեր կարծիքով այդ նորստացած այս ու այն լրագրի և պարբերական բերքերի բաժանորդագրութեան որքանութենն կտեսնուի³⁰, ուստի այստեղ կնշանակենք իւրաքանչիւր լրագրի բաժանորդներու թիւը.

ա) Պաշտօնական «Աւրաքսա» ամսագիր, որ բացառութիւն կիսամարտի, գի թէ 64 բաժանորդ ունի, սակայն հարկադրեալ: Մտացողներէն 37 քահանայ, 11 դպիր, 15 վարժապետ և մի ոչ հարկադրեալ աշխարհական:

30 «Թշվառն սոյն լրագրաց գաւառական գործակալներէն ոմանց անձնական հաշիւներու պատճառաւ լրագրաց բաժանորդներու թիւը աւելացնելու յորդորներ պակաս չեն» (ծրք. հեղինակի):



Անանասյան դպրոցը (ուս.՝ Ս. Կարապետյանի, 1905 թ.)

- բ) «Նոր-Դար», ունի 58 բաժանորդ,
 - գ) «Մշակ», 60 բաժանորդ,
 - դ) «Աղբիւր» և «Տարաք», 123,
 - ե) «Մուրճ», 18,
 - զ) «Արձագանք», 8:
- Ռուսերէն՝ «Կավկազ» 30, «Թիֆլիսկիյ լիստոկ» 13, «Նսոլոյն-օրդրենին» 39:

Իսկ մնացեալ միւս հայ թերթեր, ինչպէս ստուգեցինք, յոյժ սակաւ բաժանորդներ ունենալու համար, ինչպէս կ'ասեն, մի-մի, երկու-երկու, ուստի և դուրս թողուցինք:

Զ

Նորանոր ձգտումների վերաբերութեամբ Մօտ անցեալէն առաջ քաղաքիս հայ բնակչաց իւրաքանչիւրի տան կից եղել է ազգի: Երբ քաղաքն սկսեւ է զարգանալ, հարստանալ և փողոցներ, ըստ մեծի մասի ուղղուիչ, այնուհետև բանի մը գլխատուր փողոցներու վրա եղած այգիներ հետզհետէ բաժան-բաժան եղած են թէ՛ գերդաստանական բաժանման և թէ՛ տնտեսներու գետնի գիւղը բանգանալու պատճառաւ: Աղբատներ, իհարկէ, փողի կաթստութիւն ունենալով, սկսեւ են իրենց այգիներ մասն-մասն ծախել զանազան մարդկանց վրայ՝ տնաշինութեան համար: Այդտեղեանց մէջ տներ շինուներ են երկու կարգ՝ ղեմ առ ղեմ, իրենց ունեցած մասնաւոր պարտեղներով, որք ղէպի այգիտնուր խորք երկարացած են: Այդ նորաշէն պարտեղատու տները մի-մի փողրիկ կար կնկացուներն գլխատուր փողոցի ուղղութեամբ, իբրև աջ ու ձախ քաղաքին թևեր: Դոյն փողրիկ թաղի համար փողոցի վրայ մի անցք կամ մի մեծ դուռ (դարվազալ տնտեսուց լեզուով) բողոցած են, ուրտեղէն աջ ու ահեակ թաղերի բնակիչներ իրենց բնակարան կզման: Իսկ հարստներ իրենց այգետեղեաց վրայ նոյն ձևով կառուածներ շինել են՝ վարձու տալու: Այսպիսի փողրիկ՝ աջ ու ահեակ բացուած թևերին տեղացիներ մահլիս³¹ կըրեն: Բայց գլխատուր փողոցներէն դուրս

31 Թաղախոս:



բաղաճի տնաշինութեանց հին ձևեր տակաւին կնճան: Իւրաքանչիւր տան կից՝ ետևի կողմ, այգի կայ: Քաղաքի մէջ եղած այգիներ ցեխապատով (ձօնրա) շրջապատուած են, իսկ սոցա հեռաւոր շուրջ և հետզհետէ տարածուած այգիներ վշաջան-կով շրջապատուած: Քաղաքի նորաշէն բոլոր տներ բրծեալ աղիտով շինուած են, քիչերն քարաշէն են: Վերջին կէս դարու մէջ քաղաքն այնպէ՛ս արագութեամբ փոփոխութիւն ստացած է, որ տները, իրենց հին ու նոր, զանազանակերպ շինութեամբ, փողոցներու ուղղութեան վրայ խայտաճանուկ տեսարան կը ներկայացնեն: Տեսնողն կարծէ, թէ ասոնցմէ ո՛մանք հնադարեան, միջնադարեան և վերջնադարեան են: Օրինակի համար, սկսեալ գիղական և ստոյրից կարգի տնէն մինչև գաւառական, մասանգական և մայրաքաղաքական շքեղ տներ, իրարու հետ խառն պարակից են:

Անցեալ դարի վերջի յիսուական բուականների առաջին տասնեակ տարիներու մէջ շինուած տներու պատերը ցեխով են բարձրացուցեր, որք փայտածածկ են և տափարակ տանիքով: Այդպիսի տներ փոքր, ցածր, բզաչափ մեծութեամբ վերևն բացուած լուսամուտով, խաւար և խոճաւ են գիւղական տներու նման: Երկրորդ տասնեակի մէջ շինուած տների պատեր, թէև որն մօտաւորով, որն բրծեալ աղիտով, բայց կամարածածկ են, որոնց պատերու վրայ բրծեալ աղիտով Նոյեան տապանի նման քաշելով բարձրացուած կամարած ըրած են: Կամարներն որն գծրթաձև և որն օրորոցաձև, որոնց յատակ կան հողէ, կան աղիտապատ են: Նոյնպէս և վերևն կան կողքէն փոքր լուսամուտներով: Պատերու վրայ կան խորշեր, պատուհաններ, դարակներ՝ մերթրներ դնելով³²:

Երրորդ տասնամեակի մէջ տներու շինութիւններ ընդարձակուած են, սենեկաց թիւ աւելացուցած, պատերու վրայ բաւական մեծութեամբ լուսամուտներ բացուած են ներսի կողմն քակի վրայ: Թէև փայտաշարկ և տափարակ տանիքով, բայց ներսէն բաւական կոկիկ, ոմանց ծածկի գերաններ բաց, ոմանց ձեղնու և յատակ տախտակածածկ ներկած կան առանց ներկի, կահաւորած են հասարակ արձողներով, սեղանով, լամպով և այլ կահ-կարասիքներով: Ոմանց ննջարանաց մէջ չորս ոտնեայ հասարակ բախտեր կան, որոյ վրայ քանի մը հոգի կպատկեն, իսկ ոմանց ննջարաններու մէջ գաւազաւ հասարակ մահճակալներ դրուած են: Տներն ոմանք կրկնաշարկ են:

Չորրորդ տասնամեակի մէջ տներ կրկնաշարկ եղած են ըստ գերմանացոց ճարտարապետու-

թեան, ծածք օրորոցաձև (թէրևս հետեր են գաղթական գերմանացոց) և կղմիմորով պատած, ներսի ու ներսի կողմէն մեծ-մեծ լուսամուտներով, որք երկաթեայ վանդակապատ ունեն: Վերջիններս, իհարկէ, աւելի շքեղ և կանոնաւոր կարանիքերով են, պատեր պատտառուած, փայլուն գաղղերով աւելի, քան իւր նախորդ տասնամեակինն:

Հինգերորդ տասնամեակի տներ կելոպականացած են: Շինուած են նորանոր ճարտարապետութեամբ, կրկին մեծութեամբ դռներով ու լուսամուտներով, առանց վանդակապատի, մեծ դահլիճով, բազում սենեակներով, յօրինուածով ձեղնուով, յատակն ցկարէն տախտակածով, պատշգամբներով, իսկ ծածկ՝ քիթեղապատ: Պատեր ծածկուած են գեղեցիկ և քանկագին պատտառներով, սենեակները փայլուն ու ընրոյշ կարասիքներով, քանկագին նիւթերով կահաւորուած են, ծածկոցներով և վարպտոյրներով գարդարուած, կելոպական գորգերի փռուածքով, շքեղ լամպերով ու բազմաճրագ ջահերով:

Առաջին և միջին հարուստներու տներու ներքև սրբատաշ քարերով շինուած են սրահի մեծութեամբ ներքնատները՝ գիմին գով պահելու, որոյ մէջ ծայրէ ի ծայր լիքն են խցաչափ մեծութեամբ տակառներ: Նկարագրածս ասէն ինչ և միջին կարգի տներ իրենց ձևով ու կարասիքներով այժմ շատ կան և կնճան իրենց տեղերու ձեռքին, եթէ նոցա վիճակ նոյն է մնացեր, ինչ որ էին իրենց տնաշինութեան ժամանակ: Տներու շինութեանց որպիսութենէ թող չափէ և հասկանայ ընթերցող քաղաքիս հայերու արանց և կանանց հագուստի տարագր և նիւթը և ապրուստի եկեւէ վիճակը, նիստ ու կացն, վարք ու վարմունք և կրթութիւնը:


Անցեալ ժամանակի մէջ օդիի գործածութիւն և արտահանելու պահանջ շատ է եղել այստեղ, որքա համար տներուն կից եղած այգիներ 2/3 մասն թթահիներ կրոնէին, սպա մի մասն՝ խաղողի որբեր: Այն ժամանակ թրից քաշուած օդիի տեղական բաքման (լիտր, որ 16 ֆունտ է) մի մանթ կծախտի եղեր, իսկ երբ որ տերութեան կողմէ ակցիզ (մաքս) տրուեան օղեհանութեան վրայ, այգետներ թթահիները կուտորեր են, որ կծառայէր և շերտապահութեան և նոցա տեղ գիներեր որբեր տնկեր են: Հոգատար իշխանութիւն, մաքսի միջոցաւ, ժողովողան կնճանց վնասակար օդին քիչոցունէ ցանկացեր է թէև, բայց ժողովուրդն էլ նոցա փոխարէն գիներեր այգիներ գիտցեր է աւելի շատցունց: Օղեհանութիւն, խմելու վնասակարութեն էլ զատ, և՛ մահառիթ տնեղի պատճառ եղեր է տեղական քնակացեր, զի թրի օղեհանութեան նիւթի մնացորդն՝ չէն, իւրաքանչիւր օդիի գործարանատեր (ամեն տուն, որ թթահի ունեցեր է, ունեցեր է և՛ օղեհանութեան գործարան) անխտիք կերպով կրափէր իւր տան առաջ, փողոցի մէջ կամ պարտեզի մի անկիւն, որն որ արևի տարութեամբ թրուելու և փտելու հոտն, բացի տնեղէն և բազում տեսակ իիւանդութեանց, պատճառ եղեր է և

32 «Այս կերպ տներու գլխաւորն տակաւին կնճան և կպահպանուի իրեն դիւանատուն (կանցկերիս) գիմնակոնի բաղաթիս, որ Խանակի անուն կիւն, զի ուսաց տիրապետութիւնէ առաջ իշխող պարսից խանի տունն է եղեր, որ իջևաներ է յիսուական բուականին ուսաց բազմատանց, հանգոցեալ երջանկալիչատակ Աղէքսանդր Երկրորդ կայսր, երբ այցելել է ի քաղաքս» (ձնք.՝ հեղինակի):


մատաղ սերունդին դեղնութիւն, վատառողջութիւն և հալուած կեանք առելու, և բազում գերեզմանաց էլ քնակիչներ է պատրաստել և գաղթեցուցեր: Գանձակեցիք կվկայեն, որ աճելութեան էլ վնասակար է եղեր այդ գարշահտութիւն: Մենք, այս բաներ լսեալով, արդէն գիտէինք, երբ այստեղ պաշտօն ունեցանք: Բայց մի տարիէն յետոյ փորձառութիւն ունեցանք եկեղեցու պարտեզի մէջ, որոյ թթենեաց թերթէն օղեհանն մնացորդ չէր քանի մը կոյտ դիզեր էր տեղոյն գերեզմանաքարերու վրայ, որոնցմէ գոյացած գարշահտութիւն իրաւ անտանելի էր: Սորա հետ երևակայութեան մէջ ծագեցաւ և առաջոց լսածս՝ գարշահտութեան վնասակարութիւն, ուստի և անմիջապէս գլուխ պտտոյտ եկաւ, այնպէ՛ս որ քիչ մնաց տապանաքարերու վրայ կործանուի:

Տիգրանակերտու կողմանց պէս և՛ այստեղ կայ իլնարաւը (տարեկան վերք), որ մարդիկ սովորաբար կհանեն դէճի ու ձեռաց վրայ: Բայց այժմ այն վերք թէև կիսով չափ պակասած է, ի հարկէ չէի անհետանալու և մարքափորութեան բազառութիւն պատճառաւ, ուստի կիսման այժմ վճիտ է, օդ՝ մաքրուած, առողջութիւն՝ գորացած, և քնակիչներ հետզհետէ, ինչպէս իրենք կըսեն, կզեղեցկանան: Բայց այժմ ևս երկու սեռն էլ գրեթէ ամբողջովին տօկել են, ինչպէս որ վարժարանաց միջոցաւ կստուգուի: Մինչև ներկայ ժամանակ մոր սերունդի մէջ բաւական շատ թուով տակաւի տզեղութեամբ ծաղկատարներ կան, այնպէս որ դէմքերին թողորովն այրանդակուած են: Այսպիսի վիճակի ենթարկուած օրիորդներուն մեծ միսիթարութիւն են ուսումն և ձեռագործութիւն, որոնց համար եռանդով կաշխատեն յուսաջ գնալու:

Գանձակու հայոց թաղեր խմելու ջրի կողմանէ³³ կարի աղբատ են: Աղբիւրով կամ ականահատութեամբ արտաբերուած «քահրիզի» ջուր չունեն, այն ինչ թուրաց թաղեր չորս քեհարկզներ ունեն, նոյնպէ՛ս և քաղաքի ստորակողման տեղերէն ոմանք արդէն ականահատութեամբ ջուրը բերած են: Լաւ և առատ սառոյց էլ պակաս է այստեղ, որով կարողանային աղբատներ ամառնային տօթի ժամանակ մի փոքր միսիթարութիւն վայելել, որովհետև ձմեռն այնչափ ցուրտ չըներ, որ ամառուան համար սառոյց գոյացներ: Եղած սառոյցներն էլ կեղտոտ, անպիտան են, զի նոցա շերտերու մէջեր լի են հողերով, ասպնեղով և հողմավար ծոցտիներով: Գետակի ջուր իւր գնացքի տեղը չի առեր, այլ յարժար ծամանակին պիտի անցունեն զոգատր տափարակներու մէջ սառցներու: Վասն որոյ հայեր միշտ գետակի տար ու պղտոր ջրեր խմած են մինչև ասկէ քանի տարի առաջ: Այնուհետև պ. Վարդազար Բոխզաւանց (ընչանտութեամբ միջին կարգի մի երիտա-



36. Բարձրեղ Քան յոյ քաղաքին: Եւ զո. Մուսուս 31. Սրբատարան 1814 շինուելու 5711-5712 ու Մուս, իսկ անոն 6 յոյսն:



35. Բարձրեղ Քան յոյ քաղաքին: Եւ զո. Կոնստանտին, 246, 5711 ու Մուս, իսկ անոն 6 յոյսն:



34. Բարձրեղ Քան յոյ քաղաքին, 131 Մուս, իսկ անոն 6 յոյսն:

ՆԱՌՉՆԵՐ ԳԱՆՁԱԿԻ ԲՆԱԿԵՒԻ ՄՈՆԵՐԻՅ, ԺԵ-ԺԸ ՊՊ.

սարդ), ուք հազարաչափ ուրիշ ծախսելով, գետակի ջուրն ծածկեալ ասպնեղներու միջոցաւ գտել տուեր է և խողոցներով բաժանել է հայոց գլխաւոր փողոցներու վրայ: Վասն որոյ այս երիտասարդն այնչափ պատիւ ունի ժողովրդեան առաջ, որ իրձն հարուստներու ոսկու փայլունութիւն կնսեմանայ տրա հանդէպ: Խրախճանական շատ ճաշերուն իրաւիրուած է, լինի նա տանտիրոջ բարեկամ կամ ոչ:

Առաջին կարգի հարուստներն Լանասեան պ. Պետրոս այժմ սկսեր է քաղաքի ջուրն աւելի ազ-

33 Քաղաքի ցրամատակարարման մասին տես Կարապետյան Մ., 524, աշխ., էջ 38:

նուացնել: Իճը, զաւակ չունենալով, մահկանացու զաւակի փոխարէն յիշատակաց արժանի մի անմահ զաւակ ստեղծագործելու ձեռք գարկած է. այն է՝ ականահատութեամբ քահարայի ջուր բերել կուտայ հայոց քանի մի փողոցներու վրայ բաժանելու, որն մինչև առաջիկայ (1891 թ.) յուլիս ամսոյն դուրս բերուած կլուսացուեր, և որոյ վրայ արդէն քանի մը հազար ծախսեր է: Արքայս դասակարգ ժողովուրդն էլ, որ ամարանոց երբայու միջոց չունի, քանի մը հազար բերաններով արդէն սկսեր է օրինել այդ պարոնի երջայտութեան հողին:

Մենք, յառաջ քան զՎանասեանն, Ս. Լուսաորիչ եկեղեցոյ շրջակայ երեք բաղերու բնակիչներէն ընկերութիւն կազմեցինք՝ բաժանորդագրութեամբ քեանիրից ջուր բերել տալու: Եւ արդէն իճն հողի իրաւատուներ ընտրած, 7000 րոտիլաչափ ստորագրել տուած և ձեռն ի գործ եղած էինք, բայց գործի զուլիս կանգնող անձանց շատութեան և գործն շատ քարակ և խոր խորիդոմութեանց ենթարկուելու պատճառաւ մինչ այս, մինչ այն խորիդոց մէջ կալեծիլէին մեր իրաւատուներն, պ. Պետրոս Նանասեանցն, միայնակ իր ձեռնարկած գործի զուլիս անցնելով, քեանիրից ջուր բերելու «անդրանկութիւն» յափշտակեց մեր ձեռքէն: Ահա «գարբայութիւն Աստուծոյ բռնաբարի և բռունք յափշտակին գնա» վարդապետութեան իմաստի գործնական պարզ մեկնաբանութիւնն է՝ Նանասեանցի ըրածն: Բայց իրեն վրայ էլ խօ՞ արժան չնստեցաւ արքայութեան այդ նեղ և անձուկ ճանապարհն, զի փորոզի մարդկանց ոճանց նախանձ, ոչ միայն վնասներ և արգելքներ հասցնելու աշխատեց, այլև փորոզն ու պերուած ականներու և հորերու մէջ գետակի ջուր կապելով լեցուց, ամբողջ գործը արել և քանդել ջանալով, իսկապէս հոգեմաշ ըրաւ յուսահատութեան աստիճանի հասցնելու չափ: Այս մասին մենք եկեղեցոյ ատենանի մէջ բարենադրեցինք և կրարեմադրեցինք առ Աստուած, որ այդ նախանձով պարոններու կիրքը ի բարի նախանձ շրջէ «ի պատիւ մի գմիմանար եղանելոյ» Պօղոս տառաքալարի քարոզածի պէս: Եւ ցոյց տուինք այդ չար ու նախանձ անձերուն քարենախանձութեամբ գործելու յիշատակաց արժանի այլ գործքերը և «անդրանկութիւն» վայելելու յարձար միջոցները: Օրինակ Ս. Յովնանէն և եկեղեցոյ օրիորդաց վարժարանի շէնք չունենալն, Ս. Լուսաորիչ եկեղեցոյ վարժարանաց շէնքեր և գրադարան չունենալն, նոյն եկեղեցոյ զմբէք և զանգակատուն չիներու կարևորութիւնը, քաղաքիս Երևանցոց և Նորաշէն քաղերու սակաւաբիւ և անձեռնմաս ժողովրդեան անշուք և խաբիտու եկեղեցեաց վերանորոգութեան պէտքն, ատենց նման և այլ «անդրանկութիւն» վայելելու միջոցներ: Առ որս անշուշտ ենք, որ մի օր այդ սերմեր պիտի բուսցունէր Գանձակու պարարտասիրտ ժողովուրդը:

Ե
Գանձակու այգեատնանայց պտղատու ծառեր և նոցա պտուղներու տեսակներ ու որպիստութիւններ

Խաղողի որբեր տնկուած են 1 1/2 արշին լայնուքեամբ բուններու երկու եզերքներու վրայ: Թունքեր անձան (մի քիչ) բարձրութիւն ունեն, որբեր կոճողեր ծածկուած են նոցա մէջ: Վազերի հենման համար երեք հաստ հաստ և երկար եղէզներ տնտանիի պէս վազի շուրջ տնկուած են և մէջտեղից կապուած: Վազի վրայի մի տարեկան իճն ուտել կրբերն կամարած և նոցա ծայրեր կլտնարհացնեն ու կկապեն եղէզներու վարի ետտանիներու վրայ, որ խաղող շատ տան: Եւ արդարև, բոլոր պտղատու ծառերի թէք ընկլած ճիւղերն աւելի առատաբեր են, իսկ նոր խաղողներ (վազի վրայ գարնան ծածկ բարձր ուր) կբարձրանան եղէզներու վերի ծայրի վրայ, փաթթուելով կիովանտորեն վազին: Իրաբանչիւր վագարութեան մէջտեղ բունքի լայնութեամբ առուներ կթողուն, որուն տեղացիներ ամու կրքեն: Սակայն որբատուններու կարգն շատ անկանոն ձևած են, առաջին՝ բունքեր և առուներ փոխանակ արևելքն արևմուտք երկարացնելու, ի հարկէ, ինչ տեղ որ կարմարի, որպէսզի հարաւային արեգակն նոցա վերայ իյնար, շատ այգիներու առուներ և բունքեր հարաւն հիսիս երկարացուցեր են, որով ամբողջ վազերու ստուերներն, իրարու վրայ հովանաւորելով, զիրար կզրկեն արևու ջերմութենէն և կտկարանան անձան ու բերքի մէջ: Երկրորդ՝ մի բունքի վրայ երկու կարգ տնկուած վազի իրարու դէմուղէն են ուղիղ գծով, որ ետտանի չեն կազմեր, որպէսզի իրարու արեգակ չհասփանցին:

- 1. Խաղող ունի 13 տեսակ.
 - ա) *Չամչենի*. սպիտակ ու դեղին որակութեամբ, մանրապտուղ, կարի քաղցր, որոյ գինին ամենընտիր կլինի և թէ առանձին քամին շամպանայի դէմ կմրցէ:
 - բ) *Լկենի*. սևորակ, Գանձակու մեծաբնակ սև գինին գլխատրապէս այս խաղողից կպատրաստեն:
 - գ) *Կտրենի*. ըստ վրացոց՝ խաղող, ասել է՝ ճիշտ նման երկրորդին թէ՛ որակութեամբ և թէ՛ համով, բայց տրա կաշին հաստ է, քան նորան:
 - դ) *Կարմրակենի*. մոյգ կարմիր, տրա պտուղներ մեծ են, քան թէ 2-րդ և 3-րդ տեսակներին: Սա թէ՛ զին կտայ և թէ՛ երկար կապրի ձմեռ, որոյ միս պինդ և կաշին հաստ է:
 - ե) *Սպիտակենի*. ասորմէ թէ՛ սպիտակ գինի կպատրաստեն և թէ՛ ուտելու համար ձմեռ երկար կապրի:
 - զ) *Իծենի* (էժու պտկի ձև). սև, սա ամեն տեսակ խաղողէն դիմացկունն է ձմեռայ համար, թէ՛ պահելու և թէ՛ թրու դնելու կպիտոյանալ:
 - է) *Հազրենի*. այն է սպիտակ էժուպտուկ, որ 6-րորդի յառկութիւններն ունի:

ը) *Աղագորձագ* (աղան չի տեսնար). սպիտակապղն, սա գրեթէ միևնոյն ուտելու համար է: Իւր անունն առած է շուտահատութեան համար, այսինքն՝ այգեպահան կուտու, այգեախորջ աչքին չի հասցուներ: Մշոյ այգիներու մէջ տրա նման շուտահաս խաղողի մի տեսակ ունի, որուն վաղահաս ամուն կուտակ:

- թ) *Թարիզենի* (բերևս Թարիզէն տեղափոխուած). սպիտակ, դեղնագոյն, երկարապտուղ, որոյն ձմեռուած խաղար հայեր քաց օղի մէջ կպահեն այս տեսակ խաղող, որ շատ չի ապրի, բութքեր փակ օղի մէջ կպահեն, որ շատ կապրի և մեծ քանակութեամբ կարտահանեն զանազան քաղաքներ:
- ժ) *Կախէրի խաղող*. մօտ անցնալի մէջ Կախէրէն փոխադրուած, թէ՛ տնկելով և թէ՛ պատուաստելով քաական անձեղուցեր են: Տեղոյս կլիման նորա յատկութիւնը չի փոխեր: Հարկ չկայ ասելու, որ պատուական գինի կուտայ:

ժա) *Մուշկատնի* (տուտերէն). փոխադրուած է Խրիմէն, որ հնդկաբնկոյցի հոտ ունի թէ՛ խաղողն և թէ՛ նորա պատուական գինին:

ժբ) *Կանաչկենի*. որակութիւնը միշտ կանաչ, չամչենիի նման քաղցր, մտու և կաշին պինդ, յորմէ գինի չեն քամեր, այլ ուտելու համար է:

ժգ) *Մարանդենի* (փոխադրուած է Հին Նախիչևանից). գոյնը սև է, ողկոյզը մեծ և ամեն խաղողապտուղի շուրջն լիքն է կրեկաչափ խաղողի չիսա հատիկներով: Կարի քաղցր է, յորմէ գինի կշինեն, բայց սակաւագիտ է:

2. Նոս. 5 տեսակ՝ քաղցր, թրու, թրուաշ, որոյ տեսակները կզանազանուն իրենց կեղևի որպիսութեամբ: Մի փոքր տեսա ժամանակ քաղելով՝ կցանքեցնեն քաղցոյեայ տեղ, որ երկար ապրի, ուստի և հատիկներ այնչափ մտու չեն լիներ: Կուր գետի ափունքներու մնացուցներու մէջ քանի վարյենի նունք կան, որոյ պտուղներ թէև փոքր, բայց առատ հիւր կնատակարարին, յորմէ նոսն քանձր «գինի» կշինեն: Սա խմելու չի պիտոյանար, այլ խորոված ձկներ, նորա մէջ քարալետելով, կհանման, որոյ ֆունտն՝ 15 կուպկի կծախտի, կարտահանեն ուրիշ քաղաքներ և կկոչուի նառ-շարափ:

3. Թուր. 3 տեսակ՝ սպիտակ, սև և «օխտը քարափ», այսինքն՝ տարին եօրն անգամ քար (նախախալոյթ) տուող:

4. Կիտրոն և նարինջ. նոր մշակուած, ջերմանցներու մէջ տնկուած և փոխադրուող տակառներու մէջ: Կիտրոն կարի մեծ կլինի, բոնալիք, իսկ նարինջը, ընդհակառակն, փոքր, երկուքն ալ հաստակելու և ոչ այնչափ բարեհամ և ազնիւ:

5. Դեղձ. 4 տեսակ.

ա) *Հիւի* անուճով, որ ամէնէն պատուականագոյնն է, մկ թուշը՝ դեղին, միւսը՝ կարմիր: Սորա եր-

կու տեսակ են՝ տապակուող և չտապակուող, այսինքն՝ կորիզից պղծուող և չպղծուող, համն անոյշ, բոնալիք և առանց արդամազի:

բ) *Երևանի*. գոյնը դեղին, արուամազով, չարճորուող, համն անոյշ, հոտը կլիմանոնի, ձուած՝ սագի ձուի մեծութեամբ և երկարակեանց:

գ) *Ջրը*. գոյնը սպիտակ, կարմրաքաշ, հաւկթի մեծութեամբ, ըստ մեծի մասին կուտը հանելով կշուրացնեն (չիր անել) ձմեռուած համար:

դ) *Թիւրքը (անմազ)*. կեղևը՝ խնձորի նման նոսր, մեծութիւնն՝ խոշոր ծիրանի չափ, բազմաբեր և բարեհամ:

6. Կեռաս՝ 5 տեսակ.

ա) *Արջաղ*. վաղահաս, սպիտակ, փափուկ, ջրուտ:

բ) *Աղ-գիւսա*. սպիտակ, սա առաջինից ատելի խոշոր է և քաղցր:

գ) *Ղարա-սաչաղ*. մոյգ կարմիր, երկրորդ տեսակի մեծութեամբ և անուշութեամբ:

դ) և ե) *Ղոխի-գիւսա*. սպիտակ և մոյգ կարմիր, արքայակաղին մեծութեամբ և պինդ միս ունեն:

7. Թրու-գիլաս, այն է՝ քալ (վիշնեա). ոչ այնչափ ազնիւ տեսակ, ինչպէս որ Կոստանդնուպոլսոյ արտարձաններու բերքն է: Գանձակեցիներ գրեթէ ամեն տեսակ պտուղներէն, կեռասից սկսած մինչև տեսա ընկոյզ, գիտեն քանդակ «անոյշ» ըստ պօսեցուց (մուրաբա) շինել և կարի շուալութեամբ կգործածեն: Հարուստէն սկսեալ՝ մուտ գործեր է մինչև արդատի տուն: Լի՞ ք-լի՞ ք անուշ-ամաններով քանի մը տեսակ կհանեն հիւրերու առաջ:

8. Միրան. 3 տեսակ՝ *Գեօզ-արիզ*՝ մեծ, ջրալի, անոյշ: Քաղցրակորիզ, ոչ այնչափ ազնիւ և ոչ Վանայ ծիրաններու պէս բազմատեսակ:

9. Մալոր. 3 տեսակ՝ *Ալուչա*. դեղնագոյն, մեծ, ջրալի և գովարար: *Գեօզա սուլքան*՝ թրուաշ, տրա թէ՛ քարձ և թէ՛ չորացածը կերակուր համեմելու համար է: *Շլոր*. մանր և կարի թրու՝ միայն կերակուրներու համար:

10. Իսենցի դամբուլ (դամբուլ) և սպիտակ, երկարանձ և կարի անոյշ:

11. Դամբուլ (սա դամոն չէ). բազմատեսակ ու սալորի ձևով (քարեհամ, թրուաշ և թրու), զանազան մեծութեամբ և ոճանք հալի ձուի չափ, որոնց ազնիւ տեսակների 5 հատն մի ֆունտ կկշռէ: Վանը, որ ժառպատուղներու մայրաքաղաքն է³⁴, որոյ մէջ 60 տեսակ տանձ և 40 տեսակ խնձոր կայ և այլ պտուղներ, այս տեսակ պտուղ չունի: Վերոյիշեալ դամբուլներու անուններն են՝ *արլուխար, քաղցր դամբուլ, ջրը-դամբուլ, Ղոխի դամբուլ* (քաղցր և թրու), էլի *դամբուլ, ծիրանի դամբուլ* և այլն:

12. Խնձոր. քանի մը տեսակ՝ *դրոշիլիք*, որ վաղահաս է, *շխշխկան*, որոյ միջի սերմ շարժական է:

34 «Չանազանայի ի պտուղս և ի տերևս և բազումս բազմաբերս (Նորինացի, զուլիս Ա. Գ.Լ. ԺԶ)» (ճնք.՝ հեղինակի):

Մուշկի՛ բարեհամ և անուշահոտ, *Թրու խնճոր* և *Ղուփ-գորբա*: Վերջի երկուքը ձմեռնուկ են և երկա-րակեաց:

13. Տանճ. նոյնպէս քանի՛ մը տեսակ, բայց ոչ ազնիւ և բարեհամ, որոնց անուններն են՝ *Նառ ար-մատի*, *Բոլորչիքն բուռի* (լորսամարգի ազդը), *Մար-խոշուռ*, *Չմեռնատանճ*, *Կորկատանճ*:

14. Մերկևիլ. առ հասարակ պատուական է: *Թրու-սերկևիլի՛* գրեթէ մարդու զանգի մեծութեան չափ, *շարքար-հայտուափ* (շարքարսերկևիլ)՝ տանճի ձև և և կարի բաղդը, *թթուա՛* կերակուր համեմելու համար: *Թարիզներ*, որը երրորդի մեծութիւնն ունի, բայց համը բաղդոյն է:

15. Թուր. սպիտակ և կարմիր, վերջնույս խառ-բուր կըսեն տեղացիներ, որ հազարազիտ է:

16. Կտողին (կաղին). երկու տեսակ՝ *Ղօզ փնտըզ* (ընկուզակաղին), փոքր ընկուզի մեծութեամբ, այն է՝ արքայականիւն և երկրորդն՝ մանր տեսակ:

17. Եղողպուր (ընկուզ), որոյ փութը 80 կօպէկից մինչև մի մանէք կծախուի:

18. Հլան (պարսկերէն՝ գողալ-հուն կամ հոյն), եր-կու տեսակ՝ կարմիր և սպիտակ, որոյ հիւր եփելով կըսանճոյցներն, նոսան գինիի հետ ձկնեղեմաց գոր-ծածելու (հիւն-շարքի):

- 19. Փշատ:
- 20. Ունաթ (յունաթ):
- 21. Ձկեռ. ըստ օսմանցուց՝ մուշմուլա:
- 22. Մամուխ՝ սպորի տեսակի պտուղ, որ կարելի է անուանել սև սալոր, կերակուրի մէջ գործ կածեն:
- 24. Խուռնիկ-կարախորմա:
- 25. Եմբալուր (շագանակ):
- 26. Հաղարճ կամ լեմսի խաղող, որոյ ծառ փոքր թիփ չափ է, պտուղներ խաղողի մեծութեամբ, գոյ-նը՝ սպիտակ, համը՝ թթուա:
- 27. Նուշ-դիւրաբեկ տեսակ (քեաղգ-բաղեմի) հա-զարազիտ:

28. Միթ (մորեմի). ըստ ռուսաց՝ մալինա, որոյ տունկ փշտ և փոքր թուփ է:
Գանճակու գաւառ կարտահանէ

- 1. Մեծ քանակութեամբ գինի, որ իւր շահեկանու-թեան զլխատը միջոցն է:
 - 2. Երկրորդ տեղ կըսեն արմտիք և իւլ, պանիր, բուրդ, տաւարեղեմաց կաշի և ոչխարեղեմաց սեկ:
 - 3. Երրորդ տեղ կըսէ թարմ միթը:
 - 4. Լուածաղիկ, մատուտակի արմատ (պիւսն, ըստ օսմանցուց) միամբակ:
- Գաւառիս ընտանի անատուներ չենք ուզեր մէջ բերել, զի Հայաստանի այլ գաւառներու սովորա-կան անատուներէն աւելի ոչինչ չունի:

Ը

Թռչուններու տեսակներ

1. *Բազէ*: 2. *Վրոյի՛* վերնույն տեսակէն, անորմէ փոքր - կընտանեցնեն լոյր որսալու: 3. *Յին*: 4. *Բու*: 5. *Հուպու*. ըստ վանեցուց՝ պուպու: 6. *Վէչա-դուշի* (շղջիկ): 7. *Միխա* (փասեան): 8. *Թորաջ*: 9. *Կարա*:

- 10. *Եղունիկ* (աղուանի) վայրի և ընտանի: 11. *Տետ-րակ* (տատարակ): 12. *Սալամբ՛* կաքառի սեծու - քեամբ, թագ ունի գլխին, սպիտակ փետուրով, խա-տուտիկ: 13. *Լոթ*: 14. *Արեղածագ* (արտուտ): 15. *Կոլիոյիկ՛* հուղուպի մեծութեամբ, թագ ունի գլխին: 16. *Սարեակ*: 17. *Ժու՛* ձիմեռնակի մեծութեամբ, սևա-բոյր: 18. *Միծեռնակ*: 19. *Մորկաձիւ՛* մարախ կո-տորող: 20. *Ծիտ* (ճնճողուկ): 21. *Կառուկ*: 22. *Արագիլ*: 23. *Կաշաղակ* (անձեղ): 24. *Ազուա*: 25. *Չիլ-փիտորի՛* բացազոյն դեղին, սարեակի մեծութեամբ, որ կծայ-նէ՝ պի՛տ, պի՛տ, պի՛տ: 26. *Բարաջիստ՛* մոխրա - գոյն, նոյնպէս սարեակի մեծութեամբ, որ կեռասներ փշացնելու համար աղաքները կիսալածուի: 27. *Սա - սարբ՛* սպիտակ գոյնով, վայրի բաղի մեծութեամբ: 28. *Սագ՛* ընտանի և վայրի: 29. *Սոխակ*: 30. *Բաղ՛* ընտանի և վայրի: 31. *Հնկկախա*: 32. *Ընտանի հա*: 33. *Սիրամարթ՛* հազարազիտ: 34. *Սուլաշ* (սև ազ-նա): 35. *Կարդախ*. ըստ ոմանց՝ կանաքէակ: 36. *Սահակ թռչուն*: Տերեկին սոցա ձայնը երբէք լսուած չէ և չէ տեսնուած, թէ ի՞նչ տեսակ է, մե՞ծ է արդեօք, թէ՞ փոքր: Երեկոյն մտք կոխելուն պէս, գիշեր ան-բողջ նոքա ողբաձայն (իբրօ տխուր է) սնա՛կ կամ սա՛կ կծայնեն, ինչպէս մեզ կրօնի՛ գիրար գտնալու: Իւրաքանչիւր ձայնելու միջոցը միաշափ է: Ամէն մի ձայնելու միջոցին մարդ, արագութեամբ համրելով, ճիշտ տասներկու կարող է համրել, ոչ երբէք տասնմէկ կամ տասներեք: Չարմանակի ճշտու-թեամբ կպահեն իրենց կոչելու «տարբերի»: Սորա թէ՛ սակարթու են, և թէ՛, ինչպէս մեզ կրօնի, ընկե-րակցութեամբ չեն շրջեր, որովհետև եթէ մինն Սհակ կոչելու լինի, հազիւ մի ուրիշն շատ հեռուն նոյնը կպատասխանէ, դարձան միաշափ միջոցա: Իսկ երբ որ իրարու շատ մօտենան, որ հասի կպատա-հի, կսկսեն մի փոքր շուտ պատասխանել իրարու: Կրօնի, թէ ուրախութիւն կզգան կամ կանեն, երբ ի-րարու կմօտենան:

Սոցա վերաբերութեամբ եղած ասանդութիւնը զանազանակերպ կպատահեն, թէպէտև ամէն կերպ զուրցուածի իմաստները միևնոյն են: Ոմանք կասեն երկու հոտաղներ կամ եղբայրներ, գիշերը իրենց ա-րածեցուցած եզներէն մինը կորսնցնելով, մի եղ-բայրն կերթայ որոնելու, միս եղբայրն, որ մնացած էր եզներու թով՝ պահպանութիւն անելու, շարունակ կծայնէ՝ Սհա՛կ, գառ՛ք, միսն կպատասխանէ՝ ոչ: Յետոյ գնացող եղբայրն էլ կկորսուի: Վասն որոյ մնացեալ եղբայրն առ երկիւղի հօրն կայ տիրոջն չի վստահանար տուն վերադառնա՞ծ՝ յանկարծ թռչունի կփոխուի Աստուծոյ հրամանաւ և միշտ Սհա՛կ, Սհա՛կ կանչելով՝ կրափառի:

Իսկ ոմանք՝ թէ գառներ արածեցնող քոյր ու եղ-բայր եղած են: Եղբայրն, կորսուած քանի մը գառ-ներ գտնալու հետամուտ լինելով, ինքն էլ կորսուե-ր է: Բայրն սկսեւր է Սհա՛կ, Սհա՛կ կանչել, ամբողջ գի-շեր շրջեր է և չի կարցանը գտնալ, վասն որոյ եղբոր

կորստեան վրայ սրտակէզ լինելու համար Աս-տուած թռչուն ըրեր է զայն, որ իւր եղբայր գտնայ: Առաջի կերպ ասանդութիւնն գիտացիք կիսսին, իսկ վերջինն՝ քաղաքացիք:

Այս ասանդութիւնը նոյն իմաստով տարածուած է այս կողման թէ՛ հայոց և թէ՛ մահմեդականաց մէջ: Վերջիններս, իհարկէ, իրենց լեզուով:

Թ

Հին Գանճակ

Այս աերակը Նոր Գանճակու ուղիղ հիսախա-յին կողմը կզտնուի մէկ ու կէս ժամու հեռաւորու-թեամբ՝ Գեանջա-չայի երկու եզերքի վրայ շինուած: Նորա շինութիւններէն գրեթէ ոչինչ մնացողներ չեն տեսնուեր՝ բացի բերդապարիսպներու հիմքերէն: Եւ այդպէս էլ պէտք է, որ լինէր, զի պարիսպներ և այլ շինութիւններ շինուած են գետակի փոքր ողորկ քա - րերէն՝ իրարու մամուլուցած կրաշաղախով: Ինչպէս կրօնի մեզ, քաղաքը միայն մի կողմէն պաշտպա-նուելու դիքը ունեցեր է: Արևելեան, հիսախային և արևմտեան կողմերէն պարիսպ չունի: Բերդապար-իսպները միայն հարաւակողման վրայ են՝ երկու կարգ: Նոցա մէջ իրամատ փորուած է՝ ջրով լեցնե - լու: Բերդապարիսպի երկայնութիւն ու լայնութիւն վեց հարիւրական քալաչափ են: Խօսքը միայն գե-տակի աջ ափի համար է, զի ձախ ափին այնչափ կնշարեկ չեն: Բերդն քառակուսի եղած է: Եւ այդ քառակուսի մեծ իրապարակի մէջ խաչաձև պա - իրապ դնելով՝ չորս քառակուսի քաժմած են: Ներ - քին երկու քառակուսիներու (հուպ ընդ քաղաքն) մէ - ջը մեծամեծ շինութիւններու աւերածոյք կտեսնուեն (թերևս գիմուորանոցներ և մթերանոցներ եղած լի-նեն), իսկ արտաքին, այսինքն՝ հարաւակողման եր-կու քառակուսիներու մէջ ոչինչ շինութիւններ չեն ե-ղեր: Ձի կամ գիմակրութեան ասպարէզ եղած են և կան քաղաքի պաշարման ժամանակեց ժողովրդ - դեան պատսպարմանց ծառայեր են: Ձի ինչպէս ասինք, քաղաք երեք կողմէն անպաշտպանելի է: Գետակի աջ և ձախ ափանց պարիսպներ իրարու կցուած են՝ գետակի վրայէն կամուրջով, և նոյն աւե-րակ կամուրջի աշքերու առաջը տախտակամածով ջուրն արգելած են եղեր՝ պարսպաց միջի խրամա-տի մէջ լեցնելու:

Արտաքին պարսպի վրայ՝ ամէն յիսուն քայլի միջոցին, բուրջեր³⁵ շինուած են՝ բոլորչի-բոլորչի, խորանի ձևով դուրս ընկած: Գետակի երկու ա - փանց քաղաքամասեր իրարու հետ հաղորդակցե - լու երեք կամուրջներու հետքեր կերկին: Միջի կա - մրջի երկու կողմանց աշքեր տակաւին կնման իրենց կամարներով:

Քաղաքացուց ընտանեան ընաւ մնացորդներ չկան, բացի գետին հասարարած հիմքերէն, որք նոյնպէս գետակի ողորկ քարերով շինուած են՝ ա -

ռանց կրաշաղախի: Բնակչաց ոմանց բակերու մե-ջը՝ գետնի վրայ տարածուած կտեսնուեն բզի, նոսան և բրբենաց ընձիղներ:

Գետակի աջ ափի քաղաքամասին հիսախային կողման վրայ կզտնուի, ըստ հայոց՝ *Խտարով նահա-տակ*³⁶ և նախ թորքաց՝ *Ինճա՞-զալը* ուխտատեղին, որոյ մի քառակուսի սենեկի մեծութեամբ քարուկիւր և կամարակապ շէնքի միջնամալայր կայ յարգելի գե-րեզման, որ երկու արշին բարձրութեամբ և երկա-րութեամբ տախտակամածով ժածկուած է գերեզ-ման՝ մարդկանց անտեսանելի: Սոյն քառակուսի փոքրիկ տաճար չորեք կուս զոնէր ունի:

Տաճարի վերայ կըբարձրանայ ո՛չ սրածայր գմբէթ՝ կանցա-կապտոյ գոյն յախնապակով ներ-կուած, որ այժմ քանի տեղէ ճեղքուած և խարխա-լուած է:

Տաճարին, նորա գաւրի և այլ շինութեանց մէջ մահմեդականաց երևելի մարդկանց գերեզմաններ և նոցա արձանագրութիւնք, որը՝ մարմարիոնի և որը՝ հասարակ քարի վերայ, և ոմանց վերայ ներ-կուած քարապատկերներ կտեսնուեն: Սոյն ուխ-տատեղին հասարակ պատերով քառակուսի շրջա-պատուած է: Իւրաքանչիւր պատն երկու հարիւր կանգուն երկայնութեամբ, որոնց մէջ բազմաթիւ խիտ առ խիտ գերեզմաններ կան (զանազան քա-ղաքներէ և շրջակայքէն բերուած)՝ իրենց արձանա-գրութիւններով և քանի մը փոքրիկ գմբէթաւոր մա-հարճաններ: Սոյն ուխտատեղին կզման թիւ հայեր և շատ մահմեդականներ: Գրեթէ ամէն ոչ անպա-կաս են շրջակայ գիղերէն և Գանճակէն: Կյանա-խէն մինչև անգամ գամագան քաղաքներէն:

Ուխտատեղոյն պահապան մահմեդականաց են, որ իւր ընտանեօք այն տեղ կընակի, ամէն ազգէն դի-մողին տաճարին դուռը կըբանայ՝ նուէրը ընդունելով: Գաւրի դրան մօտ երկու աշօք կոյր մի մօլլա, քաշ-կինակի բաց արած, նստած կերեզ (իհարկէ, հոգևոր երգ) և ամէն անցուդարձ անողին ջաննաթի (դրախ-տին) արժանազալ կըբարձրաթէ առ Աստուած՝ ստանալով իրեն տուած ողորմութիւնը:

Նոյն՝ մեր գնալու օրը, մահմեդական ուխտատ-րաց հոծ բազմութիւն կար՝ կին, աղջիկներ, տղաք-ներ՝ խառն նստած, ամէնքն ի միասին բարձրա-ծայն կողբային, կործերերին կծեծէին, ինչպէս կա-նեն իրենց Ալի մարգարէին սպանման տարեդար-ծին:

Հին Գանճակէն մինչև ի նորն՝ նոյն գետակի ձախ ափին, շինութեանց տերթուրներ յաճանա կտեսնուեն, իսկ այս ափին քարուկուր թուք շինած են՝ կա՛մ ջուրն ափուրք չողողելու և կա՛մ արտաքին թշնամին ջուրն չկտրելու, այլուրեք շտանելու, որ բնակիչք ծարարակտոր շինեն, զի ջուրն իրարա կհանուի աջ ափի վերայ: Մոռացանք ասելու, որ

36 Խտարով նահատակ մատուտի մասին մամբանման տե՛ն Կա-րապետյան Մ., Եզվ. աշխ., էջ 61-62:

35 Աշտարակներ:

իին Գանձակի մէջ հայոց ո՛չ եկեղեցոյ և ո՛չ գերեզմանաց հետք չերևն:

Ժ

Գանձակու վիճակի անձկութեան, նորա և այլ հոգևոր վիճակաց անկուսար բաժանման վրայ

Աշխարհի հետզհետև յառաջադիմելու ապացոյց այն է, որ որդին իր ծնողէն աւելի կտովրի և փորձառու կլինի (իհարկէ, որ պիտի սովորի և փորձ լինի), և աշակերտ իր վարժապետէն աւելի (իհարկէ, ո՛չ ամենք, այլ գէթ մեծագոյն մասն): Այդպիսով աշխարհ յառաջադիմութեան շարժով կենցաղը կընթանայ: Յառաջադիմութիւնը արհեստներ կկատարելագործէ, գիտութիւններն հետզհետև աւելի կկարգաբանէ: Յառաջադիմութեամբ գերազատանական զարգացում կնդկանայ ուղիղ կենցաղավարելու, իշխանութիւններ կզօրանան և կկատարելագործուին բարձր կառավարութեան համար, օրէնքներ կկատարելագործուին ի դրուակեցութիւն մարդկանց, գրաւոր հեղինակութիւններ կարգադրուին ուղիղ առաջնորդելու համար, դաստիարակութիւն, բնութեան տուած օրինակով, կուղղուի վարք ու բարքի շտկելու, որ մարդիկ իրենց սուրբ կոչման հասնեն:

Իսկ այն ամէն ազգերու իշխանութիւններ, որք իրենց եղած տեղ կանգ առել են, մտքի պաշարմամբ յառաջադիմութեան ուղիք մէջ չեն ուզեր մտնալ: Նորա հետզհետև յետախաղաղութեան կենթարկուին: Մտքի պաշարում անգարգացման նշան է, ինքնուրոյն գործելու կարողութիւն չունենալն է: Այդպիսի իշխանութիւններ և ազգեր ո՛չ իրենց օգուտ կրենք և ո՛չ իրենց ստորադրելոց և եղբարց:

Չարդիս, որպէս ազգին գործունէութիւն, ճոխութիւն և զարգացումն, անգործ և մտօր անզարգացեալ դրացի ազգին նուաճումն, արքատութիւն, ապիկարութիւն, հետևապէս և կործանումն կրելը, այն ինչ ընկերսիրական օրէնքով պիտի նորա դեկավարը լինէր՝ անտարաբնի բարոզած հոգոյն համեմատ: Եւ այդպիսի յետալէն ազգի և իշխանութեան պողովատիկ (պողպատ) խարխիս կհալուի, կլուծուի հպատակաց գայթակղութեամբ՝ ի կործանումն երկրցունց: Ժամ է, վայրկեան է ապրելու, որոյ ճարտարապետը պիտի լինի մեր հոգևոր ծայրագոյն իշխանութիւն:

Մեր հոգևոր իշխանութեան պարտաւորութիւն հասնումն մեծամեծ գործերն մի փորձիկ յառաջ բերենք, այն է՝ նորա վիճակներու անկուսար բաժանումն: Չի կայ այնպիսի՝ թեմ, որ իր ընդարձակութեամբ, իր բազմաթիւ գործերն ի գլուխ բերելու անձեռնհաս է: Այդպիսին, եթէ երկուքի բաժնուի, թէ՛ մի թեմական դպրոցը կառուանայ, և թէ՛ ձեռնհասօրէն կկառավարուի: Մորա հակառակ կայ այնպիսի՝ թեմ, որ իր փորձութեամբ թէ՛ մի թեմական դպրոց

կառավարելու անձեռնհաս է և թէ՛ ի չգոյէ գործոյ դատարկ մնացած, նստակեցութեան դատաւարտուած է: Պարզենք՝ Թիֆլիզի թեմ կարելի էր երկուքի բաժանել, որով թէ՛ մի այլ թեմական դպրոց կրացուէր և կկառավարուէր Ալեքսիսայի մէջ՝ իր ունեցած հաստատուն աղբիւրներով, և թէ՛ գործերը ձեռքնհասութեամբ կկատարուէին:

Շուշիի թեմի ընդարձակութիւնը Շամախոյ թեմի անձկութիւնը կրնար ընդարձակել, որով և կունենար մի լրացեալ թեմական դպրոց: Այսպէս են և հոգևոր կառավարութեանց ոճանց բաժանումներ: Օրինակ՝ Աղէքսանդրապոլ քաղաքի վրայ կայ 125 գիւղ, իսկ Կարսի վիճակ այնչափ փոքր է, որ բոլոր հայերը Աղէքսանդրապոլ քաղաքի հայոց քուէն ալ պակաս են: Աղէքսանդրապոլու հոգ. կառավարութիւն տարին 3000 համարէն աւելի գիր կարճակել, իսկ Կարսիւնը և Գանձակիւնը՝ թերևս հազարէն էլ պակաս: Գանձակու հոգ. կառավարութեան վիճակ կրողկանայ միայն 23 գիւղերէ, բոլորն էլ՝ գրեթէ քաղաքի շուրջը, իսկ Շուշուոյ թեմի Իգիլմիզօրթը՝³⁷ աւտամ վիճակի գործակալութիւն կրողկանայ 24 գիւղէ, որ Գանձակ քաղաքէն 2 1/2-3 մաս, իսկ Շուշիէն 2 1/2-3 ատր ճամփայ հեռաւորութիւն ունին: Չիշենք, որ ձմեռը շատ անգամ հաղորդակցութիւնը կընդհատուի:

Յիշեալ Իգիլմիզօրթի գործակալութեան գիւղեր Գանձակու Գետաշէնու գործակալութեան գիւղերէն, ըստ ամենայն պարագայից, այնչափ կտարբերուին իրարմէ, ինչպէս գիշեր ցորթէն: Իգիլմիզօրթի գործակալութիւն նսեմացած է, իհարկէ, իր կենսաբուն հեռու լինելու համար, մինչև անգամ այստեղի նորակառոյց եկեղեցին երկու տարի առանց օծելու կմնայ: Վարժարան չունին, հովուի այցելութեան գուրկ են: 1824 թուականէն մինչև 1890 Իգիլմիզօրթ գաւառակին ոչ որ այցելութիւն ընող չէ եղեր Շուշուայ առաջնորդներէն, բացի գեր. Արիստակէս վարդապետ Մեղրակեանցն: Իսկ այլ հոգևորական պարտաւորութեանց պակասութիւնը կընճան ըստ իրեանց սորաս:

Թիֆլիզու թեմի Շամաշոնոյ գործակալութիւն Թիֆլիզէն որչափ ատր ճանապարհի հեռու է, այնչափ ժամուայ ճանապարհաւ մօտ է Գանձակէն: Շամաշոնոյ և Իգիլմիզօրթի գործակալութեան գիւղերի բնակիչներն ի լոյս գիտեն, թէ Թիֆլիզ և Շուշիի կոմսիտօրթիայն իր՝ Իգիլմիզօրթի գործակալութեան գնալիք գրեթ կկրկնէ Գանձակու հոգ. կառավարութեան վրայ, որ «առաքէ ըստ պատկանելւոյն»: Թիֆլիզի թեմի Շամաշոնոյ գործակալութեան վիճակի 17 գիւղերու ծնելոց, պակսելոց և ճնջեցելոց տարեկան վիճակագրութեան տեղեկագիրը այդ երկու գործակալութեանց կուղարկուեն Գանձակու հոգ. կառավարութեան, որ հաղորդէ մարմնատր իշ-

37 Քասնցոր:

խանութեան: Վերոյգրեալ երկրորդ գործակալութեան գիտնորակութեան վիճակահանութիւնը Գանձակու գաւառի մէջ կլինի, և նոցա առտուսրը՝ գանձակեցոց հետ:

Թերևս ոճանց զմեզ անհաշուազտներու կարգին դնեն, որ չենք իմանար, թէ՛ եթէ Թիֆլիզի թեմ երկուքի բաժնուի, ծախուցն էլ երկու դուռն կրացուի: Այո՛, բայց ի՞նչ անենք, որ որչափ հոգի առաւել է, քան զմարմին, նոյնչափ ևս ժողովրդեան բարոյական շինութեան առաւել է, քան զմիտական հաշիւն: Անոյ մայր եկեղեցոյ և նորա կաթողիկոսարանին ճրագաւորչս ո՛վ պիտի անի, քանի որ այնտեղ ժողովուրդ չկայ: Տարակոյս չկայ, որ մեզ հետ և շատեր օտտեն, եթէ թեմերու թիւն աւելանայ լինի, մեզ բաժին չիյնար: Այո՛, մենք գիտենք թափուր մնացած թեմերու փորձերէն, բայց մեր որոնածն այն է, որ Գանձակու և յաջորդութիւններու գործունէութեան ասպարէզ չկաշկանցուի անձուկ վիճակի մէջ: Թո՛ղ վիճակիս գիւղերն աւելան Շամաշոնոյ և Իգիլմիզօրթի գործակալութեանց քան մի գիւղերով, որոյ համար քանիցս անգամ խնդիր տուած են ներկայ վեհափառ ծայրապետին թէ՛ նորա Տփլիսոյ վիճակաւորութեան և թէ՛ արդի աստուածարեալ օծելութեան միջոցին, բայց լուծումն չէ ստացուել: Երկուքի կլինէր, որ լուծումն ստացուէր, և այդ ժողովուրդ իւր մերձատու հովուի ծայն լսէր և առաջնորդուէր ղէպի լոյս:

Շատ կարևոր է Հայաստանի գիւղերուն ռես լինել, որպիսիք կպակասին այնտեղ, քան Գաղղիոյ փռէն:³⁸ Ինչնէ, ուր շատ կան: Անարարութիւն է շխտատվանել, որ քալիուր վիճակաց համար յաջորդ վարդապետ չկայ և ոճանց թեմերուն՝ եպիսկոպոս, զի պատրաստող թերան չկայ:

Փոխանորդական այցելութիւն ի գիւղօրայս հայոց Գանձակու վիճակի ի 20Էն յունիսի 1890 ամի

ԺԱ

Ս. Թարգմանչաց վանք

Նախ այցելեցինք ի վանք Թարգմանչաց³⁹ ի 21-ն յունիսի, որ կատարեցաւ մեր սուրբ Բարգմանչաց՝ Սահակայ և Մեսրոբայ տօնախմբութիւնը: Ս. պատարագէն զկնի օծեցինք տեղոյն վերանորոգեալ զանգակատան գմբէթի խաչը: Աստուծոյ տաճարն վայելուչ բարեգարդութեան մէջ կզգնուէր իւր բոլոր պարագայիւք: Ծերունագարդ վանահայր Թէոդորոս



Թարգմանչաց վանքը հարավ-արևմուտքից (ուս.՝ Ս. Օսանյանի, 1980-ական թթ.)

վարդապետ Շիրակունին, իւր կոչման համաձայն, ուղիղ կենցաղավարուելով, ակնածիլի եղած էր շրջակայ գիւղօրէից հայ ժողովրդեան... քահանայութեան համար տիրացուներ պատրաստելու մասին:

Նոյն տօնախմբութեան օրը վանքին խնամակալ պ. Ներսէս Տէր-Ներսէսեանցը⁴⁰ բոլոր ուխտատուները պատուեց ճաշկերութեան առատ սեղանով:

Վանքի կառավարչական գործոյն մէջ աչքի կզարնէր նորա սեպիական անտառի պահպանութեան հոգաւորութիւնը և հարկ եղած տեղեր ճանապարհաց ուղորդութեան և հարքութեան հետախուսութիւնը, բոլոր սահմանի ցանկապատութեանն, բազմաշխատ գործունէութեան և ներքին բնակարանական շինութեանց մէջ ճաշակի ակներև նրբութիւն: Բայց մի պակասութիւն զգալի եղաւ մեզի, այն էր՝ վանքի ապագայ յարատև կառավարութեան մտից աղբիւրներ չլինել և եղածն էլ բարձի բողի առնելն: Թէև վանքն ունի վարկեսառողը, բայց քանի մը տարիէ ի վեր կմնան անմշակ, զի չունի ո՛չ արօրաբարչ եզներ և ո՛չ կարմատու սնասուն՝ կովեր և ոչխարներ, բացի մի գոյգ եզներէն, որք վանքի ասորին պիտոյից կծոտայն, իսկ հողագործութեան համար ոչինչ: Այդ յառաջ եկած կլինի պ. խնամակալի վանական ապրուստ միջոցներուն անտեղեակ լինելն:

Խճանակալ Տէր-Ներսէսեանցի պատրաստած վանքի եկեղեցի հաշտոյ վրայ առաջիկա կհամարենք միտք դարձնել, որովհետև նա յիշեալ հաշտը ներկայացուցեր է ազգիս ընդհանրական Հայրապետին, որուն հետև իրաժարական տուած է խնամակալութեան պաշտօնը: Ուստի և նորին աստուածարեալ օծութիւն նոյն հաշտեցուցակը առաքել է Գանձակու հոգևոր կառավարութեան բննելու:

40 Խոսքը հայ վաճառական-արդյունահանող գանձակեցի Ներսէս Արքաճառնի Տեր-Ներսիսյանցի մասին է: Վախճանակ է 1896 թ. (նշվ. աշխ., էջ 218):

38 Իշխան: 39 Գանձակում է Խաչակապից 1,5 կմ հյուսիս: Հիննադրումն ավանդաբար կապուծ է Մեսրոպ Մաշտոցի անվան հետ: 1980-ական թթ. խարխուլ վիճակում տակալի կանգուն էին միայն Սր. Սահակ-Մեսրոպ եկեղեցին, գավիթը, զանգակատունը և ստորգետնյա քաղաքայ մի շինություն (վանքի մասին մանրամասն տես Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ, Երևան, 2004, էջ 217-233):



Յարգանաց վանքը հարավ-արևմուտքից (ուս.՝ Ա. Օհանյանի, 1980-ական թթ.)



ԿԻՐԱՅ. գյուղը հարավ-արևելքից (ուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.)

Քանի խօսքով տեղեկություն վանահօր մասին: Շիրակունի վարդապետն⁴¹ վարսուն տարիներ ան-ցուցած և կարի ծերացած, լաւ ևս էր անկ ծերութիւնը փութացուցած (կամ չափազանց աշխատասիրու-րեան, կամ սնունդի պակասութեան համար, զի կա-րի չարքաշ կեանք կկարէ) բազմափորձ անճնաու-րութիւն է: Տրիտասարդ հասակի մէջ, զկնի իւր կնոջ

մահուան, վարդապետական կոչումն ստանալով՝ ինքզինք ազգային ծառայութեան նուիրեր է, զանա-զան գաւառներու և վանքերու մէջ վարժապետու-թեան պաշտօն վարելով, որով և բազմաթիւ մարդիկ պատրաստեր է, եթէ ոչ այնչափ գիտնական՝ գեթ բարոյական մարդ, որն որոշային եկեղեցոյն կալի-տոյանան և նորա ժողովրդեան կառահնորդն: Նա՝ Շիրակունից, մեր մեծ և փոքր վանքերու չորս պա-տերու մէջ մնացած, անձուկ գաղափարով կեանք անցուցած վարդապետ չէ շատերու մեան, որք մի-այն իրենց կեանքը բտել գիտեն: Մա գիտցեր և ջա-նացեր է ուրիշներու մարմնական և հոգեկան կեան-քի կերակուր պատրաստել: Ռատի մարդ, երբ նորա «ցուցակ ծառայութեան» կարդայ, հիացման մէջ կմնայ, որ այսպիսի բազմաշխատ և բազմարդիւն վարդապետն, ցայսօր ժամանակի լոկ վարդապետ մնացած է, գեթ մի որևիցէ պարզաբարշխութեան չէ արժանացեր: Տարակունսի է, տարոյս մէջ մարդ պատրաստելու նուիրում՝ տյնվախի հազուագիտ վարդապետի անզնահատելի մնալու պատճառն ինչո՞վ բացատրենք:

Գ-ր. Շիրակունի վարդապետն ունի և բանի մը հատոր գրական աշխատութիւն և իր պարապոյ ժամեր ի գուր չկորսնցնելու համար մինչև անգամ համարձակուեր է եղիշէի պատմագիր և Նարեկաց-ւոյ աղօթագիրք ստանաւորի դարձնել: Թէ որչա՞փ յաջողեր է այդ բարձր ձեռնարկութեան մէջ, ես չզի-տեմ, բայց գիտեմ, որ եղիշէի ոսկեղենիկ պատմա-գիրք և Նարեկացւոյ մեղրածորան աղօթագիրք ո-տանաւորի դարձօղան պէտք է բնագրէն աւելի փայ-լեցուցած և բաղցրացուցած լինի, որ...

41 Թեոդորոս վարդապետ Շիրակունի 1867 թ.-ից այս 1910-ա-կան թթ. վարսուն էր վանահօր պաշտօնը (Յշվ. աշխ., էջ 227-228): 1879 թ. նրա հեղինակութեանը երկզվատարած լույս է տեսել «Համառօտ դաստետր ազգային պատմութեան» աշխատությունը: 1870-1891 թթ. վանքում տեղի էր տան 10 ձեռագիր, որոնք պահվում են Մ. Մաշտոցի անվան Մատեն-աղարատում (Միմասյան Թ., Արցախի գրչության կենտրոն-ները, Երևան, 2015, էջ 98-99):

ԺԲ
Կիրանց

Ամսոյս 22-ին վանքէն մեկնելով՝ մի ժամուայ չափ ճանապարհորդութիւն ընելով հասանք *Կի-րանց*⁴² գոտ հայաբնակ գիւղը, որ կրողկանայ 35 տներէ՝ 237 արական, 139 իգական: Ունի մի անշուք, հնաշէն *Ս. Աստուածածին* անունով եկեղեցի⁴³: Չու-նի ուսումնարան և ոչ գրեթէ ժամասաց տիրացու-ներ, բայց այս պակասութիւններն առ այժմ ներքի բուեցան ինձ, որովհետև այդ ամբողջ միաբան հայ գիւղացիներ (հայի ամբողջական միաբանութիւն կրաշք համարելու է) ասկէ երեք տարւոյ չափ առաջ 10.000 մանք՝ մի պատկառելի գումարով, ծախսե-ւով իրենց վերջի կողկէները, գիւղի անդաւատանի սահման՝ հանդերձ անտառով, ի գնոյ առած էին նախկին գիւղակալուածատէր զանձակեցի Միքա-յէ Մելիք-Շահնազարեանցէն:

Գիւղիս եկեղեցոյ անշրութիւն, քստ ամենայն պարագայից, նորա ժողովրդեան անբարեպաշտու-թեան շէի կրնար տալ, որովհետև ժողովուրդն աղ-բատութեան մէջ գտայ, վասն որոյ պարտաւորեցայ եկեղեցոյ վերաշինութեանն նախադաս համարել ժողովրդեան ճիւղական վերանորոգման միջոցները բարոզել: Նախ բարոզեցի դժուարակոյս ճանա-պարհներու ուղղելն ու հարթելն, երկրորդ՝ ձորի սա-հանագնաց գետակի ջուր իրենց ամբողջ արտերու վրայ բերելու առատելիցն ցոյց տալու համար ժո-ղովրդեան հետ անձամբ գնացի, ուրդ (բենդ) կապե-լու տեղը որոշեցի և յաջողութեամբ, որոյ սկիզբն պի-տի լինի *Կանգնեալ խաչ* (Կաղնախաչ)⁴⁴ անունով ուխտատեղի մատուռի ներքէն: Սոյն ուխտատե-ղի կ'փոքր հեռու կ'տնտնեն երկու փոքր մատուռներ, որ ևս երկու ձորակի այս ու այն կողմերը շինուած են: Սրբաբնակ տեղերուն տեղացիներ *Քոյր և եղբայր*

42 Գտնվում է Գաշխեանի համանուն շրջկենտրոնից 3 կմ հյու-սիս-արևմուտք՝ Արքիմազուր գետի ձախ վտակի Ոչխարա-ջրի ձախ լեռնալանջին (ծ. մ. բարձր է 1230-1380 մ):

43 1930-ական թթ. քանդիկ են և քարերն օգտագործել պահեստի շինարարության մեջ (Կարապետյան Ս., Եշվ. աշխ., էջ 238):

44 «Շիրակունի վարդապետն բարոզներ է այս կողման ժողովրդ-իւնան, որ *Կաղնախաչ* յորջործման փոխարէն *Կանգնեալ խաչ* անձն վախճալով, որ հայ քրիստոնեայն կրկին կոա-պաշտութեան շղատնայ: Մի վախճար, համատասափայ ծերու-նի, հայն հաստի մէջ հաստակող է, դժուարութեամբ կ'փո-խէ, ինչպէս որ դժուարութեամբ փոխեց կոապաշտութիւն խա-չապաշտութեան հետ: Նա գիտէ մինչև անգամ իր ազգի բա-պաշտութիւն տալ՝ քրիստոնեութիւն պահպանելու համար: Ու-րեմն մի՛ վախճա, և մեր հեթանոսական կրօնի վրայ լոյս տալու բանի մը հաս ու կտոր մնացելալ բառերն մի՛ անհե-տացներ: Բաւական է, որ մեր նախնեան Նաւասարդի, Կար-դապետի, Կրակալաւի (Տեառնընդոտայ) ևս, ազգակնոյն տունախմբութեան պատկերներ կորսնցուցեր ենք» (ծնք՝ հե-ղինակ):

Կաղնի խաչ (Կանգնեալ խաչ) վանքը գտնվում է Կիրանցից 1 կմ հարավ-արևմուտք: 1986 թ. տեղում պահպանվում էր կի-սակի մատուռը, որի ներսում կանգնեցված էր ԺԲ-ԺԳ դդ-րերով անթաթանագիր մի խաչար (Կարապետյան Ս., Եշվ. աշխ., էջ 239):

կանուանեն: Պատուիրեցի նաև քահանային, երեց-փոխանին և տանուտէրին, որ ամենայն տարի, կա-լի ժամանակ ժողովրդեան կալատեղեր գան, իրա-քանչիւր կալեմասն հաւաքեն յանուն վարժարանի, որով կարողանան իրենց գաւակներուն ուսում տալ, և բանի մը տարի այս բանս կրկնելով՝ գոյացեալ արմտիք ամբարեն երեցփոխանի պատասխանա-տութեան ներքէ՛ն և ամենայն տարի ցանքի ժամա-նակ սերմ չունեցող գիւղական աղբատաց, ինչպէս իրենց տվորութիւնն է, տոկոսով սերմնաւախոյս տան և կալոցի ժամանակ նոյն փոխն հաւաքեն՝ հանդերձ վերադրով: Այլև գիւղիս սահմանի մէջ անբաժած մնացած արտերէն երեք կտոր արտ յատկացուցինք յանուն եկեղեցոյ և վարժարանի՝ այդ սերմով ցանել, և սորա գոյացեալ արդիւնք միացնել արծուեաց գումարի տոկոսեաց հետ, որով և կարող կլլանք մի ուսուցիչ վարձել իրենց տղայոց ընթերցանութեան համար:

Այդ բարեպաշտ ժողովուրդը քարոզած այս պա-տուէրներինց այնչափ զգայուեցան, որ երեկոյին՝ ընթրիքի ժամանակ, վերստին այս քարոզը կրկնել տուին մեզ, իսկ մենք, յետ կրկնութեան խոստա-ցանք իրենց սիրած քարոզն զրի առնել և տալ գոր-ծակատար քահանային, որ իրենց խոստացած պարտք ամեն տարի թէ՛ իրենց յիշեցնէ և թէ՛ գործա-դրութեան հսկէ, զի մեր ձեռնադրած նորընձայ Ա-նանիա քահանայն Շիրակունի⁴⁵ նոյն գիւղի քա-հանայն էր և նոյն կողման տասն և վեց գիւղերինց գործակալուեր, որ հետս առած ի միասնել կայցե-լինք գիւղերին: Կրկին անգամ սրանչացման ար-ժանի է այդ գիւղի բնակչաց ամբողջական միաբա-նութիւն, որովհետև գիւղի հին կալուածատէրէն առ-նուած հողեր և բանջարանցներ մարդ գլուխ բա-ժանք են իրենց մէջ առանց խտվութեան և դժգո-հանաց: Ո՛վ, այս գիւղը օրինակելի է հայ գիւղա-բնակչաց մէջ:

Մի խելացի կարգադրութիւն ևս տեսայ նոցա մէջ, որ անտառի կէտ մնաց պահպանութեան ներքև դրած էին՝ ձառեր մեծցնելու թա՛ շինութեանց պէտք գալու պայագայի մէջ և թէ՛ ծախելու համար, իսկ մնացեալ կէտ մաս՝ առտնին պիտոյից համար կտոտ-րելու: Այն ինչ էին կալուածատէրի ժամանակը ան-բողջ անտառ ամիսնադարաբ և հաւասարապէս կտոտրեր են, որոյ համար այսօր շինութեանց պի-տոյից համար ոչ մի փայտ չկայ գիւղի սահմանի մէ-ջը: Գիւղիս և *Փիլի* ատուած շէնի մէջտեղը կ'տնուի պաղլիլի (շիպ) առատ հանք:

45 Անանիա (աշխարհիկ անունը՝ Սմբատ) Տեր-Թեոդորոսյան Շիրակունի, Խաչակապի Թեոդորոս վարդապետի որդին էր: 1889 թ. հունվարի 21-ին ձեռնադրվել է քահանա և մինչև 1893 թ. դեկտեմբերի 21-ը հովիվ Կիրանց գյուղին: Այնուհետև քա-հանապարտել է Գանձակի Նորաշեն բարձրասիկ Մր. Աստ-վածամոր եկեղեցուն: 1904 թ. նշանակվել է Գանձակի քաղա-քի գերեզմանատան Սր. Սարգիս եկեղեցու վանահայր (մա-րտնաճան տևս նշվ. աշխ., էջ 52, 56, 238):



ԿԻՐԱԿՑ. Կաղնիսիաց ուխտատեղիի մատուռը (ուս.՝ Ս. Կարապետյանի, 1986 թ.)



ՆԵՐՔԻՆ ԶԱՐՄՍ. գյուղը հարավից (ուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.)

ԳԳ Քարհատ

Ամսոյս 23-ին այստեղէն մեկնեցանք ի *Քար-հատ*⁴⁶ գիւղ, որ կգտնուի *Ղօշ-Ղարս* գետակի ձախ ափին՝ մի ժամու չափ ճանապարհորդելով: Գիւղս կբաղկանայ 80 տուն գուտ հայ բնակիչներէ՝ 435 աւրական, 361 իգական: Ունի Ս. *Աստուածածին* անունով մի փոքրիկ և անշուք եկեղեցի⁴⁷ և մի քանի մայ⁴⁸, որ համեստ և ժողովրդականութիւն վայելող անճամառութիւն է:

Ամսոյս 24-ի առաւօտեան բարոզի մէջ իրաւունք չհամարեցինք մեզի Կիրանց գիւղացուց նման անբասիր թողու գիւղիս ժողովուրդը վարժարան ու եկեղեցական երգիչներ չունենալու համար՝ բացատրելով ուսման կարևորութիւնը և ապացուցինք, որ միակ միջոցն է տիրող տգիտութիւնէ՝ աղքատութեն ու նախնական տառապակիք և ապարդիւն աշխատութենէ ազատելու:

Գիւղիս բնակչութիւնը ընկած է բարձրաբերձ սարերու ձորի մէջ՝ մի պաշտպանողական որից վերայ, իսկ անդատանական հողերն կգտնուին բարձունքներու վերայ, որուն համար գիւղացիք պարտաւորուած են իրենց բոլոր որաններն⁴⁹ մի ժամու չափ հեռաւորութեն գրաստներու քանակով իջեցունել գիւղամէջ, որ աննկարագրելի մի աշխատութիւն է: Այս դառն վիճակն ընտրեն են պարսից իշխանութեան ժամանակի ասպատակութեանց քարուքանդութենէն ազատ լինելու համար:

Գիւղիս սահմանի մէջ կգտնուին զանազան տեսակ հանքեր՝ երկաթի, պղնձի և կօպալտի: Կբոլի, թէ այս գիւղի Քարհատ անուն ստացուել է երկաթահանքի գործադրութենէն, զի գիւղի հայ բնակիչներն իրենց փորձառութեամբ քարեր կտրելով՝ երկաթ կհանեն ի հնուց ցայսօր ժամանակի թէ իրենց երկրագործական պիտոյից և զանազան գործիքներու և թէ պայտեր շինելու համար:

Աստի 30 տարի առաջ յոյներու գտած՝ գիւղիս արեւելեան հարթափ կողմ կօպալտի հանքին որևիցէ միջոցաւ տիրապետեր է գերմանացի Սիմէնց անունով մի հարուստ հանքապան և առաջարկել է սոյն գիւղացուց՝ սարի կողքին մի փոքրիկ տեղ շնորհել հանքի գործածութեան համար, որ ապագային իրենց բնաւ վնաս չի բերել՝ ըսելով, թէ զի մեր գործողութիւն տակին տակն է, տակի երեսին ոչինչ գործ չունենք, և այս ըսելով՝ պարզամիտ և անփորձ գիւղացուց ստորագրել տուեր է և սորա գրութիւնն ներկայացնելով քաղաքական իշխանութեան և այսպիսով՝ սահմանի մի ընդարձակ մասին տիրապետեր է, որուն մէջ կգտնուին սոյն գիւղացուց հին գիւղատեղին և նորա մէջ կանգուն կեցած առողջ եկեղեցին, որ իւր գործառնութեանց գործիքներու և այլ պիտոյից մբերանոց ըրած է յիշեալ հանքապան: Ի՞նչ իրաւունքով որ այդ եկեղեցույն տիրել է, թէ ատ այժմ մեզ յայտնի չէ, բայց այս գիտեմք, որ այդ եկեղեցույ դուռն այժմայիս ամբողջաբար փակել է գիւղացուց դէմ, որ իրենց և իրենց պապենական սիրած և պաշտած եկեղեցույ և ուխտատեղույ երես տեսնելն անկարելի ըրած է Եղեմի սերովբէական սրով պարփակուածի պէս: Պատահել է ժամանակ առ ժամանակ, որ գիւղացուց մի մասն ցանկացեր է յիշեալ եկեղեցույ շուրջ բնակչութիւն հաստատելով՝ պաշտել իրենց հայրենական եկեղեցին, բայց Սիմէնցը պիտցեր է խորանանկել և խաբել պարզ գիւղացիներին՝ ըսելով, թէ հանքի գործածութեան համար ես այստեղ հողեր կկտրեմ և վառողով քարեր կնետեմ, այն ժամանակ ձեր տներ կլիւնեն, բայց ի-

րին բնակչութեան երկարեայ տունը, որ նոյն տեղը կգտնուի, մինչև ցայժմ իւր տուած այդ երկիւղէն ազատ մնացած է, որովհետև յիշեալ հանքը եկեղեցիէն և այս բնակավայրը ասպարեզով հեռու են իրարմէ և երկուքի մէջտեղ բլուրներ կգտնուին:

Սոյնպիսի մի հանք է կգտնուի գիւղիս հանդէպ՝ արեւելեան կողմը, զանձակեցի պ. Ներսէ Տէր-Ներսէսեանցի իրաւանց ներքը, որ այժմ գործադրութեան մէջ է:

Սի խելացի մտածութիւն և սոյն գիւղացուց մի մասի մէջ տեսայ, որք կխորհէին, թէ փոխանակ բարձրաբերձ սարաւանդներէն գրաստներու քանակով մեր օրանները խորածորի մէջ ամեն տարի իջեցնելուն, լաւ է, որ մեր շննատեղը փոխադրենք մեր արտօրէից սահմանի մէջտեղ, որ արդէն հին գիւղատեղի է: Եւ արդարև այս խելացի ծեռնարկութեան համար գիւղացուց մի մասը արդէն իրենց բնակչութիւններ հաստատած էին իրենց ընտրած տեղը: Բայց այս մասին մեր ըրած ծառայութիւն միայն այս եղաւ, որ ատմին խրատներով և քարոզներով համաձայնեցուցինք մնացեալ գիւղացիներուն գաղղբէ իրենց մեր ընտրեալ տեղը ի միասին բնակելու՝ հաստատելով, որ այնուհետ իրենց օրանները կալատեղ փոխադրելու աշխատութիւն կխտով չափ կբեթեանայ, և անտուայ անգին ժամանակը կվատատակեն: Մեր այցելած երկու գիւղերու և այլ մնացեալ գիւղօրէից հաց, իւր, պանիր, գետնախնձոր, յուպիայն և այլ հիմտեղէններով պահուց օրերու կբարկբեղենները կպատրաստուին գիւղացուց երկրագործական միջոցներով, նոյնպէս և զանազան տեսակ մրգեղէններ: Սակայն սոցա աղքատութեան բուն պատճառը մենք գտանք, հազուստի համար կվատանեն շաշաւձ փողո՞ցուցանողութեան համար քաղաքի վաճառականներէն կարճակեաց չբեր, շիլաներ և կտաւներ ատնելով: Ես ակներև կտեսնայի, որ ինչպէս գիւղացուց ջրեր դէպի Գանձակ կվագեն, այնպէս և սոցա հարստութեան մի մասն: Ես հարցովործով ստուգեցի, որ սոյն գիւղացուց ծնողաց ժամանակ հազուստի բոլոր նիւթեր իրենց ձեռքով կպատրաստէին, որոնց ոտայնանկարներն բոլոր կատարի վերայ, կգտնուին *Պոկի Ս. Գեորգ* անունով երկու գերեզման-ուխտատեղին, որ տեղացիներ բոլոր և եղբայր կանուանեն: Գիւղի հարաւային կողմ կգտնուի մի բերդի անբակ, որուն *Գլի-քերծ*⁵¹ կանուանեն տեղացիք:

50 Ոտայնի այն մասը, որով գործված կտավը մղում է առաջ (Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, Սրեան, 2001, էջ 106):

Սի այլ մխիթարական տեսնագիտութիւն ևս գտայ գիւղական ժողովրդեան մէջ, այն է՝ երկրագործական գործիքներ ընդհանրապէս իրենց կը պատրաստեն, հիւսնութիւն, որմնաշինութիւն, երկաթագործութիւն, ներկարարութիւն, գորգ և կապերտ գործել: Կորգերու զանազանագոյն մանածներու գոյները կառայր իրենց ձեռքով կպատրաստեն: Դեղին գոյնը դեղնածաղիկ անուն բոյսով կներկեն, որ յաճախ կգտնուի բուսոց մէջ: Եթէ հարկ լինի կանաչ ներկելու, դեղին մանածն լեղակի մէջ ներկելով՝ կանաչ գոյն կստանայ: Կարմիր կներկեն տօրուն անուն բոյսի արմատով, որոյ վայրից յաճախ կգտնուի դաշտերու մէջ: Նարնջի գոյն կներկեն բրինձ անուն փայտով, որ յաճախ կգտնուի այս կողման անտառներու մէջ: Նարնջնույ բաց գոյն՝ թէլի սնման կներկեն վայրի խնձորենույ կեղևով: Բաց գոյն դեղին կներկեն տիպի կծեպով: Սև գոյն կներկեն ճապկի անունանալ ծառի եփուած տերևով, որն նոյնպէս յաճախ կգտնուի տեղույս անտառներու մէջ:

Գիտեն նոյնպէս վերոյգրեալ վեց գլխատր գոյների իւրաքանչիւր տեսակէն երեքական գոյն ստեղծել՝ մուգ, միջալ և բաց գոյներ: Գորգերու նախշերու ձևը հնադարեան է: Մենք անձամբ այցելեցինք գործողներուն և յորդորեցինք, որ հետևեն ծաղկանց տերևներու, ճիւղերու և բոյսերու ձևին՝ վեր առնելով և՛ երկրպական խալիկներու, և՛ չբերու տեսակէն: Իրենց գրաստուց պայտեր պատրաստել, սովորութիւն (բաշմաղչութիւն) ընդհանրացրել է գիւղակայանց մէջ: Գիւղացուց մի մասն ձձեռ ժամանակ իրենց անասնապահութեամբ զբաղուած են, ձեռնիսս մասն փայտ և ածուխ կտանեն քաղաք ծախելու և ջրեկանութիւն կանեն, իսկ կանայք գրեթէ անգործ կմնան:

Սոյն երկու գիւղօրէից անտառներու մէջ կգտնուի նախ՝ առաւելապէս ուտելու կաղին, ընկույզ (ճողոպոր), հուն, սալոր (շլոր), տանձ, խնձոր, մու (մալինա), գկեռ (մուշմուլա), մուշ, մամուխ, կեռաս, հաղարձ, մօրի և այլն:

Գիւղի մօտ՝ հարաւայնողմ, կգտնուի Ս. *Խաչիս* անունով մի ուխտատեղի, իսկ գիւղէն հեռու՝ *Խաչիսար* անունով լեռան կատարի վերայ, կգտնուին *Պոկի Ս. Գեորգ* անունով երկու գերեզման-ուխտատեղին, որ տեղացիներ բոլոր և եղբայր կանուանեն: Գիւղի հարաւային կողմ կգտնուի մի բերդի անբակ, որուն *Գլի-քերծ*⁵¹ կանուանեն տեղացիք:

Քարհատեցուց նոր ընտրած գիւղատեղին, որն առաջուց դարձեալ շինատեղի է եղեր: Եկեղեցի չունենալու համար կարգադրեցինք իրն եկեղեցույ հիման վերայ կառուցանել նոր եկեղեցի⁵² և նորա կից՝

51 Հայտնի էր նաև Դպաւ անվամբ: Գտնվում էր Ներքին Քարհատից մոտ 1 կմ հարավ (մանրամասն տես *Կարապետյան Ս.*, նշվ. աշխ., էջ 274):
52 Խոսքը, ըստ ամենայնի, Արքիմ. Քարհատ գյուղի Սր. Թարգմանչալեկեղեցու մասին է, որը կառուցվել է 1894-1895 թթ. և հիմնովին ունիվերսալ 1920-ական թթ. (տես նշվ. աշխ., էջ 275):

46 Խոսքը վերաբերում է Ներքին Քարհատին, որը գտնվում է Դաշկեսանի համայնու շրջակայքում 1 կմ արևելք Արքիմաջոր գետի ձախաղկոյան հարավարևելահայաց ձորալանքին (Չ. մ. բարձր է 1280-1380 մ):
47 Եկեղեցին հիմնովին ունիվերսալ է 1927 թ. (նշվ. աշխ., էջ 272):
48 Հանաման էր Անտոն Աբրդան Պապիկյանը, որը հովվի է 1872 թ.-ից ստեղծվել մինչև 1912 թ. (Հայաստանի տոգրային դիվան (այսուհետև ՀԱԴ), թ. 56, գ. 1, գ. 8889, ք. 323 շրջ.-324; գ. 11608, ք. 124):
49 Հնձած հացաբոյսի խորձ, կապ, տրցակ:

վարժարան, որոնց տեղը մի վայելուղ դիրք ունի, և գիւղացիք խոստացան խաչի-սարի ստորոտէն վա-
զող առուակի ցուրը վարժարանի առջեւն անցնելով
քերել գիւղամէջ:

Սոյն կողմի գիւղացուց բառերու կրճատման և
բարդութեան օրէնքներուն ընթերցողաց մի գաղափար
տալու համար յառաջ կրէրենք տղական օրինանը-
ները, անձքները և մարդկանց յատուկ անունները:

Օրինանքներու վերաբերեալ: Ըմբրարս ըլլիս
(ումր-արև), ճուղ (ճիւղ) տաս (գաւակ ունենաս),
ճիւղնտես (քոռներ, ծոռներ ունենաս)...

Անձքի վերաբերեալ: Ըզզգամնա (ազիզ մեռ-
նի), սրբկնամնա (սիրեկանը մնանի), քրքարու գաս
(քարկար ընկնես), անջիլ-անջիլ ըլես (անջիլ-ան-
ջիլ լինես, այսինքն՝ ջիւղերդ կարուի, միտդ ու ոսկորդ
քրքրուի), տեղդ ծակուի դվոր ընկնես (դէպի վայր
ընկնես), շոռ շնչեն ընկերակ տաս (շան շնչելուն,
այսինքն՝ նորա կեանքին երանի տաս), մէջքիդ հու-
սը ծկրթ (քերես մէջքիդ ողն կտորուի), օրէն ծնընդ-
կանը վրել գայ (այնպիսի խայտառակութեան են-
քարկուիս, որ նոյն ատոր ծննդկանը իր ցաւն մտա-
նալով՝ քեզ վերայ քամաշա գայ):

Յատուկ անունաց կրճատումն և աղաաղումն:
Պետի (Պետրոս), Քիէի (Գրիգոր), Մակի (Մկրտիչ),
Չատի (Չաչաւատոր), Սարի (Սարգիս), Եփի (Եփրեմ),
Մաքի (Մատթեոս), Թումի (Յարութիւն), Հանես (Յով-
հաննէս), Մուսի (Մովսէս), Վերդի (Ալլահ-վերդի):

Ոչ տօնական անուններ: Վարդազար (մնացեալ
անունաց ցուցակը կորսնցուցեր են):

Իզգակն անուններ: Արշալոյս, Ջանի (Ջանա-
գան), Շոռի (Շողակար), Մայեան (Մարիամ), Սարք
(Շղիսաբէք), Հերիք (Հերիքնազ), Հուռի (Հոխիսիմ):

Ի վերջոյ գիւղացիներ մեզ յայտնեցին, որ 50 օ-
րավարի չափ *Համաձայ* անունեալ սահմանի
մէջտեղ վիճելի հող ունեն մուլսահասանցի պարսիկ-
ների հետ: Սոյն վիճելի հողը թէև մարմնատու իշխա-
նութեան հողաչափ յատկացուցեր է յիշեալ բուրք
գիւղացուց, բայց նորա գիտնալով, որ իսկապէս մեր
սահմանին կվերաբերի, նորա հաւան են մեզ տալու
հաշտարար դատարարի վստեարգրութեամբ, միմի-
այն երբ գանձակեցի պ. Ներսէս Տէր-Ներսէսանցը
միջնորդ հանդիսանայ երկու վիճող կողմանց մէջ,
գի մա երկու կողմանց վերայ ևս ազդեցութիւն ունի:
Այս բան լսելով՝ նոյն հետայն հրապարակեցիք պ. Տէր-
Ներսէսանցին, որ անմիջապէս թարգմանչաց
վանքէն այս գիւղ եկաւ և անձնուիրութեամբ յանձ-
նառու եղաւ, եթէ միայն հայ գիւղացիներ կրարեհա-
ճեն նոյն վիճելի յիսուն օրավար հողն կամ նորա կի-
սոյ չափ նուիրել իրենց եկեղեցւոյն:

Գիւղիս ներքև՝ հարաւակողման *Խաչ-բուլաղ* գե-
տակի աջ ափին՝ *Խտրի կամուրջի*⁵³ մտա, կգտնուի



ՆԵՐՏԻՆ ԲԱՐՅԱՍ. քերդի հարավարևմտյան հատվածը (ուս.՝ Ս. Կա-
րապետյան, 1980-ական թթ.)

մի աւերակ ջրաղացատեղի, որ հաւանութեամբ գի-
ղի բահանային, երեցփոխան Բարի Ներսէսեանցի
և գիւղացուց յատկացուցներ գիւղի եկեղեցւոյն, որոյ
համար յանձնառու եղան ապագայում նորոգել:

Գիւղէն մեկնելէն գլխի իմացանք, որ անցեալ
1880 թ. հարիւր փրաչափ ցորեն ունեն հաւարած
յանուն եկեղեցւոյն և նոյն ժամանակին տոկոսատու
փոխատուութեամբ բաժաներ են գիւղացուց ոճանց
վերայ, և այն օրէն միջնչ գայած ատանց աճեցուց -
ման բողոսած է: Ուստի խոստացանք գիւղի բահա-
նային և երեցփոխանին, որ մեզ հետ կառնկեցին,
հրաման գրել իրենց, որ գիւղի մէջէն երկու բարե-
պաշտ և եկեղեցատր անձինք ընտրել տան ժողո-
վրդեան, որպէսզի իրենց հետ ի միասին խնամա-
տարութիւն անին՝ եկեղեցւոյ վերանորոգութեան
հետ՝ Համաձայի վիճելի հողի յատկացուցման, ա-
ւերակ ցրաղացի շինութեան և յիշեալ հարիւր փութ
ցորենի աճեցուցման գործին համար: Անոնցատա-
րութեան և անհետամոտութեան պատճառաւ գիւղե-
րու մէջ շատ են այսպիսի բարձի թողի եղած ար-
դիւնքներ, որ հետզհետէ կորսուելու վրայ են:

Գիւղիս ստորոտէն անցնող *Խաչ-բուլաղ* և *Ղօշ-
ղարս* գետակներու եզերքում հարիւրաւոր հորեր
փորած են ի հնումն՝ երկարաբար հանելու:

ԺԴ

Վարդավառի տօնի ազգային
ուրախութեան հանդէս

Վիճակիս բոլոր հայ գիւղացիներ հախմաւաղ
սովորութիւն ունին՝ Վարդավառի տօնին ազգային
ուրախութեան հանդէս կատարել՝ ըստ նոցա պատ-
մածին այսպէս. Վարդավառի ուրբաք օր, գիւղի ամ-
բողջ աղջիկներ, ի մի հաւարում, դուրս կուգան գիւ-
ղէն և ամբող իրենց սրտի մէջ պահած գրգիռով

53 Հավանաբար համապատասխանում է Վերին Քարիստ
գյուղի արևմտյան երկրի Արիմանցոր գետի վրա կառուց-
ված միարտիչ կամուրջին (տես Վարդավառյան Ս., Արցախի
կամուրջները, Երևան, 2009, էջ 64-65):



ՎԵՐԻՆ ԲԱՐՅԱՍ. գյուղը գերեզմանոցից (ուս.՝ Ս. Կարապետյան,
1980-ական թթ.)

կցրուին գիւղի անդատանի վերայ, սար ու ձոր,
դաշտ ու հովիտ ոտքի տակ առած, ուսումներ ընե-
լով, ծաղկէ ծաղկի թռչելով, բոլորեցուն հաւարած
ծաղիկները միացնելով, խաչաձև ծաղկափունջեր
կկապեն իրենց գիւղի տներու ողբաճառեան թուով ու
երկկոյրին կրենք գիւղը, մի տան մէջ կրագցնեն: Գի-
ղի ամուրի պատանիներ ամբողջ գիշեր հետամուտ
կլինեն ծաղկափունջերու թաքստի տեղը գտնալ ու
յափշտակել, քանի որ օրիորդները շարաք՝ արշալոյ-
սի միջոցին, ծաղկափունջեր չեն տարեր, մի որևիցէ
աղբիսի ջրի մէջ քրջեն: Չի քրջելէն գլխի, եթէ պա-
տանիներ գտնան էլ, այնուհետև այլևս նշանակու-
թիւն չի ունենար նոցա յափշտակութիւնը, զի արդէն
օրիորդներ յարաբանակ տարած կլինեն⁵⁴: Բայց ո-
ճանք՝ պատանիներ, կպատահի, որ երբեմն, իրենց
նշանած օրիորդի մատուցութեամբ կիմանան ծաղ-
կափունջերու թագստեան տեղը և կգողանան, կտա-
նեն խորին գաղտնածածկութեան մէջ կպահեն: Եւ
որովհետև այլևս միջոց չէ մնացեր օրիորդաց՝ վերջ-
տին ծաղկափունջեր կազմելու, վասն որոյ առաջ սե-
ղան տալով՝ գողցող պատանիներու սիրտը կպիրաշա-
հեն՝ ծաղկափունջերը յետ ստանալու:

Նոյն օրը՝ Վարդավառի շաբաք՝ արշալոյսին, օ-
րիորդներ իրենց մէջէն երկու արագուներ ընտրե-
լով, նոցա միջոցաւ ծաղկափունջեր կուղարկեն իւրա-
քանչիւր տան մի-մի հաստ՝ ասելով. «Շնորհաւոր ըլի
ձեր Վարդավառը»: Տան գլխատուներն իրենց ստա-
ցած Վարդավառի նուէրն՝ խաչաձև փունջն, մի քե-
լով քաշ կանեն իրենց տան ծածկի ճակատէն, որ
պիտի մնայ մինչև յաջորդ Վարդավառին: Իսկ շա-
բաք երկուրէն իւրաքանչիւր գիւղեր երկու սեռի ա-
մուրիները, ջուկ-ջուկ, շաբաք գլիշեր, առանց ճրագա-



ՎԵՐԻՆ ԲԱՐՅԱՍ. կամուրջ (ուս.՝ Ս. Կարապետյան, 1980-ական թթ.)

լոյսի քանի մը քայլ իրարմէ հեռու, դէմ առ դէմ, կար-
գով հրապարակի վերայ նստած, «Ջան գիւլում» ա-
նունանալ խաղը քերու (իմա՝ ծաղկաքերք) դէմ կեր-
գեն, մէկ սեռ միսիւն նշանած ընտրելու առաջար-
կութեան իմաստով կամ այլ խորհրդատու խօսքե-
րով: Ոճանք աննցմէ իրենց առաջարկութեան հա-
ւանութիւնը և ոճանք բացառութիւնը լսելով՝ ուրա-
խութիւն կամ տրտմութիւն կպատճառեն իրարու⁵⁵:
Մենք անձամբ ներկայ գտնուեցանք *Գետաշէն*⁵⁶
գիւղի Վարդավառի այս սոճանամբութեան:

Վարդավառի կիրակէ ատուր պատարագէն և
ճաշէն գլխի, ամբողջ գիւղի երկսեռ քնակիներ, գիւ-
ղէն դուրս գալով, առաջուց յատկացրած մի մարգա-
ղեանի վերայ կլնանուն և նոյն տեղ կսկսեն թմբու-
կով, գունդալով ազգային պար և երգ: Այս անգամ
պար կկազմուի երկու սեռի ամուրիներէն, որք պա-
տուաւոր զգեստով զարդարուած կլինեն, և հետեւեալ
այս կարգը կպահեն: Մի-մի պատանի և մի-մի օ-
րիորդ իրարու ձեռք բռնած, երկու սեռէն մէկ-մէջ,
շրքայաշար կպարեն և կերգեն, երկու-երեք շրջան
կազմած: Բայց իւրաքանչիւր պարաշրջանի սկիզբը
բռնած է մի անուսնացած երիտասարդ և վերջէ նո-
րա կլինն՝ յարձեւալ նոյն «Ջան գիւլում» ազգային
խաղը երգելով: Սոյն պարի երկու կողմեր շրջապա-
տած են մնացեալ ամուսնացած այլ և կին, ծեր և
պառաւ, բայց արականներ մի կողմ, իզականներ
նոցա հակառակ կողմը, իրարմէ գատուած կնտտեն
իրենց մատաղ սերնդի վերայ գուարճանալով:

55 «Շատ կարեւոր համայնքի տոյն հետաքրքիր ազգային խաղը
այստեղ գիւ ամուրի, ընթերցողաց ճաշակ տալու, քայլ լսելի,
որ աղջիկն ըրորթ էլ իրաւարակութեամբ են» (ձեր. հեղինակի):
56 «Գետաշէն կենտրոն կիսամարտի այս տօնամիջոցեան,
քայլ տեղույն բարեմիտ տանուտըն 4-5 մարի ի վեր արգե-
կած էր այդ կողմ. անբարոյականացուցիչ միջոց, սակայն մեր
խառնով վերստի վկայեցին և պիտի կատարեն ընդմիջու
իբրև ազգային տօն» (ձեր. հեղինակի):

54 «Կրագստերն, թէ այդ արարողութիւն այն խորհուրդն ունի,
որ պակտելէն գլխի այլևս օրէն չէ իրարու շնամբով, յափշ-
տակել կամ առանգել» (ձեր.՝ հեղինակի):

Մեզ պատմեցին, թէ Փիլը և այլ գիւղացիներ տյն Վարդավառի ազգային տօն կատարելու պարահանդէսին հաղորդ գտնուող բոլոր օրիորդները նոյն տօնի յատկացեալ համազգեստ՝ դեղին և կարմիր գոյներով կհագնեն, բոլորի վերնաշապիկ՝ դեղին, և վրայի արխալուղ՝ կարմիր: Ինչո՞ւ արդեօք յատկապէս այս երկու գոյներով համազգեստ կհագնեն. միգուցէ աստուածային կողմանէ՝ Նոյ նահապետի խոստացումը հաշտութեան աղեղի գոյներն առած և նորա յիշատակը պահպանելու սովորութիւն ըրած են, ինչպէս և Վանայ, Մշոյ հայ ժողովրդեան մէջ սովորութիւն մնացած է, որ Վարդավառի տօնի օրը ջրիեղեղի յիշատակի համար զիրար ջուրը կծգեն, ինքարու վերայ ջուր նետելով՝ ջրախաղ կանեն, և նոյն նահանգաց գիւղերու օրիորդները, Վարդավառին դաշտ գնալով, տյն ազգային ուրախութիւնը կատարելու միջոցին աղանիներ կրօցնեն և իրարու վերայ ջուր կնետեն: Ջրիեղեղէն ազատուելու համար արդեօ՞ք յատկացեալ է Վարդավառի ազգային տօնախմբութեան ջրախաղութիւն և աղանի բոցնելը:

ԺԵ
Խաչակապ

Ամսոյ 26-ին Քարիատէն մեկնեցանք ի *Խաչակապ*⁵⁷ գիւղ, որ տեղական մարմնատը իշխանութիւն, բոլորքերի յորջորջումէն առնելով, *Ղուշի*⁵⁸ կանուանէ: Գիւղս Խաչակապ անուն ստացեր է հետեւեալ աւանդութենէն, ինչպէս գիւղացիք պատմեցին: Այս կողմեր քրիստոնէութիւն քարոզուած ժամանակին շրջակայ գիւղօրայք ընդուներ են այս նոր կրօն, իսկ խաչակապացոց համար անկարելի եղած է քրիստոնէական կրօն ընդունել տալ, որովհետև կաղնիի ծառեր կպաշտեն եղբ: Ուստի քարոզիչներ իւրաքանչիւր պաշտելի կաղնի ծառերու ներքև խաչեր են կանգնեցուցեր: Նոյնպէս կանգնեցուցեր են և գիւղիս շրջապատող բազմաթիւ բլուրներու և բարձունքների կատարներու վերայ, որք և մինչև ցայսօր կմնան և այսու հնարիմացութեամբ հետըզհետէ կաղնիապաշտութեան փոխարէն խաչապաշտութիւն մտեր է խաչերու շրջակապութեամբ, որոյ համար և այս գիւղս ստացեր է *Խաչակապ* անունը⁵⁹: Եւ արդարև, Քարիատից այս գիւղն գալու ճանապարհի վերայ ընկած երկու մեծ խաչաքարեր



ԽԱՉԱԿԱՊ. հատված գյուղից (ուս.՝ Բ. Քաղայանի, 1980-ական թթ.)

տեսանք, նոյնպէս և զանազան բլուրների գլխին և գիւղիս ճանապարհին կից փոքրիկ կաղնիի ներքև բանի մը պատկած մեծ-մեծ խաչաքարեր կզրտնուէին, որք կպաշտուն գիւղացիներն⁶⁰: Սոյն փոքրիկ կաղնիի մոտ տակափն կգտնուէր ասկէ երեք տարի առաջ մեր նախնեաց բազմադարեան պաշտելի ամբարձուղէ՛ջ ստուարաստեղ և մեծ կաղնին, քայք պիտոս, որ 1887 թ. արմատական արեր է Ներսէս Տէր-Ներսէսեանցն և այդ հսկայ ծառէն շատ ատաղձներ պատրաստեր է Թարգմանչաց վանքի պիտոյից համար: Եա՛տ ցանկալի էր մեր նախնեաց այդ պատկառելի շատուած ցայսօր կանգուն մնացած տեսնել: Սոյն փոքրիկ կաղնին մեծ կաղնիի յայտրդական սերունդ և նորա դիցագնական որդին լինելու յատկութիւններ պատեր է, նորա ուղղածիգ և քարծրաբերձ բնոյ վերայ կիովա մատրի ուրջ և պերճ և բոլորչի, սաղարդախիտ և տերևալից գլուխն, որով մարդու աչքն կզրաւ իւր սիրուն ու կանաչագարդ գեղեցկութեան վերայ, տեսնող անցորդի աչքին կներկայանայ որպէս մի արիեստատրեալ հովանոց, որ ոչ սակաւ մխիթարութիւն է մեզ իւր կործանեալ հօրն փոխարինելովն: *Թարգմանչաց վանքը*, որ կգտնուի գիւղիս հիւսիսակողմ՝ մէկուկէս վերստ հեռաւորութեան վերայ, գուցէ ի հնումն մեր հարց պաշտած կոռց տաճարատեղն եղած լինի, զի վանքի հիւսիսակողման տափարակի վրայ կգտնուեն այլատեսակ բազմաթիւ դամբարաններ, որոց միջէն վանահայր արժ. Թէոդորոս վարդապետի և խնամակալ Տէր-Ներսէսեանցի փոքրիկ գտնուէր են դամբարանների մէջ հողէ ամաններ՝ լի աճիւնով, երկաթեայ բեռներ և ընկուզի չափ մեծութեամբ անկիւնատը երկաթեայ գնդակներ:

Խաչակապ գիւղին Ղուշի անուն կուտան բոլորքեր այն պատճառաւ, որ գիւղիս բնակիչները իրենց ասիմանի մէջ գտնուած բազմաթիւ բազլներ հարկ եղած ժամանակը բռներ, նուիրեր են գատառապետ խանին, և փոխարէն խան տուեր է գիւղացոց հար-

57 Գտնվում է Դաշլեանցի համայնու շրջկենտրոնից 4 կմ հյուսիս՝ Արրինաջուր գետի ձախ վտակներից մեկի հովտում (Ճ. մ. բարձր է 1090-1230 մ):
 58 Գյուղի՝ Ղուշի անվան ծագման վերաբերյալ տես Լալաջան Ե., Գանձակի գատտ, «Ազգագրական հանդէս», 1899, գիրք Ե, էջ 313-314:
 59 «Գիւղիս բնակիչներ, իրենց մտքի մէջ դրած առաջադրութեան, յայտորութեան և անյայտորութեան փորձելու համար շորս փոքրիկ քարեր ձեռքերնին ասած, երեսնին խաչակերելով, կծգեն փոքր կաղնիի տակի խաչաքարի վերայ: Երբ խաչաւած ընկան քարերն, յայտորութեան նշան համարելով՝ իրենց մտադրեալ գործին կծեմարկին կամ ճանապարհ կերբան, ապա թէ ոչ, յետ կկնան մտադրութիւնն» (մեր. հեղինակի):


60 Գյուղի Խաչակապ անվան ծագման վերաբերյալ տես Լալաջան Ե., Գանձակի գատտ, «Ազգագրական հանդէս», 1899, գիրք Ե, էջ 313: «Նոր-Նոր», 1886, № 65, 6 մայիսի, էջ 1:



ՇՈՒՏԱՆ. ՄԱՆՏԱԲԵՐՈՒ ԳԱՍԱԹԸ




ՓԻՐ ԳՅՈՒՂԸ




ՄԻՌՁԻԿ ԳՅՈՒՂԸ



ՈՍԿԱՆԱՊԱՏ ԳՅՈՒՂԸ



ԲԱՆԱՆՅՈՒՆ ԳՅՈՒՂԸ



ՄՈՒՆԻԷ, ՍՔ. ՇՈՎՀԱՆՆԵՆ ԵԿԵՂԵՇԻՆ



ՇԱՐՈՒՍԽՆԻ, ՍՔ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՇԻՆ



ԳԵՏԱՇԵՆ, ԲՈՒՌՏԱՇԵՆԻ ԵԿԵՂԵՇԻՆ



ՄԻՐՇԻԿ, ՍՔ. ԳԱՐԻԻԵՆ ԵԿԵՂԵՇԻՆ



ԱՆՆԱՆ ԳՅՈՒՐԻ ԱՍՏՈՒԴՆԵՐԻՑ



ԽԱՉԱԿԱՐ. ԹԱՐԳՄԱՆՉԱՆ ՎԱՆՔԸ



ԳԵՏԱԾԵՆ ԳՅՈՒՐԸ



ԳԱՆԶԱԿ. ՍՔ. ՀՈՎՀԱՆՆԵՅ ԵԿԵՂԵՇԻՆ



ԽՍՀՄԿՄՊ. ՍՔ. Աստվածածին եկեղեցին հարավ-արևմուտքից (դուս. Դ. Ջաբարյանի, 1980-ական թթ.)

կից ազատման հրովարտակ: Յիշեալ հրովարտակի պատճենը մինչև ցայսօր կգտնուի գիւղիս բնակիչ Յակոբը Ղուլիեանցի մօտ:


Գիւղս կրողկանայ 114 տուն հայ բնակիչները՝ 676 արական, 637 իգական: Ունի մի եկեղեցի՝ Ս. Աստուածածին⁶¹ անունով, և երկու քահանայ:

Այն ինչ վիճակիս ամբողջ հայ գիւղօրէից ոչ միայն մէջ վարժարան չգտնուած ժամանակ գիւղս ունեցեր է, իբրև հայելի օրինակ, մի վարժարան⁶², որոյ մէջ կուսանէին հայ տղաքներ և աղջիկներ, և այդ գրագետ աղջիկներէն այժմ կգտնուին բազմաթիւ հարսներ, զորս կըրտը արծ. Թեոդորոս վարդապետ հոգեհրճուանքի պարձանօք եւ ավագոյց այս հոգեհրճուանաց՝ պատմեց յիշեալ վարդապետ, թէ երբ հանգուցեալ Գրիգոր եպիսկոպոս Մուշեղեանց⁶³, գիւղս այցելելով, մտաւ եկեղեցին, երկրպագութեան աղօթք կատարեց, տղայոց երգեցիկ խումբը, նորա առջևից երգելով, դուրս բերեց, որ պատրաստ կեցած օրիորդաց երգեցիկ խումբը, երբ յանկարծ նոյն երգի երկրորդ տունը երգեց, Մուշեղեանցը սքանչացած կանգ առաւ, օրինեց զանոնք և բարեմաղթեց վարժարանի յարատևութիւնը: Բայց ավստս, որ ընդհանուր վարժարանաց փակմանն զկնի, գիւղիս վարժարան այլև չէ վերականգնել լինելով առաջինն յետին: Չի վիճակիս ուրիշ քանի մը գիւղօրէից մէջ այժմ վարժարաններ կգտնուին: Գիւղիս այս դժբախտութեան զգեստ փոխարկելու համար, մենք յորդոր կարդացիներ քահանայից, երեսցիովսանին և ժողովրդեան, որ առաջիկայ կալուցելն սկսեալ յանուն վարժարանի կալի մաս հաւաքեն՝ իրենց որդոց և աղջկանց հոգեկան նոր զգեստ

ԳԱՆԶԱԿ. ՍՔ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՇԻՆ



ԳԵՏԱԵՆ. ԱՎԱԳ ՍՔ. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՇԻՆ



61 Սք. Աստվածածին եկեղեցին, որը կատարվել էր 1650 թ., 1988 թ. տակավին կանգուն էր (Վարդապետյան Մ., Հյուսիսային Արցախ, էջ 215):

62 Հայտնի է, որ 1876 թ. գլուղում գործել է օրիորդաց դպրոց (Եպիսկոպոսեանց Մ., Գանձակ, «Մեղու Հայաստանի», 1876, № 40, 16 հոկտեմբերի, էջ 3):

63 Գրիգոր Մուշեղյանցը (1835-1882, Ուրմիա) Գանձակի հայոց բնի փոխանորդ է ինչպիսիք 1860-1864 թթ. («Արարատ», 1882, ժԲ, էջ 562: Տես նաև Վարդապետյան Մ., Հյուսիսային Արցախ, էջ 13: Նույնի Մայմաստ, Երևան, 2017, էջ 84):

և կերակուր պատրաստելու համար նոր միջոցներ ձեռք առնելով:

Գիւղիս ճարտար երկաթագործներ Ջաւատ խանի պատերազմի ժամանակ հրացաններ շինել են, որ ցայսօր ժամանակի կգտնուեն գիւղիս մէջ: Նոյն միջոցին գիւղիս բնակիչ Մելիք-Մովսէսը Յիցեանցով պատերազմի ժամանակ թնդանօք էլ է շինել, որոյ համար մելիքութիւն ստացել է Ջաւաղ խանէն:

Գիւղիս հիւսիսակողմ 3 վերստ հեռավորութեամբ և Թարգմանչաց վանքի հիւսիսարևելեան կողմէն 1 1/2 վերստ հեռավորութեամբ, կգտնուի Շատախ անունով անբակ գիւղատեղին⁶⁴, որ նշանակեցինք որպէս միջանկեալ, զի գուցէ օր մը լոյս կուտայ պատմաբաններուն:

Այս կողման գիւղացիներէն շատերն իրենց անասնեղէնները գիւղէն հեռու՝ գոմերու մէջ կպահեն, որոյ համար բաւական մաքրութիւն կտեսնուի գիւղերու մէջ, հակառակ տեղական այլ գիւղերու և Շիրակայ գիւղաբնակչաց, որք խիստ աղտոտ են, զի սովորութիւն չեն քրած անասնոց կուրը (տաւարներնաց աղբ) փոխարքել՝ արտեր պարարտեցնելու, իսկ Վանայ, Մշոյ և այն կողմանց այլ գաւառցիներ սովորութիւն ունեն գիւղամիջի կուրեր, քրքիքներ (գրաստուց աղբ), սալոտոր (կտտոր-ոչխարաց աղբ) թոմիրներու մէջ վառուած փքրի և արարի մոխրի հետ մոտակայ արտեր տանել պարարտեցնել: Այդպիսի արտերը «աղբին» կկոչուեն: Իսկ այս կողման գիւղացիները այդ պարարտացուցիչ «աղբեր» սովորութիւն չունեն: Ան այս մենք յորդոր կարդացիներ և արդի օգտատէտութիւնը բացատրեցինք:

ԺԶ Միրզիկ

Ամսոյս 28-ին Խաչակապէն մեկնեցանք Միրզիկ⁶⁵ անուն գրտս հայաբնակ գիւղը, որ կըրականայ 71 տանէ՝ 339 արական, 264 իգական: Ունի Ս. Գաբրիէլ անունով իին և ամբաշէն եկեղեցի⁶⁶ և մի քահանայ՝ հիւրասեր տեր Ներսէս Տէր-Յարութիւնեան⁶⁷: Չունի ուսումնարան:

Գիւղս կգտնուի Չիքերծ⁶⁸ անունեալ սարի պորտան վերայ, որ մի գոգատր դիրք է և իւր հանդիպակաց բաց կողմէն կնայէ դէպի հիւսիս Գան-

64 Գտնվում է Խաչակապ-Հարցեանցիս գյուղերի միջև: Գրավոր աղբյուրներում առաջին անգամ ինչպիսիք է 1621 թ. (մանրամասն տես ճույնի Հյուսիսային Արցախ, էջ 249-250):

65 Գտնվում է Խանկարի համանուն շրջակներումից 12 կմ հարավ-արևմուտք՝ Գանձակ գետի ձախափնյա վտակների միջև ընկած սարահարթի վրա (ծ. մ. քարձր է 1000-1160 մ):

66 Ըստ շինարարական արձանագրութեան՝ կատարվել է 1674 թ. և նորոգվել 1910 թ.: Մինչև րոնագաղթը կանգուն էր (ճշվ. աշխ., էջ 396-398):

67 Ներսէս Տէր-Հարությունյանը քահանա է ձեռնադրվել 1871 թ.: 69-ամյա քահանան ինչպիսիք է նաև 1894 թ. (ՀԱԿ, ֆ. Յ6, գ. 1, գ. 8889, թ. 320 շրջ.-321):

68 Հայտնի էր նաև Չիլ քերծ կամ Գանձակի քերծ անուններով (ճշվ. աշխ., էջ 398):



ՄԻՐԶԻԿ. գյուղը հարավից և Սր. Գարբիէն եկեղեցին հարավ-արևմուտքից (լուս.: Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.)



ՄԻՐԶԻԿ. Քարիանի վանքն արևելքից և Սարգիս վարդապետի գեղեցանքը՝ պղծված ազերիների կողմից (լուս.: Ֆ. Քերլեմոնի, 2007 թ.)



ՄԻՐԶԻԿ. Քարիանի վանքի եկեղեցու մուտքը՝ միտումնավոր ավերված ազերիների կողմից (լուս.: Ֆ. Քերլեմոնի, 2007 թ.)



ՄԻՐԶԻԿ. Քարիանի վանքն արևելքից և Սարգիս վարդապետի գեղեցանքը՝ պղծված ազերիների կողմից (լուս.: Ֆ. Քերլեմոնի, 2007 թ.)

ճակ բաղադրի վրայ: Ունի պտղատու և մշակելալ պարտեզներ և հնդեղենեց բահեզներ, ըստ վանեցուց՝ բախեզ: Բահեզ կկոչուի երկրագործի մշակած հողի այն մասը, որ բազում առուներ և բունքեր մէկ մէջ իրարու կողքի կշինեն և բունքերու կողքին կը տնկեն, վանեցիներ՝ վարունկ, սեխ, ձմերուկ և այլն, իսկ այս կողմի բահեզներու մէջ կտնկեն լոպիա և այլ հնդեղեններ:

Սոյն բահեզ բառը կարդացեր են Անոյ եկեղեցեաց արժանագրութեան մէջ, ուրեմն հայերեն է, քեպտն հայկական բառարանի մէջ չկայ: Շատերին պէս և մենք շատ այսպիսի հայերն բառեր ժողոված ունենք, որ հայկական բառարանի մէջ չեն գտնուիր, և որպիսիքն ցայսօր ժամանակի լոյս արև տեսած չեն:

Գիւղիս հարաւակողման ձորի մէջ՝ մի վերստ հեռաւորութեամբ, ըստ տեղացուց, Քարիսանայ անունով մի փոքրիկ վանք՝ կգտնուի, որ տասնհինգ տարի է ի վեր անմարդաբնակ եղած է, խուցեր իսպատ քայքայուած են, և վանքը կգտնուի անխնամ դրութեան մէջ: Վերջին վանահայր՝ մականուանակալ Քեանդակաիրձա՞⁷⁰ Սարգիս վարդապետ⁷¹, վախ-

ճանելու օրերը վանքի բոլոր սպասներ, հանդերձեղեններ, գրքեր և տնային կահկարասիքներ (անասնեղէններ չէ ունեցեր) ամհետացեր են: Տաճարալիները գիւղական կարօտ եկեղեցեաց վրայ բաժաներ են, իսկ տնտեսականներն ծախելով՝ վերջի վանահօրն քաղճան ծախք են հողացեր: Սոյնպիսի կարգադրութիւնը առիթ տուած է վանքի անմարդաբնակութեան և կալուածոց կորստեան: Գանձակու հող. կառավարութիւն թէպէտ և ի 16 մարտի 1887 ամի N 198 գրութեամբ խնամակալ կարգեր է վանքին վերայ միրզիկեցի տիրացու Սիբայէ Տեր-Մըկըրտչեանն, ցտնօրէնութիւն կօնսիստօրիային հայոց Տիխիսայ, ցայժմ առանց տնօրէնութեան կնճայ: Բայց նա անկարող է եղել վանքապատկան ամաստիւն տիրապետել, կալուածագիր չունենալու համար, իսկ իւր վերջին յոյսը դրեր էր գիւղական ժողովրդեան վկայութեան վերայ, որք իրենց օգուտն ի նկատի ունենալով, թոյլ և անփաստ վկայութիւն տուած են, որ ինքեանք անաստիւն տիրապետեն: Սակայն այնուհետև ո՞չ վանքին բաժին հասած է և ոչ ժողովրդեան, այլ յարքունիս գրաւուած:

Յիշեալ խնամակալ ձեռնարկեր է ցանկապատել թէ՛ պարտիզատեղին և թէ՛ քանի մը փոքրիկ արտեր, բայց ժողովրդեանք այդ ձեռնարկութիւն ևս խափաներ են: Խնամակալը այժմ տէր է մնացել միայն 17 ընկուզենի ծառերուն: Անս թէ վանքեր ինչպէս հետզհետէ կաւերուեն, որով և նոցա կալուածներ կանհետանան:



ՈՍԿԱՆԱՊՍԱՍ. գյուղը հարավից (լուս.: Գ. Չաքարյանի, 1980-ական թթ.)



ՈՍԿԱՆԱՊՍԱՍ. Սր. Դակոբ եկեղեցին հյուսիսից (լուս.: Ֆ. Քերլեմոնի, 2007 թ.)

ԺԷ
Ոսկանապատ

Ամսոյս 30-ին մեկնելով Միրզիկ գիւղէն և մի ժամի չափ ճանապարհելով՝ այցելեցինք Ոսկանապատ⁷² գիւղը, որ կգտնուի համանուն գետակի⁷³ ձախ ափի վերայ:

Գիւղս կբաղկանայ 114 տուն հայ բնակիչներէ՝ 394 արական, 264 իգական: Ունի Ս. Յակովբ անունով մի հին, ամբաշէն և բարական մեծ եկեղեցի⁷⁴, որ կառուցուած է գիւղի արևմտեան՝ առիկող բարձրացած մի քարափի գլխին, ընդ ահամբ ունենալով գետափանց պտղատու ծառաստաններ, պարտեզներ և հանդիպակաց առապար, դալարագեղ անտառ: Գետի խոխոջուն սահանքի ձայն կխառնուի եկեղեցոյ պաշտօնէից Աստուածապաշտութեան պղծումների մըմուկներու հետ: Առանց վարժարանաշինութեան մի վարժեալ տան մէջը մասնաւոր ուսուցչութիւն կկատարուի քառասնաչափ ուսանողաց համար, ժամանացութիւն և պատարագի դպրութիւն տվրեցնելով, աստուածասեր ժողովրդեան բարեպաշտական խանդն ու եռանդը գոհացնելու: Տեսնելով մեր, որ ուսուցիչ կկարծատրուի միմիայն ուսանողաց թոշակատուութեամբ, և որովհետև թոշակ տալու անձեռնհաս աղքատաց

գաւակներ ուսմունքն կըրկուին, երկրորդ ատոր պատարագամիջոցին բարոզով յորդորեցինք և իրաւէր կարդացինք ժողովրդեան մի մասնաւոր հոգաբարձութիւն ընտրելու, որպէս զի նոցա ձեռքով վարժարանի շարունակութեան, կանոնադրութեան և յարատւութեան միջոցներ պատրաստուի:

Եկեղեցոյ հարաւակողման ձորձորակի մէջ՝ գետի ձախ ափին, կգտնուի Ս. Աստուածածին անունով մի մեծ մատուռ, որուն տեղական ժողովուրդը Անապատ կանուանեն⁷⁵: Սորա դէմ առ դէմ՝ գետի միւս եզերքը՝ այս ափին, կգտնուի Ս. Մարգիս անունով մի փոքրիկ մատուռ⁷⁶: Սոյն երկուքին մատուռներուն երբեմն սակաւաթիւ ուխտատուներ կյաճախեն և մատաղ կանոն ոչ ոխտատուներու առաջ, այլ Ս. Մարգիս մատուռից 60 կանգնաչափ հեռու՝ մեծ թխկի ծառի տակի խաչի ձօտ:

Գիւղիցս 4 վերստաչափ հեռու՝ արևելեան կողմ, գետակի ձախ կողմին դժուարամատչելի առապարին վրայ, կգտնուի մի ամբողջ⁷⁷՝ հօգրացուցած և ամբացուցած մարտկոցներով (բորգեր), որոյ բուրդից հազարատր բնակավայրերու փլատակներ կգտնուեն, որուն տեղացիք քաղաք կանուանեն: Քաղաքի միջնաբերդի մէջ կգտնուի երկայրկանի մի եկեղեցի, որոյ ստորին յարկի մէջ կատարուել է աստուածապաշտութեան օրհներգութիւնը, իսկ վերնայարկին վրայէ՛ն՝ արտաքին թշնամու դէմ պաշտպանողական պատերազմ:

Գիւղիս բնակչաց մէջ գտնուած արհեստներն են՝ դարբնութիւն, հիւանութիւն, տակառագործութիւն, որմնաղործութիւն, դերձակութիւն և ներկարա-

69 Գտնվում է Միրզիկից 2 կմ հարավ՝ Հնայատ գյուղատեղիում: Հիմնադրվել է ԺՅ-ԺԷ դարերում (մանրամասն տես նշվ. աշխ., էջ 398-401):

70 Գյուղ չեմտող:

71 Հիմնադրված է Սարգիս վարդապետ Տիխիսցին վանականվել է 1877 թ. 96 տարեկանում և ամփոփվել վանքի արևելյան կողմում (տապանագիրք տես Քաղաքապետարանից Մ., նշվ. աշխ., էջ 277: Կարապետյան Ս., նշվ. աշխ., էջ 401):

72 Գտնվում է Խանլար շրջակայքումից 10 կմ հյուսիս-արևմուտք՝ Արիմաջուր գետի աջ ափին (ծ. մ. բարձր է 700-740 մ):

73 «Գետակիս մէջ կգտնուի 3 տեսակ ձուկ՝ քառական առաստուրք կարծրախայտ, մուրճա, թեղու (ընչացրով ունեցող)» (ծճք.՝ հեղինակի):

74 Գտնվում է Ոսկանապատի հարավային բարձրադիր եզրին: Հիմնադրման ստույգ տարեթիվը հայտնի չէ: Ըստ կառուցողական առանձնահատկությունների՝ կարելի է քվազել ԺԷ դարի երկրորդ կեսով: Եկեղեցին «...ունի ողջ Արցախում լայն տարածում գտած միանավ բազալմած թափիկ հորինվածք, սակայն մի էական առանձնահատկութեան շնորհիվ ներկայանում է իբրև ճարտարապետական եզակի լուծում ունեցող հուշարձան: Հարցն այն է, որ նմանատիպ բոլոր կառույցներում երկրեք ծածկի տակ առնված քաղց պահում են 1 կամ 2, իսկ առավելագույնը՝ 3 գույգ որմնասյուների վրա հենված թաղակիր կամարները, իսկ Սր. Հակոբը ունի 4 գույգ որմնասյուների վրա հենված թաղակիր կամարները (Կարապետյան Ս., նշվ. աշխ., էջ 414):

75 Կուսանաց Սր. Աստվածածին անապատը գտնվում է Ոսկանապատի հարավային եզրին՝ ձորի մեջ՝ գետի ձախ ափին: Գրավոր աղբյուրներում առաջին անգամ հիշվում է 1684 թ. (նշվ. աշխ., էջ 415-416):

76 Սր. Մարգիս (Սր. Կարդանանց) եկեղեցին կառուցված էր Կուսանաց Սր. Աստվածածին անապատի դեմ համդիման գետի այս ափին: Ըստ ամենայնի, ԺԷ դարի կառույց է: Մինչև 1989 թ. մարտյան բռնազավթը կանգուն էր (նշվ. աշխ., էջ 416-417):

77 Ամբոցի համատար նկարագրությունը տես Քաղաքապետարանից Մ., նշվ. աշխ., էջ 303-304:



ՈՍԿԱՆԱՊԱՏ. Սբ. Աստվածածին անպատն արևելքից (ուս.՝ Ֆ. Բերեժնով, 2007 թ.)



ՈՍԿԱՆԱՊԱՏ. Սբ. Սարգիս եկեղեցին արևմուտքից և մեծ թևիկ ծառի տակի խաչքարը (ուս.՝ Գ. Ջաջարյան, 1980-ական թթ.)

րութիւն: Կանայք կգործեն գորգ, կապերտ ու շալեր իրենց մարդկանց ու որդւոց համար:

Սոյն գետակի եզերքում ի հնումն գտնուել է երկաթի հանքեր և հալոցներ, որոնք այժմ դադարել են: Չնայելով որ գիւղս Գանձակից բաւական բարձր է, բայց նորա դրից ծունկերու վերայ կգրտնուին խաղողի սորիկ որբերու այգիներ և զանազան մրգատաւաններ: Գիւղիս եկեղեցին ունի երկու հատ ձեռագիր ակետարաններ, որոնք մին գրուած է ՉՉ (1331) հայոց թուականին⁷⁸:

Մտուզեցինք այժմ, որ վեց տարի առաջ 618 բուրի ստորագրուած են գիւղիս բնակիչներ և զանձակեցինք՝ յամուն ուսումնարանի դրամագլուխ կազմելու, որից 118 բուրիս պատրաստ է, իսկ մնացեալն ապառիկ: Բայց մինչև ցայսօր ժամանակի յիշեալ գումարն առանց հաւարման մնացեր է: Վասն որոյ Գանձակ քաղաքից ամեն տարի այս գիւղն անարանց եկող պ. Մեծլում բէգ Մելիք-Շահնագարեանց, մահտեսի աղա Վարդանեանց, գիւղիս բնակիչ Յարութիւն Աղայանեանց, Յարութիւն Մամիկոնեանց և Պօղոս Առտամեանց ընտրուեցան գիւղիս հասարակութենէն վերոյգրեալ գումարն հաւարելու, որ վարժարանի դրամագլուխ կազմելոյ համար շահով տան և աճեցնեն: Նաև ընտրեալ վերջին երեքին գիւղացիներ յանձնատու եղան ամեն տարի կալոցին կալանա հաւարել վարժարանի դաստանդելու գործի շարունակութեան համար և միանգամայն հոգ տանեն նոր վարժարան կառուցանելու՝ առանց դրամագլխին ձեռնամուխ

78 Առաջին ձեռագիրը Թորոս փիլիսոփայի՝ Դրագարկուն ընդօրինակած մագաղաթյա Ավետարանն էր (ԺԳ դ., 1331 թվականին տառցել էր Սյունյաց մետրոպոլիտ Մտեփանոս Տարսայիճը), որը ուղևանապատցի ոմն Հովհաննես հետագայում գնել էր՝ ի նիշտակ ձեռնդրելի: Երկրորդը 1463 թ. Սոփիա Փեմպլանք անապատում Դարայել գրչի ընդօրինակած թղթյա Ավետարանն էր, որը 1684 թ. Մարգիս որդի իտյա Պատին ճվրիկ էր Ոսկանապատի Կուսանաց Սբ. Աստվածածին անապատին (Քարխաղարանաց Մ., մշվ. աշխ., էջ 273-274): Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, մասն Բ, Երևան, 2020, էջ 98-99: Միմայան Թ., մշվ. աշխ., էջ 78):

իներու: Նոյնպէս կարգադրեցինք, որ եկեղեցւոյ ունեցած 630 բուրի գումարի շահն վարժարան կառավարելու գործ ածեն:

Գիւղիս հարաւակողման սարի կատարին վերայ շինուած էր երբեմն յանուն Պանտալիոն բժշկի փոքրիկ մատուռ, որն որ վերջին անցեալ տարիներու մէջը մեծցուցեր և նորոգեր է զանձակեցի հանգուցեալ Սարգիս քահանայ Տէր-Ազարեանցն՝ ի յիշատակ իւր վաղամեղիկ Մկրտիչ որդւոյ⁷⁹: Սոյն հռչակաւոր ուխտատեղիս կյանախնէ գրեթէ անառնային ամեն կիւրակէ օրեր զանձակեցիներ ու նորա շրջակայ հայ գիւղացիներ, և փորձանքի պատահած թուրքերն անգամ նոյն ուխտատեղիս կյանախնէն իրենց «մուրագն» առնելու: Իսկ Աստուածածնայ վերափոխման տօնի օրն այնչափ բազմութեամբ հայ ուխտատուներ կցուցուին այնտեղ, որ ամեն տարի նոյն օրը մտրուած մատաղից 300-ի չափ մտրի կվերցնէ կապալառու քահանան: Սոյն ուխտատեղւոյ կապալադրամ, որ տարին 70-100 մանէր կլինի, յատկացուցած են Գեառաշէն գիւղի հայոց եկեղեցական ծխական ուսումնարանին:

79 Սբ. Պանտալիոն (Պանոն, Պանդակարն) մատուռը գտնվում է Ազատ գյուղից 5,5 կմ հարավ-արևմուտք Պանոն լեռան գագաթին: Ըստ շինարարական արձանագրության՝ կառուցել է զանձակեցի Սարգիս քահանայ Տէր-Ազարեանցը՝ Նորոզկել է 1896 թ. Մամիկոն Հովհաննիսյան Տէր-Սարգսյան Տէր-Ազարեանցի ջանքերով (Կարապետյան Ա., Հյուսիսային Արցախ, էջ 316):



Սբ. Պանտալիոն մատուռը հյուսիս-արևելքից (ուս.՝ Ա. Կարապետյան, 1989 թ.) և միտումնավոր վնասված վիճակով հյուսիս-արևմուտքից (ուս.՝ արդրեանական կայքէջերից, 2015 թ.)



Մելիք-Շահնագարեանների զեղրատանը 1887 թ. (կենտրոնում Մելիք Շամիրոն է, իսկ զրկին՝ որդին՝ Լևոն Բեկ Մելիք-Շահնագարեանը)

ԺԸ Մելիք-Շահնագարեանց տոհմի ճիւղագրութիւն

Ոսկանապատ գիւղի մէջ ծնած են Մելիք-Շահնագարեանցի⁸⁰ ներկայ սերունդ՝ 4 եղբայր՝ որդիք Նարինան բէգի՝ Մեծլում բէգ, Ջահն բէգ, Ջաւադ բէգ և հանգուցեալ Եսայի բէգ, որոյ որդին այժմ Եսայի բէգ կանուանեն: Սոցա մնացեալ երեք եղբայր այժմ կրնակին Գանձակ քաղաքում և քաղաքական իշխանութեան մէջ զանազան պաշտօններ կվարեն: Սորա ունեն իրանց նախահայր Մելիք-Նազար Շահնագարեանի տիտղոսի ստացման վաւերական հրովարտակն ստացեալ պարսից թագաւոր Ա. Շահ-Աբասից, իւր արած հաւատարիմ ծառայութեան և քաջագործութեան համար: Յիշեալ իսկական հրովարտակն այժմ կցուցուին տիտղոս իշխանութեան սենատի արխիւի մէջ, և նորա վաւերացեալ օրինակներկայ սերունդի ձեռքին: Յիշեալ Մելիք Նազարի տեղը յաջորդեր է Մելիք Յովսէփ: Նորան յաջորդեր է Մելիք Եսային, նորան յաջորդեր է Մելիք Ռուսթըմ, նորան յաջորդեր է Մելիք Գարիբէ: Մա ունեցեր է երկու որդի՝ Մելիք Ռուսթըմ և Մելիք Քօչար: Մելիք Ռուսթըմ ունեցեր է 2 որդի՝ Մելիք Եսայի և Մելիք Բէգլար: Մելիք Եսային ունեցեր է 3 որդի՝ Աղա բէգ, Յովսէփ բէգ և Նազար բէգ: Մա՝ Նազար բէգ, ունեցեր է երեք որդի՝ հանգուցեալ Ռուսթըմ բէգ և այժմ կենդանի Աղա բէգ և Աղա բէգ: Վերոյգրեալ երկրորդ ճիւղ՝ Մելիք-Բէգլար Մելիք Ռուսթըմն, ունեցեր է երեք որդի՝ Յովհաննէս բէգ, Շամիր բէգ և Ամիրխան բէգ: Յիշեալ Յովհաննէս բէգ վախճանուել է Շուշի գաւառի Հաղբոս գիւղի մէջ և ունի այժմ այնտեղ կենդանի որդիներ: Սորա եղբայր Շամիր բէգ վախճանուել է Ոսկանապատ գիւղիս մէջ և ունի այժմ կենդանի երեք որդի՝ Բէգլար, Ամիրխան և Լևոն բէգեր:

ԺԹ Մուռուս

Յուլիս ամսոյ 2-ին թողնելով Ոսկանապատ գիւղը՝ այցելեցինք Մուռուս⁸¹ գիւղը, որտեղ հիւրասի-

81 Գտնվում է Խանաբաղի համայնքի շրջանակներում 8 կմ հարավ Պանոն լեռան հյուսիսային անտառապատ լանջին (ծ. մ. քարձր է 1190-1310 մ):

80 Ոսկանապատի մելիքոյրան մասին մամրամասն տես մշվ. աշխ., էջ 407-408:



ՄՈՒՌՈՒՏ. Սբ. Աստվածածին եկեղեցին արևմուտքից (ուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.)

րեց մեզ գանձակեցի պ. Պետրոս Նանաստանցը: Մոռ (մալինա, մորենի) ծառեր անտառի մէջ յաճախ լինելու համար բերև գիտիս անուն կնքուած է Մուռուտ⁸²: Գիւղս կրաղկանայ 34 տուն գոտ հայ բնակիչներ՝ 131 արական, 107 իգական: Ունի մի եկեղեցի՝ Ս. Աստուածածին անուամբ՝ նորոգուած արդեանք գանձակեցի մահտեի Քերովբէ Տէր-Մարտիրոսեանի 1881 թ.⁸³, որուն մէջ կգտնուի մագաղաքի վրայ բոլորագիր ձեռագրութեամբ Աւետարան, չունի թուական և մի ձեռագիր Յայնմատուրք՝ հասարակ թղթի վրայ գրած, առանց թուականի:

Գիւղս չունի ուսումնարան և ոչ մասնատու ուսանողներ՝ ո՛չ գիւղիս մէջ և ո՛չ այլ տեղեր ուղարկուած գէթ մի որևիցէ կոչման համար պատրաստելու:

Գիւղս կգտնուի իւր արևելեան Սարիեալ անուանեալ լեռան կտրծքի վրայ, որոյ հորիզոնը ընդարձակ, ռոճ գոլ, ջինջ և աղբիւրս վճիտ լինելու համար ամեն տարի ամառնային ամիսներու մէջ գանձակեցի բազմաթիւ հայեր տեղույն տօքից դժուարաշունչ եղած՝ այստեղ կոյնեն գովարար օդ շնչելու և դիրաշունչ լինելու:

Եկեղեցոյն արևմտակողմն՝ Ոսկանապատէն ի գիւղս բերող ճանապարհին կից մեծ կաղնիի ներքև, կգտնուի վարագուրեալ խաչակիր պատուհան՝ ուխտատեղի Նահատակ անուանեալ, որուն առջև կկառնեն և կծխեն ուխտատուք իրենց նուիրաբերած խումկն ու մտ: Մերձ տրան կգտնուի երեք փողով բոխող գովարար և պատուական ջուր: Նահատակ անուանեալ խաչակիր պատուհանին և երեքփողեան աղբիւրին կհովանատրէ յիշատակեալ մեծ կաղնին, որոյ ստորին ճիւղերուն վրայ կկապուին ուխտատուք բազմերանգ հագուստի ծուխածու՝ ընդ շորակտորներ՝ ցաւափարատ լինելու յուտով:

82 Գլորանական նույն բացատրությունն է տրվել նաև 1886 թ. «Քաջիկեան», ճանապարհորդական յիշատակարան, «Արմազան», 1886, № 20, 25 մայիսի, էջ 294):
83 Ընդարարական արձանագրության առաջին ընթերցումը է Քաջիկեանը (տես նրա նշվ. հոլով., նույն տեղում): Արձանագրությունը տես նաև Բարխուտարբանց Մ., նշվ. աշխ., էջ 272: Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ, էջ 405:



ՄՈՒՌՈՒՏ. Նահատակ ուխտատեղիի աղբյուրը (ուս.՝ արխիվային, Ի դարի սկիզբ)

Վերոյգրեալ ճանապարհի վրայ՝ մի փոքր հեռու սոյն ուխտատեղէն, կգտնուի արին ծծող տգրուկներու տղմուտ լճակը:

Գիւղիս հիւսիսաեակողմն՝ մի վերստ հեռաւորութեամբ, կգտնուի Քանախաչ անուանեալ բլուրը, որ իւր հարթ, հաւասար և ընդարձակ գլխի վրայ, իւրարմէ հեռու տնկուած եօթն խաչարքերուն եօթնօճախ և մահատապ կանուանեն տեղացիներ: Ուխտատուքներ իրենց նուիրաբերած խումկն ու մոմով և երկրպագութեամբ ուխտադրութիւն կատարելէն զկնի, տեղույն հովանատուրող կաղնիներուն ներքև կգրօսնուն և կուրսխանան կերուխումով և պարելով: Մոյն Քանախաչ անուանեալ բարձրավանդակի հիւսիսային կողմէն սքանչելի տեսարան կներկայացնեն՝ ի հեռուստ Գանձակը իւր սղարքախիտ այգիներով և Կուր գետ իւր ոլոր-մոլոր ընթացից ափուներեքու կանաչաբոյր թփերով:

Գիւղացիներու մէջ կգտնուեն արիեստներ՝ դարբնութիւն, հիւանութիւն, բրտութիւն, ատնեմ ի գատ գիտիս բնակչաց կողմանէ ոչինչ միսիթարական չես տեսնար:

Վարելահողեր թէև սակաւ, բայց այդ սակաւ մշակութիւնն էլ բարձրիորդ եղածի պէս է, մանաւանդ որ արտերու պարարտացուցիչ՝ գիւղի միջի բազում աղբակոյտեր ոչինչ նշանակութիւն չունի ժողովրդեան աչքին, և իւր ներկայ մատաղ սերունդի լուսատրութեան մասին անփոքր են: Վարժարան չունին: Ժողովուրդ տգէտ, ուստի միակ Տէր-Սարգիսեան Գրիգոր տգէտ քահանայի⁸⁴ պարտազանց վարմունքով ժողովուրդն կխաբիսափէ աշխարհիս վերայ, քան կկենցաղավարէ: Քահանայն անելի սնապաշտութեան, քան բարեպաշտութեան կառնաջնորդ ժողովուրդը՝ սնուտի պատմութիւններ ընելով նոցա մէջ:

Գանձակեցի տիրացու Յովհաննիսեան Եղիշէի Սոնա այրի բարեպաշտուիտը առաջարկեալ փո-

84 Գրիգոր Տէր-Հակոբյան Տէր-Սարգիսեանը ծնունդովն է 1881 թ. և քահանայագրծով ստեղծակց մինչև 1912 թ. (ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 320 քրտ.-321; գ. 11608, ք. 124):

ղային գումարով յիշեալ քահանայն կյորդորէ ժողովուրդ մատուտ շինել վերոյիշեալ կաղնիի տակի վարագուրեալ պատուհանի տեղ՝ քանի գիւղի եկեղեցւոյ մի որևիցէ պակասութիւն լրացնելու: Խոստացուած գումարէն կանխիկ առհասառչեայն արդէն ստացեր է 60 բուրի:

Չնայելով, որ գանձակեցի հայոց հարուստ դասակարգէն շատեր այս գիւղ ամառանոց գալով և այլ բազում ուխտատուքաց պատճառաւ բաւական մոմավաճառութիւն կլինի, բայց եկեղեցին տասնեակ տարիներէ ցայսօր 120 բուրի արդիւնքէն անելի ոչինչ չունի, և այն էլ ամերեւոյթ և անպատրաստ վիճակի մէջ է, զի քահանայն, երբեմն երեցփոխանի պաշտօն վարելու միջոցի հաշիւներ տակալին չէ յանձնել իւր յաջորդէն, և մենք ևս անկարող եղանք նոյն հաշիւներ անել թէ՛ մեր ժամանակի տրութեան և թէ՛ նորա հաշուեցուցակայ անպատրաստ լինելու համար:

Կրկին կըսենք անմխիթարութիւն, զի եկեղեցոյ երեցփոխանութիւնը անհոգութեան, անփութութեան և անճշտութեան մէջ կգտնուի քանի տարիներէ ի վեր, մանաւանդ ծխատուք քահանայի երեցփոխանական պաշտօն վարելու միջոցին: Ինձ կթոյի, ինչպէս որ քահանայն տոկր է սնապաշտութեան, ուխտատեղեաց նուիրներն ուտելուն մէջ, նոյնպէս և եկեղեցեաց նուիրներ մարսելու սովորած է: Գիւղիս մէջ կպատահի տարին միջին հաշուով 12 մկրտութիւն, մի պակաս և սակաւ ննջեցեալք: Չարմանալի է, որ ուրիշ գաւառէն այստեղ յետին աղբաւտ վիճակի մէջ փոխադրուած քահանայացու տիրացուն, քահանայ ձեռնադրուելով, 7 տարուայ մէջ կարողացեր է հարստանալ և բաւական գեղեցիկ տներ շինել՝ ամառանոց եկողներուն վարձով տալու:

Վարելահողեր սակաւ լինելու համար խրատեցինք գիւղացիներուն ոյժ տալ անասնապահութեան, զի անտառի շատութեմէն այսպիսով կարելի կլինի օգուտ քաղել, իսկ արտերը պարարտացնել գիւղի մէջ դիզուած աղբակոյտներով և տղաքներ կարողացնելու միջոցները բարոզեցինք և անմխիթար մեկնեցանք գիւղու, առանց ան այժմ մի որևիցէ կարգադրութիւն անելու՝ մեզ հետ տանելով մի-միայն հեզ հիւրասիրող պարոնի համակրութիւնը:

Ի Գետաշէն

Ամսոյս 4-ին Մուռուտ գիւղէն մեկնելով՝ իջանք ցանք Գետաշէն⁸⁵ գիւղը, որ շէնացած է իւր համանուն գետակի ձախ ավիին: Գետափուրք գարդարուած են մրգաբեր փորրկի ծառատաններով և հնդեղենաց կանաչաբոյր բախեզներով: Գետակն կզոյնայ Քափազ անուանեալ լեռան ստորոտէն: Քափազ լեռը, քանի մը արդիւր տարի առաջ երկրա-

85 Գտնվում է Խանլարի շրջկենտրոնից 13 կմ հարավ-արևելք Կուրակ գետի խոր ձորի մեջ (ծ. մ. բարձր է 950-1050 մ):



ԳԵՏԱՇԵՆ. գիւղի կենտրոնական հատվածը (ուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)

շարժէն փլշելով, իւր ներքի ձորաբերան խցկեր և գետընթացքին արգելք լինելով, լճակ դարձուցեր է, որուն հայեր Կանաչ լիճ, իսկ թուրքեր Գեօզ-գեօլ⁸⁶ կանուանեն, որու շրջապատը երկու ժամ կտնէ: Լճակն բերք ունի միմիայն կարմրախայտ առատ ձուկ, բայց լճէն գոյացեալ գետակի մէջ կգտնուի երկու տեսակ կարմրախայտ և մուրցա, այն է բեղու (ընչաբարտ): Քափազ լեռան փլատակի մեծամեծ քարերով քարանձաւներ կազմուած են, որոց մէջ անբողջ տարին կգտնուեն ինքնագոյացեալ սատոյցներ, մանաւանդ ամուտ ժամանակ, զի ինչպէս կպատմէին գիւղացիք, ձմեռ ժամանակ կխտով չափ կհալչեն սատոյցներ: Մակայն մենք չկարողացանք տեսնել լիճն:

Գիւղիս գետակի վերին կողմ՝ քանաչափ վերստ հեռու, գետամէջ տեղը կգտնուի, ըստ աւանդութեան, բնակչաց Հին Գետաշէն գիւղի ւտերակն, ուրտեղէն գաղթած են ներկայ գետաշէնցիներն:

Գիւղը կրակալանայ 446 տուն գոտ հայ բնակիչներէ՝ 1357 արական, 1201 իգական: Ունի մի ժողովրդական եկեղեցի, որոյ անունն է Ս. Աստուածածին⁸⁷: Մոյն եկեղեցիէն փոքր հեռի՝ դէպի արևմուտք, կգտնուի Կուսանաց անպատու անուանեալ փորրկի եկեղեցին⁸⁸, որուն թովմ է գիւղիս նոր կառուցուած օրինակի գեղեցկութեամբ, թէև անձանկ վարժարան:

Գիւղիս ստորև՝ արևելեան կողմ, կայ և մի մատու՝ Կարմիր ճահատակ⁸⁹ անուանեալ, որուն մէջ կգտնուի Յիսուսի խաչափայտի մասն, ըստ տե-

86 Այսպիսով լճի առաջացումը կապվում է 1139 թ. երկրաշարժի հետ. «Փայլ և լեռուն Ալիսարակ ի շարժմանէն և արգել գծարակն, որ անցանէր ընդ մէջ նորս և եղև ծովակ...» (Գիւրխազ Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 117):
87 Միակնակ եկեղեցին կառուցված էր Գետաշենի հին բաղամասի կենտրոնում: Հին տեղում էինմովին վերակառուցված նոր եկեղեցու շինարարական աշխատանքներն ամբողջացել են 1883 թ. (Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ, էջ 339):
88 Այս եկեղեցու մասին մանրամասն տես նշվ. աշխ., էջ 340-342:
89 Գետաշենի երեք եկեղեցիներից ամենամինչ էր կառուցված 1677 թ. շինարարական արձանագրությունն առավել ամբողջական ընթերցել և հրատարակել է Սամվել Կարապետյանը (տես նրա՝ նշվ. աշխ., էջ 337-338):



ԳԵՏԱՇԵՆ. Ափարակ (Կանաչ) լիճը (ուս.՝ Բ. Քորանջյանի, 1977 թ.)



ԳԵՏԱՇԵՆ. Սբ. Աստվածածին եկեղեցին (ուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)

ղացոց՝ Ասզ Ա. Նշան: Կաանդնն, քէ տյն Ասզ Ա. Նշանը բերուած է Ջրաբերդ գաւառի Հարերք գիւղէն: Վարդավառն սկսեալ մինչև աշնան վերջեր թագում ուխտաւորներ կյանախեն Ասզ Ա. Նշանին Գանձակէն, Տփլիսիսն, Բագումն, Շուշիէն, Սղնախէն, Ղազախէն և այլն: Յիշեալ մատուոի մէջ կգտնուի ս. Տիդէ Առաքելոյ աքը:

Գիւղի սահմանէն 3 վերստ հեռաւորութեամբ՝ հարաւակողմ, կգտնուի *Տղնասարու վանքը*⁹⁰, որ 8 ամաց հետև անմարդարնակ եղած է և որուն սպասներ, անօթներ և տնտեսական կարասիքներ յանձնումա՛ծ է հոգ. կառավարութեան կողմանէ գիւղի բնակիչ Ալլահվերդի Պետրոսեանին ի պահեստ, որ այժմ հանգուցեալ է: Տղնասարու սահմանին մէջ կգտնուի *Կուսանաց անապատ* անուանեալ եկեղեցին⁹¹, ըստ տեղացոց յորջորջման՝ *Կուսակալ* կամ *Վերին վանք*: Ըստ տեղացոց՝ սա է *Մայրավանք* անուանեալ: Նոյն վանոց (Տղնասար) կպատկանի *Քրուտաշէն* անուամբ աւերակ ագարակն՝ իր փորքիկ սագաշէն եկեղեցիով⁹², ուր կայ նոյնպէս և *Խտտորաշէն* անուն աւերակ գիւղատեղին:

Գետաշէն գիւղը ունի եկեղեցական միղասեան արականաց ուսումնարան, որոյ մէջ կուսանին 39 ուսանող: Ունի երկու արարտող համալսարանականներ, որոնց մինն է Մովսէս Եպիսկոպոսեանց, որ մեզ հիւրընկալող տանուտեր Գրիգորի որդին է և անուառապետութեան պաշտօն կվարէ, իսկ միւսն՝ Միքայէլ Արզմանեանց՝ քաղաքական ծառայող: Գիւղէն դուրս կան ուսանողներ Գանձակու մէջ. երկուքը՝ ի գինձագինն, մին՝ ի քաղաքական ուսումնարան և երեք՝ արհեստական ուսումնարանը:

Ի 1887 թ. գիւղիս մէջ բացուել է գաւառական արքունի երկդասեան ուսումնարան⁹³, ունի մօտ 60 ուսանողներ՝ հանդերձ շրջակայ գիւղօրէից եկուոր ուսանողներով:

Գիւղիս մէջ կգտնուին արհեստաւորներ՝ որմնադիր, հիւսն, երկաքաղործ, ներկարար, բրուտ, ռակերիչ, խաղախորդ, կոշիկակար, շալէգործ, քամբաքործ, մանրավաճառ և այլն: Գիւղիս մշակելի մրրգատաններ, բաւեղներ և կպատեղեր գիւղէն կարի հեռու լինելու պատճառաւ կանայք բոլորովին անգործ մնացած են, մինչև անգամ կպատեղերու մէջ շեղացած ցորենները գնալու մաղելու ամփոյք են:

Ուստայնակութեան արհեստն էլ, որ երբեմն ծաղկած էր գիւղիս մէջ, այժմ բնկած լինելով՝ գիւղիս կանայք իսպառ անաշխատ կեանք կվարեն...

Գիւղիս մէջ աղբիւր չկայ: Բնակիչները ամառ և ձմեռ միևնոյն գետակի պատուականագոյն ջուրը կլիմեն և գետակի սահանքի հետ շարունակ փչող գովարար ողորպ կվալելեն: Գուցէ այս պատճառաւ է, որ գիւղիս ձայներն պատուականագոյն են՝ ջըսներ հրեշտակային, որ չենք լսել: Չայներ կակուլ և անուշ, ինչպէս կըսուի, իրենց նրբութեամբ աւելի կանացի են, քան առնացի: Սոցա (տեղւոյն տէր Մեսրոպը, տանուտեր Գրիգորի որդիք և այլն) երգելու միջոցին եղանակի ելեւջներ, դարձուածքներ կարծես քէ տխրակային գեղեղումներ են: Ժողովրդական երգերու սրտագին եղանակի մըմունջները լսելով՝ մարդ կսրանջանայ, որոյ տաջև նուագարաններ անօթաւար կլինեն: Եւ նուագածուներ պիտի խտտովանեն, որ գեղեղումներին, բաղխումներին նրբութիւնը գետաշէնցիներէն տպիւնու և կատարելագործելու է: Ազգային երգերու քանաստեղծ հեղինակները և երաժիշտները, եթէ մեզ պէս քաղղ ունենային՝ սոցա ձայնի քաղցր դայլայլիկ լսելու և պարերգներուն ներկայ լինելու, պիտի համոզուէին, որ իրենց քանաստեղծութիւններ գետաշէնցոց քաղցրաքաղցր և անուշ եղանակով կըլին ոգի ստացեր են: Մենք, ասիական Տաճկաստանի, Կովկասի և Ատրպատականի կողմ

90 Գտնվում է Գետաշենից մոտ 1,5 կմ հարավ՝ անտառի փեշից: Վանքի մասին մանրամասն տես մշվ. աշխ., էջ 354-357:

91 Գտնվում է Մարտունաշենից 3,5 կմ հարավ-արևմուտք: 1980 թ.՝ Սամվել Կարապետյանի այցելության ժամանակ, արդեն «...եկեղեցուց պահպանվել էին միայն խորանին և կուսիսային ճակատին՝ մկրտարանի խորով հանդերձ հարող հատվածները» (մշվ. աշխ., էջ 386):

92 Բրտիշեն (Գուդուս) անվամբ հայտնի գյուղատեղին գտնվում էր Մարտունաշենից 0,5 կմ հարավ-արևմուտք: 1989 թ. տեսումը տեղապահված էին եկեղեցու և գերեզմանոցի ավերակները (մշվ. աշխ., էջ 384-385):

93 Արքունի դպրոցի մասին տես Միքիմանեանց Յ., Գետաշեն գիւղը, «Մուրճ», 1894, № 7-8, յուլիս-օգոստոս, էջ 1162:



ԳԵՏԱՇԵՆ. Կուսանաց անապատը (ուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)



ԳԵՏԱՇԵՆ. Ավազ Սբ. Նշան եկեղեցին (ուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)



ԳԵՏԱՇԵՆ. Եղնասարի վանքը (ուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)



ԳԵՏԱՇԵՆ. Քրուտաշէնի եկեղեցին (ուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)

մեր շրջագայած լինելով, վանցոց և գետաշէնցոց ձայներու նման ոչ մի տեղ լսած չենք:

Գիւղիս բնակավայր ծորակ շատ նեղ է և մի կողման վրայ միայն բնակութիւն հաստատելու տեղ ունի: Ձի գետակի միւս կողման սարերու ստորոտներ կարի առապար են և գետակի մէջ իջնալով՝ շինութեան տեղ չեն բողոցներ: Շինավայրի նեղութեան պատճառաւ տներ այնչափ խիտ են, որ մէկի տան առաջի ճանապարհն գրեթէ միւսի տան տանիքէն կանցնէ: Գիւղամիջի ճանապարհներ ոլոր-մոլոր, նեղ և շրջապտոյտ լինելու համար երկրագործական կեանքին անյարմար են, սայլերու և անասնոց անցուղարձը կարի դժուարացեր է: Բնակիչներու մեծագոյն մասը պարտաւորուած է երկու սենեկէն արեւի ծածկ շունենալ քէ՝ բնակութեան և քէ՝ մթերանոցի համար, զի բացի իրենց աշխատակից գըրասաներէն, որոնցմով խտտերը և օրաններ կըբերեն գիւղը, իրենց միւս անասուններ գիւղէն դուրս պահելու պարտաւորուած են: Տասնէն մինչև քսան տունը

մի բունի միայն ունեն հաց քիսելու և այն էլ փողոցի մի անկիւնի մէջ շինած, որոյ մէջ առաստէն մինչև կէս գիշեր յաջորդաբար իրենց հաց կքին: Խմորի գանգուածի գալու (խմորուելու) և անեկութեան համար պարտաւորուած են չնտածել և հացն կիսակի դուրս հանել, որպէսզի իրենց յաջորդական կարգը չկորցնեն:

Փողոցները անտանելի կեղտոտութեան մէջ են, մարդկանց և անասնոց արբերով լի: Անշուշտ, այս պատճառաւ պիտի լինի գիւղացոց երկու սեռի վատառողջութիւն, դէմքի դեղնութիւնն, տգեղութիւնն և կարճակեցութիւնն, որ յատուկ է գիւղիս բնակչաց: Ինձ կրօնի, քէ տիրող իշխանութիւններ պարտաւորութիւն ունեն իրենց հպատակ տգեղ գիւղացոց վրայ, իբրև հայր որդոց, խնամք տանել և առաջնորդել գէր աշխարհի ամենաբանկազին կեանքը վարահաս մահումն ազատելու: Որչափ մտրակ որ հարկահանութեան համար կգործադրուի, երանի քէ նորա լոկ ստուերն էլ հարկատուներին առողջապա-



ԱՐԼԱՐ. գյուղը հեռվից (ուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.)



ԱՐԼԱՐ. Սր. Մինաս եկեղեցին (ուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.)

հուբեանն և կեանքի պահպանության համար գործածուէր, եթէ չկան անկի քաղաքավարի միջոցներ: Մի տարու չափ Գանձակ մնալով՝ ի լրոյ ես վատ գաղափար էի կազմեր գետաշէնցուց վրայ, որպէս թէ սորա կենցաղավարելու անպիտան և յառաջադիմութեան անտորք արարածներ են, այն ինչ ես այս գիտը գտայ աշխատասիրութեան մրջմնաբոյն և մեղրի փերակ: Ապացոյց իմ այս խօսքերուն պիտի տեսնար գիտիս գլխատըր փողոցի մէկ ծայրէն մինչև միւս ծայրը վերոյգրեալ արհեստներու գործատուներ, որոնց մէջ ետուն և շարժուն գործունէութիւն կկատարուի:

Ի Ա Արլահ

Ամսոյս 9-ին Գետաշէնէն մեկնելով՝ այցելեցինք Արլահ⁹⁴ գիւղը, որ կրողկանայ 34 տուն զուտ հայ բնակիչները՝ 111 արական, 85 իգական: Ունի մի հնաշէն մեծ եկեղեցի⁹⁵, որ կառուցուած է սագաշէն կամարով, վեց միապաղատ բարակ սյուներու վրայ: Քահանայ չունի և ոչ քահանայացու, բայց վեց ամսոյ չափ կլինի, որ տասն և հնգի չափ աշակերտներ կուսանեն եկեղեցոյ ժամասացութիւն և պատարագի դպրութիւնը մի այլ գիւղէն եկած տիրացոյի ուսուցչութեամբ:

Գիւղիս Արլահ անուան վրայ տեղացիներ իրենց պապեանական ասանդութեան ատած կպատմեն, թէ ի հնունն այս գիւղն *Գինձնոր* կանուանուէր և ապա ցոյց այս ասանդութեանն, մատնացոյց կընեն այցելուներին սորա միջի հին, խապանացեալ այգետեղեր և նոցա հնձաններ ու քարցոյի գորբեր:

Գիւղացիներ սկսեր են նոյն այգետեղիներ նորոգել՝ զինները որքեր տնկելով և արդէն պատրաստած ունեն բաւական շատ պտղատու ծառեր իրենց

գիւղի առջև: Գիւղիս բնակիչներ բարեպաշտութեան և իրաւասիրութեան յայտնի օրինակ հանդիսացած են շրջակայ գիւղերնալութեանց առաջ, լսեցինք և ստուգեցինք, որ գիւղիս մէջ բնաւ ծխախոտ և ընչախոտ քաշող չկայ: Գերդաստանական համեստութիւնը և բարոյական սքրութիւնը իւր բարձր որից վերայ ակներև կտեսնուեն գիւղիս բնակչաց մէջ: Սոցա մէջ ատախօսութիւն և սուտ երդում ըննել անգոսնեղի⁹⁶ և դատապարտելի եղած է (բացի միոյն): Մշակի վարձ չհատանելէն ի գատ՝ օր ատըր ձգելն ևս մեղադրելի է սոցա մէջ:

Գանձակի առաջնակարգ հարուստ հայեր՝ Նաբաբեաններ, Մալիեաններ, Փափախչի-Միմեօնեաններ, Աղաջան(եաններ), Կարապետեաններ, Տէր-Յովսէփեաններ և այլն, այս գիւղէն գաղթեր են Գանձակ, որք, տարին մի անգամ գիւղիս սքրավայրեր գալով, ուխտերնհի կկատարեն և ճոխ սեղան կկազմեն, մատաղներ կանեն, կշտապինը կվայելեն: Տակտիմ մինչև ցայսօր մի որկիցէ յիշատակաց արժանի գործով չեն յիշեր իրենց հայրենաց եկեղեցին և նորա աւագան, որ ծնաւ զիրենք, բացի մի գոյգ փոքրիկ զանգակներէ, որ նուիրած են Նաբաբեաններ: Սորա՝ գիւղէս գաղթածներ, կարող էին իրենց հայրենի գիւղին մէջ մի փոքրիկ վարժարան և նորա ապահովութիւնը կենսագործել, որով իրենց բշտառ հայրենակիցներու դառնութիւնը կքաղցրացնէին և իրենց վրայ կզգտնած վատ, նախանձու և ատելութեան գաղափար անհետացնելէն զկնի, մատաղ և ապագայ սերունդը բարեմաղթիւն կկացուցանէին ինքեանց: Գիւղիս բնակիչներէն լինելով և Գանձակու Ս. Լուսաորիչ եկեղեցոյ բարեկործ Միմեօն և Եղիշէ քահանաներ՝ սոցա ևս պարտատուութիւնն էր յորդորական միջոցներով պատրաստել իրենց հայրենակից գաղթական քաղաքացիներու սրտերը՝ իրենց հայրենի գիւղի մէջ մնացող բշտառ հայրենակցաց գարգացման ձեռնուտութիւն ընելու:

Գիւղիս հիւսիսային կողմէն պարանոցաձև առ ի վեր բարձրացած բլուրի կատարի վրայ կտեսնուեն

96 Անարգելի, պարսկալի:



ՍՈՒՆՈՒՔ. գյուղը արևմուտքից (ուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)



ՍՈՒՆՈՒՔ. Սր. Գովհաննէս եկեղեցին 1989 թ. (ուս.՝ Ս. Կարապետյանի) և միտումնավոր ոճապնօնմից հետո (ուս.՝ Յ. Քերէնճի, 2007 թ.)



ՍՈՒՆՈՒՔ. Սր. Գովհաննէս եկեղեցին 1989 թ. (ուս.՝ Ս. Կարապետյանի) և միտումնավոր ոճապնօնմից հետո (ուս.՝ Յ. Քերէնճի, 2007 թ.)

բաւական բոլով գերեզմաններ, որոնք ծածկուած են դամբանական քարերով, առանց խաչի: Եւ այդ քրակի կատարը բոլոր Գանձակի գաւառացիներէն կկոչուի Ս. *Յովհաննէս* ուխտատեղի: Այդ քրակի հիւսիսակողման կուրծքի վրայ կայ *Տօրը եղբայր* և մի քոյր *Նահատակներ* անուանեալ ուխտատեղի: Սոյն եօթնեակ եղբայրներէն միոյն անուն Ս. Յովհաննէս և քրոջն Հոիվսիմէ կկոչեն տեղացիք: Միւսներ անանուն են: Սորա ոչ այլ ինչ են, բայց թէ քարերու փոքրիկ ծեղպ՝ օճակի ձևով, որոնց իւրաքանչիւրի մէջ կզտնուեն ճրագներ: Բաց ի քրիստոնէայներէն մահմեդականներ ևս կղիմեն սոյն վայրի ուխտարութիւն կատարելու: Ջերմեանը ուխտարներ իրենց նուիրաբերած խունկ ու մոմի հետ կվառեն և յիշեալ ճրագները: Միայն Ս. Յովհաննէս անուանեալ ծեղպի մէջ կզտնուի մի շարժական խաչքար, միաներու մէջ ոչինչ քրիստոնէական կրօնի նշաններ չեն գտնուեր: Սոյն նահատակներուն կիողմանաւորեն անձեռնմխելի մնացած էին կաղնիներ իրենց արդէն ասանդաբար վայելած յարգանքով, որք ցայսօր ազատ կապրին մարդկային վնասող ձեռքերէն:

Ի Բ Աւլուզ

Ամսոյս 10-ին Արլահ գիւղէն մեկնելով՝ այցելեցինք Աւլուզ⁹⁷ գիւղը, որուն բոլորքեր Ազատ կանուանեն: Գիւղս ունի մի եկեղեցի՝ Ս. *Յովհաննէս* անուանը⁹⁸, սագաշէն կառուցուած շորս սիւների վրայ: Ունի մի քահանայ՝ Տէր-Մարգսեանց տէր Կարապետ⁹⁹, որուն տուն հիւրընկալուած էինք:

97 Գտնվում է Խանկարի համայնու շրջկենտրոնից 10,5 կմ հարավ-արևելք (ծ. մ. քարձր է 1170-1220 մ):

98 ԺՁ-ԺԷ դարերում կառուցված եկեղեցին գտնվում է Ազատից 1 կմ հարավ-արևմուտք՝ Մուլոյք գյուղատեղիի տարածքում: Շինարարական արձանագրությունը 1980 թ. արդեն չէր պահպանվում (մանրամասն տես նշվ. աշխ., էջ 312-314):

99 Կարապետ Տեր-Մարգսյանը ծնունդով է 1869 թ., քահանայագործել անվավան մինչև 1910 թ. (ՀԱՄԿ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, թ. 319 շրջ.-320; ֆ. 93, ց. 1, գ. 384, թ. 58: Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ, էջ 314):

Գիւղս կրողկանայ 52 տուն զուտ հայ բնակիչներէ՝ 189 արական, 164 իգական, որոնց համար շրջակայ բնակիչներ կասեն, թէ այս կողմերու ամէն գիւղերէն հարուստ են: Երկրորդ՝ քաղաքական կառավարութեան ամալաբնոց սոյն գիւղի մօտ լինելուն համար, նոցա և Գանձակի քաղաքացոց շինութեան պիտոյքները սայլերով փոխադրելոյն համար իրենց աշխատութեան վարձքով հարստացեր են:

Գիւղիս արևմտեան կողմը՝ երկայնածիղ անտառի մէջ, կզտնուի *Երժնգենիայ* անունով մի կիսաւեր և անմարդարեակ վանք¹⁰⁰, ուր տեղն է, ըստ ասանդութեան գիւղացոց, Երժնգենայ քահանայի գերեզմանը: Ինչպէս որ նկատուի է վանքի շրջապատ գերեզմանոցէն և նորա հանդէպ գտնուող ընդարձակ գիւղատեղիի անբրակներէն, այստեղ երբեմն եղել է մեծ գիւղ և այս վանքն եղել է նորա եկեղեցին:

Սուլուզ գիւղը ունի մի վարժարան, որուն մէջ մի տարի միայն ուսումն ասանդուած է: Գիւղիս եկեղեցոյն հիւսիսային դրան վրայ ներկայ տարուս մէջ մի գեղեցիկ ճաշակով զանգակատուն շինելու ատուած է սոյն գիւղի բնակիչ Մակի Աւալեանն ի յիշատակ իւր հանգուցեալ որդոյ՝ Խաչատուրի¹⁰¹:

100 Երժնգայ քահանայի վանքը (Սուլուրի անապատ) գտնվում է Ազատից 2 կմ արևմուտք: 1987 թ. ավերակ եկեղեցու փլատակներում պահպանվել էին տեղանիւն ու կտորատված միայն մի քանի խաչքարեր (մանրամասն տես նշվ. աշխ., էջ 315):

101 1890 թ. կառուցված կրկնաօսրկ զանգակատունը 90 տարի անց արդեն չէր պահպանվում (մանրամասն տես նշվ. աշխ., էջ 312-314): Բարիբախտաբար, վնասուածք մեզ է հասել Աւալար Բարիստարյանցի շնորհիվ (տես նրա՝ Արցախ, էջ 269):

94 Գտնվում է Խանկարի համայնու շրջկենտրոնից 10 կմ հարավ-արևելք (ծ. մ. քարձր է 1000-1050 մ):
95 Սր. Մինաս ծխական եկեղեցին վերակառուցվել է ԺԷ դարում հին տեղում: Նորոգվել է 1892 թ.: 1987 թ. տակավին կանգուն էր (մանրամասն տես Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ, էջ 305-307):



ԱՐԼԱՂ. գյուղը հեռվից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.)



ԱՐԼԱՂ. Սբ. Մինաս եկեղեցին (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.)

հուրբանն և կեանքի պահպանութեան համար գործածուէր, եթէ չկան աւելի քաղաքավարի միջոցներ: Մի տարու չափ Գանձակ մնալով՝ ի լրոյ ես վատ գաղափար էի կազմեր գետաշէնցուց վրայ, որպէս թէ սորա կենցաղավարելու անպիտան և յառաջադիմութեան անողոր արարածներ են, այն ինչ ես այս գիտը գտայ աշխատասիրութեան մըջմնաբոյն և մեղուի փերակ: Ապացոյց իմ այս խօսքերուն պիտի տեսնար գիտլիս գլխատոր փողոցի մէկ ծայրէ մինչև միւս ծայրը վերոյգրեալ արհեստներու գործատուներ, որոնց մէջ եռուն և շարժուն գործունէութիւն կկատարուի:

ԻԱ Արլահ

Ամսոյս 9-ին Գետաշէնէն մեկնելով՝ այցելեցիք *Արլահ*⁹⁴ գիւղը, որ կբաղկանայ 34 տուն գուտ հայ բնակիչներէ՝ 111 արական, 85 իգական: Ունի մի հնաշէն մեծ եկեղեցի⁹⁵, որ կառուցուած է սագաշէն կամարով, վեց միապաղաղ բարակ սիւներու վրայ: Հսիւսանայ չուրի և ոչ քահանայացու, բայց վեց ամսոյ չափ կլինի, որ տասն և հնգի չափ աշակերտներ կուսանեն եկեղեցոյ ժամասացութիւն և պատարագի դպրութիւնը մի այլ գիւղէն եկած տիրացուի ուսուցչութեամբ:

Գիւղիս Արլահ անուն վրայ տեղացիներ իրենց պապենական ամանորութեան առած կպատմեն, թէ ի հնումն այս գիւղն *Գիմեճոր* կանուանուէր և ապացոյց այս ամանորութեանն, մատնացոյց կընեն այցելուներին սորա միջի հին, խոպանացեալ այգետեղեր և նոցա հնձաններ ու քարացուի գութեր:

Գիւղացիներ սկսեր են նոյն այգետեղիներն նորոգել՝ գիմեճոր որբեր տնկելով և արդէն պատրաստած ունեն բաւական շատ պտղատու ծառեր իրենց

գիւղի առջև: Գիւղիս բնակիչներ բարեպաշտութեան և իրաւասիրութեան յայտնի օրինակ հանդիսացած են շրջակայ գիւղաբնակութեանց առաջ լսեցիքը և ստուգելիքը, որ գիւղիս մէջ ընա ծխախոտ և ընչախոտ քաշող չկայ: Գերդաստանական համեստութիւնը և բարոյական սքրութիւնը իւր բարձր դրից վերայ ակներև կտեսնուեն գիւղիս բնակչաց մէջ: Սոցա մէջ ստախոսութիւն և սուտ երդում ընել անգոսնելի⁹⁶ և դատապարտելի եղած է (բացի միոյն): Մշակի վարձ չհատանելէն ի գատ՝ օր աւուր ձգելն ևս մեղադրելի է սոցա մէջ:

Գանձակի առաջնակարգ հարուստ հայեր՝ Նաբաբեաններ, Մալիեաններ, Փափախչի-Սիմէօնեաններ, Աղաջան[եաններ], Կարապետեաններ, Տէր-Յովսէփեաններ և այլն, այս գիւղէն գաղթեր են Գանձակ, որք, տարին մի անգամ գիւղիս սքրավայրեր գալով, ուխտերնին կկատարեն և ճոխ սեղան կկազմեն, մատաղներ կանեն, կշտապիճը կվայելեն: Տակախն մինչև ցայսօր մի որևէք յիշատակաց արժանի գործով չեն յիշեր իրենց հայրենեաց եկեղեցին և նորա աւագան, որ ծնաւ գիրենք, քացի մի գոյգ փորքիկ գանգակներէ, որ նուիրած են Նաբաբեաններ: Սոքա՝ գիւղէս գաղթածներ, կարող էին իրենց հայրենի գիւղին մէջ մի փորքիկ վարժարան և նորա ապահովութիւնը կենսագործել, որով իրենց թշուառ հայրենակիցներու դաժնութիւնը կբաղցրացնէին և իրենց վրայ կզգնուած վատ, նախանձու և ստեղծութեան գաղափար անհետացնելէն զկնի, մատաղ և ապագայ սերունդը բարեմաղթին կկացուցանէին իրենցը: Գիւղիս բնակիչներէն լինելով և Գանձակու Ս. Լուսատրիչ եկեղեցոյ քարեկրօն Սիմէօն և Եղիշէ քահանաներ՝ սոցա ևս պարտաւորութիւնն էր յորդորական միջոցներով պատրաստել իրենց հայրենակից գաղթական քաղաքայիններու սրտերը՝ իրենց հայրենի գիւղի մէջ մնացող թշուառ հայրենակցաց զարգացման ձեռնադրութիւնը բնկու:

Գիւղիս հիւսիսային կողմէն պարանոցաձև առ ի վեր բարձրացած բլուրի կատարի վրայ կտեսնուին

96 Անարգելի, պարսավելի:



ՍՈՒԼՈՒՔ. գյուղն արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)



ՍՈՒԼՈՒՔ. Սբ. Դովիաննէս եկեղեցին 1989 թ. (լուս.՝ Ս. Կարապետյանի) և միտումնալու ռժբակնութիւնը հետո (լուս.՝ Ֆ. Բերեճոնի, 2007 թ.)



ՍՈՒԼՈՒՔ. Սբ. Դովիաննէս եկեղեցին 1989 թ. (լուս.՝ Ս. Կարապետյանի) և միտումնալու ռժբակնութիւնը հետո (լուս.՝ Ֆ. Բերեճոնի, 2007 թ.)

բաւական թուով գերեզմաններ, որոնք ծածկուած են դամբանական քարերով, առանց խաչի: Եւ այդ բլրակի կատարը բոլոր Գանձակի գաւառացիներն կկոչուի Ս. *Յովիաննէս* ուխտատեղի: Այդ բլրակի հիւսիսակողման կուրծքի վրայ կայ *Տօրը եղբայր և մի քոյր նահատակներ* անուանալ ուխտատեղի: Սոյն եօթնեակ եղբայրներէն միոյն անուն Ս. Յովիաննէս և քրոջն՝ Հռիփսիմէ կկոչեն տեղացիք: Միսունը անամուն են: Սոքա ոչ այլ ինչ են, քայց թէ քարերու փորքիկ ձեղալ՝ օճախի ձևով, որոնց իրաբանչիսի մէջ կզտնուեն ճրագներ: Բայց ի քրիստոնէայներէն մահնեղականներ ևս կզիմեն սոյն վայրի ուխտադրութիւն կատարելու: Ջերմեանոց ուխտաւորներ իրենց նուիրաբերած խունկ ու ումի հետ կվառեն և յիշեալ ճրագները: Միայն Ս. Յովիաննէս անուանալ ձեղալի մէջը կզտնուի մի շարժական խաչքար, միւսներու մէջ ոչինչ քրիստոնէական կրօնի նշաններ չեն գտնուեր: Սոյն նահատակներուն կողմանաւորեն անձեռնմխելի մնացած էին կաղնիներ իրենց արդէն աւանդաբար վայելած յարգանքով, որք ցայսօր ազատ կապրին մարդկային վնասող ձեռքերէն:

ԻԲ Սուլուգ

Ամսոյս 10-ին Արլահ գիւղէն մեկնելով՝ այցելեցիք *Սուլուգ*⁹⁷ գիւղը, որուն թուրքեր *Ազատ* կանուանեն: Գիւղս ունի մի եկեղեցի՝ Ս. *Յովիաննէս* անուամբ⁹⁸, սագաշէն կառուցուած չորս սիւների վրայ: Ունի մի քահանայ՝ Տէր-Սարգսեանց տէր Կարապետ⁹⁹, որուն տուն հիւրընկալուած էինք:

97 Գտնվում է Խանլարի համանուն շրջկենտրոնից 10,5 կմ հարավ-արևելք (ձ. մ. բարձր է 1170-1220 մ):
 98 ԺԶ-ԺԷ դարերում կառուցված եկեղեցին գտնվում է Ազատից 1 կմ հարավ-արևմուտք՝ Սուլուգ գյուղատեղիի տարածքում: Ենթարկարական արձանագործությունը 1980 թ. արդեն չէր պահպանվում (մանրամասն տես նշվ. աշխ., էջ 312-314):
 99 Կարապետ Տեր-Սարգսյանը ձեռնադրվել է 1869 թ., քահանա-յազորելով սանվազն մինչև 1910 թ. (ՀԼԿ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, թ. 319 շրջ.-320; ֆ. 93, ց. 1, գ. 384, թ. 58): Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ, էջ 314):

100 Երմուղիս քահանայի վանքը (Սուլուգի անապատ) գտնվում է Ազատից 2 կմ արևմուտք: 1987 թ. ավերակ եկեղեցու վիստակներում պահպանվել էին տեղախան և կուրսալված միայն մի քանի խաչքարեր (մանրամասն տես նշվ. աշխ., էջ 315):
 101 1890 թ. կառուցված կրկնաթակ գանգակատունը 90 տարի անց արդեն չէր պահպանվում (մանրամասն տես նշվ. աշխ., էջ 312-314): Բարբաբայանաբար, վիճակիցը մեզ է հասել Մուկար Բարխուտարյանի չնորիսի (տես նրա՝ Արցախ, էջ 269):

94 Գտնվում է Խանլարի համանուն շրջկենտրոնից 10 կմ հարավ-արևելք (ձ. մ. բարձր է 1000-1050 մ):
 95 Սբ. Մինաս ծխախոտ եկեղեցին վերակառուցվել է ԺԷ դարում հին տեղում: Եղբուգվել է 1892 թ.: 1987 թ. տակախի կանգնել էր (մանրամասն տես Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ, էջ 305-307):



ԲԱՂՇԻԿ, գյուղը արևմուտքից (ուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)

Գիւղս բարձր դիրք և ջինջ օդ ունենալու համար 30 տնայափ զանձակեցիք ամարանոց կզան: Ջուրն կարի սակա լինելու համար մրգաբեր ծառաստան, պարտեզներ և բախեզներ սակա են՝ չնայելով, որ այդ սակաիկ ջուրը կրղխ գիղիս սահմանէն, նորա կէս մասն էլ յատկացուցած է կառավարութիւն նոր հաստատուած Սիխայեղովկա¹⁰² անուանած մալական գիղի բնակչաց:

ԻԳ

Բաղշիկ

Ամսոյս 11-ին այցելեցինք Բաղշիկ¹⁰³ անուանալ գիղին, որ շինուած է ձորամէջ և համանուն առուակի հարասակողմը և կբաղկանայ 38 տուն զուտ հայ բնակիչներէ՝ 141 արական, 123 իգական: Ունի մի հնադարեան պնդակազմ սազաշէն եկեղեցի¹⁰⁴:

Սոյն գիղացիներ 20 տարի առաջ այստեղ եկած են Հաճի-շէն գիղէն և Բաղշիկ անուն աւերակ գիղատեղին նորոգել են: Բաղշիկ գիղը այնչա՛ փ երկար տարիներէ ի վեր աւերակ եղեր է, որ Սուլուզ գիղի ձերուհիներ չեն յիշեր նորա շէն լինելու ժամանակ: Սերձակայ Հաջի-շէն գիղացիներ, մարմնաւոր իշխանութեան ստիպմամբ, իրենց բնակավայրէն դուրս եկած են, թողնելով իրենց մշակած արտեր նորաշէն Սիխայեղովկա գիղի գաղթականներուն: Երեքի պնդութեամբ սորա հագիտագ կարողացել են աւերակ գիղիս մէջ բնակութիւն հաստատել, զի քաղաքական իշխանութիւնն ստուգելով, որ նորա յիշեալ Հաջի-շէն գիղի մէջ բնակութիւն հաստատելէն առաջ, Գետաշէն գիղի նախնական բնակիչ եղեր են, վասն որոյ կամեցեր է դարձնալ ի



ԲԱՂՇԻԿ, եկեղեցին 1989 թ. (ուս.՝ Ս. Կարապետյանի) և միտումնաբեր ավերումից հետո (ուս.՝ Յ. Քերէմնըմ, 2007 թ.)

նոյն Գետաշէն գիղ վերադարձնել: Բայց վիճակիս հանգուցեալ յաջորդ բարեյիշատակ թաղէս եպիսկոպոս Տէր-Գանիէլեանցի¹⁰⁵ խնամատարութեամբ հաստատուեր են սոյն Բաղշիկ գիղատեղիի մէջ:

Սուլուզ գիղին մօտ լինելու համար կիովուէ նոյն գիղի ծխական քահանայն: Վարժարան չունի:

Գիղիս հարասակողման մի բարձրավանդակի վրայ ուխտատեղի կայ, որուն տեղացիներ կանուանեն Կաղնախաչ, յարտեղ մատուտ չկայ, այլ կաղնուտը հովանեաց ներքև կզտնուն խաչաբեր: Մօտակայ գիղացիներ իրենց ուխտադրութիւն և երկրպագութիւն կատարելէն զկնի ուրախութեամբ կպարեն ու կխաղան կաղնուտը գլկնի ուրախութեամբ ներքև՝ վայելելով տեղոյն քաղցրասիւրք օղ և բարեհամ ջուր:

1882 թ. գանձակեցի բարեկրօն Գանիէլ քահանայ Տէր-Գանիէլեանց¹⁰⁶, այցելելով սոյն գիղը, կտեսնէ տեղոյն հնադարեան եկեղեցոյ անխնամ վիճակ և նորա առատաղի կարելը, հանգամալութիւն կբանայ գիղացոց և սոյն վայրեր ամարանոց եկող գանձակեցոց մէջ, 98 մնք. գոյացնելով ծախու կառնէ 423 կղմիներ, և և ժողովելով երեք հարիւր

¹⁰² Գտնվում է Խանլարի համանուն շրջկենտրոնից 10 կմ հարավ-արևելք՝ Կորակ գետի ձախափնյա վտակների միջև, ընկած սարախարթի վրա (ծ. մ. բարձր է 1180-1200 մ):

¹⁰³ Կանոն (Բաղշիկ, Հայցիշեն) գյուղը գտնվում է Խանլարի համանուն շրջկենտրոնից 11 կմ հարավ-արևելք (ծ. մ. բարձր է 1170-1230 մ):

¹⁰⁴ Բաղշիկ գյուղատեղիում մինչև բռնագաղթը կիսավեր պահպանված Սր. Աննաբիբիկի եկեղեցին ԺԷ դարի կառույց է (մանրամասն տես Կարապետյան Մ., Հյուսիսային Արցախ, էջ 368-369):

¹⁰⁵ Թաղեսու Տեր-Գանիէլեանցը Գանձակի փոխամուղ է ինչ-վում ամբվագ 1877-1882 թթ. (մանրամասն տես Եշվ. աշխ., էջ 13):

¹⁰⁶ Գանիէլ Տեր-Գանիէլեանցը Գանձակի Սր. Լուսավորիչ և Սր. Հովհաննես եկեղեցիների քահանաներից էր: Չժամադրվել է 1871 թ. (ՀԱԿ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 316 շրջ.-318): Հիշվում է նաև 1908 թ. (Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 51):

փքաչափ կիր՝ եկեղեցոյ տանիքը ամրապնդելու համար, քայց... անյայտ պատճառաւ նոյն ժամանակուայ արգելի հանդիպելով, մինչև ցայսօր ժամանակի անգործադրելի է մնացել մտադրեալ նորոգութիւնը:

Այցելելով մեր այս գիղ՝ մեր ճանապարհորդակից յիշեալ Գանիէլ քահանայն, որ ջերմեռանդն է յայսպիսի աստուածահանոյ գործս, յիշեցրեց մեզ և գիղացոց իր փափագի անկատար մնալը: Սեր մի լոկ յորդորմամբ միայն այդ բարեպաշտօն ժողովուրդ անմիջապէս ստորագրեց 100 մանք և 80 փութ ցորեն տալու մինչև ց.1-ն առաջիկայ սեպտեմբեր ամսոյ: Փողն եկեղեցոյ տանեաց ամրապնդութեան պիտի գործածուի, իսկ ցորենն անձեռնմխելի պայմանաւ պարտ են շահեցուցման տալ՝ եկեղեցոյ պազայ պիտոյից համար: Սոյն կարգադրութիւն առաջ տանելու համար ժողովուրդը ընտրեց երկու անձնատրութիւն, որք երեցփոխանի և տանուտէրի աջակցութեամբ գործն ի զուլիս պիտի հանեն: Սուլուզ գիղի բարեկրօն Կարապետ քահանայն Տէր-Սարգսեան Բաղշիկ գիղի հետ կիովուէ և Արլահ գիղը, այսինքն՝ երեք գիղի ժողովուրդ:

ԻԳ

Բրաջուր

Ամսոյս 12-ին Բաղշիկ գիղէն այցելեցինք Բրաջուր¹⁰⁷ գիղը, որ կբաղկանայ 35 տուն զուտ հայ բնակիչներէ՝ 190 արական, 163 իգական: Ունի մի նորաշէն փոքր եկեղեցին Ս. Գարրիէլ Հրեշտակապետի անուամբ¹⁰⁸ և մի քահանայ՝ տէր Գեորգ Տէր-Յովհաննիսեան Սերբոնեանց¹⁰⁹: Սոյն քահանայն որչափ անուամբ, այնչափ բարեպաշտ և բարեկրօն, որչափ տգեղ (կատարեալ Եզովպոս), այնչափ սիրելի ժողովրդեան, զի իր բարոյախօսութեամբ յատենի եկեղեցոյ ժողովրդեան հոգին կպարտը: Բացի տգիտութենէ՝ նախանձելի է սա իր քահանայական կոչման մէջ իր համեստ վարք ու բարքով:

Սոյն սակավաբիւ և աստուածասէր գիղացիներ երկու տարիէն ի վեր սկսեր են փող չխնայել իրենց որդիներ աստուածապաշտութեան մէջ կրթելու, ժամասացութիւն և պատարագի դպրութիւն սովորեցնել տալ մասնաւոր տան մէջ քահանայի և դպրապետի առաջնորդութեամբ: Թէպէտն սոյն վարժոց ազգիս վեհափառ հայրապետի հրամանով չէ բացուած և հաշիւ չի ներկայացներ իշխանութեան, քայց աճշուշտ ենք այն մեծ հաւաքովը, որ մեր ա-



ԲՐԱՅՈՒՐ, Սր. Գարրիէլ Հրեշտակապետ եկեղեցին (ուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.)

մենաողորմած և բարեպաշտ կայսերութիւնն կցանկայ, որ իր հպատակ քրիստոնեայ ազգեր աստուածապաշտութեան մէջ կրթուելով՝ բարի քրիստոնեաներ լինեն, որով հպատակասէր կառավարութեան հաստատուն հիմք կկազմուի: Ինձ կրուի, թէ գիղիս անուանաղիր հեղինակ իրաւամբ Բրաջուր անուաներ է սոյն գիղը՝ ջրի կարի վատ և աղի լինելու համար (արդարև Բրաջուր)¹¹⁰:

Գիղիս հանդէպ արևելակողմ մի փոքրիկ բլրակի գլխին, կայ փրջնի (օսմանցուց լեզուով՝ չարլամբիճ) ծառ, որ բոլորովին ճման է հաց ուտելու բոլորչի սեղանի, որուն ճիւղեր բնա ղէպի վեր բարձրացած չեն, այլ հորիզոնական դիրքով երկնցած և իրար փաթաթուած սեղանածուութիւն տուած են: Սոյն ծառի համար կպատեն, որ դարևոր է, վասն զի ձերմուհիներ իրենց տղայութեան ժամանակէն միննոյն վիճակի և ձևի մէջ տեսած են զայն: Չարմանալին այն է, որ բլրակի գլուխ բնալին չոր է, աղբիւր չկայ, քայց թէ ծառն ինչո՞ւ կ կանանի՝ յայտնի չէ, որուն տակը նոյնպէս դարևոր խաչաբեր լինելով ուխտատեղի եղած է, և շարքս իրիկուններ ճրագ ու մոմ կվառեն և խոնկ կծխեն: Սոյն ուխտատեղին Սոխ խաչ կանուանեն, այսինքն՝ բլրաժայռի խաչ:

¹¹⁰ Գյուղական ծագումը ստուգարանող մեկ այլ սեկնարանուրջան՝ «...երև ծագել է քրաձոյ ջուր բառիցից, որովհետև երկու տեղ հոսող ջրերը բերով են դուրս ձգել» (Քաջիկեան, Ճանապարհորդական յիշատակարան, «Արձագանք», 1886, № 20, 25 մայիսի, էջ 295):

¹⁰⁷ Գտնվում է Խանլարի համանուն շրջկենտրոնից 9 կմ հարավ-արևմուտք (ծ. մ. բարձր է 980-1040 մ):

¹⁰⁸ Միակն եկեղեցին գտնվում էր գյուղամիջուր և մինչև 1989 թ. բռնագաղթը կանգուն էր (մանրամասն տես Կարապետյան Մ., Հյուսիսային Արցախ, էջ 321):

¹⁰⁹ Գեորգ Տէր-Հովհաննիսյան Սերբոնեանցը ծնունդով է 1878 թ. և քահանայագործել ամբվագ մինչև 1894 թ. (ՀԱԿ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, ք. 320 շրջ.-321):



ՔԱՆԱՆՑ. գյուղը հարավ-արևելքից (ուս.՝ Ա. Կարապետյան, 1989 թ.)

ԻՆ Բանանց

Անտյա 13-ին այցելեցինք ի *Բանանց*¹¹¹ գիւղ, որ կրաղկանայ 274 տուն գուտ հայ բնակիչներ՝ 1135 արական, 860 իգական:

Բանանց գիւղ շինուած է համանուն գետակի ձախ ափին մի նեղ, բարբարոտ դրից մէջ, որ երեք կողմէն շրջապատած են լեռների ստորոտներ: Եինակայք անձուկ, գախավժ լինելու պատճառաւ փողոցները նեղ, շրջապտոյտ, տուները անձուկ, գրեթէ իրարու վրայ շինուած, այնպէս որ մեկ տան ճամփան միւսի տանիքի վրայէն կանցնի: Ուստի և փողոցներն անտանելի կեղտոտ, հոտած, շատ տներու կողքին դիգուած են անասնոց աղբախոյտեր: Ափսոս, որ այստեղ էլ ոսկերեք աղբի արժէքը ճանչցած չեն և սովորութիւն չունին արտերը տանելու: Գետի երկու ափունքները պողտաւ տ ծառաստաններով, հետեղենաց բաւեզներով և խաղողի այգիներով զարդարուած են:

Արական գեղի աշխատափրփրինը անօրինակ է այստեղ հաճայնական, և մասնական գործունէութիւն տարածուած է ընդհանուր գիւղի սահմանի վրայ: Գետակի և առուակների վրայ կառուցուած բազմաթիւ կամուրջները¹¹² և մրգաստանի ու բաւեզների բազմաթիւ առուները, որ պատառձներու երեսով անցուցուած են, և զանազան պարտատուած ճանապարհները ապացոյց են գիւղացոց եզնական աշխատութեան: Կարծես թէ գիւղիս բուսակա-



ՔԱՆԱՆՑ. գյուղի կամուրջներից (ուս.՝ Ա. Կարապետյան, 1989 թ.)

նութեան վրայ աշխատելու գործեր երկու սեռի վրայ բաժնուած են. ջուր բերել այր մարդու պարտաւորութիւն է համարուած, մշակել և պտղատրել կին մարդու: Աշխատափրփրեան դատապարտելու ատենական անժեքը օրինութեան փոխարկուել է այս գիւղի մէջ: Մարդկային աճելութիւնն իր հարուստ տոկոսիքն ունի, պարտեզներու և ծառաստաններու ստուերներու տակ այնքան մանր տղաքներ և աղջիկներ կտեսնուին, որ կարծես թէ երկիւնքէն մաղով մաղուած են: Մտեղէն և հողային արգանդներ, իբրև ազգակիցներ, համերաշխ կգործեն գիւղիս մէջ: Գուցէ է այս բեղմնատրութիւնը աշխատափրփրեան արդիւնք լինի, զի դարուս 25 թուականին 22 տուն բնակիչ եղիւ է գիւղիս մէջ, 55 թ.՝ 103 տուն, բայց այժմ 174 տուն են, առանց դուրսէն այստեղ գաղթական մտնելու: Այն ինչ մտակալ բաղաճներու փութած և անհետացած սերունդի տեղ լեցնելու համար 25 տուն մարդկային արտադրութիւնը ըրած է այս գիւղը, ինչպէս որ գաւառական քաղաքներն էլ մայրաքաղաքներու փտութիւնը կվերանորոգեն, որովհետև առհասարակ գիւղացիներ 20-22 հասակի մէջ կամուսնանան, գաւառաքաղաքացիներ՝ 30-40 տարեկան կխարաղըան հասակի մէջ, իսկ մայրաքաղաքներու մասին չենք:

Աշխատափրփրեան մի այլ օրինակ: Ես տեսայ մի որդեսէր այրի կին, ձին քաշելով՝ միայնակ անտառը կերթար, իսկ երկու ժամէն զկնի, ձիու վրայ մի բեռ փայտ քարծով վերադառնալ:

Հատարածութեան օրինակ: Երկու մարդու բաժին եղած մի արտը ամբողջապէս կվարեն առանց միջնակ թողնելու, ակոսներ իրար խառնելով, շնուոյ

111 Գտնվում է Գաչկանան շրջկենտրոնից 7 կմ հյուսիս-արևելք Աղբիւնաջուր գետի ձախ ձորակայանից (Չ. մ. բարձր է 1000-1100 մ):
112 Գիւղացոց անօրինակ աշխատափրփրեան մի յանդուգն ձեռնարկութիւնը կրճա համարուել այն բարձրաբերով կամուրջի շինութիւնն, որ կառուցեր են խորանցուող ձորի մէջ կանանցով ձորի մի կողմէն լեռնաշղթայի լանջին վրայ և այն տեղով տանել իրենց ճոր տնկած այգիներն ուղարկելու: Բայց կամուրջաչէն վարձուած փայտեղով *Ժարպիկ* թուած չափերու մէջ զանկանաւ բարձրութեան վրայ ջուր հանելն չէ յայտնուել: Ուստի և կամուրջը գիւղացիները դարձեալ չէ յուսահատուել: Բայց աշխատասեր գիւղացին դարձեալ չէ յուսահատուել: Բայց աշխատասեր գիւղացին դարձեալ չէ յուսահատուել: Բայց աշխատասեր գիւղացին դարձեալ չէ յուսահատուել: Մոյն սակաւարի գիւղացիներ, համեմատելով տեղիխարճակ բազմութեան հետ, Տիփլիսի կամուրջէն սոցա կամուրջը բառապատիկ մեծագործութիւն կհամարուի» (ձմբ. հեղինակի):

երկու բաժիններ իրարմ որոշելու համար մէջտեղ փայտի ծողը կտնկեն, որպէսզի ցանելու և հնձելու ժամանակ իրաքանչիւրն իր արդար իրաւանց տէրն լինի: Եթէ ատոք դրախտի ընտանիք չեն կազմեր, հապա ճարակութեամբ իրաւանց սահման ուսանկոյս անող քաղաքացիներ պիտի կազմեն: Մարդկային ազգի մանկական ժամանակի անկապածութիւն:

Ալկանահատութեամբ և վառողով ժայռերու կործանման և մուրճով բարահատութեան ձայներ միշտ լսելի են այս գիւղի մէջ: Մոյն միջոցաւ փշրած քարերովը լերան ստորոտներու զառիվայրութեան վրայ պատեր բարձրացնելով և լեռներու կողքերը բերելով՝ հարթութիւններ կկազմեն և փոքրիկ ածուներ կպատրաստեն քանջարանցի և բաւեզներու համար: Եւ մարդիս ասելով՝ սոցա աշխատասիրութիւնը նկարագրելուց վեր է: Մոյնպիսի տարօրինակ աշխատութեանց պատճառաւ գիւղիս մէջ կտեսնուին շատ մը կորարածակ, սապատող և խեղանդան անձինք: Կատարեալահասակ աշխատասիրներն իրենց պատանհներուն տոկունութիւնը քաջալերելու համար կասեն. «Իճչպէս որ մտնը կրակի առջև, նոյնպէս էլ գործը մարդու առջև պիտի հաշի»¹¹³:

Գիւղս ունի մի նոր կառուցուած *Ս. Լուսաւորիչ* անունով կնճ եկեղեցի¹¹⁴, որուն հիւսիսային կողմը՝ գրեթէ մէջ կզգտուի *Ս. Աստուածածի* անունով հինաշէն մատուռ¹¹⁵ և արևմտակողմ նոյնպէս նորաշէն եկեղեցական ծխական միղասեան երկայրկանի ուսումնարան, որի մէջ կանսանեն 60-70 տղաներ: Անորմնայի արդիւնք է սա նոյն գիւղացի գանձակարանակ վիրաբոյժ Յովնանիխեանց Եգորի աշխատափրփրեան¹¹⁶:



ՔԱՆԱՆՑ. Սր. Լուսավորիչ և Սր. Աստվածածին եկեղեցիները (ուս.՝ Գ. Ջաջարյանի, 1980-ական թթ.)

Մոյն ուսումնասեր գիւղացիները կան 3 համալսարանականներ՝ արարտաւ և շարունակող: Ս. Էջմիածնի ճեմարանի, Տիփլիսում և Երևանի բնական դպրանոցներու մէջ արարտաւ ու շարունակող՝ 4 անձինք, և 1 ուսումնարար՝ Աղեքսանդրեան վարժապետանոցէն, Գանձակու գիմնազիտի մէջ՝ 3, արհեստանոցի մէջ՝ ևս 3, Քաղաքային ուսումնարանի մէջ՝ 4 և այլ ուսումնարաններու մէջ՝ 2 ուսանող:

Գիւղիս սահմանը կարի լեռնոտ լիճներու համար երկրագործութիւնը յանգափս դժուարացած է, զի հնձած խոտեր և արմտեաց օրանները պարտաւորած են գրաստներով բերել գիւղացի:

Գիւղացոց մէջ տարածուած են զանազան կարևոր արհեստներ և պարապմունքներ, որք են՝ որմնադրութիւն, հիւսնութիւն, երկաքարգործութիւն, կոշակարարութիւն, բրտութիւն, մերկաքարութիւն, ածխագործութիւն, ոսկերչութիւն, պայտաւորութիւն, կղլլելչութիւն, դերձակութիւն, մանրավաճառութիւն, շերամապիտութիւն, մեղրաբոծութիւն ու ոստայնանկութիւն:

Գիւղիս սահմանի 2-3 մասն անտառապատ է, և այս անտառի մէջ՝ գիւղիս հարակալողը՝ 1/2 վերստ հեռաւորութեամբ, կզտնուի *Ս. Ժարգմանչաց* անմարդարնակ վանքը¹¹⁷, որն որ թելպէտ մտ ժամանակներս ամայացած է, սակայն զանգակատուն կմնայ իր զանգերով, բեճը իր վարագոյրով, սեղանը իր պատկերով և ծածկոցով, զգեստաւորան իր ըշոցով և գրակալով: Վանքի միայնակեցութեան խոցեր, տնեսատուն, մառան, սեղանատուն, շտեմարան և հացի փուռ քարուկով կամարակապ են, ինչպէս և եկեղեցին՝ կամարակապ և անսիւն: Վանքի տնեսական կարապիները, մեղրի փեթակները վիճակիս հող, կառավարութեան հաշուեկարութեամբ արանդած են վանական իրաւաբոծութեան: Վանքի ար առաջն ունի բաւական թուով պտղատու

113 «Անա սպացոյց: Մոյն աշխատասեր գիւղացիք անհնարին հնարաւոր դարձնելու համար, երբ լերն քարերու զառիվութեան և քարածայրի կհանդիպեն իրենց այգետեղեց մէջ, խաղողի որը կտնկեն քարածայրի ստորոտ՝ ջրափի մօտ և երկարացած վազը կան ուսն կրաշէն լերն քարի երեսին և տեղ-տեղ մուրճով քարը կկտրեն կհասիտողակի պէս և վազին մեջքը նորա մէջ պատկերցնելով՝ հող կեցունեն վրան, որտեղ կարծեստանով վազը, քարի երակներ պատնելով նոցա մէջ կմտնը իր արմատներ: Երկրորդ և յաջորդ տարիներ, հետզհետէ մոյն քարախողովակէն երկնցած վազը քանի մը տեղ արմատացնելով, կտարածեն լերն քարերու վրայ, այնպէս որ վառի կողմ՝ ջրափի մօտ տնկուած որը, ջուր խմելով, կմասապարտը լերն քարերու վրայ այրմասացած իր քանի մը յաջորդական սերունդին: Անա բանցեցեց տասնի արդիւնք, որ ինչպէս մտնը կրակի առաջ, այնպէս սոցա գործունէութեան ձեռքի տակ կհաշին գործերը և անհնարաւորութիւնները հնարաւորութեան կփոխուին» (ձմբ. հեղինակի):

114 Գտնվում է գյուղամիջոց կից Սր. Աստվածածին եկեղեցուն հարակալող: Երկրաբանական աշխատանքները տնկ են 3 սպրի 1863-1866 թթ. (Ճանրամասն տն և Կաղապետյան Ս., Հյուսիսային Արցախ, էջ 171):
115 Կից եր վերոնշյալ եկեղեցուն հյուսիսից: Վերանորոգվել է 1981 թ.: Մինչև բունագաղթը երկու եկեղեցիներ էլ կանգուն էին (Ճանրամասն տն և Եզլ. աշխ., էջ 159-171):
116 Հայտնի է, որ ստուտերի եղբայրը՝ Եգոր Հովհաննիսյանց, դպրոցի կառուցել է կաղամախի որդու իշխատակին (Ճանրամասն տն և Եզլ. աշխ., էջ 151):

117 Գտնվում է Բանանցից 1 կմ հարավ Բողրաջուր գետակի այգ ձորակայանից: Հինմարտնը վերադրուած է Ե դարին: Բաղկացած է եկեղեցուց, արմատնոց կից գավաթից, սրան նույնպէս արմատնոց կից նախազանից, կրկնաթաղ զանգակատնից, միարանոցայն սենյակներից, շտեմարանից և այլ շինություններից (Ճանրամասն տն և Եզլ. աշխ., էջ 193-198):



ՔԱՆԱՆՑ. Սբ. Թարգմանաց վանքը (ուս.՝ Ա. Կարապետյանի, 1989 թ.)



ՔԱՆԱՆՑ. եկեղեցածորի եկեղեցին (ուս.՝ Ա. Կարապետյանի, 1989 թ.)

ծառեր, ունի մաս վարելահող և անտառ, որ այժմ տե-
րութեան հետ վիճելի են: Վանքը բանանցեցուց հա-
սարակաց այգեստանի մէջ ունի մի ընդարձակ այգի,
որը, վանական հողաբարձութեան անհոգութեան
չնորհիս տարիներէ ի վեր անմշակ և անջուր մնալով,
խալպանացը է բոլորովին:

Վանքի հարաւակողմ՝ մի վերստ հեռաւորու-
թեանը, գաղիվեր ձորակին մէջը, կգտնուի *Միրանա-
տը* ուխտատեղին¹¹⁸: երկու մասն բաժնուած իրար-
մէ փոքր-ինչ հեռաւորութեամբ, որ, ըստ գիտացուց
աւանդութեան, քոյր և եղբայր նահատակներ են,
լիւրաբանչիւրը շրջապատուած փոքրիկ պատերով,
որոնց մէջ կգտնուեն խաչքարեր՝ շրջապատուած
փոքրիկ պատերով: Եւ բնական քարերու ձեւերի
մէջ կվառեն ու կծխեն ուխտատըր իրենց նուիրաբե-
րած խումկ ու մոմն:

Սոյն *Ջոյր* և *եղբայր* ուխտատեղին հովանաւոր-
ութեամբ է բարձրաբերձ և ստուարատեղն կաղնիե-
րով և բոխի ծառերով, որոնց ստորոտէն կրկիւտ բա-
րեհամ աղբիւր, այն չափ անուշ, որ կարժժ սրբա-
ջուր անուանեն: Այստեղ կլանալին ուխտատըրներ,
մանաւանդ կանայք, որք իրենց վատառողջ գաւակ-
ները եղբայր ամուսնեակ սրբավայրի պատի գլխով
երեք անգամ շրջեցնելէն զկնի՝ նորա մտ եղած
երկնդի ծառի միջեւ կանցունեն՝ ամրապնդ սրունք
ունենալու համար:

Յիշեալ ձորակի վարի կողմ՝ ձախ ափին՝ ճանա-
պարհի մօտ, կայ և մի այլ ուխտատեղի՝ *Փորացափի
խաչ*: անուանեալ, որ կգտնուի բոխի ծառերու տակ:

Անկէ մի փոքր վարի կողմ՝ ձորակի աջակողմը,
կգտնուի մի այլ խաչ կաղնու տակ, որ կկոչուի *Գըլ-
խաչցափի խաչ*, իսկ վանքի անդամատանի միջի խաչ

կանուանուի *Ոսկերել*: Այս ուխտատեղեաց համար
տարուած մատաղների երկները առաջ վանահայրը
կտանար, իսկ այժմ կտանան գիւղի քահանայք:
Հիսախային կողմ՝ գիւղի հին շինատեղի մէջ, կայ մի
քարակոյտ ուխտատեղի՝ *Աննաբրկիչ րկացափ
խաչ*: անուամբ, ճոյնպէս և արտերի մէջ քարակոյտ
տեղ կայ՝ աչքացափ խաչ՝ *Շահազար* անուամբ, ևս
մի ուրիշ խաչ՝ *Ս. Հորիսիմ* անուամբ:

Իւրաբանչիւր ցափ համար մի-մի խաչքար յատ-
կացնելն մեզ կրուի, քէ յունակս՝ զանագան նպատա-
կաւ շատուածներ տեղծելու գաղափարը ի հնումն
մտած է և մեր մէջ, որ այժմ ցերմնաւոր հաստացեալ-
ները զանգամ խաչերու վերածեր են: Թէպէտ անե-
լորդ էր մեր այս խորհրդածութիւն, ըստ որում, մեր
նպատակը միմիայն խակ միւթ հրատարակելն է:

Գիւղիս արևմտահարաւային կողմը՝ քանի մը
վերստ հեռի, գետակի աջ ափին, կգտնուի *Կարդան
նահատակ* ուխտատեղին, որ մի ժայռ է՝ ջրի վրայ քե-
րուած: Ունի իւր մօտը գերեզման, որ շրջակայ գիւղե-
րի ընդհանուր ուխտատեղին է: Ուխտագնացութիւնը
կկատարուի միմիայն Գիւր-չորեքշաբթի, այսինքն՝
Աւագ չորեքշաբթի օրը: Գիւրացիներ այդ օր իրենց
ուխտը կատարելէն, մոմու խումկ տապանի ժայռի
վրայ վառելէն ու հողըր պաշտօն կատարել տալէն
ետըը խումք-խումք ժողովուած երկար ու գետնա-
տարած սեղան կրանան, ուրախութիւն կընեն:

Նոյնպէս արևմտահարաւային կողմ՝ սարաւան-
դի վերայ, կայ կիսաւեր եկեղեցի փոքր-ինչ ձորա-
ցած տեղ, նորա շրջակայ դաշտը կկոչուի *Քիլիսա-
դարայ*, որ *Եկեղեցածոր* ըսել է: Նոյն տեղը աներակ
գիւղատեղի է¹¹⁹:

119 Հնավայրը գտնվում է Բանանցից 6,5 կմ հարավ-արևմուտք:
Մինչև բոնագարը եկեղեցին նույն կիսավեր վիճակում էր
(տեսն նշվ. աշխ., էջ 200):

118 Գտնվում է Թարգմանաց վանքից 1,5 կմ հարավ: Տեղացի-
ների շրջանում հայտնի էր Չեռնավոր (Շեռնվեր) անվամբ
(նշվ. աշխ., էջ 198):

Բանանց գեղի գետակ, որ *Կոչկար*ս կանուա-
նուի, կանցնի երկաթահանքերի մէջէն: Այս երկա-
թահանքեր մինչև դարուս յիսնական բուականները
գործածութեան մէջ էին: Գետակի երկու ափանց
վրայ բազմաթիւ երկաթե հանքեր կգտնուեն, որոնց
գործադրութիւնը այժմ դադարած է, դուրսէն եկած
մեքենաւոր գործարանաց արտադրած երկաթներու
աժանութեան պատճառաւ: Երկաթահանքի գործա-
դրութեան ժամանակի մնացորդ կղկղանքներու
շեղչակոյտեր այժմ գիւղիս մէջ շատ տեղեր կտես-
նուին:

Գիւղէս 2 վերստ դէպի արևելք՝ գետակի աջ ա-
փին, ի հնումն եղեր է արճճի հանք, որ այժմ անգոր-
ծադրելի է՝ նորա մէջ գտնուած արծաթամասի սա-
կաւորեան պատճառով:

Գիւղիս արևմտակողմ եղած հանգստարանի¹²⁰
գերեզմանաքարերի վերայ կկարդացուեն մէլիքա-
կան ցեղի տապանագրութիւններ, որոնց ցեղ
կակտի Մէլիք-Միլոքախանեան Մէլիք-Օհաննէսէն,
որոնց ընդարձակ ազգաբանօրին կգտնուի բա-
նանցեցի Տէր-Միլոքախան Ստեփաննոս վարժա-
պետի¹²¹ րով: Այս համառօտ յիշատակութիւն ըրիմք,
որ գուցէ օր մը անկի լոյս տայ Խաճասայի մէլիքական
պատմութեան:

Գիւղիս բնակիչ տէր Յովսէփ Տէր-Իսրայելեան-
ցի մօտ կգտնուին ձեռագիր Մաշտոց՝ գրեալ ի
Ռ-Ճ-ԻԲ (1673) բուհի հայոց, և մի ձեռագիր՝ Թօժա
Գեներացի կիսատ և անբութակամ: Սարգիս Շահնու-
րաղեանի տակ կգտնուի մի ձեռագիր՝ «Տեանն Ներ-
սի արքեպիսկոպոսի Տարսնոյ՝ Մեկնութիւն երկու-
տասան մարգարէից»՝ Ովսկ մարգարէէն մինչև Դա-
միելի Ածալու մայր ճաշ տաճարէն: Գրուածք նոյն-
պէս կիսատ է և անբութակամ:

Գիւղիս եկեղեցին ունի 28 Աւետարան¹²², որոնց
մէ 14-ը՝ ձեռագիր, մինն միայն մագաղաթի վերայ
գրած, որոնց վերաբերութեամբ մանրամասն տեղե-
կութիւններ արդէն գրած լինելով յիշեալ Ստեփան-
նոս վարժապետն՝ մենք անկողր համարեցինք գրել:

Տասօք սրտի, կասենք, որ գիւղիս մէջ ոչինչ գործ
չտեսնար, բացի երկու քարոզ խօսալէ, տեղույն ա-
մաբանոց քաղի քարապացուց ճաշերուն հրաւի-
րուած լինելուն համար:

ԻՉ Մլգանքերը

Ամսոյս 15-ին քող տալով Բանանց՝ գործուճու-
թեան այդ քարացեցելու աշխարհը, մեր փոքրիկ
կարաւան լերան ստորոտէն սկսեց դէպի ահագին



ՉՊԿՑԱՄ. Սլզմաբերդի գագաթը (ուս.՝ Ա. Կարապետյանի, 1980-ա-
կան թթ.)

լեռները բարձրանալ լուերու ջրերի պէս գառ ի կող
քերելով, յայ և սահեալ դարձուածքներ անելով՝ յոգ-
նեցանք, շունչ քաշեցինք, քրտինք և վերջապէս
պարտաւորուած էինք անդողախոր ձորերի առ ի
կող շատախղճերու վրայէն անցնելով սրտադող և ո-
գիսպատան եղած երկիւղով շարունակել ճանա-
պարհը: Մեր ձախ կողմէն կեանքի և աջ կողմէն մա-
հուան (խորանցուց ձոր) անջրպետող նեղ շափղը,
որ մեր յուստ պարանն էր, բռնած՝ վեր, հա՛՛ վեր
բարձրացանք, անցանք սարերի մագերուն, ան-
տառներու միջեւ: Բնութեան այդ հարազատ, վիթ-
խարի որդիների կողերի վրայէն բարձրացանք դէ-
պի նոցա գագաթ, որ երբէք չեն եհնարկուիր որևէ
ուճերի. ո՛չ քաղաքավարական օրէնքի տակ ճրն-
շուած և ո՛չ կանաչի սեղեթակաւ շարժումներու
մերթև ճնուած և ծոնկուած են, այլ ազատ մեծցեր,
հա մեծցեր, մինչև գլուխին համպերու հասուցեր են:

Առավոտեան արևածագի առաջին բարև առնե-
լով՝ մեզ՝ անցատրներին կհաղորդէին այդ անանցա-
նեկ լեռներ, ինչպէս յախտնեից մինչև ցայսօր յա-
ջողդաքար հաղորդեր են մարդկային մշտափոփոխ
սերնդին: Եւ մեր փոքրիկ կարաւանին ճանապարհի
տուփն՝ իրենց անտառախիտ քամակի վրայէն անց-
նելով Սլզմաբերդի գագաթ հասնելու: Այդ գագա-
թան վրայ առաջին ազատ շունչ աննելու պէս,
բարձր ի գլուխ կանգնած նալլաք¹²³ ասացի ստորև
դաշտային դրից վերայ բնակուողներուն, որք լճա-
փանց վրայ երբեմն գոռգոռացող և երբեմն երկչո-
տարար սուգանող գորտերի նման միշտ հալածուած
են կենակուլ արագիլներէն: Ապա քայք երանի կար-
դացի լեռնային ազատ էրկ վայրիներուն, որք թէպէտ
քշտառակեցնալովն նամար¹²⁴ մարդկանց գաղտա-
գողի լարած որոզայթերէն՝ հեռու կրնակին:

Այցելեցինք Մլգանքերի *Անապետ* անուանեալ
եկեղեցույն¹²⁵, որտեղ մեզ կսպասէր զանձակեցի

123 Նգովք, աննօք:
124 Ստոր:
125 Մոմնաբերդի վանքը գտնվում է Դաշկեսանի շրջանում՝ Հարց-
հանգստի գլուղից 2,2 կմ հարավ-արևելք՝ լեռան գագաթին:

120 Գերեզմանակա հուշարձանների արձանագրությունների
տեսն նշվ. աշխ., էջ 173-189:
121 Ստեփաննոս Տէր-Միլոքախանը 1878 թ.-ից դասավանդել է
Չարակալուի ծխական դպրոցում (նշվ. աշխ., էջ 514):
122 Բանանցում պահվող 13 ձեռագիր մատյանների մասին
մանրամասն տեսն *Միանայան Թ.*, նշվ. աշխ., էջ 74-75, 99:



ՉՈՒՏԱՌ. Ալզնաբերդի վանքը (ուս.՝ Ս. Օհանյանի, 1980-ական թթ.)

պանելու: Տեղական բնակչաց ասանդական խօսքերուն նայելով՝ պարսից ասպատակութեան ժամանակ մերձակայ գիւղօրէից բնակիչներ, տոյն եռապետ լեռներու անփոյր գլուխների վրայ ժողովուած, իրարու պաշտպան հանդիսացեր են՝ թշնամու ուժը խորտակելով:

Իւ
Չովտառ

Ամսոյս 16-ին այցելեցինք Չովտառ գիւղը: Բայց չեմ մոռանար ասելու իմ ուրախութեան այն զգացումներ, որ առթեցին իմ մէջ ինձ դիմաորոշ ձիաւորեալ բազմութիւն երիտասարդներ, իրենց գինակուռ վարժութեամբ և ձիարշախ ճարպիկութիւններով: Սորա յիշողութեան բերել տուին ինձ Վարազայ *Աստղիկան* րեղի մերթի սարահարքներու վրայ իմ երիտասարդութեան ժամանակի՝ վանքի երիտասարդաց ձիավարժական կրթութիւն և զինավարժութիւն սովորեցնելն: Չովտառեցի դիմաորոշ երիտասարդաց մէջ ես միայն ծեր գտնուեցայ, ուստի, չգիտեմ ինչու, ակասամ արտասուօք լեցում անցնելու ղոճոն կերպով շտեմեցան երկնից կապուտական արեւի վրայ, և նոյն հետայն անիծեցի նստողական կեանքը, որ իմ պնդակազմութիւն և ջրային ուժը բուլալցուցեր և իրական աշխարհի գործունէութեան համար զիս անպիտանացուցեր էին: Յիշելի այն մեծ մարդը՝ ինձ տուած տիտղոսը՝ «գործօմ վարդապետ» և տխրեցայ, գոր այլևս այստեղտե իրաւամբ վայելելու չի պիտի արժանանամ, զի կեանքիս 65 տարւայ ժամանակի հնացումն աննորոգելի էր: Ինձ տիրող ծերութիւն այնչափ զգալի չէր եղած, ինչպէս որ այսօր, ուստի և ասպանդակները ուժգին մխեցի ձիու կողերին և մեկուսացայ՝ թող չտալով, որ այլևս իմ աչք համբորեն:

Բանանց գիւղի՝ միջի անգործունէութեան այլևս տեղի չտալու համար նոյնիսկ երեկոյին սկսեցինք գիւղիս վարժարանի շինութեան համար հոգատար յանձնաժողով ընտրել տալ Չովտառի բնակչաց թե՛ վարժարանը կառուցանելու և թե՛ վարժարանի պիտոյից համար կայեմարք հաւաքելու և թե՛ արժտեսաց նուազ տարիներու մէջ աղքատ գիւղացուց սերմնացու պատրաստելու: Այսպիսի ձեռնարկութիւն և ասոր վերաբերեալ յորորական խօսքեր կրկնուած են գրեթէ ամէն գիւղի թե՛ եկեղեցաց քարոզներու և թե՛ առտնին խօսակցութեանց մէջ: Չովտառեցուց համար որչափ որ լսել էինք, թե՛ կոպիտ են, վայրենարարոյ և բարեգործութեան համար անբախանելի միտք ունին, քայց ես նորա հակառակուց գտայ: Տեսնելով նոցա նորաչէն գեղեցիկ եկեղեցին՝ Ս. Յովհաննէս անուանը¹²⁷, և թե՛ 1888 թուականի

126 Սողոմոն Հարությունյան Նաչազարյանցը Մամբարեղի Սր. Մարգիս եկեղեցին նորոգել է 1891 թ. և այդ ամսին պատուով շինարարական արձանագործութիւնը թողել քարակորից վեր մարմարե սալին (Քարխտաւարեանց Մ., 674, աշխ., էջ 293: *Կարապետյան* Ս., 674, աշխ., էջ 249):

127 Ըստ շինարարական արձանագործութեան վերակառուցվել է 1869 թ. (Քաջիկեան, Բանապարհորդական յիշատակարան, «Արձագանք», 1886, № 20, 25 մտային, էջ 295: *Կարապետյան* Ս., Հյուսիսային Արցախ, էջ 244): Մինչև րոնացալոր կանգուն էր:



ՉՈՒՏԱՌ. գյուղը հարավ-արևելքից (ուս.՝ Ս. Օհանյանի, 1980-ական թթ.)



ՉՈՒՏԱՌ. Սր. Չովտառեան եկեղեցին (ուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)

մէջ կառուցուած երկյարկանի սիւնազարդ նրբաճաշակ զանգակատունը և թե՛ նոցա պատրաստակամութեան սիրտը՝ նոր վարժարան կառուցանելու, ուստի և մեր համգումուց ուղղեցինք նոցա մասին: Վարժարանի շինութեան համար գիւղի ընդհանուր ժողովն հոգատար անդամներ ընտրուեցան Արզման Յովհաննիսեան, Ամիրխան Յակովբեան, Պօղոս Յարութիւնեան և Բաղայ Մխիթարեան, որք ամսոյս 18-ին գրուած համախօսական վճռով պարտաւորուեցան առաջիկայ սեպտեմբերի սկզբէն իրենց յանձնառական պաշտօնի ի գործ դնելու:

Չովտառ գիւղը կրաղկանայ 98 տուն գոտ հայ բնակիչները՝ 432 արական, 383 իգական: Գիւղը բահանայ չունենալու համար գիւղացիներ կեղծուէ Ս. Թարգմանչաց վանքից վանահայր արք. Թեոդորոս վարդապետ Շիրակունին, որոյ առ ոտս քանի մը տարիներէ ի վեր կուսանի բահանայապատշաճ գիտելիք գիւղիս բնակիչ Վարդապար Երեմեանցն և որոյ համար երեք տարիէ ի վեր խնդիր մատուցուած է հոգևոր բարձրագոյն իշխանութեան քահանայանալու, քայց խնդիրն անուժանելի մնացած է մեզ անյայտ պատճառով:

Եկեղեցին ունի մի մագաղաբեայ Աւետարան՝ գրեալ ՈՒԹ հայոց թուականին, և մի ձեռագիր Յայտնաւուրք, որը կտօնովի հանգուցեալ տէր Ղազար Տէր-Մխիթարեանի որդուց տան:

Գիւղիս վերև բարձրացած լեռան (Չովտառ սար) գլուխը կայ խաչքար-ուխտատեղի՝ Ս. Մինաս անուանը: Գիւղիս հիսախաղողան լեռնագոտիի հարապակին լանջի վրայ կտօնովի *Բաշչիկ* մեծ աներակ գիւղատեղին, որոյ մէջ կայ մի մեծ կիսափոյլ եկեղեցի:

Գիւղիս և Բաղչիկի մէջտեղ՝ սեպագած լեռան ծայրի վրայ, կայ մի ուխտատեղի՝ *Պտկարբերք* անունով, որ ցամառ պատերով շրջապատած խաչքար մի է:

Գիւղիս և իւր հիսախաղողան գետակի մէջտեղ կայ մի մատուռ-ուխտատեղի՝ *Ոսկեթել* անունով (թերևս Ոսկեմատն հայոց նորա ազգակից): Ասորմէն քանի մը քայլ ստորև կայ մի խաչքար, որուն կանուանեն *Բոյր սուկեծի կորոք*: Սոցա մէջտեղ

կրկնէ մի բարեհամ արքիպ՝ այնչափ անուշ, որ արդարև Ոսկեծիլին հրաշից վայելուչ մի գործ կարե համարուել: Ոսկեծիլ մատուռին կիովանատը մի շատ հին հսկայ թոխի ծառ, որոյ կեանք գրեթէ քայքայուած, քայց երկար ժամանակ կարող է մահուան դէմ մարտել:

Գիւղիս արևմտեան կողմ՝ սարամէջ մի գոգաւոր տեղ, կայ ուխտատեղի-մատուռ՝ *Կարմիր եկեղեցի* անուամբ, և տոյն եկեղեցու և գիւղիս մէջտեղ կայ *Ղարամուրդաղ* անունով մի աներակ գիւղատեղի:

Բաղչիկի արևելեան կողման սարաւանդի քրքակի գլխին կայ մի քառակուսի, սրբատաշ քարերով շինուած մատուռ կամ մահարձան, որոյ քաղաածօրէն շինուածքի գլուխն խոնարհուած է, և ներս մտնելու դուռ չունի:

Գիւղիս արևելահիսախային կողմ բարձրացած սարագլխին կայ *Քամախաչ* անունով մի ուխտատեղի:

Չովտառի հին անունն, ըստ ասանդութեան հնոց և ծերոց, *Հարս հանգիստ* կանուանով, ոմանք՝ Հարց հանգիստ: Գիւղիս բնակիչ Ստեփան Աւստամեան, որ իւր ուսումն արարտեր է Տիխիստու ուսուցչական սեմինարիայի մէջ և այժմ ուսուցչական պաշտօն կվարէ Հին Նախիջևանու քաղաքական ուսումնարանը, արձակուրդի ժամանակ գիւղիս մէջ գտնուելով, այցելեց մեզ և խոստացաւ իւր ձեռներեցութեամբ և գիւղիս երիտասարդաց աջակցութեան օգնութեամբ նպաստել նոր շինուելիք վարժարանին:

Սորա արտօրէից հուրձեթ նոր սկսած՝ այդ մարդիկ թե՛ կենձիլն և թե՛ օրաններ գրաստներով կապտեղեր կրեթիին, իսկ կալ կալսելու բաժինն միայն իգական սեռին մնացած էր, կանայք և աղջկունք ամենայն արիւնջանութեամբ օրանք կկայսէին և կքանձին, այսինքն՝ քանձու տալով էրան կրնէին, իսկ պատաւունք ճատած շեղջացած արմըրիքը մաղելով կմարքէին: Քաղաքացի կանանց փափկակեաց անգործութեան վատ սովորութիւնը դեռ չէ կարողացել բարձրանալ այս սարագլուխ, ուստի և գիւղիս կանայք արու գաւազ շատ կծնանին:



ՆՈՒԿՁԱՐ. Սր. Գևորգ եկեղեցին (ուս.՝ Ա. Օհանյանի, 1980-ական թթ.)



ՆՈՒԿՁԱՐ. Ամենափրկիչ վանքը (ուս.՝ Ա. Օհանյանի, 1980-ական թթ.)

ԻԸ

Նիւզգեար¹²⁸

Ամսոյս 19-ին այցելեցինք Նիւզգեար գիւղը, որ կըրողկանայ 76 տուն զուտ հայ բնակիչներէ՝ 301 արական, 261 իգական: Սոյն գիւղացիներ 70 տարի առաջ Երևանէն գաղթել են ի Գանձակ և այնտեղէն մի հատուած՝ 17 տուն, եկած է այս գիւղ:

Գիւղս ունի հարթ-հաւասար սարահարթի վրայ դաշտային ընդարձակ և պատուական վարելահողեր՝ աշխատակեր հայ գիւղացոյ, միայն հայ գիւղացոյ գործունէութեան վայելուչ ասպարեզ: Մեր այցելած բոլոր գիւղերու մէջ սա միայն է, որ իր բոլոր ունեւոր սայլերով կփոխադրէ գիւղամէջ: Գիւղս ունի Ս. Գեորգ անուամբ մի հնաշէն եկեղեցի¹²⁹, որ սոքա աւերակ գիւղատեղիս գաղթելու միջոցին վերանորոգել է: Թէև այժմ չունի վարժարան, բայց երբեմն ունեցեր է, որ ասուպի պէս երևացեր ու անհետացեր է:

Գիւղիս արեւելեան հարաւակողմ՝ ձորի մէջ բարձրացած մի բլրակի կողքին, կզտնուի մի փոքրիկ աւերակ վանք՝ Ամենափրկիչ անուամբ¹³⁰, որ հայագոյ Ծերալովի կալուածքի մէջ ընկած է: Վանքի շուրջը կզտնուին միաբանութեան աւերակ խցատեղին, ձիթահանքի աւերակ եւ գերեզմաններ: Կպատմեն (թէ որչափ արդար է, մենք չգիտենք) յիշեալ վանքի հիստորիան դաս կողքին՝ մի մեծ բարի վրայ, կայ եղեր ընդարձակ արձանագործիւն, որ ուր մէջ կըրվանդակուէր վանքապատկան անտառի և վարելահողերու յիշատակարան: Յիշեալ հայագոյ Ծերալովի կնակածելով, որ այս յիշատակարան մի օր իր ընդարձակ սահմանի մի մասը իր

ձեռքէն կորցել պիտի տայ, ուստի այդ յիշատակարան անելանելի դժոխքն է իջուցեր:

Գիւղիս սահմանի արեւակողմ՝ երկու վերստ հեռաւորութեամբ, մի աւերակ գիւղատեղի կայ, որուն գիւղացիք Կունուր (փոքրիկ) գիւղ կանուանեն, իսկ շրջակայ բուրբեր Քիտլար: Յիշեալ աւերակի մէջ կայ մի խոնարհուած եկեղեցի՝ իր կանգուն սեղանաբարով, և եկեղեցոյն արեւակողմ՝ գերեզմանոց:

Գիւղիս բնակչաց մէջ տակաւին ուսումնասիրութեան հոգի չէ մտել, ուստի և շատ դժուարութեամբ յանձնառու եղան վարժարան շինելու: Բայց ի վերջոյ սոյն շինութեան համար հոգատար յանձնաժողով ընտրեցին 4 անձինք՝ Սիմէոն Յարութիւնեան, Նահապետ Սարգսբեան, Անտիոս Բաղդեան և Սարգիս Մարտիրոսեան, որոնց յանձնեցին հասարակական վճռով առաջիկայ սեպտեմբերէն սկսեալ մինչև միս սեպտեմբերի սկիզբը լրացնել վարժարանի շինութիւն՝ խոստանալով վճարել նորա վերաբերեալ բոլոր ծախքեր և այնուհետև բաժանորդագրութեամբ կայեմասն արմտիք հաւաքելով՝ վարժարանի գոյութիւնը պահպանելու:

Գիւղացոցս մեծագոյն մասն զարմանալի ճարպիկութեամբ որսորդութիւն անել գիտէ, որոյ մէջ կարի արագածոն, յաջողակ և վստահ են մարդիկ, այնպէս որ առատուան պահուն պատուաւոր հիւրեր ճաշի հրախիւրէն զկնի, անտառ կոյծեն՝ կամ եղնիկ, կամ նորա ձագ և կամ մի այժեան ճաշին խորովածացու հասցնելու:

Չարմանալիները կպատմեն իրենց անվրէպ հըրացանածգութեան մասին: Երկու եղբայրներ, արջ որսալու դէպքին մէջ, մին հրացանով կվիրատրէ արջը: Վերք մահառիթ չիցնելու համար որսն կյարձակի եղբոր վրայ և տակով կանց անոր՝ ջարդ ու փորդ անելու: Վտանգեալ անձն վստահութեամբ կբաջալել իր եղբոր, որ իր վրայ ընկած արջին հրացանով սպանէ, անկասկած լինելով, որ ինքը կազատուի նորա անվրէպ նշանաւորութեամբ: Եւ, արդարև, ճշգրտութեամբ արջն կսպանէ՝ եղբորն ազատութիւն տալով:



ՓՌՔ. գիւղը հարավ-արեւելքից (ուս.՝ Ա. Կարապետյանի, 1980-ական թթ.) և Սր. Ստեփանոս եկեղեցին հյուսիս-արևմուտքից և հարավ-արեւելքից (ուս.՝ Ա. Օհանյանի, 1980-ական թթ.)



Գիւղիս եկեղեցոյ արդի գանձապահ, որ մի կարճահասակ և ցիւրք մարդ է, 75 տարեկան, որոյ միտքի և գլխի մագերու մէջ առանց չափազանցութեան ճերմակ մագի խայտ չէ ընկել տակաւին, կիշէ իր այս գիւղատեղին գաղթելու մանրամասն պատմութիւնը: Սոյն երեքփոխանն օր մի իր 2 շներով կյարձակի վայրի վարագին վերայ, և այնինչ շներն առ երկիւղի խոյս տուած են, որով և ինքն վտանգի մէջ ընկած էր, սակայն սատանայի ճարպիկութեամբ կըշի վարագի բանակի վրայ և նորա երկու ականջներ բռնելով՝ կմխուի նորա վրան և վարագի ամէն ջանքերը ի դերև հանելէն զկնի, կիրալիւր երկշոտ շները և կլորախոտ նորա գաւակի մանր պատառտել: Եւ երբ այսպիսով վարագն բաւական կտկարանայ, կբաշէ դաշոյն, վարագի փորն կմխէ և կսպանէ: Այս օրինակ քաջատրուութեամբ եղնիկ, այժեան, արջ և վարագ որսալ սոյն որսորդ գիւղացոց սովորական գործն է, իսկ գայլ սպանելն իրենց համար ամօք համարելով՝ իրենց «գէլ-խեղդ» շներու պարտք է բաժին կրողուն: Սոյն քաջարի գիւղացոց պարծանք և հպարտ խօսքեր միշտ իրենց գերազանց ուժերով զազանաց հետ մարտնչելու և որսալու պատմութիւն ընկն է: Սոյնպիսի պատմութիւններ պատմած ժամանակը կյարեն, անմիջապէս և չփոխանցոց քաջագործութիւնները, թէ նորա այս մասին մեզմ աւելի ճարտար և արագածեմ են: Սոյն երկու գիւղացոց տնային և

դաշտային գործիքներ, կերակուրի պղնձեղէններ, ափսեներ, կապերտներ, գերանդի և մանգաղներ և այլ սոցա մնամները գիշերներն իրենց տան առջև ցան ու ցիւրք կմնան, ինչպէս և անասուններ, զի առակ եղած է, որ սոյն երկու գիւղացոց գողցուած ապարները գողներ իրենց գրպանի մէջն անգամ չեն կրնար պահել: Սոյն երկու գիւղացոց շրջապատող դրացի բուրբ գիւղացիներու և իրենց մէջ կոխուներ յաճախակի կպատահեն, զի աւետարանի խոսական աշակերտներ, մահմոդականաց դէմ միշտ ընչից և անձնապաշտպանութեան դիրք կրնեն:

Սոքա արդարև անձնապաշտպանութիւնը յարգող գիւղացիներ են, զի երբ իրենց ուժին չափը ոչ պակաս, այլ բշնամու ուժին հաւասար կզտնան, երբէք չեն վիջաներ, իրենց բաճկոն հանողներուն թոյլ տալ, որ շապիկ ևս հանեն, ի վնաս իրենց գերդաստանական ապրուստին:

ԻԾ

Փիթ¹³¹

Ամսոյս 21-ին այցելեցինք ի Փիթ գիւղ, ըստ թիւրքաց՝ Չագլիկ (Պաղեղի գիւղ), որ շինուած է մի բարձր լեռի քարաժայռի դժուարակոխ լանջի վրայ

128 Գտնվում է Շամսիի համանուն շրջկենտրոնից 17 կմ հարավ-արևելք (ձ. մ. բարձր է 1340-1410 մ):
129 Միակնան եկեղեցին գտնվում էր գյուղամիջում և մինչև 1989 թ. բռնազավթը կանգուն էր (մանրամասն տես Վարապետյան Ա., Հյուսիսային Արցախ, էջ 500):
130 Սր. Ամենափրկիչ վանքը գտնվում էր Նուկզարից մոտ 5 կմ հարավ-արևմուտք՝ միջնադարյան գյուղատեղիի հարավարևմտյան եզրին: 1984 թ. դեռևս պահպանվում էին եկեղեցին և գավաթը (մանրամասն տես նշվ. աշխ., էջ 500-504):
131 Գտնվում է Դաշկեսանի համանուն շրջկենտրոնից 7 կմ հյուսիս-արևմուտք՝ Շամսի գետի ասպնկոյնան և Արքիմաշտի ձախակողմյան վտակների միջև (ձ. մ. բարձր է 1360-1620 մ):



ՓԻՐ. ՉԻՆ ՓԻՐ գյուղատեղիի հարակից (ուս.՝ Ա. Օհանյանի, 1980-ական թթ.)

և կրթական 318 տուն գոտ հայ բնակիչները՝ 1464 արական, 1328 իգական: Ունի գիտյա երկու եկեղեցի, մինն է նորաշէն, գմբեթաւոր, *Ս. Ստեփաննոս*¹³² անուամբ, որոյ մէջն կկատարուի ժամասացութիւնն, իսկ միւսն է մի հնաշէն, փայտածածկ եկեղեցի՝ *Ս. Աստուածածին*¹³³ անունով, որոյ մէջն ժամերգութիւն չեն բննը: Գիւղի մէջտեղ կայ մի ուխտատեղի՝ *Ս. Գևորգ* անունով, որ ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ մի հաց թխելու փոքրիկ տուն: Սորա մէջ կայ հողով լցուած մի բոճիք: Ուխտատուներ սորա միջի հողը կշաղախեն և մկնատան անունով վերքի վերայ կըսեն բժշկելու: Թոճորի տան կծառայեն երկու կահայք և կկայելեն նորա արդիւնքը:

Գիւղս ունի միդասեան ծխական վարժարան, որոյ մէջ կուսանեն 60-ի չափ աշակերտներ, որ թէև 1877 թուականէ ի վեր բացուած է¹³⁴, բայց ժամանակացութիւն այնքան խեղճ և անկանոն է, որ կարծես թէ գիւղիս մէջ երբէք վարժարան ու ծայնաւոր վարժապետ եղած չլինի: Վարժարանի անցեալն այնչափ առանց հոգատարութեան մնացած է եղեր, որ այն ժամանակէն ցայսօր երկու տող գրելու համար գրիչ բռնող չէ ունեցեր: Վարժարանի շինութեան նախատեսաճառ և մեծ բաժին ծախք մատակարարող եղած է Չարեքայ վանից վանահայր արծ. Աստուածատուր վարդապետ Տեր-Յարութիւնեանց¹³⁵ և հանգուցեալ Արարատեան Աղբաւնոյ վարժապետը¹³⁶ իր ուսուցչութեամբ, բայց, ափսո՛ս, որ ինչ միջոց վարժապետութիւն արած է այստեղ: Սորա

132 Սր. Ստեփանոս եկեղեցին կառուցվել է 1849 թ. գյուղի հասարակության և տեղիայնեցի Ստեփան Միրիմանյանցի նյութական աջակցությամբ (մանրամասն տես նշվ. աշխ., էջ 265):
 133 Ըստ անձնային ՓԻՐ դարի կառույց է (մանրամասն տես նշվ. աշխ., էջ 264-265):
 134 Կրում էր Սր. Գևորգյան անունը: Գյուղից շինարարական երկու արձանագրությունը մեզ է հասել Հովհաննես Բախան Խոջայանցի շնորհիվ (ՀԱ՛Ղ, ֆ. 461, ց. 1, գ. 9, ք. 187: Կարգապետ Ս. նշվ. աշխ., էջ 263):
 135 Սղեմյացի Աստվածատուր վարդապետ Տեր-Հարությունյանցը Գեղարքեղի շրջանի Չարեք վանքի վանահայրության պաշտոնը վարել է 1875 թ.-ից մինչև ապրիլի 1-ին օրը՝ 1902 թ. օգոստոսի 21-ը (մանրամասն տես նշվ. աշխ., էջ 116):
 136 Ավերաճող Արարատյանը դասակարգվել է 1876-1878 թթ. (մանրամասն տես նշվ. աշխ., էջ 263):

անձնություններն իշխատակ գիւղացիներ գմայլմամբ կպատմեն:

Գիւղիս արևելեան լեռնակատարի վերայ կայ մի մատուռ՝ *Քարիատի խաչ* անունանում ուխտատեղի¹³⁷, որոյ մէջ՝ և նահատակի գերեզման իսր տապանաբարով: Սոյն ամբողջ լեռը պաղլեղի հանք է և իսր ներքև ունի դադարեալ գործարան: Կտրելու պաղլեղաբար ուխտատեղայն մօտ լինելով՝ յիշեալ ուխտատեղին Քարիատի խաչ անունանում է:

Գիւղիս հարաւակողմ՝ մի վերստ հեռաւորութեամբ, կայ *Մանրոտ* (թերևս մատուռ) անունով ուխտատեղի, որոյ ներքև շինուած օճախի մէջ խունկ ու մո՛մ կվառեն: Ըստ ասանդութեան բնակչաց՝ անգիր ժամանակէն ի վեր եղած է ուխտատեղիս: Սոյն օճախին կիտվանաւորեն նոյնպէս անյիշատակ ժամանակէ ի վեր երկու կաղնիներ՝ հայր և որդի անուանում: Ասոնցմէ առաջինը, կարի հաստարուն, չորացած ու փտած բազմաճղի, գառամած ու գոտացած լինելով, ասէլ 20 տարի առաջ, ուժգին քամիին այլևս չդիմանալով, կործանուել է՝ բացօդայ թողնելով իր ներքև եղած օճախ և խաչարարներն: Իսկ փոքր-ինչ հեռու եղող որդի կաղնին, թէպէտև շատ ծերացած, բայց դեռևս շատ դարերով մահուան դէմ մարտելու յոյս կտայ, զի իսր արմատներ երկարացուցած է՝ իրմէն թիչ մի հեռու ձորակի մէջ գտնուած սառնորակ և բարեհամ աղբիւրի ջրէն ծծելու, զովանայու և կենսաւորելու:

Հարաւարևմտեան կողմ՝ նոյնպէս մի վերստ հեռաւորութեամբ, նոյն ձորակի ծախ ավիճ, կայ մի տապան-ուխտատեղի՝ *Շքնաւոր* անուանում: Գիւղիս բնակիչները, յիշեալ տապանաբարին կից օճախ շինած, խունկ ու մո՛մ կվառեն և անէն տարի՛ գատկի օտոնին, մետաքսի հիստուաճքի մէջ կարմիր ծու դրած՝ կկախեն տապանաբարին հովանաւորող թխկի ծառի ճիւղերէն: Թէ ի՞նչ պատճառաւ այդ տղորութիւն մտած է իրենց մէջ, իրենք էլ չգիտեն:

Նոյնպէս գիւղիս արևելահարաւային անտառի մէջ՝ 4 վերստ հեռաւորութեամբ *Չարեքայ վանքը*

137 Գտնվում էր Փիրի հարավային կողմում՝ Շիրասարի վրա (նշվ. աշխ., էջ 268):

տանող ճանապարհի վրայ, կայ ուխտատեղի մատուռ իսր միջի տապանաբարով՝ *Գուգուլ-խաչ* անուանում¹³⁸: Ամառնային ամպերու կաշակ սկսելու միջոցին ամբիջապէս գիւղէն մատող կտանն յիշեալ ուխտատեղին, որ կարկուտը իրենց գիւղի անդատամի վրայէն անցնէ, ինչպէս որ այս տարի ևս այդ ուխտադրութիւն կատարելով՝ իրենց յոյս պատկուեր է:

Սոյն կողման վրայ՝ գիւղէն 8 վերստ հեռաւորութեամբ, կայ մի շինատեղի՝ *Աղուեսաչէն* անունով¹³⁹, ըստ բուրբաբ՝ *Թիւրք-բէճը*, որոյ մէջ կան խոնարհուած եկեղեցի և գերեզմանոց:

Գիւղիս արևմտակողմը՝ Շամքոր գետի աջ ավիճն, կայ հին շինատեղին՝ *Փիթ* անուանեալ¹⁴⁰: Սոյն կայերակի մէջ կայ մի կանգոն և առողջ, սագաշէն եկեղեցի, որոյ հարաւային կողմը կտնուի մատուռ՝ Բարսաւ ճգնատրի դամբարանով¹⁴¹, և արևմտահիւսիսի կողմը՝ բլրակի գլխին, կան երկու ուխտատեղի մատուռներ՝ *Քոյր-եղբայր*:

Յուսկան-նահատակ անուանում եղբօր մատուռը¹⁴² պարսպապատած է, որոյ կապալատուն ուխտատարաց նուէրներէն տարին տասն բութի փող կտայ գիւղիս ուսումնարանին: Գարծեալ հիւսիսակողմ՝ 5 վերստ հեռաւորութեամբ, կայ հին շինատեղի՝ *Սվիրեցիք*¹⁴³ անունով, որոյ մէջ կտնուի խաչարակ եկեղեցի և գերեզմանոց: Մամուկապատ տապանաբարերու վրայ, խաչերէն ի գատ, հոտաղ¹⁴⁴ իսր եզերով, մաճակալ իսր գոբարնով և այլ արհեստաւոր իսր գործիքներով քանդակուած պատկերներ կտնուեն: Սոյն շինատեղի արևմտեան կողմ՝ մի վերստ հեռաւորութեամբ՝ բարձր սարի հարթավայրի վրայ, կտնուի մի մատուռ՝ իսր միջի խաչանիչ գերեզմանաբարով՝ *եղբայր* անուանում: Ասորմէ թիչ մի վայր՝ դժուարամտաչելի ժայռագլխին, կայ

Քոյր անուանեալ մատուռ՝ իսր գերեզմանաբարով: Երկուքն ի միասին *Մաղբում զաղա* կանուանուեն: Հին Փիթ գիւղատեղոյ և Յուսկան նահատակի մէջտեղ բարձրացած բլրակայնի վրայ կայ բերդատեղի՝ *Գտանտաւանք*՝ անուանեալ դարէ¹⁴⁵:

Գիւղիս արևմտահարաւ կողմը՝ 6 վերստ հեռաւորութեամբ, *Աղուեսաչէնի* ջրի ձախ ավիճն, կայ մի սեպացեալ քարասար, որ քաղկացած է քազում խաւերէ, շերտ-շերտ իրարու վրայ գոյացած ուղղաբերձ բարձրութեամբ: Այդ բարձրութեան մէջտեղի՝ երկու կանգնաչափ հաստութեամբ եղած շերտն փուխր լինելու համար մաշած և մէկ կանգնաչափ խոր բնկած է, որոյ վերի և վարի շերտերը, երկու շրթունքներն պէս դուրս մնալով, մի երկարածիկ, հորիզոնական դիրքով թերան ձևացուցեր են: Այդ երկուքն շրթանց կամ բերնին մէջ 7 բնակավայրեր կան՝ փուխր քարի մէջ փորուած փոքրիկ խցերն մեծութեամբ, իրարմէ հեռու, սասնցմէ ոճանց մէջ՝ 5, ոճանց՝ 10 մարդ հազիւ կարող են պարունակել: Այդ բնակավայրի վերի և վարի բարձրութիւնները այնչափ ահարկու են, որ վերուստ ի վայր նայողին տեսկուն կտրիւր: Այդ տեղէն եթէ մարդ վարի կողմը նայելու լինի, խեցը պտոյտու կու գայ և չի կարող ինքն իրեն կանգուն պահել: Խցակներու քամակի կողմը նայապէս երեք կանգնաչափ փորուած և իւրաքանչիւրի տաշկ քարուկով պատ շարած՝ 2 շրթունքներ իրարու ետև միացուցեր և բնակավայր ըրած են, որոնց ամէնքն ի միասին տեղական բնակիչներն կանուանուի *Օխտը եղցի (եօթն եկեղեցւոյ) քայ*: Գարսից և լեզգիների արշաւանքի ժամանակ նոցա իւրարանչիւրի մէջ մի-մի գերդաստան ապաստան եղած է: Եւ այդ միջնաշերտի մի կողմ, որ հիւսիսէն արևելք դարձած է, կերկարի մինչև կու կանգուն լայնութեան և 2 կանգնաչափ բարձրութեան, ճանապարհի մէջ մտնելով՝ կերթան այդ բնակավայրեր: Մինչև չհասնեն այդ բնակավայրերը, նոյն բնակավայրի հակառակ կողմէն մարդ կարող չէ նոյն նեղ շաղով դուրս գալ: Որոշոյ որդի ասանդութեամբ մեզ հասած կպատմեն, թէ մի հարս այդ շաղով իջնալու ջուր բերելու միջոցին վարի անուանի մէջ քազմուած լեզգին հրացանավաճութեամբ ի վայր կպտրել գիարսը: Եւ թէ շաղիկ անցքը պահպանող երիտասարդն գնդակահարութեամբ սպանուելու և ի վայր կործանուելու միջոցին աղէկտուր մայրն ինքն զինք ի նոյն բարձրութենէ հոսեցուցեր է ի վայր, և նորա մարմին քարերու վարունքով քանի մը կտորի բաժնուեր է: Ահա գիտնալու է, թէ 30.000.000 հայի մնացորդն ինչ առեղիս միջոցներով ապրել և հասել է մինչև ևս մեծ ծնունդ: Այսպիսի ողբալի ազգին պահպանութեան համար ինձի պէս ողորմելի արարածներ էլ եպիսկոպոս եղած և նորա ե-

145 Հայտնի էր նաև Կեռտապան անվանը (Քարխաւարանց Մ., նշվ. աշխ., էջ 304: Տես նաև Կարապետյան Մ., Հյուսիսային Արցախ, էջ 268):

138 Գյուղով քար անվանը հայտնի այս խաչարդը գյուղացիները փոխառելի էին գյուղամեջ, որտեղ և պահպանվում էր մինչև բունգաղարը: Կերտովել է 1292 թ. (նշվ. աշխ., էջ 273):
 139 Աղվեսաչէնը՝ որպէս ամառանոց, հիշվում է 1905 թ. քաջարի փերեցիների՝ բուրջ ավազակախմբին արժանի հակահարված տալու առնչությամբ (մանրամասն տես նշվ. աշխ., էջ 258):
 140 Հին Փիթ գյուղատեղին գտնվում է բնակավայրից 5 կմ հյուսիս-արևմուտք: Եկեղեցին, որը հայտնի էր Սր. Փեփրոնյան անվամբ, մինչև 1989 թ. բունգաղարը գրեթէ կանգուն էր (մանրամասն տես նշվ. աշխ., էջ 266-267):
 141 Բարսաւ ճգնատրի մատուռը գտնվում էր վերոնշյալ եկեղեցուց հարավ: Ներսիս Կախաբանով խաչարտերից մեկը կրել է 1457 թ. (նշվ. աշխ., էջ 268):
 142 Հայտնի էր նաև Բուսկան նահատակ անվանը (Քարխաւարանց Մ., նշվ. աշխ., էջ 300):
 143 Նաև Մալղոբեցիք անվանմամբ հայտնի գյուղատեղիում, որը գտնվում էր Ղոբոյր գյուղից 2,5 կմ հարավ-արևմուտք, ուսումնասիրություններ են կատարել հիմնականում Մակար Բալբախարյանցը ԺԺ դարավերջին և Մեղրակ Բաբխուբադյանի գլխավորած արշավախումբը 1960-ական թթ. (նշվ. աշխ., էջ 299-300: Գլխավոր հայ վիճակագրայն, պր. 5, Երևան, 1982, էջ 256-257: Կարապետյան Մ., Հյուսիսային Արցախ, էջ 321):
 144 Հովիվ, տավարած, նախրապան:

կեղեցոյ տեսուչ հաստատուած են՝ ժողովուրդ կառավարելու:

Այնինչ մենք Գետաշէնու և քանանցեցոց շինատեղոյ անձկութեան, հետևապէս և տներն ու փողոցներու խոնաւորեան, անկանոնութեան և աղտոտութեան վրայ զարմացած էինք, այս գիտի մէջ անկի վատարարագոյն տեսանք: Եւ տարս պատճառը մեզ կրօի, թէ հետևեալն է: Պարսից տիրապետութեան ժամանակի վատարար վարչութեան երեսէն յառաջ եկած արշաւանքներու, հարստահարութեան, գերութեան, հրոյ և սրոյ, բարբարոսական արարմունքներու պատճառաւ հայերը ծորամէջ և անփոյթ տեղեր իրանց գերեզմանոց ընտրեր են, քան թէ շինատեղի, և այս մահառիթ տառապանքներու կենցաղավարութիւն այնչափ երկար տներ և սովորութիւն դարձեր է շարքաշ հայերին, որ այսօր իսկ մահու և կենաց մէջ ընտրութիւն անելու զգացումն անգամ կորսնցուցեր են: Եւ այն ժամանակի մոլեկրօնութիւնն էլ, այդ զգազանական մարմնոյ մէջ իբրև հոգի մտնալով, իրատունք տուեր է այլակրօնի ընչից և ստացուածոց կողմատման հետ և իզական սեռէն գեղանի կանայք և աղջկանք յափշտակելով՝ Մահմեդի բարոզած արքայութիւնը այս աշխարհի մէջ էլ վայելել: Պարսոց և իրաւանց ճանաչման համար յատկացեալ արդարաբարոզ կրօնի փոխարէն Մահմեդի Դուրան (օրինագիրք) իրատունք տուած է իր հետևողաց այս աշխարհի մէջ իզանուլական տուփանք¹⁴⁶ յագեցնող արքայութիւն վայելելու, հարկ եղած կենսական պիտոյքներ և ձեռք բերել այլալուծութեան, իսկ երբ նորս դիմարարութիւն կանեն, անխնայողարար փողոտել և գէշագէշ պատառտել հրամայած է, որպէսզի այսօր և ընդմիջու գեաւորն մահմեդականի համար և մահմեդական Աստուծոյ համար արպրեն: Տեսնելով տյմայիսի եգիպտական, յանուն աստուծոյ անաստուած արարքները՝ ընդդէմ մեր համագգի իրայլէադրոյցն, ինչո՞ւ տօնելի Մովսէս չլինել:

Աստիք լոկ խօսքերու բարդութիւն չեն, ուշադիր ընթերցող, այլ իրականութիւն, եթէ դու ես յանձնառու լինես ամառնային շոգ ժամանակին այցելել Գանձակու գաւառի մահմեդականաց և հայոց գիտեր և ուշի ուշով բննն քո համարիւն երբարց դաճանադաճ արկուններու մնացեալ պատկերները, որ մենք չենք կրցեր նկարագրել մեր զգացման արտայայտութիւն ընելու բառեր պակսելու համար, դու մեր գրածի բազմապատիկն պիտի տեսնաս և դու ես անկարող պիտի լինես նկարագրել: Պիտի տեսնաս, որ հայոց տիրապետութեան ժամանակ, երբ այս կողմերը պարսիկներ չկային, բոլոր արգասանց արտօրէլի կենտրոնի և հարքավայրերու մէջ հայ քրիստոնէի շինատեղիներ, նոցա կանգուն եկեղեցիներ և խաչարարելով լի գերեզմանոցներ, որք այժմ

բոլորն էլ մահմեդականաց բնակավայրեր դարձեր են, իսկ հայերն իրենց արիւնքաճ եղած գերդաստանի մնացորդներ պահպանելու համար մա երկիւղ պարսիցն ընտրեր են խորածորներու մէջ, առիկող տեղեր բնակութիւն հաստատել գագանակենցաղ լինելու: Բոլոր հայ գիտերու հետ դու պիտի տեսնաս և Փիք գիտի անկի մահառիթ շինատեղին, որոնց տներ անկի իրարու վրայ դիզուած կհամարուին, քան թէ կողքէ կողք շինուած: Վերկի տներու մեծ մասի ճանապարհները վարի տներու տանիքներու վրայէն կանցնին:

Տներու երեք կողմի պատեր առապար կողմն այնչափ գետնափոր և հողի մէջ բաղուած են, որ դրսի գետին և տան տանիք բոլորովին հաստար են իրարու: Մարդ չի կարող որչա՛կ իրարմէ երկուքի՝ գետնի և տանիքի երեսին հաստարապէս խոտ բուսած լինելու տեսք: Միայն նոցա տներու առջև կողմն մի փոքրիկ ներուցած դուռ կայ, որ անկի գագանային որչի՛ անցնի, քան մարդաբնակութեան կնճանի: Տան ներսի կողմը այնչա՛փ խոնաւ և մութ է, որ մահու, քան թէ կենսի բնակավայր կհամարուի մեղա՛յ, մեղա՛յ, շներու բոյներէն անկի վատարարագոյն: Անտանելի ցաւ է մեզ տեսնել կեղեքիչ օսմանցուց փաշաներու և հարստահարող պարսից խաններու որսորդական շներու և թռչնորս բազներու լաւ կեանք ունենալ, քան հայ քրիստոնէի: Ինչո՞ւ թոյլ տալ այդ անարդար ազգերուն, որ հազար մարդու կեանքը մի մարդու ուտել տան: Հազար մարդիկ չարաչար աշխատութեամբ իւրաքանչիւր տարեկան 100 մանէրով ապրեն, իսկ մի մարդ շուրջտարեամբ 100.000 մանէրով գեղխանայ և ծիրի: Չառ ի վերէն գաա ի կող իջնող խոնաւութեան տան կողքերու, գետնի և տանեաց վրայ բուսած անելու, պատատուկ (բաղեղ), փիփիերտ (մոլոշ), բլիբիտարի (աւել) և այլ խոտեր և զանազան փշեր, եթէ ունակողութեան ենթակայ չեն եղած, մանգաղին առատ հունձ կուտան: Շինավայրին անձկութեան և առապար լինելու պատճառաւ անասնոց և մարդկանց արքանոյտեր տներու առջև և կողքին և կամ ձորի և խորքաբոլոր տեղերու մէջ այնչափ դիզուած են, որ անձկներու և վազող ջրերու մէջ արքատեղն դարձած են և արևու ջերմութեան ներքև տաքանալով, ամպանման գոլորշեաց հետ տոգորուած՝ կենսապատ գարշահտոտութիւն կբարձրացնեն:

Շատ գիտեր, մանաւանդ Փիք, սայլի ճանապարհ չունենալու համար աղբեր արտերու վրայ տանելու և արտերէն որայներ և խոտեր գիտումէջ իջեցնելու անկարելութեան մէջ կգտնուին, հագիլ հազ գրաստոց կանցնող իրենց հնճանները փոխադրել կհնարատրին, իրենց մեռելատարաս կանցք բտելու: Մանաւանդ, որ կեղտափորութիւն ունակութիւն դարձած է սոցա: Տիրող իշխանութեան ազգու հոգատարութեամբ առ այժմ միայն կրօնի այս կերպ ընդհանրացած մոլորութիւնը:

Շատ տեղեր քարոզեցինք, որ իրարմէ բաժանուող երբայրներ փոխադրուին արտօրէլից կենտրոնատեղիներ բնակութիւն հաստատելու, որ դժուարութիւններ դիւրանան, և մահառիթ կենցաղավարութեան ազատութիւն: Նորս կպատճառեն. «Ինչպէ՞ս բուրանք մեր պապի օճախն, մեր եկեղեցին, մեր հարց գերեզմանները, և այս վերջիններն ո՞վ պիտի օրհնէ տայ և որոնքի հանձն նոցա հոգայոյն»:

Տգիտութիւնը ժողովողին այն աստիճան վայրենի և սնապաշտ դարձուցած է, որ գիտի մօտակայ պատուական արտերուն չորս մեռեցող գերեզմանատեղի լինելու համար նուիրած է գեղական համայնութիւն, իսկ կենդանի մարդկանց կենսի բարեկեցիկ լինելու համար մի արտ անգամ չեն տար տուն շինելու: Թող հասականց գաղթական պօսեսցի, տփխիսեցի, նոթ-մախիջանցի և այլ տարազանց հայերը, որոնց թերևսմտութեան առջև «խըմբըլ ու կոջ» կհամարուին Հայաստանի մէջ մնացող և իրենց դռներ պսնդխտող վանեցի, մշեցի և այլ հայերը, թէ Հայաստան որոնցմով հայաբնակ մնացեր է, իրենցմով, թէ՛ այս չարքաշներով:

Մինչև ցայժմ մեր շրջագայած գիտերն միայն Նիւզգեան գիտ սայլի գործածութիւն կընէ իր սահմանն կարի հարց լինելու համար: Միս գիտերն ոմանց սահմաններ կան բոլորովին սար ու ձոր և առիկող են, որ սայլ գործածելն դժուարացած է, կան կիսով չափ ունեն իր բնական դժուարացուցիչ պատճառներ, սակայն բոլոր հայոց գիտեր, իրարու աչք տալով, սայլի գործածութիւն անհետացուցած են, իրենց հունձերը գրաստի քանակով կփոխարեն, որով նոցա գործերն 3-6 անգամ դժուարացած է և դժուարանալով 3-6 անգամ ժամավաճառ կլինեն սայլի «աղորմներ» (սայլի գնալու ճանապարհին վանեցիք «աղոր» կասեն) չպատրաստելու համար:

Կարի առիկող և շատ եկե՛ջ ճանապարհով փոխադրող գրաստոց 10 խութք օրան հագիլ կարող են բառնալ, այնինչ սայլին՝ 3 բարդ, այսինքն՝ 90 խութք կբառնան, որ երկու եզրով կփոխադրուի: Երկրագործներ այսպիսի խիստ և դժուարին աշխատութեան պատճառաւ թէ արդիւնքին մի մասն կկորսնցունեն և թէ՛ նիհարած, կաշի և ոսկոր մնացած են:

Գիցուք թէ երկրագործն իր շօշափելի տգիտութեամբ իր շահն և վնասն չի ճանաչիլ և կշռադատելու մտք գործութիւն կորսնցուցեր է: Հապա հարկահան կտառավարչներու խոջին ի՞նչ եղած է, տիրելու և կառավարելու շնորք ո՞ր մնացեր է, որ այսպիսի տգիտաց վրայ իրենց խնամք չեն ցոյց տար զէր տիրող իշխանութեան շահուն համար, որպէսզի իրենց կարճատու բաճական անասուններ թէ՛ իրանց և թէ՛ տիրող իշխանութեան անկի օգտաբեր լինէին:

Ոչ ապաքէն անհատական հարստութիւն և ոյժն տիրող իշխանութեան հարստութիւն և ոյժ կկազմեն: Ես ստուգիս վերահասու եղած են և կճանաչեն

այնպիսի կառավարիչներ, որ երկրագործ մշակէն անկի անխելք և անհետատես կհամարուին շնորիկ իրենց անփոյթ և անհատարարիմ գործավարութեան: Չի երկրագործ գիտ իր կարքերու կողեր, ոչխարներ, աշխատող եզներ և գրաստներ բտել և գիրացնել, որպէսզի ժամանակին առատ կպան և բուրդ տաճայ, և նոցա աշխատակցութեամբ դիւրացնէ իր անհրաժեշտ գործեր, իսկ տիրող կառավարիչներ ոչինչ չեն մտածեր:

Կառավարիչներ, եթէ իրատունք կհամարեն իրենց միմիայն գառագանի հարուածի վարձարտութեամբ տեղական բնակչաց հարկադրելով՝ մարտկոցներու և պատերազմական պիտոյից փոխադրելու ճանապարհներ, մանաւանդ թէ ծառայող աստիճանատերներու զբօսավայրի կառուիչներ չինել տալ, հապա ինչո՞ւ միևնոյն մտրակի (եթէ չկան մարտավայել այլ միջոցներ) վարձարտութեամբ չեն շինել տար երկրագործ մշակներու երկրագործութեան ճանապարհները, որոնցմով մարդկային ազգի կենսական պիտոյքներ կառատանան և կկըշտանան թէ՛ երկրագործը և թէ՛ իշխանութիւնը:

Փիք գիտի երկրագործական ճանապարհներու քիչ տեղեր հարկելու և ուղղելու պէտք ունեն, այնպէս որ, եթէ գիտացիք, տուն գլուխ մի մշակ տալով, առ առատելն երկու շարքա միայն աշխատեն, սայլի աղորն և ճանապարհներ կորողուն, որով մշակական գործերն վեցէն ինց մասն կգեղջուխն և հնգի չափ կդիրամայ: Մենք այս մասին թէ՛ ստոնիկն խրատներ և յորդորներ կարդացինք և թէ՛ եկեղեցոյ բեմէն խրատեցինք ժողովրդականց: Թէ՛ն համոզուեցան մեր բարոգի օգտակարութեան, բայց գիտացի անգարգացած ժողովուրդը, անտվոր աշխատութեան մէջ, ինքնուրոյն գործելու շնորք չունի, մինչև որ իրեն գլխին կանգնող հրամանատար չի լիներ: Ուստի երբ մենք գիտէն հետագանք, մեր քարոզները լոկ քարոզ մնացին՝ առանց գործարարութեան:

Ուրեմն տիրող իշխանութեան պարտք կմնայ գործել տալ գիտացող յօգուտ ընդհանուր մարդկութեան: Թոյլ կտամք մեզի, մանաւանդ թէ պարտք կհամարենք իբրև երդումայ պաշտօնակատար, յօգուտ քարխնամ տէրութեան և հպատակաց, ասել, թէ ինչպէ՛ս անցեալ տարի կառավարող իշխանութիւն իրատունք համարեն ինքեան՝ միմիայն Փիք գիտէ՛ր 3000 մշակ և 800 բուրդի փող առնել¹⁴⁷ գաւառի ծառայող աստիճանատրներին *Հածի-քէն* առնանալու ամարանոցի կառուիչներ հարկելու համար, թող պարտք համարէ ինքեան և երկրագործներու սայլադիւններ հարթել տալ, որով տէրութեան առ իր հպատակաւ ունեցած փոխադարձ պարտիք կատարուած կլինի:

Փիք գիտի ամբողջ իզական սեռ՝ թէ՛ հարուստ և թէ՛ աղքատ, առհասարակ բոկոտն կշրջին, ինչպէս և

146 Կիրք, բունց ցանկերուն, տարիանք:

147 «Շատ այժմ հաշուելու է և այլ գիտերու քաճ, հաս, հարկ, կոտ և թեկար» (ծնք. հեղինակի):

այս կողման բոլոր հայ-գիւղացի կանայք: Ունաման չունենալու պատճառաւ չէ այս չարքաշտրիները, այլ ընդհանրացած մի սովորութիւն է դարձեր: Ի՞նչ կկարծէք, որչա՞փ հեռու տեղեր կգնան: Ե՛հիշտ երկու ժամու ճանապարհի անազիմ արեր ու ձորեր անցնելով, մինչև իրեանց բինն (պահգրուան) աւսած տեղեր, որտեղ տարեկան իոյ և համարի կշինեն: Առանց այլ մարդու և երկիւղ կրելու քինաներու մէջ կբնակեն գիշեր ցորեկով կանանց մի մասն իրենց փոքրիկ գառակներով մայիսի սկզբէն մինչև սեպտեմբերի վերջը: Գիւղիս մէջ սնանկաւ կանայք զբաղուած են կալ կալսելու գործողութեամբ, ամենայն ամենայնի: ցվերջ գործոյն և բանջարանոցներ մշակելու:

5-10 բինն իրարու մօտ մի սառն աղբիւրի գլխին կառուցած են արերու լանջի վրայ, 4-5 բինն՝ այլ տեղ՝ բոլորովին հեռու առաջններէն, միս երկու-երեքներ այլ տեղ կբնակին ցան ու ցրիւ, ուր որ սառն աղբիւր կամ վտակ կգտնան՝ նոյնպէս առանց այլ մարդու: Սորա՞՝ բինաներու բնակիչ կանայք, շարքաբ 2-3 անգամ իսկ ուտով գիւղ կուգան՝ իրենց հետ բերելով շալակած իւղ, պանիր, շորքան և այլ բաներ, վեր առած գիւղի իրենց տներէն իրենց պիտոյից չափով հաց՝ կվերադառնան բինաները՝ դարձեալ բոքիկ ուտով այն քարքարուտ ու խնձ քարերով լի ճանապարհը, շատ անգամ իրենց 5-8 տարեկան գառակաց ձեռքէն բռնելով, որ դարձեալ իրենց մնամ բոկոտն են, մինչև հասնեն իրենց բինաներ: Միգուցէ քիչ չափազանցութիւն բոյի, անունն և անստվոյր ընթերցող, 5-8 տարեկան մանկանց բոկ ոտամբ, 2 ժամու ճանապարհ քայլելու խօսքեր: Մենք բինն առած տեղեր գնալու ժամանակ բանի-բանի կինք և մանուկներ տեսանք երթալու-գալու ճանապարհի մէջ:

Գիւղիս պաղլեղի հանքը նախապէս տեղական հայեր կիրահալէին իրենց պապենական սովորութեան կերպով, և այն ժամանակ թէ՛ իրենք կշահուէին և թէ՛ տէրութեան քաւական շահ կուտային՝ փոք մի մնք. ծախելով: Անցեալ վերջին տարիներու մէջ նախ մի իրեւ և ապա տիվիսիսեցի հանգուցեալ Սիրգալովն պաղլեղի հանք կպալարով վերցուցին տիտղոյ իշխանութենէն: Սակայն երկուքն ևս վնասուեցան, և այս պատճառաւ հանքն 5 տարիէ ի վեր գործադու եղած է: Գործարանը, որոյ շինութիւնները 50.000 ռուբլիով հազիւ կառուցուած են, այժմ բոլորովին քայքայման վիճակի մէջ կգտնուի, ուստի և հանքահանութիւնն դադարած է՝ ի վնաս տէրութեան զանձուն:

Փիբ գիւղացիք համայնական գործակցութեամբ իրարու օգնելու սովորութիւն ունեն, քայց, ափսոս, որ միմիայն նոր կալատեղեր պնդացնելոյ գործին մէջ, ոչ երբէք ճանապարհաշինութեան համար, և այն էլ դժբախտարար կիրակէ օրերին: Թմբուկի և շեփորի հրախրական ձայնով գիւղի երկսեռի բազմութիւնը նոր շինուած կալի վերայ կծողովոյին: Ա-

նոնցմէ երկու սեռի ամուրիներ պար կկազմեն և զանազան կերպ պարախաղերու միջոցաւ նոր կալատեղը կոյս տալով կը պնդացնեն: Երբ մենք բինաներէն կվերադառնայինք, հանդիպեցանք այդ խալատանմուկ պարահանդէսով կալահանդէսին և մի կողմ քաշուած հետարքիբ կանէինք: Հպարտ գիւղացի ամուրիները սկսեցին մամէքներ տեսլալ, իրաքանչիւր իր հաւանած պար եկող աղջկան ձեռին: Եղան աղջիկներ, որոնց ձեռքին 4-6 մամէքներ մատուցուեցան:

Այսպիսի գնահատուած աղջիկներ, պարեն դուրս գալով, փոխանակ քաշկինակի՝ մամէքներ իրենց մատներու մէջ քաց բռնած, օրին մէջ ծածանցնելով կկարատէին, և իրաքանչիւրն առանձինն առանձին իր նագալաղը լրացնելէն գկնի ի պատիւ ինքեան նուիրուած մամէքները քաշխեց շեփոր անողին: Ես, այդ առատաձեռնութեան վրայ զարմացած, պախարակեցի նոցա շռայլութիւնը, քայց ինձ մեկնեցին այդ շռայլութեան գաղտնիքն յայտելու: Պարահանդէսէն վերջը իրաքանչիւր մամէքը իր տիրոջ կդարձնէ շեփոր անողին՝ մէն մի մամէքէն 2 կուպէկ վարձ վերցնելով իրեն: Բոլոր իզական սեռը այդ օրը իրենց պատուաւոր զգեստներ հագած էր, որոնց վերնագգեստի կախ-թևանցի արխալողի (չափքեան) թևերու վարի կողմը, սկսեալ կոնատակէն մինչև ձեռքի մօտը, կարգ մը փայլուն արասիներ կարուած կային: Նագալաղը ըրած միջոցին, երբ թևերնին սիգապանձ շարժումներով վեր ի վայր կխաղացնէին, փայլուն արասիները, արեգական շողերն իրենց մէջ հատանելով և անդրադարձ ցուցումն տալով, գեղեցիկ փայլք կուտային: Բաց յայտնամէ, իրենց երեսների, օձիքներու, կուրծքերու և լանջերու վրայ զանազան ձևերով շինուած արծաթեայ գարդեր կարած ունէին, որոնք նոյնպէս փայլք կուտային իրենց շախկ ու շուխկ ձայներու հետ: Բայց, ափսո՛ս, որ այդ գարդերու անունները բոլորն էլ թուրքերէն էին, ուստի և ես չկարողացայ քանի մի հայկական բառեր գիւղական մտք անկիւնէն ի յոյս բերել:

Այդ շափ արծաթեայ գարդարանքն հակառակ՝ ոչ միոյն ոտքին ոտնաման չկար, լինէր դա հարուստ թէ աղքատ, պատա՛թ թէ մանկամարդ, տհաս թէ նշանուած աղջիկ՝ բոլորն էլ, առանց բացառութեան, բոկոտն էին:

Փիբ գիւղէն 5 ուսանող կայ Գանձակու արիեստատրաց ուսումնարանի մէջ, մինն էլ՝ Տփլիսիստ:

L

Վերին Ղոյքիւլ

Ամսոյս 29-ին Փիբէն մեկնեցանք Վերին Ղոյքիւլ ասուած աւերակ շինատեղին, որուն շրջապատ անդաստաններ ու անտառներ իբրև ազարակ, սեպիականութիւն են Բարսուռ գիւղացի Մելիք-Ռոստոմնանց իին և բազմաթիւ գերդաստաններ, որ 50-ի

չափ անձինքներէ կբաղկանայ: Սոյն գերդաստան, ասկէ երկու տարի առաջ բաժանուելով, եօթն տուն եղած են¹⁴⁸:

Կալատունն, թէ Մելիք-Ռոստոմնանցի ծագումը Բագրատունի ցեղէն սերած է, և այդ ազգաբանական ծագումն հաստատելու համար ռուսերէն մի տեսող հրատարակուած է անցեալ մօտակայ ժամանակի մէջ: Ռոստոմնանց ներկայ գերդաստան թէպէտև բաժանուած է անդամոց շատութեան համար, քայց իրենց հայրենական հողային կալուածները ի միասին կմշակեն, և նոցա կալատեղին և տաւարեղենաց նախիր, ոչխարաց հոտ և գրաստուց ջուրը կգտնուին տոյն Վերին Ղոյքիւլ քաւած կալուածին մէջ, որ ամէն կողմանէ երկու ժամու ճանապարհապէս հեռի կգտնուի ամէն կերպ դրացիական օգնակամութենէ և կալաշտպանուի միմիայն իր գերդաստանի արի և թիկնաւետ երիտասարդներով: Սոյն կալատեղի մէջ հիւրընկալուեցանք մէկ գիշեր և ննջեցիմք քարձորավանդակ լեռնադաշտային բացօդայ վայրի մէջ, որուն ընդարձակ հորիզոնը, ջիջի օդի և աղբիւրաջրի պատուականութեան հետ կփայլէին ամէն կերպ մաքրութիւն և բնակչաց սրտի սրբութիւն: «Այսպէս օրինեսցի անձնայն մարդ, որ երկնչի ի տեսողն»:

Սոյն ազարակի արևելեան կողմը կայ մի աւերակ շինատեղի՝ *Հնգշտիր* անունամբ, որոյ մէջ կգտնուին հայոց կիսաւոր եկեղեցի և գերեզմանոց: Ազարակիս հարաւակողմը կայ մի *Կարմիր եկեղեցի* անունով ուխտատեղի, որ մօտ ժամանակներս փայտայարկով նորոգուած է տոյն ցեղի ձեռքով: Եւ այնտեղէն վայր կայ մի մատուռ՝ *Թռած խաչ* անունով: Արևմտեան կողմը՝ Շամքոր գետի աջ ափին, կայ մի մատուռ՝ *Տուկսիկայ խաչ* անուանեալ, այսինքն՝ փոշտանցի խաչ, ուր ուխտի կտանեն փոշտանգուած մանուկները: Նոյն ափին մօտ կը գլտնուի *Ներքի Ղոյքիւլ* անունով աւերակ շինատեղին, որոյ միջի *Ս. Յովհաննէս* անուն եկեղեցին կանգուն կայ մինչև ցայտօր, որոյ արևմտեան յուսամտուէն ներս կանցնեն այն ամէն երեխաներ, որոնք ուշ ոտքի կելնեն: Կայ այդտեղ և գերեզմանոց: Իսկ տրդա հիսախալին կողմը՝ գմբէթաձև բարձրացած սեպացեալ սարագլխին, կայ *Ս. Մինաս* անունով ուխտատեղի՝ Գգնատրի գերեզմանով, որուն կողմին փորացաւ ուխտատրներ, զոր անցեալ մօտ մանանակի մէջ նորոգել է տիվիսեցի Միմաս Յակովբեան Կօլատեանցը: «Հիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»: Իսկ հիսախարեւեան կողմը կայ *Քարայտակ* անունով աւերակ շինատեղի, որոյ մէջ կան գերեզմանոց և կիսաւոր քարուկի եկեղեցի:

L Ա

Բարսուռ¹⁴⁹

Ամսոյս 30-ին այցելեցիք *Բարսուռ* գիւղը՝ յիշեալ Մելիք-Ռոստոմնանցներու բնակավայրը, որ կգտնուի Շամքոր գետի ձախ ափին՝ ձորավայրի մէջ, որ չորեքրկուսէ շրջապատուած է լեռներով: Այն՝ չափ նեղ և անձուռ է վայրը, որ նորս բողբոլակուն և անփոփի հորիզոնով երկինք էլ նոյնպէս փոքր կերևի: Գիւղիս մօտակայ շրջապատող լեռներու անտառները, բոլորովին անհետացած լինելով, գիւղս կզըտնուի բուսականութեամբ մեռած կեանքի մէջ, իսկ գիւղի ներքև Շամքոր գետէն հանուած առուով ոռոճացած, պերճացած խաղողի և մրգեղենաց ծառատանին այգիներ իրենց կենդանութեամբ բոլորովին հակապատկեր կենթկայացնեն գիւղի մեռելատիպ կերպին: Գիւղացիներ, իրենց արածակամներով մի ժամու ճանապարհ հեռու, հովասուն լեռնադաշտեր գնացած լինելով, բոլորովին տխրութեամբ համակուած էր Բարսուռ գիւղ: Գիւղիս մէջ կզըտնուէին միայն քանի մի զառամեալ ծերեր և պառաւներ, գիլերը կերակրող քանի մի հաւերով:

Գիւղս կբաղկանայ 155 տուն զուտ հայ բնակիչներէ՝ 617 արական, 556 իգական: Ունի մի հին, փայտայարկ, խոնաս և նսնձ եկեղեցի՝ *Ս. Աստուծածաժին* անունով: Այնչափ ցած է, որ իւր առապար կողմի երեք պատերը քաղուած են հողի մէջ, գրեթէ հաւասար են դրսի մակերևոյթին: Արտաքուտ եկեղեցի լինելու ոչինչ նշան չունի, քացի մի տախտակաշէն գանգալատուէն: Սակայն երեք տարիէ ի վեր սկսած են շինէլ քարուկի և հոյակապ եկեղեցի, ձեռներեցութեամբ և հոգատարութեամբ Մելիք-Ռոստոմնան արժանապատիւ Եփրեմ քահանայի, որ տակաւին անատար կննայ:

Սոյն քահանայն այս կողման հոգ գործոց գործակատարն է, պաշտօնը ճշտութեամբ վարելու համար ստեղծուած մարդ՝ հասակ վայելուչ, արծուաքիթ, ծանրաբարդ, քահանայավայել համեստութեամբ, հետևապէս և պատկառելի մի անձնատրութիւն է: Յայտնապէս կտեսնուի իր վրայէն ազնիւ ցեղի արեանատուէն զոյսացած լինելն: Երբ հարց առաջարկուի իրեն, նա յորջ դէմ կտեսնանայ և կշռադատելով կպատասխանէ: Ամբողջ գառառն յարգելի եղած է, առանց խարոտեան կրօնի: Կարծես ամէն մարդու բարեխարութիւն ըրած լինի:

Գիւղը ունի երկու դասարանով մի գեղեցիկ վարժարան, որոյ մէջ կուսանէին երբեմն գիւղի մանուկներ, քայց քանի տարիէ ի վեր գիւղի ցանքերն քաւականացուցիչ բերք չունենալու համար վարժարան դադարու է:

Գիւղս գետափի վերի կողման այգիներու մէջ ունի մի փոքրիկ եկեղեցի՝ *Ս. Յովհաննէս* անուն, որուն

¹⁴⁸ «Մելիք-Ռոստոմը բաղուած է Գանձակու Ս. Յովհաննէս մայր եկեղեցոյ գաբի մէջ (Յնաւ՝ 1722 թ., վախճանեալ 1794-ին» (Յճբ. եղովնակ):

¹⁴⁹ Գտնվում է Շամքորի համանուն շրջակայքում 20 կմ հարավ Շամքոր գետի մակալողման ձորակայանին (ծ. մ. քարձր է 170-850 մ):

կղիմեն ականջացա ունեցող ուխտատրներ: Վարի կողման այգիներու մէջ կայ Հռիփսիմէ անունով խոնարհուած վանք և իւր շուրջը՝ փոքրաքի գերեզմանոց: Այգիներու ճանապարհի վերև գտնուող առուակի վրայ կայ մի խոնարհուած փոքրիկ եկեղեցի՝ հանդերձ գերեզմանոցով: Փիբեցի հանգուցեալ Յարութիւն վարդապետ Մամիկոնեան իւր ծերութեան ժամանակին յայտնել է սոյն գիւղացուց, թէ «Մշու Ս. Կարապետ վանքէն բերածս մատուրք քաղել եմ նոյն եկեղեցայ մէջ»: Գիւղիս հարաւային կողման տներու մէջ կայ մի փոքրիկ եկեղեցի՝ *Գիսաքեր* անուն: Անորմէ վեր՝ տներէն դուրս, կայ մի փոքրիկ կիսաւեր մատուռ՝ *Թառան եկեղեցի* անունով: Գիւղիս կալատեղեր բարձրացող ճանապարհի մէջտեղ կայ մի փոքրիկ մատուռ, փոքրիկ կաղնի ծառի ներքև՝ *Կաղնիխաչ* անունով, որուն հայ ուխտատրներէն աւելի կ'աճախեն թուրք ուխտատրներ յօղացաւ ասուած հիւանդութիւն բժշկուելու հատարով: Գիւղիս կալատեղոյ հիւսիսային կողմն կան մի փոքրիկ եկեղեցի՝ *Խարունքի* (բոյր) անուն և գերեզմանոց:

Գիւղն ունի 8 ուսանող՝ մէկը՝ Գանձակու գիմնազիւնը, 1՝ արհեստարարաց, 1՝ քաղաքական, իսկ 4-ը՝ Փիբ գիւղի ուսումնարանը:

ԼԲ

Գառնակեր¹⁵⁰

Ամսոյս 31-ին այցելեցինք ի *Գառնակեր* գիւղ այն պահուն, երբ արևն ի մուտ խոնարհուած էր:

Գիւղս կըստկանայ 84 տուն գոտ հայ բնակիչներէ՝ 380 արական, 360 իգական: Գիւղն հաստատուած է Շամբոր գետի ձախ ափին՝ Բարսումէն քիչ վեր՝ շրջապատող լեռանց ծնկան վերայ, որտեղ գետնափորի աջ ու ձախ կողմերն ևս դէմ առ դէմ ձոր լինելով, ուղղաբերձ չորս լեռանց մէջ գիւղս վայրն իրաչաձև կերևնայ: Խաչաձև հորիզոնի պատճառաւ երկնքն էլ իրաչաձև է, լաւ ևս է ստել՝ չորս խորդուբորդ, բարձր պատերու վրայ ձգուած կապտագոյն քառակուսի առաստաղ ձևացեր է: Այս երկնային առաստաղն այճապ փոքր է, որ աստղատան գլխատր լուսագունդերէն շատ քչեր կտեսնուէին: Այնպէս զարմանալի ձև ստացած են Գառնակերի գիւղատեղին և նորա հորիզոնը, որ եթէ, երբեքէ գիւղաբնակութիւն իսպառ անհետացած լինի, իրաչաձև վայրէն կարելի կլինի հաստատակէս գիւղատեղն մատնանիշ անել ապագայի մէջ:

Գոյն չորս բարձրաբերձ լեռներ աշխարհիս չորս կողմը մեր դէմ փակելով՝ մի աներակայելի մտաշրջութիւն կազմուեցաւ մեր մէջ: Կարծես թէ այդ վայրը մեր բնական երկրագնդէն դուրս՝ մի այլ աշ-

150 Գտնուում է Եամխորի համանուն շրջկենտրոնից 23 կմ հարավ՝ Եամբոր գետի ձախաղողմայն ձորալանջին (ձ. մ. քարտը է 800-870 մ):



ԳԱՌՆԱԿԵՐ. հատված գյուղից (ղուս.՝ Ա. Օհանյանի, 1980-ական թթ.)

խարի լինէր, և կամ մենք մի այլ ճոր լոյս ընկած աշխարհի մէջ յանկարծ տեղափոխուած լինէինք: Այնպիսի՝ տրամադրութեան ներքև ընկած էր մեր յեղաշրջեալ միտքը, որ կարծես թէ մեր ծանօթ աշխարհի ունեցած բոլոր կառավարչական կերպեր, զանազան ազգաց իրարու դէմ լարած խարուսիկ քաղաքականութիւններ, կերպ-կերպ պատրուակաւ տոգորուած նենգամտութիւններ, մարդկային բարոյականութիւնը քայքայող կեղծ ու պատիւր¹⁵¹ վարձմունքներ և զայրակոչուցիչ կենցաղավարութիւններ, զիրար եղծանող օրէնքներ և վերջապէս սրբութեան կեղծ բողոք գործուած սրբապղծութիւններ իսպառ արտահալած եղեր էին այս ատենական դար ներկայացնող պարզավայրէ:

Գիւղի միակ բահանայն՝ տեր Յովսէփ Պալանց, Քրիստոսի հաւատարիմ փոխանորդն էր և երկնից պատգամաբերն այդ անբիծ հաւատարո ժողովրդեան համար: Նա ինքն է միանգամայն աստուածապաշտութեան և ժամասացութեան ուսուցիչ գիւղի մատաղ սերնդին: Գիւղի բնակչաց պարզ կենցաղավարութիւն կարծես թէ ցոյց կուտար, որ երբէք տեղւոյն ժողովուրդը հաղորդ եղած չէ եղեր աշխարհիս խարուսիկ քաղաքականութեանը: Հոգևոր և մարմնատր իշխանութեանց հրամաններ անմիջապէս կատարուած էին և կկատարուէին փութով սոյն գիւղի մէջ՝ իբրև իրենց անհրաժեշտ պարտոց հատուցումն:

Գիւղի տներն հին անհապետական ձևով շինուած են, քայց փողոցներն են նեղուցալոյն, սակայն մաքուր էին: Բնաւ մի աթոռ չգտնուեցաւ մեզ համար գիւղի մէջ, այլ փոխանակ արոյի՝ քակերու առջև քառակուսի տաշուած հաստ գերաններ պատկեցուցեր էին կամ կոճղի բոլորչի կտորներ դրած՝ նստելու համար և կամ հողէ թումբեր շինած: Թթենեաց ծառերու ճիւղեր խառնուած էին տանց կտորներու ցուլիկներու գերանաձայրերի հետ: Մթնշնչի եր այդ աշքապարար տեսարանը և ամէն բան պարզ առեմնական դարու կենանքի պատկերը կնեկրկայացնէր:

151 Խարուսիկ, կեղծ, շինծու:



ԳԱՌՆԱԿԵՐ. Ծաղկոցավանքը հարավ-արևմուտքից (ղուս.՝ Ա. Օհանյանի, 1980-ական թթ.)

Գիւղացուց մտքեր գրադուած են միմիայն իրենց սարուտալի միջոցներով, զի այր և կին ամենայն չարքաշութեամբ և անտրտունջ կերպով կկատարեն լծորդակցաբար իրենց պարտատրութիւններ՝ սարկելու հասնար:

Գիւղի անցնդխտոր ձորի մէջ, իրենց զիններ և մրգատու այգիներէն և բահէզներէն գատ, ուրիշ մըշակելի վայր չունեն, զի վարելահողեր, ճիշտ մի ժամու ճամբայ հեռի, ուղիղ զառիվերութեան բարձր արարաշատի վրայ կզտնուին, որտեղ և իրենց կալատեղերն են: Ռոտի ամէն օր՝ հնձածամանակ, մրջիւնի կարավանի պէս այր և կինը շարունակ երթեկութիւն կանեն այդ ահազին զառիվերութեան վրայ՝ գիւղից կալատեղեր և այնտեղից ի գիւղ:

Մանաւանդ թէ քանի դժուարութիւն է, երբ շատեր իրենց արմտեաց հետ և դարմաններն էլ գրաստով կամ շալակով ի վայր՝ գիւղատեղին կիջեցնեն: Կարծես թէ սոցա սահմանուած լինեն երկնքէն ամէն տեսակ նեղութիւններ:

Գիւղի հանդէպ՝ գետի աջ ափին, կամուրջին կից, կայ մի *մատուռ*՝ ջրացատութեան բժշկիչ: Արևմտակողմ՝ գիւղէն կալատեղ գնալու ճանապարհի զառիվերութիւն լրանալուն տեղը, երեք խաչեր կան՝ լրով բով կանգնած *Կաղնո խաչ* անունով, որոնց վրայի գորացեալ մեծ կաղնին 3 տարի առաջ կըտրեր են գիւղացիք:

Կալատեղերուն կից մի մեծ բոլորչի խաչաքար կայ, որոյ երեսին վրայ՝ թզաչափ լայնութեամբ և

կէս կանգուն խորութեամբ ծակ փորուած, վնասաբեր անճրակային տարիներն կրակ կվառեն նոյն քարին վրայ՝ անճրև նուազեցնելու, իսկ երաշտ տարիներ ջուր կածեն գլխին՝ տարին անճրաբեր ընելու: Յիշեալ ծակ քարէն դէպի արևմուտ՝ մի վերստ հեռատրութեան վրայ գտնուած աղբիւրի գլխին, երկու *խաչաքարեր* կան, քոտտներ (բորոտ), նոյն աղբիւրի մէջ լողանալով, կսրբուեն:

Կալատեղեաց հանդէպ՝ հիւսիսային կողման քարափի գլխին, *դղեակի մնացորդներ* կերևին: Նոյն կալատեղոյ արևմտակողմը՝ 1/2 վերստ հեռատրութեամբ, սարագլխին կզտնուեն նոյնպէս դղեակի մնացորդներ, որ *Գեսարու-Ալէ* կանուանուն:

ԼԳ

Ծաղկոցավանք

Օգոստոս ամսոյ 1-ին դիմեցինք *Ծաղկոցավանք*, որ Գառնակեր գիւղէն վեր 1 1/2 վերստ հեռատրութիւն ունի, կառուցուած է Շամբոր գետի ձախ ափին:

Սա մի փոքրիկ տաճար է, տաճար կըսեն, զի առաքելական դարու ձևով շինուած է: Ունի մի մեծ, բարձր դուռ: Իւր մէջ կկրէ աւազ խորանք: Տաճարի մէջ եկեղեցական պաշտօնեաներ դպիքներով պատարագ կնատուցանեն: Տաճարի մեծ դրան առջև շինուած է ժամատուն՝ աղօթարու ժողովրդեան նորա մէջ կանգնելու, որք տաճարի մեծ դռնով կտես-

150 Գտնուում է Եամխորի համանուն շրջկենտրոնից 23 կմ հարավ՝ Եամբոր գետի ձախաղողմայն ձորալանջին (ձ. մ. քարտը է 800-870 մ):

նէին նորա մէջ մատուցուած պատարագ: Հայաստանի մէջ տաճարները կալատմեն, թէ առաքելական դարու տաճարներ այս կերպ կշիռուէին, այսինքն՝ տաճարի դռներ դուրս և՛ ժամատուն, ինչպէս որ Վան քաղաքի մի քանի եկեղեցիներ և այն կողման վանքեր այդ կերպ շինուած են Արծրունեաց տիրապետութենէն առաջ: Ի նշան առաքելական դարու շինութեան՝ տաճարի մէջ՝ մի յայտնի տեղ, յեց ի յորմն խաչ կկանգնեցնէին և նոյն խաչի կենտրոնի ակն-խաչի ըստած տեղ մի բեռն կմխէին, ինչպէս որ ցայսօր ժամանակի կտեսնուի Վանայ «Յայնկոյս-ճորոյ» Ա. Ատուածածնայ տաճարի արևմտեան որմի խաչին վրայ: Նոյնպէս անդ՝ ի վանս Կարծրտրայ: Ծաղկոցավանքէն դուրս՝ եկեղեցոյ դրան հիստապին կողմ՝ մի մեծ կաղնի ծառի ներքև, կայ մի խաչակիր պատուհան, որտեղ ուխտատուներ խունել ու մոծ կկանեն և իրենց շորի կտորներ կկապեն նոյն ծառի ճիւղերի վրայ՝ ի փարատումն իրենց ցառոց:

Ծաղկոցավանքէն դէպի վեր՝ 1/4 վերստ հեռատուրեանք՝ նոյն գետի ձախ ակին, կայ շինուած մի միաբանական վանք, որ ունի մի քանի անձուկ խցեր: Յիշեալ երկորին վանքերու ամբողջ միջնավայր կկազմէ վանական այգին, որ երկրորդ վանքերու միջի հորիզոնական գծէն սկսեալ իջանելով՝ կվերջանայ Ծամբոր գետի փոք: Յիշեալ այգիի ստորին մասը գիւղացիք իւրացուցեր են վանքերու անմարդաբնակ եղած միջոցներին: Վանքն ունի երեանաչափ օրավար վարելահողեր, որ այժմ վիճելի է քաղաքական կառավարութեան հետ:

Այն վանքերուն 8 տարիէն ի վեր վանահայր կարգուած է վանատէր Յովհաննէս ծերունավարդ վարդապետ Բարաղամեանց: Մա ունի երկու ծառայ, որք այգին կպահպանեն, և՛ բանջարանոց կմշակեն, և՛ մի ձի: Ո՛չ եզ, ո՛չ կով, ո՛չ ոչխար և ո՛չ հողային կայուած: Ունի 6 մեղրի փերթակ, 20-ի չափ հաւ, տասն կտոր պղնձեղէն և երկու ձեռք անկողին, ահա նորա բոլոր ապրուստի միջոցներ, որոնցմով կտեսնեսուի վանահայր ուսիք և պահք օրերը: Իւր բոլոր տաացուածոց պակն կհամարուի մի փայլուն սանձովար, որ իւր միակ միխրաբարութիւն՝ ընծայուած գանձակեցի պ. Արտիշ՝ Նաբաբե[ան] անձէն:

Վանահայրն 73 տարեկան ժիր, ջլապիճը, արաքաքայլ, փոքրիկ ծեր մի է, որ երբեմն կկզճէ ալ, կոր վանքի կարեւր մի գործ մտքին կուզայ¹⁵²:

Վանահօր ատամներ սպիտակագոյն են, քան միլոքի մագերեն: Մա, լինելով այսչափ չքատուր և վեռն մէջ, 3 տարի առաջ 150 ր. փող տալով, այգիի վերի կողմը քարերով ցանկապատեր է գիտն՝ս, ո՞ր տեղէն, իմ պ. ընթերցող, այսչափ փող տուեր է, և գիտն՝ս, թէ ինչո՞ր իւր մէկ հատիկ ձին չի ծախեր եր-

կու կով առնելու, իւր բարեկեցութեան համար, որպէսզի վանքի այսպիսի կարևոր պիտոյից համար այդ ձիով գնալ մեր բարեպաշտ շինական երայրներէն քանի մի փութ ցորեն մտրայ՝ այս կիսակործան վանքեր պահպանելու: Գիտն՝ս, իմ գուարձատէր ընթերցող, կիսակործան տաճարներ չեն պահպանուիլ՝ իրախճանակաւ սեղաններու շուրջը քազմած երգելով՝ «Ողջոյն տուէ՛ք մեր հայրենեաց կիսակործան տաճարներուն», այլ այսպիսի անձնուրաց, չարքաշ արեղաներու թշուառակեցութեան նահատակութեամբ:

**ԼԳ
Գառնակեր գիւղի կալեր**

Նոյն օրը Ծաղկոցավանքէն վերադարձանք ի նոյն *Գառնակեր* գիւղ և անմիջապէս ծխախոտք, գիւղի օրն տարածմեալ էր, բարձրացանք գիւղի կալեր: Դեռ նախիրը չէր եկած: Տեղւոյն գործողութիւն խուճապ վիճակի մէջ էր, և ամէն գործողութիւն իւր կարգն ունէր: Կալաեզներ թող տուին: Հասակաւոր աղջիկներ անմիջապէս ջուր բերելու գնացին. ումանք ցիր ու ցան խմբերով իրենց ծառը ու քրքիջ բարձրացուցած, ոմանք առանձին-առանձին և տխուր, ոմանք արտակից և հասակակիցներ գոյգ-գոյգ ընկերացած կերթային: Վերջիններս մինքն յանկարծ խորհրդատու խտիա տուա իւր ընկեր աղջկան կողքին, որ բոլոր մարմնով ցնցուցաւ և ամօքահար աչքի վրայ այս ու այն կողմ դիտել սկսեց: Խտիա տուող աղջիկն գողի պէս մատնաքոյց արաւ առջևի կողմ մայելու, և երկուքն ի միապիւն սկսեցին քայլերնին յամրացուցել՝ վայրկեան մի ուշ հասնելու, որպէսզի ցնցուող աղջիկ դաշտէն եկող փափախը ծուռ, գերանդին ուսին, հպարտ-հպարտ ձիու վրայ հեծած ու ձին կատաղեցնող ու փնչացնող երիտասարդին տեսնալ ու դիտել կշտանալու չափ: Չիտոր երիտասարդը, այս ամէն տեսնալով, իւր վրայ մայող աչքին մի համապատասխան հայեացք ձգեց և կամեցաւ իւր ձին օղալու ընելու հեռանալ: Մորք արդէն նշանուածներ էին:

Հեռուէն ամալի պէս փոշի բարձրացնող նախրի կովեր, իւրաքանչիւր իւր հորքին քառաչելով, նախապէս անտեցին իրենաց վերադարձը: Հորթերու նախիր մէկ ժամ առաջ արդէն եկած և փոքր աղջկանց հոգացողութեամբ ցամկապատ քակելու մէջ գետեղուած էր, որ նախիրի գալու ժամանակ շխառնուէր նախրի մէջ և չծծէր իրենց մայրեր, առանց տանուտէր կնոջ ազան կթոցն փրփրացնելու: Կալապան մեծ աղջիկներ ու կիներ թող տուին անմիջապէս իրենց կալապանական ձեռքի գործ, իւրաքանչիւր աղջիկ նախիրէն գատեց կողքի կովեր, կիներ տնէն կթոց բերելու փութացան, փոքրիկ աղջիկներ հորթեր մէկիկ-մէկիկ թող տուին քակել դուրս գալու: Կթող կինն մի փոքր ծծեցուց հորքին, որ կռվի պտուկներ կակղեն ու թուլանան կորելու: Կինն կրել սկսեց: Մեծ աղջիկ, որ կովի գլուխ բռնած էր, նորա պղզատակեր, ճակատ և պուճուճակ (ծոծ-

րակ) կրերէր իւր մատներով, որ կովն այդ հեշտասիրութենէն գրաւուած հանդարտ մնայ կրուելու: Բայց փոքրիկ, գուարճատէր սերունդ, մի-մի վարոց ձեռքերնին բռնած, անցնող նախրի երկնջներուն, արջաններուն, զամբիկ ձիերուն մտրուկներուն խիղ տալով (հալածել), նոցա ուստիւններու վրայ գուարճացած, ազնուկ կհանէր իրենց ճվճվոցներով: Մեզ հետ մտող ծերունի և պատկառելի անձինք որչափ ջանացին սաստել, որ լռեն, ի հարկի ի պատիւ մեր, նորք բնաւ յետ չկասեցան իրենց գուարճասիրութենէ: Մորք թագաւորական հրովարտակին նշանակութիւն չտուող աննիղ իրէշտակներէն էին:

Նախարակիք գործէն վճննալէն զկնի, գործօն կանայք և աղջկուրք սկսեցին վերջնալուտով ասոր կասածն կալերն թելել, ոմանք սրբուած ատոր ցունուած և գարին չուպներով ամբար տանել, այլք քանուած (երան եղած) յարոն կալատակի մարտկ լեցնել, այլք ճախատելով (ցախատել) կնարքիցն կալատակ՝ վաղուեան ասոր աշան (կալատեղի վրայ պարգուած որայն) պատրաստ անելու: Վերջնալուտով ընելու գործեր լնննալուն պէս ընթրիք արին և բնութեան օրինակ այդ հաւատարիմ հպատակներ, առանց Մորվիտսի թմրեցուցիչ ներգործութեան սպասելու, քնացան: Կուպեր ծանրացնող միքին, սաստաւածային օրինաւոր աշխատասիրութեան, ինքնին հետևեց՝ քաղաքացուց դժխճն սովորութիւնը այսպանելով: Արշալոյսին ամէն կարգի աշխատատուներ (քացի մանուկներէն) վեր կացան իրենց խոնջեալ¹⁵³ ամրամոց այնպիսի կազորութեամբ, որ նախանձեղի է փափկակեաց քաղաքացի հարուստներուն, որք անհանգիստ բնով աւելի կթմրեն և կխոնջեն, քան թէ կկազորութիւն: Արևածաղէն աչքս հարուստ գիւղացիք, ձիերնին հեծած, գերանդին ուսին, աղքատներ հետիոտն արտօրայք գնացին: Կանայք և աղջկուրք կալատեղի վրայ որաներ աշան ըրին, որ մի փոքր յորանայ՝ դիւրաւ կատուելու: Կուեր կատուել սկսեցին: Առաջին տարիներ այս կողմի բոլոր գիւղերը եզներով կշրջեցնէին կաները, իսկ մօտ տարիներն, Ռուսաց տիրապետութենէն զկնի, իւրաքանչիւր ձիու ետև մի կամը քաշ առած, ոմանք աղջիկներ 2-3 ձիոց սանձեր ի բռին, միւս ձեռքին՝ խարազան, կալամէջ տեղ կանգնած, ձիերը կվարեն շրջելու՝ իրենք էլ փոքր պտույտ տալով նոցա հետ: Կանայք, կորակիւն¹⁵⁴ բռնած, անդադար կտողեն կալամիջի աշանի խորուրբորդ եղած տեղերը, կալափերն վրայ կուտան և աշանը կշրջեն՝ խոշոր մնացած ցողունները կալերեւր հանելով (օրակակն 14 ժամ աշխատութիւն ընել, իզական սեղի համար, հաւատալի՞ տ. թեզ, քաղաքացի ընթերցող):

Արևածաղէն պահ մի ետք նախիր եկաւ գիւղագլուխ կրուելու: Կանանց և աղջկանց մի մասն այն տեղ դիւնեց, բայց, ակնս՝ս, որ մենք էլ հեծանք և հե-



ԶԱԳԻՐ. հատված գյուղից (ուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.)

ուցանք՝ *Ջազիր* գիւղ գնալու, թող տալով այն հովաւուն կալատեղը, որ այնչափ քարձր էր, որ արեգակը ուղիղ հորիզոնական գծով քարեց մեզ առատեան: Երբ մենք ճանապարհին կանանց ծանր աշխատութեան մասին մեր նկատողութիւններ կհարողիւինք գործակատար Եփրեմ քահանային, նա պատասխանեց մեզ, թէ շատ օգտակար է կանանց աշխատութիւնը, զի նորանով թէ՛ իրենք կուժովանան, թէ՛ իրենց գեղեցկութիւն ու թարմութիւն ընդ երկար կպահպանելու, հակառակ քաղաքացի կանանց, որք շուտով կբռնամին, և թէ՛ աշխատութեամբ կազմուածը ջլապնդելով՝ ճմնդեան ժամանակը թէ՛ երկունք թեթև կլինի, և թէ՛ հարկիւր գաւակաբեր կանանցից մինն հազու մանկաբարձի կկարօտի: Մի՞թէ այդպէս, քալ ես անոք: Հապա՞, պատասխանեց նա, զի բնականապէս ինչպէս որ կովեր, ոչխարներ, ինք իրենց կծմանին, առանց ուրիշի օգնութեան, այնպէս էլ գիւղի կանայք: Օրինակ, ըսաւ տէր Եփրեմ, գիշերն եկեղեցին գնալիս, տեսայ, որ մի կին իւր անպատ քալի մէջ տղան ճմանելիս, ինձի որ տեսաւ, հեռացաւ՝ ճման երեխան մնաց տեղն ի տեղ լաց լինելով: Գառնակերցի Յովսէփ քահանայն վրայ բերեց. «Ես այգին գնալիս տեսայ մի կին, միայնակ իւր այգոյ մէջ մի մեծ ընկուզեղի ետև քաշուած՝ ծնա իր գաւակալը: Գարձուտ տէր Եփրեմը մէջ մտաւ. «Մի կին միայնակ սար գնացած էր շուշան քաղեալ (տղաջրի մէջ դնելու հաստացողուն բանջար մի է՝ պահոց կերակուր, որուն վանցիք մանուկ կսկսեն) և այնտեղ իւր ճման տղան, քաղած շուշանի հետ միասին շալակելով տուն բերաւ, զոր մկրտելիս անուն Շուշան կըրեցինք»:

**ԼԵ
Ջազիր¹⁵⁵**

Ամսոյս 2-ին հասանք *Ջազիր* գիւղ, որոյ բնակչւք 54 տարի առաջ 37 տուն, *Գլխամբարտն* և

¹⁵² «Իսկ Բարուն գիւղի կարատեղերը գնալու ժամանակ մեզ ու ռիկկուծ ծխախոտներու միաբարձին Խաչէն ալ յետ ջննաց» (ծնր.՝ հոխնակի):

¹⁵³ Հոգնած:
¹⁵⁴ Եղան:

¹⁵⁵ Գտնվում է Ծամխորի համանուն շրջանորոշին 16 կմ հարավ-արևմուտք (ծ. ս. քարտը է 1300-1420 մ):

Յիշեալ քահանայի քաժծին նայելով՝ նոյն պարոն այժմ որպէս թէ գոչացեր է և կառաջարկէ քահանային, թէ «Գերեզմանաւորւոյն վրայ շինուած խանութներու վարձ եւ կառնեն, իսկ նոցա գետնավարձ դուք ստացէք», այն էլ բերանացի խոստումով... Ի՞նչ մանկական խաղ: Այնուհետև յիշեալ քահանայն, ճարտաստ լինելով, մնցեցելոց կնիսխներ կրոցի¹⁶⁴ մէջ ժողովելով, կրէն եկեղեցոյ խոռանի մէջ իբրև ապացոյց և ապա կսկսէ դատ քանակ կառավարչի դէմ և պատիժ կպահանջէ ճարտաստը իշխանութենէն՝ նոյն սրբապղծութեան համար: Իսկ դատարոն քահանային պատասխաներ է, թէ «Գերեզմաններ շատ հին լինելու համար չարժէ դատ վարել և վիրաւորել կառավարչին»: Ան այս հարց է առաջարկեր Շատոն քահանայն, թէ որչա՞ր ժամանակամիջոց գերեզմաններ հինցած և իրենց յարգ կորսնցուցած կհամարուին օրինաց առջև: Սոյն խօսքին դիմաց դատարոն տարակուսեալ և պարտասեալ կկրկնէ՝ դարձաւ ի պաշտպանութիւն կառավարչին, ոչինչ, չարժէ: Այսպիսի դատարարաց համար է մեր նախնեաց առածն, թէ «Որ ոսկին բարբառէ, անդ ամենայն լեզուք լոխն»: Այս առածն ի հարկէ մասնաւոր մարդկանց համար լինել կարծած էինք և չէինք յուսար, որ օրինաց արդար լեզուն ևս կխոնճարի և կյո՞ւն ոսկոյ բարբառի առջև:

Հին Գետաբէկի մէջ գործարան հաստատուելու պատճառաւ բաւական բոլով զանձակեցի առևտրական հայեր կան այժմ: Սորանց հոգևոր պէտքեր և կմտակարարէ յիշեալ Շատոն քահանայն, որ այս կողման հայ ժողովրդաց մէջ նախանձեղի ժողովրդակամութիւն կվայելէ: Նոր Գետաբէկի հայեր սակաւաթիւ լինելու պատճառաւ չեն կարող վարձարան բանալ, բայց ոճանց որդիք ժամաստուրութեան համար կպատրաստէ յիշեալ քահանայն:

Գիտիլ արևելահարաւ կողմ կգտնուի ուխտատեղի մի՛ խաչքար՝ Կաղնիսայն անունով, որուն կհովանաւորէ դարձեալ մի հինաւորաց և մեծ կտղնի ծառ: Երկրորդ ուխտատեղի մի ևս կայ գիտիլ հարաւային կողմը՝ մի վերստ հեռաւորութեամբ, բյրակի գլխին: Սա ո՛չ խաչ ունի և ո՛չ այլ ինչ, բայց մի փոքրիկ շինութեան փալտակ՝ Լուստի անուն: Նոր ուխտատեղի լինելու գոյութիւնը արդիւնք է եղեր երկաւտեսութեան:

ԼԸ
Ղալաբեանցի¹⁶⁵

Օգոստոսի 5-ին թող տալով Գետաբէկ գիտլը՝ տեղւոյն քահանայի առաջնորդութեամբ Ղալաբեանցի անունով թրքաբնակ գիտիլ հին բերդի¹⁶⁶

¹⁶⁴ Բարակ ճյուղերով իյուսած կողով:
¹⁶⁵ Գտնվում է Գետաբեկի շրջակայքում 11 կմ հարավ-արևմուտք Շատրոբ գետի ձախ վտակի՝ Փառխոսի ափին:
¹⁶⁶ Համայնպատասխանում է Փառխոս բերդին, մամբանան տես Կարապետյան Ա., նշվ. աշխ., էջ 127-128:

գլուխ բարձրացանք, որ շրջապատուած է ամրապինդ պարիսպներով և մարտկոցի բուրգերով: Սոյն բերդ ի հնում մեր նախնիք կառուցեր են՝ ի պաշտպանութիւն նորա ստորոտ գտնուած Ղալաբեանցի գիտլաբաղարին: Գիտլաբաղար կըսենք, որ կստուգուի իւր մէջ գտնուած թէ՛ կանգուն և թէ՛ կործանուած վեց եկեղեցիներով¹⁶⁷:

Գետաբէկի պղծմահանքի արտադրութեան մի մասը 2 ժամու հեռաւորութենէն երկարողով կբերուի սոյն գիտլ՝ հրահալելու, զի սոյն տեղ ևս գործարանի մի ճիւղ հաստատուած է անտառի մօտաւորութեան համար:

Բայց մենք չմոռանանք մի միջնադէպ յառայ բերելու: Փիթ գիտիլ հարաւակողման անտառախիտ լեռան, որ պինդ ապառաժ քարից կբաղկանայ, նորա վերայ շատ ծակ քարեր կտեսնուին՝ զանազան լայն ու նեղ ձևերով և առանց պատաստուածք ունենալու, մարդ կկարծէ, թէ հաստ քղերով ծակուած լինեն: Այդ քարերու ծակ լինելու մասին հարց բարձրացաւ մեր այնտեղ եղած ժամանակ, թէ ի՞նչ պատճառաւ այդ ծակեր գոյացած են: Մենք տարակուսուած կանգ առինք մեր մտախնայման մէջ Զանթոս փիլիսոփայի մտան: Եւ որովհետև Եզովպոսի մտան մի ծառայ էլ չունէինք, որ հարցն անոր յանձնէինք լուծելու, ուստի և հարցն մնաց անլուծելի, մինչև Ղալաբեանցի գիտիլ բերդ բարձրանալն:

Սորա նոյնատեսակ ապառաժները նոյնատեսակ ծակեր ունէին, ինչպէս Փիթ գիտիլին:

Յիշեալ բերդի լեռան լանջի վերայ, թեպէտ այժմ բնաւ անտառ չի տեսնուիր, բայց ստուգուեցաւ, որ առաջուայ ժամանակ անտառ եղած է այնտեղ, և անտառի ծառերն քարերու վրայ բուսած և նոցա արմատներ քարերին ծակելով խոր իջած են, հետևապէս որչափ որ ծառեր հաստացած են, հետքդհետէ և քարածակերը մեծցած են ծառերու հաստանալու չափով: Չի մենք տեսանք այնտեղ մի արշիւն շրջագծի լայնութեամբ վերոյիշելոց մնաց ծակ քար, որուն մէջ տակաւին կմտար հին ծառի փտած բունը ըստ որպիսութեան խոտածածկին, և սոյն քարածակն չունէր պատաստուածք: Մենք այսպիսով համոզուած ենք, թէ՛ Փիթ գիտիլ և թէ՛ այստեղաց ծակ քարեր պատճառուած են ծառերու արմատներէն:

ԼԹ
Չարեքայ վանք

Օգոստոսի 5-ին Ղալաբեանցուն հասանք ի Չարեքայ վանք՝ 5 ժամոյն անիծ ձիու վրայ նստելով: Չարեքայ վանք շինուած է Շամրոբ գետի ձախ ափին՝ խորագոյն ձորի մէջ, որ արևմուտքէն արևելք երկարացած է: Վանքն ամէն կողմէն երկու ժամու ճանապարհաւ հեռու է ամենայն մարդաբնակութենէ և դրացիական օգնակամութենէ: Ի հնումն միա-

¹⁶⁷ Մամվկ Կարապետյանը 1982 թ. արձանագրել է միայն երկու եկեղեցու գոյութիւնը (նշվ. աշխ., էջ 127):



ԳեՏԱԲԵԿ. Չարեքայվանքը (Ուս.: Ա. Օհանյանի, 1980-ական թթ.)

բանական ուխտի տեղ եղած է, որ կզուշակուի հիւսիսային և արևելեան կողմի վրայ եղած տասն և հինգ միաբանական կանգուն մնացած խուցերէն՝ ի բաց առեալ քանդուածները: Եկեղեցին, գաւիթ, դարպաս և մեկուսի զանգակատուն նոյնպէս և խըցերն, տնտեսատուն, մառան, փոստուն և սեղանատուն քարովիք և կամարակապ շինուած են մէկուկուս թիզ երկարութեամբ և մէկ թիզ լայնութեամբ նեղ լուսամտուններով: Սեղանատան 32 արշիւն երկարութիւնէն կհասկացուի, որ վանքն բազմաթիւ միաբանութիւն ունեցեր է իւր ճոխ ժամանակին, իսկ այժմ ունի միայն մի վանահայր՝ արժ. Աստուածատուր վարդապետն Տէր-Յարութիւնեանց, որոյ մականունը շրջակայ գիտլօրէից պարսիկներ Էօն-օղլի դրած են իւր արի անձնապաշտպանութեան և՛ վանքի, և՛ նորա անտառներու պահպանութեան համար:

Վանահայրն առանց վանաորդի վարդապետներու ունի միայն երկու ծառայ և մի անտառապահ, ընդամենը չորս անձինքներէ կբաղկան վանքի անբողջ բնակիչներ, չըսեն միաբանութիւն: Ինչպէս վերև ըսինք, վանքն, 2 ժամու ճանապարհաւ հեռու լինելով մարդաբնակութենէ, յանդուրձ անձնապատասխանութիւն է 4 հոգով բնակել այսպիսի անպաշտպան և անապահով վիճակի մէջ, զի վանահայրն վայրենութեանց վայրենութեան տեղի է, ուր աւելի առիժներու յարձար է, քան այսպիսի սակաւաթիւ մարդկանց բնակավայր լինելու:

Ռուսաստանի հայոց վանքերու մէջ միայն Սևանայ անապատ վանահայրական անուն կրելու իւր իսկական նշանակութիւնն ունի, զի վանահօր հովանաւորութեան և խնամքը ներքև կգտնուին և վանական որդի վարդապետներ, որոնք ամէնքն ի միասին իբրև ժառանգ նոյն վանական հաստատութեան ամէն ջանք և աշխատութիւն ի գործ կցնեն վանքն չէն պահելու, ճոխացնելու, և խրժ եղած ժամանակին կկարկատեն և կնորոզեն իբրև իրենց ժառանգութիւն:



Այսպէս են Տանկաստանի հայոց գլխաւոր վանքեր, որք ունեն վանակամութեան կանոնական օրէնք: Կիշեւն Վարագայ և Տարոնի Ս. Կարապետի վանօրէից կանոնագրութիւն, որ քարտեգի նման շրջանակի մէջ առաջ կախեր են վանահօր սենեկի պատէն՝ իբրև յիշեցուցիչ վանահօր և միաբանութեան պարտոց և իրաւանց փոխադարձ յարաբերութեանց կանոն: Կարծեմ թէ Ս. Էջմիածնի Մայր Աթոռ տակաւին չէ ունեցեր ազգային տյնայիսի սահմանադրական օրէնք՝ բացի բողոժնիսայից, որ ցոյց տայ հովուողի և ստորադրեցող պարտոց և իրաւանց փոխադարձ սահմաններ:

Հետևապէս և նոյն Մայր Աթոռի ստորադրեալ վանօրայք ևս չունեն մասնաւոր, իրենց համար կազմուած կառավարչական օրէնք, հաստատուած հոգևոր ծայրագոյն իշխանութենէ, որպէսզի վանակամութիւնը իւր ամփոփ և պարզ օրինաց ուղեցուցիւ առաջնորդուէր միակերպ կառավարութեամբ՝ վանոցն յարատւութեան համար:

Տանկաստանի գլխաւոր վանօրէից հաստատուն և յարատև մնալու պատճառն ինձ կրօքի այն է, որ ունեն միաբանական ուխտ, ուխտին վանահայր և կանոնական օրէնք: Եւ երբ վանահայրն վախճանելու լինի, միաբանութիւն իւր միջոց կան որսէն կընտրէ յաջորդող վանահայրն, իբրև իւր հովիւ և վանական օրինաց օրինապահ և գործադրիչ, իսկ ինքն՝ միաբանութիւն, կլինի կանաւոր կատարիչ օրինաց և վանական հեղաճոց որդի վանահօրն, և ամէնքն ի միասին, վանահայրն և վանաորդիք զինքեանս հարապատ ժառանգ կհամարեն նոյն միաբանական ուխտին:

Այսպէս եղեր է և Վարագայ վանք («մայրաքաղաքն մենաստանաց») ըստ Չամչեան պատմութեան, որ երբեմն ունեցեր է ոքն հարիւր միաբանական եղբայրութիւն, Լիւն և Կտուց անապատներ, Ս. Բարդուղիմէոս առաքելոյ և Մեծփոփայ վանքեր, Տարոնոյ Ս. Կարապետի, Ա. Յովհանն և Թարգման-

չաց¹⁶⁸, Արմաշու վանքեր, որոնց անձնու մէջ կան ժառանգատրոսց վարժարաններ¹⁶⁹ մի որոշ նպատակի ծառայելու համար:

Ռուսաստանի հայոց բազմաթիւ վանքերու միաբանութիւն կրողկանայ մի վարդապետ միայն, որ և վանահայր անուն կկրէ՝ առանց վանաորդի ունենալու և կրնորդի ու կիսատատիի Ս. Էջմիածնի հոգ. բարձրագոյն իշխանութենէ, այն էլ շուտ-շուտ փոփոխուելու ենթակայ: Բնական է, որ այսպիսի վանահայր չի մտածեր վանքն քարեգարդել, ճոխացնել, քանդուածներ կարկատել և նորոգել, զի վանքն վարդապետի տուն (ըստ հայրենի առածին) լինելու ապահովութենէ դուրս եկած է: Ռուսի այս իսկ պատճառաւ անտարապետակի Ս. որ վանքեր միշտ քանդուելու և անհետանալու ենթակայ կլինեն իրենց ստացուածքով, հողային կարգաւանդներով և սրբազան ածօքներով: Զանդուած և իրենց կարգաւանդներով ի միասին անհետացած վանքերու օրինակներ շատ են մեր աշխի առաջ: Ռ՛ր է վանքերէն հսկայն Սաղմոսավանք և նմանիքն, ի՞նչ վիճակի մէջ է Արասզու Թաղէոս Առաքելոյ վանք, որ վանքից մէջ հսկային հսկայն է իր բերդանման շինութեամբ, ուր երբեմն կկատարաստուէին Ս. Էջմիածնի առաքելական յաջորդ գահակալներ, ո՞վ է նոր վանահայր: Վանքին շրջապատող 11 տունէն բաղկացեալ կայ գիղի մէջ ճնած, սնամ, զարգացած մի հայրենասէր վարդապետ՝ աղքատ և բշտու, որ ամիսներով առանց վանք մտնելու, խունկ ու մոմ վառելու կորդու չայաստանեայց աշխարհի նախկին յուսատրիչ Թաղէոս առաքելոյ սրբակից գերեզման, զի վանքն ոչինչ չունի: Վանահայրն հազիւ հազ իր ապրուստը կզուտայ իրաւման բշտու աղքատ հայրենակից գիղացիներէ:

Ռուսաստանի վանքերէն ոմանք թէ՛ յոխատանդի են և թէ՛ հողային կալուած ունին, սակայն դարձեալ չեն ճոխանար, որովհետև չունեն վանական

ուխտ և ուխտի հաստատութեան օրէնք: Թէպէտ ոմանց վանօրէից ցեղեռեանդ հաստատութեանց նուէրներու մի փոքր¹⁷⁰ մասն կընծայուին անդամ եղող վանքերու կողմանէ՝ ի շահ Ս. Էջմիածնի Մայր Աթոռին, իբրև վանօրէից գլխաորդին, որ շատ իրաւացի և պարտաւորիչ օգոմութիւն է: Բայց միթէ նոյնպէս գլխաորդ վանքն և իւր կողմանէ չպէտէ, որ հոգաւտարութեամբ սնուցանէ և դարձանէր իւր խնամոց ենթարկուած անդամ եղող վանորայրը: Ինչպէս արին, սրտէն ելնելով, կմտնայ միս արին երակներու մէջ և կանդորդառնայ ի նոյն տեղ՝ կեղանահացոցիչ շրջան կազմելով, այնպէս և Ս. Էջմիածնի փոխարարձական պարտոց և իրաւանց ճանաչմամբ թէ՛ մասնատրապէս կզօրացնէր և թէ՛ ինքն գլխատրապէս կամրապարտէր:

Ուրեմն ի՞նչ են Ռուսաստանի արդի վանօրայր, և ո՞ւմ կծառայեն ճոց կալուածներ: Ոչ այլ ինչ, երբ ոչ միայնակեցարաններ, որ կծառայեն անհատական անձանց՝ հակառակ նախնական կանոնադրեալ վանօրէիցն, որ կծառայէին եկեղեցւոյ ժառանգատրացն: Օրինակ՝ քարեհոջակ Սամահին, արդիմաշատ Հաղբատ, զիմու հոգւոյց վառեալ Տաթև և սոցա նմաներ կատարաստէին զանգան կարգի հոգևորականներ հայոց ժողովուրդն յուստուրելու, առաջնորդական, քարոզական, կոնսախրական և հայրենասիրական հոգւոյ ներշնչութեամբ:

Սոյն մտախոնութեանց առիթ տուաւ Չարեբայ վանոց այժմեան անկեալ դրոյրին, զոր վերականգնելու համար նորա արդի վանահայրն անժ. Աստուածատուր վարդապետ, ճշմարտ և արժանուէր վանականութեան հոգւով, տասն և վեց տարիէ ի վեր երկարի պնդութեամբ ամեն կերպ շարաքշուրիւր յանձն առած, ամենայն անձնամոտիւրութեամբ կաշխատէ վանքի յափշտակեալ հողային կալուածները՝ արտօրայր և անտառներ, վիճելութեան վիճակէն դուրս բերել և հաստատել տալ վանքի վրայ՝ վանքի նախնական հանրօգուտ նպատակն վերականգնելու:

Երկար ժամանակէ ի վեր վանքիս մէջ միաբանական ուխտ չի լինելու պատճառաւ (բացի մի վանահայր վարդապետ)՝ տաճարն իւր քողո չէրբերով խօթրացած է: Որտեղ մի փոքր վնասուած է եղեր, առանց կարկատելու և նորոգութեան մնալով՝ մերձ ի մահ խաբխարած է այնչափ, որ այստիեւտն կարկատելն օգուտ չի բերեր և չի փոխել վաղահաս մահուանէն, ինչպէս մեծաշէն Սաղմոսավանք և այլ սղրա նմաններ փրկուած չեն եղեր՝ ժամանակի վանահարց անհոգութեան պատճառաւ:

¹⁷⁰ «Ուխտատրաց նոյիրարքութեան մեծ մասն և կալուածը արդիւր կծառայեն անհատական վիճակ ունեցող վանահայրերուն և ոչ վանական ժառանգատրութեան, որպէս ի հնուն, ժողովրդեան բարեգլխ վարդապետներ և քահանայացուներ պատրաստելու» (ճնր. հեղինակի):

Ջանի՛ հոյակապ վանքեր գիտենք, ինչպէս Էջմիածնի մօտ Մուղնու Ս. Գեորգայ վանք, որ կողահերձ լինելով՝ քիչ ժամանակի մէջ կկործանի: Կկործանին և միւսներ, շնորհիւ անհոգութեան միայնակեաց վանահայրերուն:

Սօս ժամանակներ հայ լրագրութեանց մէջ աղմուկ բարձրացաւ, թէ Չարեբայ վանքի վանահայր Աստուածատուր վարդապետ վանքի անտառներ այնչափ փչացուցեր է և կփչացնէ, որոյ մէջ շրջագալող զագաններ ակներև կտեսնուին, և թէ, եթէ վանքն շուտով նորա ձեռքէն չառնուի, անտառներն իսպառ կանհետանան:

Սոյն չընճուած լուրը տուղղներ արժանահաստ անձինք համարուելով՝ վանահայրն փոխտեր և ուրիշն նորա տեղ յաջորդեր է, որ իւր անհոգութեամբ և ապիկարութեամբ անտառի մի մասն էլ սեպիականութենէ յափշտակուեր է և այնուհետև տեսնելով, որ տեղոյն անօրէնք և անպարկուրօր սար ու ձորներ իւր պահպանելու, կարողութենէն վեր է և չի պիտի կարողանայ առ երկիւղի երկար մնալ սոյն վանոց մէջ, քիչ մի ևս աւելի շտապեր է իւր ընելիքն ընելու և փոխադրուելու:

Հոգ. ծայրագոյն իշխանութիւն, այնուհետև ի փորձոյ վերահաս լինելով Աստուածատուր վարդապետի արժանատութեան վրայ, կրկին վանահայր հաստատուեր է: Մենք, այցելելով սոյն վանքը, 8 ատուր չափ մնացիք, հետազօտեցիք անտառն, ոչինչ համաձայն՝ այն մեծ աղմուկին չզտանք, քացի վանքի առջև եղող պարտեզատեղիի կտորուած ընկուզեմներէն, որ շատ ևս հաշուով կտրատել տուեր է: Տեսնելով արդի վանահայրն, որ բոլոր ձորեր բազմաթիւ ընկուզեմներով լի են, բանջարանոցի ընկուզեմիքը կտորտեր և բանջարանոցն ընդարձակեր է (զի վարելահող չունի), ուր վարունկ, գետնախնձոր և յութիս կցան, որոնք բերք ամեն օր ի վաճառ կհան ի Գետաբէկ՝ վանքի ապրուստ հոգալու: Մասնաւոր իւր ամբողջ անտառն տակալին վիճելի լինելու տէրութեան հետ՝ իշխանութիւն ևս իւր անտառապահներու հսկողութեան ներքև պահպանել կուտայ: Ռուսի վանահայրն կարող չէր անտառն փչացնել:

Վանքիս արևելեան կողմը՝ մերձ ի պարիսպ, Հայոց գերեզման անունով մատուտ մի կայ, որ շինուած է վանքիս իինց ճգնագծեաց վարդապետաց գերեզմանի վերայ, որոյ քարուկոյ կամարի դրսի կողմը քանցած են քարք կոչում ունեցող մի եկեղեցական և մի աստիճանատու, որ Գանձակէն այստեղ եկեր էին՝ քախտ որոնելու, քայց դժբախտաբար քախտ չգտնելէն յետոյ նոյն քանդուածն շինելու տուած չեն, որ կնճա ցայտօր ժամանակի ի նախատին և վկայ իրենց բախտախնդրութեան: Դարձեալ և մօտ ժամանակներս, նոյնպէս քարք կոչում ունեցող մի հոգևորական, Գանձակէն գալով, քանդեր է վանքի տաճարի տանիքը՝ նոյնպիսի շահասի



ՉԱՐՎԱՆՈՒ. Սբ. Սաղմոսովն եկեղեցին հարավ-արևելքից (ուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.)

րութեան պատճառաւ, և ինքն էլ չարաչար վիրատրեր է նորա բանձուր: Վանքից 2 վերտ հեռատրութեան՝ նոյն արևելեան կողմը, գետի ձախ ասիին, մի քարաժայռի գլխին, թրծեալ աղիսներով շինուած, կայ մի պարսպաբերդ՝ Նամրոթ անունով, որոյ պատեր ցայտօր կանգուն կնան:

Վանքիս հարաակողմը՝ 1/4 վերտ հեռատրութեան, գետի աջ ափին, շինուած է մի փոքրիկ կամախակա *եկեղեցի*, որոյ շուրջը կտոնուին բազմաթիւ բնակարանաց տերակներ: Ոչ մի առանձին նշաններով յայտնի չեղաւ, թէ գիղատեղի՞ է այլ վայր, թէ՞ վանքիս միաբանաց ճգնատրական մասի աղօթավայր, միայն նոյն տեղ կտոնուին իրարու կից շինուած վեց քարուկոյ արապիղծ սենեակներ՝ առանց լուսամտուի, չորս արշիին քառակուսի մեծութեամբ, որոյ բոլորակ կամարներ ընկած են: Սոցա միայն արևելեան պատի մէջ կտեսնուի կրաշաղախով ամրապնդած խողովակներ, որք կարծել կուտան, թէ ի հնումն բաղանիք եղած են: Սոյն վայրի համար կաւանդեն, թէ կուսանոց եղած է. թերևս նոյն բաղանիք մարքասէր կուսանոց ծառայած լինի:

Վանքի արևմտեան կողմը՝ երկու վերտ հեռատրութեամբ՝ գետի աջ ափին, բարձր բլրակի գլխին, կտեսնուի քառակուսի մեծութեամբ *եկեղեցի*, որոյ վրայի կարտուկի կտր փչած է: Նոյնպէս վանքի հիւսիսարևոյր՝ 3 վերտ հեռատրութեամբ մի բարձր քառանկալի վրայ, կտոնուի մի *եկեղեցի*, որոյ առատաղբ և մի պատ խնճարիւտած են:

Դարձեալ վանքիս սահմանի մէջ՝ արևմտակողմը՝ 3 վերտ հեռատրութեամբ, Արալայ գետակի մօտ, կտոնուի հանքային երկաթի ջուր, որ քափուելով Արալայ գետակի մէջ, կկուր ի միասին կծանդակեն Շամրոց գետին: Սոյն Արալայ անունով գետակի բոխման մօտեր կտոնուի *Արալայ* անունով մի վանք, որ թէպէտ վանքիս սահմանից դուրսն է, քայց ամոր համար կկնշմանակեր այստեղ, որովհետև և կտեսնուի, թէ Արալայ սարկուսաց նոյն տեղի բնակիչներն է:

¹⁶⁸ «Թարգմանչաց, որ և Ղազարու և Առաքելոց անուանալ վանոց տաճարի դրսի արևելակողմ կտոնուին մեր ազգայնոց բարձրագոյնաց Դավիթ Անյարու և Մկրտիչի Մանրէ, Մանրէ՝ Արծառնոյ, Եգնիկ Կոտրացոյ և այլոց պատկառելի շիրիմներ, որոնց մահաբաններ 4 կանգուն քարձորութեամբ կանգնած են 2 կանգուն քառակուսի մեծութեամբ պատուանդաններու վրայ, իրենց նուրբ (բարձրագոյնաց անուան վայելուչ) քանդակագործութեամբ, գողգորթի հսկայ և իրաշատեղի խաչերով և տապանագործութեամբ: Եր աղբաւ, տապան և ոչ գերեզման բարձրագոյնաց, որք իրենց անձանի իշխատութեան և ոսկեղեմիկ գոլով կան և կնճան տապանի մէջ, գերկողորդ գալուստ Քրիստոսի, ի յանդիմանութիւն մեզի պէս վանականաց ցայցայէս եղեցնազոյն» (ճնր. հեղինակի):

¹⁶⁹ «Շատ ին դատարարեան՝ մեր նախնաց գործածած վարժարան և վարժապետ անուններ շատ իրացան ևն արդի գործաղղած «ուսմանարան և ուսուցիչ» անուններէն, որ կարծենք, որիչ մագերէն բարձրագոյնար արած կգործածեն: Վարժապետն իւր գիտութիւնը ուրիշէն առած և վարժուած կարծեսնէլ աշակերտներուն, քայց ուսուցիչն ինքնզետ պիտի լինի, որ ուսուցանի, ինչպէս արեւելեաց ուսուցիչն Յիսուս էր: Եւ այս սկզբներով Յիսուս կպատուիր, իւր աշակերտաց միջոցաւ մարկկայն ազգի, ոչ գոր ուսուցիչ չլուի, քայ յինքն» (ճնր. հեղինակի):



ՉԱՐԳԱՆԼՈՒ. Գուսկան Նահատակ վանքը հյուսիս-արևելքից (ուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.)

Խ
Չարդախյու

